# Patmagrouthiun an.ci.cn iuro.c eu Natr-Sahin parsic

## Abraham kat'oġikosi kretac'woy

**Abraham <Hayoc' Kat'oġikos, III.>**

urn:nbn:de:hbz:5:1-10840

362

Goussen 2961

[illegible]

# [illegible]

# [illegible]

[illegible]

ԵՒ

# Նասր-Էտտին? 

ԽՕՃԱՅ?

[illegible] 1870

[illegible]

[illegible]

[illegible] 2961

ԱԲՐԱՀԱՄ

# ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՐԵՏԱՑԻՈՅ

# ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՆՑԻՑՆ ԻՒՐՈՑ

ԵՒ

Նատր-Շահին

ՊԱՐՍԻՑ

ՌՅԺԹ.—1870

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։

2961

ՀՐԱՄԱՆԱՒ

ՏԵԱՌՆ ԵՒ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԵԱՅ Դ·

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՄՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

Ն Ո Ւ Է Ր

Ա Ռ

ՄԵԾԱՊԱՏԻՒ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ

ՊԱՐՈՆ ՄԿՐՏԻՉ

# Սանասարեանց

Ի ՀԱՒԱՍՏԻՍ

Ջ Ե Ր Մ Ե Ռ Ա Ն Դ Ն Զ Գ Ա Ց Մ Ա Ն Ց

եւ

Ի ՆՇԱՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆՑ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ոչ դրուատեաց պէտս ունի և ոչ աւելորդ բանահիւսութեանց կարօտի սոյն այս Պատմագրութիւն Աբրահամու Գ. Կաթուղիկոսի Կրետացւոյ՝ առ 'ի շարժել զսէր և զհետաքրքրական ուշադրութիւն բանասիրաց մերազնէից և օտարաց, և հրաւիրել զնոսա 'ի վերծանութիւն սորին։

Բաւական է հնախոյզ բանասիրաց միանգամ ընդ ակամբք արկանել զայս գեղեցիկ պատմագրութիւնս, և այնուհետև դիւրին է ճանաչել զյարգ և զարժանին զմեծարանս մատենիս այսորիկ՝ որ յաղագս անցից և սովորութեանց եւս և ինչ ինչ գործոց և տեղեկութեանց վասն իւր և Մայր Աթոռոյս՝ և վասն Նատր-Շահին՝ այն է Թահմազ-Գուլի-Խան կոչեցելոյ։

Պատմագրութիւնս այս պարունակէ յինքեան զանցս ոչ բազում, այլ ամաց երկուց և ամսոց ինչ՝ 'ի ՌՃՁԳ-էն ցամն ՌՃՁԵ։ Իսկ 'ի մասին Հայկաբանութեան և գեղեցիկ շարադրութեան և այլոց կարևորաց պարագայից պակասութեանց՝ հեղինակն ինքնին խոստովանի և պատճառէ պարզ և դիւրիմանալի ընծայել ամենայն ումեք, թողումք զծերութիւնն եւ զցաւագարութիւնն։ Ահաւասիկ բանք հեղինակին՝ որ 'ի վերջաբանութեանն։

"(Յ)Աւարտ պատմութեանս խնդրի ի ընթերցողաց՝ սիրելի որդւոց իմոց, զի վասն երկարաբանութեան և պարզաբան լինելոյն՝ անմեղադրելի ունիլ զմեզ. զի որքան իմ կարն էր՝ ջանացի, որ կարճ՝ համառօտ և պարզ լիցի առ 'ի հասկանալ ամենայն ումեք. զի եթէ ամենայն անցս մի ըստ միոջէ գրեալ լինէի, ոչ քարտէզ և ոչ մելան բաւական լինէր. այլ այսքան գրեցաւ, զի ցանկացողք առ 'ի յիմանալ զանցս և զորպիսութիւնս սուրբ Աթո-

ուրս և զիմ՝ ահա յայս ճշմարիտ պատմութենէս վերահասու լիցի՛ և զովասցին. «և եթէ ըստ հաճոյից Ձերոց իցէ, Տեառն է շնորհ. ապա թէ ո՛չ՝ ներեցէ՛ք իմում դանդաղութեանս. զի ՚ի մէջ տառապանաց՝ և ՚ի մէջ զբաղմանց՝ վշտաց՝ և չարչարանաց՝ և նեղութեանց գրեցի՝ (գրչով) հիւանդ և խօթացեալ՝ անզօր անձամբ. ողջ լերո՛ւք»

Բայց յայսցանէ ՚ի կարգի շարադրութեան Պատմութեան և Կոնդակի գտանին ո՛չ սակաւ բառք և բանք Պարսկերէն և Թուրքերէն լեզուաց, զորոց զա՟յ Թարգմանութիւնս յաւելաք յաւարտ մատենիս՝ յօրինեալ իբրև զբառարան:

Չէ՛ մեզ հնար գտանել այլուր զառաւել ճիշդ զտեղեկութիւնս պիտանիս զծննդենէ, զսննդենէ և զայլևայլ հանգամանաց կենացն Աբրահամու Գ. Կաթուղիկոսի Կրետացւոյ, և հաղորդել զայնս լսողին մերոց և օտարաց բանասիրաց. զորս քանի՜ յարգանօք պարտէաք ընդունել և հռչակել, գէ՛թ եթէ ինքն Կրետացին գրէր յայսմիկ ՚ի պատմութեանս իւրում, որպէս արձանագրեալ է զինչ ինչ գործս և զանցսն ՚ի գալստեանն ՚ի Ս. Էջմիածին՝ ցվախճան կենացն (ամօք ինչ պակաս): Մինչ՝ Ջամբռ կամ Յիշատակարան անուանեալ ՚ի Պատմագրութեան Սիմէօնի Կաթուղիկոսի Երևանցւոյ՝ գտանեմք զի՛նչ ի՛նչ գործոցն զծանօթութիւնս ՚ի Կաթողիկոսութեանն անդ, որ վասն կալուածոց և արտօնութեանց Ս. Մայր Աթոռոյս, և առանձինն ՚ի շարս Կաթողիկոսացն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ՝ զայսչափ և եթ ընդ վերնագրով՝ ՎԱՍՆ ԿՐԵՏԱՑԻ ԱԲՐԱՀԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ: ՚Նստի ՚ի Ս. Էջմիածին Կաթուղիկոս Տէր Աբրահամ Կրետացին ի ՌՃՁԳ. Թուոյն մերում՝ ՚ի ժամանակս Թագաւորաց Պարսից Նատր Շահին և Օսմանցւոց Սուլթան Մահմուտին (Ա.): Քանզի ՚ի սոյն ամիս՝ վերոյիշեալ Նատր-Խանն Խորասանցի եկն բազմօք զօրօք, և էառ զբոլոր երկիրս մեր ՚ի յՕսմանցւոց, և արար զնոսա փախստական յերկրէն իւրեանց: Եւ յետոյ զՇահ-Թահմազն կալեալ եդ ՚ի զաֆէս (վանդակ կամ բանդ), զոր և սպան. և զնորին որդի Շահ-Աբաս մանուկն յօրորոցի հռչակեաց զոլ Շահ. և ՚ի գալ ամին՝ զնա ևս կորոյս և ինքն Թագաւորեաց

ի ՌՃՁԵ թուոյն մերում։ Որ եղև կարի ահաւոր և անուանի 'ի վերայ ամենայն Թագաւորաց. յորմէ ամենքեան սարսէին զանունն միայն լսելով։ Եւ զԱբրահամ Կաթողիկոսն կարի սիրեաց և միշտ առ յինքն պահէր. զոր և Հայր կոչէր։ Աբրահամ Կաթողիկոսն ևս էր ահարկու և շքեղատես, մեծ-անձն և խելօք, ճարտարալեզու և հանճարեղ։ Ուստի Նատր-Շահն 'ի յինքն պահէր և շատ խորհուրդ և առնելիս իւր ընդ սմա տնօրինէր և սմա հարցանէր։ Եւ ինքն Աբրահամ Կաթողիկոսն էր Թէպէտ ժիր և արիասիրտ յամենայն բանս՝ և յաջողակ ի գործս, սակայն էր ծեր և լցեալ աւուրբք և ցաւագար իսկ. որ և Թէպէտ զշինուածս ինչ ոչ կարաց առնել յաթոռոջս (զի ժամանակ ևս ոչ ունեցաւ, և միշտ ընդ Շահին լինէր), սակայն քան զամենեսին առաւել արար զբարերարութիւնս և զօգուտս սրբոյ Աթոռոյս և Ազգիս և բոլոր երկրիս մերոյ։ Նատր Շահ կոչեցեալն այնքան էր ահեղ և զարհուրելի, մինչ քարինքս հալէին յահէն և յանուանէն. Սակայն ողորմածն Աստուած այնքան քաղցրացոյց յաչս նորա զՍրբազան Հայրապետս մեր, որպէս զՅովսէփ առ Փարաւոն՝ և զԵսթեր առ Արտաշէս. որոյ բան և խնդիր մի ոչ անկանէր յերկիր առաջի այնպիսւոյ բռնաւորին։ Վասնորոյ զբազումս ազատեաց ի մահուանէ, զշատս իջոյց 'ի կախաղանէ, զբազմաց զաչսն և զականջսն և զայլ անդամսն ազատեաց 'ի հատանելոյ և ի բրելոյ։ Զանհամար գերիս ազատեաց 'ի գերչաց, և զբազումս՝ զորս տաճկացուցեալ էին կամաւ և Թէ բռնութեամբ, յետս դարձոյց և առ 'ի ձեռաց այլազգեաց։ Եւ զայլ անհամար բարերարութիւնս արար տաճկաց, Հայոց, Պարսից Օսմանցւոց։ Բազում մեծամեծ Խանք և արքունի դրան մարդիկ՝ առ սա գային և միջնորդս արկանէին առ Շահն, զի զհոգալիս իւրեանց հոգասցէ. զորս և հոգայր իսկ։ Ապա 'ի ՌՃՁԵ Թուին հանգեաւ ի Տէր և սուգ մեծ եղև 'ի վերայ բոլոր երկրիս արևելեան. և Թաղեցաւ 'ի Շողակաթի 'ի ձախակողմն գաւթին. որոյ մշտատևն օրհնութեամբ եղիցի։ Ունի և զգրեանս օգտարարս արքունական և դատաւորական հոգացեալ զորս յետոյ գրեսցուք։ Սա Թէ իւր և (Թէ) նոյն ժամանակի անցից պատմութիւնն ինքնին յատուկ ունի գրեալ։

Նոյն Կրետացի Աբրահամ Կաթողիկոսն կոչի և Թէքիր-տաղցի, այլ ծննդեամբ էր 'ի Գանտիոյ Կրետէի. իսկ Առաջնորդ եղև Ռոտոսթոյի (Թէքիրթաղու)՝ զոր ինքն յիշէ Եր-կնոյ քաղաքին (զոր անուն տային նահանգին 'ի հնումն), յո-

րում վարեաց զնոյն պաշտօնն իբրև ամս քսան և հինգ, և եկն յուխտ այսր 'ի Ս. Էջմիածին. այլ Տէր կանխագոյն տնօրինեալ էր զկամս իւր. որով յետ սակաւուց կացուցաւ 'ի Կաթողիկոսութիւն ամենայն Հայոց:

Առաւել քան զայսոսիկ առայժմ չերևին այլ տեղեկութիւնք, որպէս և այն՝ եթէ՝ քանի՞ ամաց էր՝ յորժամ փոխեցաւ յաստեացս, ո՞յր աշակերտ, կամ յորո՞ւմ թուականի ձեռնադրեալ վարդապետ, եպիսկոպոս՝ և այլն, և թէ որպիսի՞ ծընողաց զաւակ՝ և այլ բազում ինչ միայն զանխուլ 'ի մէնջ:

Արդ նախ քան զկնքել զբանս մեր՝ ծանուցանեմք և զայս ինչ. զի մի օրինակ և եթ գտանէր պատմագրութեանս 'ի Մատենադարանի Մայր աթոռոյս Կաթողիկէ Էջմիածնի. զոր տարակուսանօք թէպէտ համարիմք գրեալ 'ի հեղինակէ սորա, այլ գէթ չէք կասկած կարծելոյ առ կենդանութեամբն և հրամանաւ Նորին Աբրահամու սակս արտագրեալ լինելոյն 'ի սեագրութենէն. մանաւանդ զի գոն 'ի միջի սրբագրութիւնք ինչ և յաւելուածք՝ որք զանազանին 'ի գրչութենէ օրինակողին, և որք պարտին լինիլ մուծեալ 'ի բուն հեղինակէն:

Ի վերջ յառաջակայ այսր պատմութեանս եդաք նաև զերկուսին հեղինակութիւնս Կրետացւոյն. որոց մինն է Կոնդակ, զոր գըրեալ է 'ի Մուղանէ անտի առ ազգայինս ոմանս յԱնդրիանուպօլիս, որոյ օրինակն գտանի 'ի ձեռագրի միում ընդ ընդհանուր համարաւ **1339**, իսկ միւսն՝ պատմութիւն Անի քաղաքին, զոր գտաք 'ի ձեռագրին ընդ ընդհանուր համարաւ **1749**, որ օրինակեալ է 'ի Կաֆա ('ի Խրիմ) յամի տեառն **1756**:

# ԱԲՐԱՀԱՄ

## ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՐԵՏԱՑԻՈՑ

# ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ

### ԱՆՑԻՑՆ ԻՒՐՈՑ

### ԵՒ

## ՆԱՏՐ–ՇԱՀԻՆ ՊԱՐՍԻՑ

---

### ԳԼՈՒԽ Ա.

ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹԻՒՆՆ Աստուծոյ ոչ փոխի ըստ վկայութեան սուրբ գրոց. զի զոր կամի տէր, զայն առնէ և ո՞ է նմա խորհրդակից. և այն թէ՝ տէր խոնարհեցուցանէ; և տէր բարձրացուցանէ. մեծացուցանէ, և տէր աղքատացուցանէ. և այլն: Իսկ մերս նուաստ բնութիւնս թոյլ և գիտութիւնք շաղբաղբունք են, և հազիւ նկատեմք զերկրաւորս ըստ ասելոյն: Վասն որոյ ոմանք 'ի բարւոյ սկսեալ՝ զչարն աւարտեն. և ոմանք 'ի չարէն սկսեալ՝ 'ի բարին եզերեն. բայց բիւր երանութեան արժանի նոքա են՝ որ 'ի բարւոյն սկսեալ 'ի բարին կատարեն: Իսկ ամենաբարին Աստուած՝ և աղբիւրն բարութեան՝ միշտ զեղուլ բաղձանս շնորհեաց բնութեանս, թէպէտ ոմանք 'ի թիւր գործածեն: Արդ՝ եթէ 'ի բարին հետևելն, գործակից լիցի նոցա 'ի բարիս՝ ըստ առաքելական վկայութեան: Վասնզի զկարօտութիւն՝ զոր ունէի 'ի մանկութենէ՝ որ վասն սրբոց Աթոռոց, և ևս վասն Հայաստան երկրի վանորայից և ուխտատեղեաց, շնորհեաց աստուած անարժան անձինս: Նախ՝ 'ի սուրբ Սաղիմ՝ 'ի թվին ՌՃԿԲ. Կալով անդ Ի. ամ, 'ի ժամանակս նորոգութեան աշխարհագումար տաճարին սրբոյ Յարութեան, և ամենայն սրբոց տնօրէնականաց, 'ի Ժ. ամի Առաջնորդութեանն իմոյ Թրակիոյ քաղաքին: 'Ի Պատրիարգութեան սրբոյն Սաղիմայ՝ Գրիգորի ճգնազգեաց և հեզահոգի սրբազան Վարդապետի. և յԱռաջնորդութեան Կոստանդնուպօլսոյ՝ Յովհաննէս քաջաջան և աստուածաբան Վարդա-

պետի՝ աշակերտաց Վարդանայ վարդապետին Բաղիշեցւոյ՝ 'ի վանից Ամրտօլւոյ: Իսկ 'ի թուին ՌՃՁԳ. և յապրիլի Ի. չուեցի 'ի Թրակիոյ՝ գնալ 'ի սուրբ Էջմիածին՝ և 'ի Տարօն 'ի սուրբ վանքն Գլակայ, որ յանուն սուրբ Կարապետին է կառուցեալ 'ի սրբոյն Գրիգորէ մեր լուսաւորչէ. որ և 'ի Ճ. օրն հասանք 'ի սուրբ Էջմիածին աշխարհաբոյծ տաճարն՝ յօգոստոսի Գ. օրն շաբաթ՝ յերրորդ ժամու:

## ԳԼՈՒԽ Բ.

Վասն ճանայոյն ընդ ես ելեալէին ի սուրբ Էջմիածնէն՝ [illegible] ինչ, և ողջունելոյ զնշխարս 'ի սուրբ Կարապետ:

Արդ՝ 'ի գալն մեր 'ի սուրբ Աթոռն, և յետ համբուրելոյ զնշանս սրբոյ Տաճարին՝ և երկրպագելոյ սուրբ Իջման տեղւոյն՝ և այլոց աստուածընկալ սուրբ Խորանացն, առ ժամայն առեալ տարան զմեզ առ Աբրահամ Վեհապետն՝ սրբազան Կաթուղիկոսն, որ էր նստեալ 'ի պալատէզն՝ 'ի ներքոյ մեծի [illegible]. և 'ի տեսանելն զմեզ՝ խանդաղատեցաւ և յոյժ ուրախացաւ. զի սաստիկ սէրն՝ որ արծարծեալ էր 'ի սրտի մերում՝ Ի. ամէի վեր բոցափայլեալ յայտնի երեւիր: Եւ յետ զրուցատրութեան մերում՝ և հարցաքննելոյն զողջնութիւնն Պատրիարքի եղբօր մերոյ, և զմեծ քաղաքէ Կոստանդնուպօլսոյ, և զեկեղեցեաց, և զիշխանաց, և զքահանայից, հարին զ[illegible], և ետ ինձ հրաման գնալ 'ի մենարանն իմ: Եւ առեալ տարան զիս 'ի յԱղէքսանդրու սրբոյ Կաթուղիկոսի [illegible]. որ էր և այն 'ի ներքս անդ 'ի Կաթուղիկոսարանի: Եւ ապա հարին զՊատարագին զանգակն, և ելեալ գնացաք 'ի Պատարագն. և յետ պատարագին՝ 'ի Սեղանն: Եւ այնուհետեւ ամենայն օր ընդ իւր ունելով զիս 'ի տուն՝ և առանձին, 'ի զրուցատրութիւնս և 'ի խորհրդակցութիւնս միշտ մինչև ցաւուրս Ի: Եւ ապա կամեցայ հրաման առնուլ՝ և գնալ 'ի սուրբ Կարապետ. և ոչ ետ թոյլ՝ ասելով, թէ՝ զքեզ ինձ աստուած առաքեաց տեսանելով զխղճութիւնս իմ, վասնորոյ յայսմ ամի գոնէ ոչ թողում գնալ. այլ կաց մնա 'ի գիրկս Մօր քո Լուսոյ սուրբ Էջմիածնիս, և լե՛ր ինձ խորհրդակից, ցաւակից և կարեկից. և

զխնամ զհայրապետութիւն քո 'ի հեռուն հետէ. և վկայէ հոգի իմ, զի բարեկամ և հաւատարիմ ես ինձ, որպէս և իմայնոցն, որպէս լուեալ եմ այսքան տարի, նա և 'ի սուրբ Գահիս: Իսկ որքան պաղատեցի և աղաչեցի, չեղև հնար. և ոչ ետ թոյլ և հրաման. այլ ասաց, եթէ տէր կամեսցի, 'ի գալ ամի և ես կամիմ գնալ 'ի Տարօն, եթէ յաջողութիւն լիցի յաստուծոյ: Այժմ առ իս ասէին և 'ի միասին գնասցուք. և անդ կատարեա՛ զուխտ քո. և ճանապարհորդեցից զքեզ գնալ 'ի վիճակն քո: Արդ խնդրեցի կրկին տալ հրաման իմայնոցն որք եկեալ էին ընդ իս՝ գնալ 'ի սուրբ Կարապետն յուխտ, և անտի 'ի տեղիս իւրեանց. որք էին Յարութիւն վարդապետն, և Թէքիրտաղու Եւագէրեց տէր Յովհաննէսն, տէր Յոհանն, տէր Պօղոսն և Պօղապհիսարցի տէր Գասպարն, և այլ Սամաթօլցիք, աւելի քան զԻ, և յանձնելով զնոսա յԵսաուծոյ (յԵսօպօսաճ), և 'ի Կաղզուանայ առաջնորդ Յովհաննէս վարդապետն, որ եղև նոցա Առաջնորդ, և առեալ տարաւ Կաղզուանով զնոսա, որ էր օգոստոսի ԻԳ. և օրն շաբաթ: Իսկ ես խօստացայ մնալ մինչև ցայգէկութն, և ապա չուելոյ և ծիծաղեցաւ երանելին և ասաց. բարի է, այնպէս եղիցի:

## ԳԼՈՒԽ Գ.

Վասն գնալոյն մեր ընդ Արճաղանին 'ի վանորայս որ մերձ էին սուրբ Իւլէնտաճնոյ. և վասն օծելոյն մեր զնորաշէն սեղանն Յօհաննավանից սուրբ Կարապետին:

Յետ ուղևորելոյ զաղայսն 'ի սուրբ Կարապետ յառաջիկայ երկուշաբաթին, որ էր օգոստոսի ԻԵ. հրաման ետ սպասաւորացն պատրաստութիւն տեսանել առ 'ի գնալ 'ի վանորայսն. քանզի ասաց, թէ՝ և իմ սիրտս կարի նեղացեալ է. զի ի հեռուն հետէ 'ի դուրս չեմ ելեալ. և առեալ զիս ընդ իւր, և զայլս 'ի վարդապետացն աւելի քան զԺ. և այսպէս ուրախութեամբ գնացինք: Նախ՝ 'ի Յօհաննավանքն. զի Առաջնորդն Յօհաննավանից Յակոբ վարդապետն եկեալ հրաւիրեաց զՎեհն վասն օծման Խորանին և Սեղանոյն որ նորոգեալ էր հիւսիսակողմն մեծի Տաճարին. որ էր շինեալ 'ի սրբոյն Գրիգորէ մեր Լուսաւորչէն, և ամփոփեալ անդ 'ի մասանց և 'ի նշխարաց սրբոյ Յամբրոսոյն, որ մեծաւ հանդի-

սիւ օծեցաք զանդամն 'ի միասին. և յետ հոգևոր և մարմնաւոր ուրախութեան Ի. Գ. օր կենալոյն զկնի, գնացինք 'ի Սաղմոսավանք, և 'ի Լուսաւորչայ Անապատն, 'ի միւս փոքր Անապատն, և ապա 'ի Յուշի սուրբ Սարգսայ վանքն: Իսկ մինչ էինք անդ, եկն և Մէլիքն Երևանայ Յակոբջանն. զի խնդրեալ էր զնա Վեհն: Իսկ 'ի նոյն աւուրս եկն այլ մի 'ի Թիֆլիզոյ, և եբեր զրոյց և գիր, եթէ Խանն փաշայն զԱշխալբէկն որ էր Մէլիք Թիֆլիզոյ 'ի մեր ազգէ, վասն ոչինչ պատճառի ետ խեղդել զնա, և առաջի դրանն արկանել մինչև չառ ծա. ղոշ. և ապա ետ հրաման թաղել: Իսկ 'ի միւս օրն գնացեալ 'ի Փարպի ըստ խնդրոյ իմոյ, և անտի դարձաք 'ի Կարբի 'ի տուն պարոն Խաչատուրին և պարոն Գասպարին, մնալով անդ գիշեր մի: Իսկ ապա եկինք 'ի Մուղնի սուրբ Գէորգայ վանքն. էր ընդ մեզ Մէլիք Յակոբջանն՝ տկար գոլով. և մնացինք գիշերն: Իսկ 'ի լուսանալն, յետ սրբոյ պատարագին և ճաշոյն եկաք 'ի յՕշական. Մէլիքն գնաց Եղևարդով յԵրևան. և զգիշերն մնացաք յՕշական. և յայգն չուեալ հասաք 'ի սուրբ Էջմիածին:

## ԳԼՈՒԽ Դ.

### Վասն երեքկին անգամ առանձին գնալոյն իմոյ 'ի յԱնապատն:

Որովհետև առաւել սիրոյն որ ունէր ընդ հոգոյս, առեալ զբօսանաց աղագաւ՝ գնացինք 'ի վանորայս և յանապատս, բայց ոչ կարացինք ունել անդանօր 'ի սուրբ ուխտն՝ վասն զբաղմանցն և մեծի հոգաբարձութեան սուրբ Աթոռոյն. և զի աւելի քան զՆ. մարդ կային, նոյնպէս և առաւել զպասաքն, և թուէր ձանձրութիւն լինել սպասաւորացն մերոց, և զի նորահասեաց գոլով Վեհն և յոյժ ցաւեցօղ վասն ամենեցուն, ոչ կամէր ընդ զձանձրանալն ումեք. վասնորոյ աճապարէր տանել 'ի սուրբ Գառնի, մանաւանդ զի էր և ժամանակն խաղողի. և ազգի ազգի զրոյցք գային 'ի լսելիս Վեհին՝ վասն զօրաւան Թահմազխանին, և շարժել զօրացն Պարսկացն. փութացաւ զդարձն անդրէն առ սուրբ Աթոռն, զի հոգասցէ զհոգս ամենեցուն. և զի սովորէս ընտրեալ է 'ի բնութիւնս մարդկանց 'ի բնուստ անտի ոչ հոգալ, և ոչ ցաւել, և ոչ փոյթ ունել յամենայնէ. այլ

իւրաքանչիւր զիւր հանգստութիւնն ջանայ և՛ ապահովել, և՛ պաշտիչ ուրուականին իւրոյ լինել. իսկ զամենայն ցաւս ընկենուլ 'ի վերայ գլխոյն. և մինչ կենդանի է, թէ իրաւի և թէ անիրաւ՝ սակաւ մի ցաւեցող ցուցանել զինքն մեծաւորին իւրոյ. և այնպէս թուի ինձ, վասն օգտի անձին իւրոյ իսկ և բարեկեցութեան. և յետ վախճանին՝ այլ ոչ յիշեալ ամենևին և ոչ ցաւել, այլ փոխանակ ցաւելոյ և կոծելոյ, երգել և հեգնել որպէս 'ի բընուստ անտի ունին զայն ազգն մեր. որոյ զպատճառն՝ ոչ այլ ինչ գիտեմ, եթէ ոչ զռգիտութիւն և զապերախտութիւն: Բայց ես կրկին հրաման առի 'ի Վեհէն՝ գնալ 'ի սուրբ անապատն Լուսաւորչայ՝ և մնալ անդ շաբաթ մի առանձին, և ապա գալ. և ետ հրաման գնալ: Որ և եկեալ Ճայլն անապատին Յօհան վարդապետն, իբրու խնդրելով զիս 'ի Վեհէն, էառ և տարաւ յանապատն. և գնացեալ մնացի անդ շաբաթ մի, և դարձայ 'ի սուրբ Աթոռն

## ԳԼՈՒԽ Ե.

### Վասն գնալոյն իմոյ 'ի հեռաւոր վանորայսն՝ յՕ-խրդ:

Եւ յետ ոչ բազում աւուրց կրկին հրաման առի 'ի Վեհէն գնալ 'ի հեռագոյն վանորայսն Արարատու. և թէպէտ ոչ կամէր հրաման տալ, վասն զի և ինքն փափագ ունէր տեսանել զայն ուխտատեղսն, զոր ոչ էր տեսեալ բնաւ 'ի Վեհապետութեանն իւրոյ, և պատճառանօք իմիք փափագէր և երանէր հոգին տեսանել. բայց ցաւն ժամանակիս և զբաղմունքն ոչ ետուն թոյլ. վասն որոյ անճարացեալ ետ ինձ հրաման. և ելեալ 'ի սուրբ Աթոռոյն՝ տկարացեալ անձամբ գնայի այնու մտօք և հաւատով, զի բուժեցիմ 'ի չարաչար տենդէ ցաւոյս: Եւ գնացի նախ յԵրևան, որ էր հոկտեմբերի Ժ.Օ. և մի գիշեր մնացի յԵրևան. և միւս օրն գնացի 'ի սուրբ Վիրապ, և անտի 'ի Ակոռի, և 'ի սուրբ Յակոբայ աղբիւրն 'ի Մասիս. և անդ կատարեալ զուխտն իմ, և մատուցանել ետու Պատարագ. և կատարեալ մեր զուխտն, և դարձաք 'ի գիւղն Ակոռին. և անդ սակաւիկ մի հանգչեալ և ճաշ արարեալ դարձաք 'ի Վիրապն. և 'ի Վիրապին յատակն իջեալ իմ ժամարարական պատրաստութեամբն, աւարտեցի զպատարագն,

և եկեալ 'ի Վիրապէն մնայի զգիշերն: Եւ այգուցն առեալ ընդ իս առաջնորդ ճանապարհին Արեգայ մի, գնացի 'ի Ջաւուց թառ, որ է Ամենափրկչի վանք, և մնալով անդ Բ. գիշեր: Եւ անտի 'ի Եղջոց վանքն, և դարձայ 'ի սուրբ Գեղարդն, մնալով անդ և Բ. գիշեր: Եւ անտի եկի 'ի Գառնի, մնալով գիշեր մի. և անտի 'ի Նորք, մնալով անդ և գիշեր մի: Եւ ապա գնացի 'ի Երեւան. և գիշեր մի ևս մնացի անդ. և ապա գնացի ի Գետարգել. և անդ հասան հրաւիրակքն Վեհին, զոր երկիցս և երիցս մորգէր յղեալ գրով և թղթով՝ խնդրելով զիս շէշտիւ, և արա՛գ արա՛գ հասանել նմա: Նախ՝ վասն կարօտութեան երանելոյն: Երկրորդ՝ վասն գալոյ Թօխաթու Նուիրակին՝ Աղէքսանդր վարդապետին և Սարգիս վարդապետին՝ աշակերտին Գասպարարգի, որ յետոյ կոչեցաւ Գէտ Սեապու: Եւ երրորդ՝ վասն խօթութեան պատահելոյ նմա. զի եղանակն և տարին ծանր էր, և յօդն (օդն) ապականեալ. վասն զի համայնք խօթացեալք էին միաբանքն 'ի սուրբ Աթոռն, և ես 'ի գիւղն. որ և բազումք մեռան, յորս էր նախ հայր սուրբն և Թէքիրտաղցի Սարգիս վարդապետն, և Բաղէշցի Զաքարիայ վարդապետն, և հոգևոր Տէրոջ մահտեսի Աւետիսն, և այլք 'ի ծառայելոց, և 'ի գիւղէն յոլովք: Իսկ այլք խօթացեալք երկար տկարութեամբ հազիւ գտան զառողջութիւն մինչև 'ի Զատիկն. որ և 'ի տեսանելն իմ զեկեալսն և զգիրսն, անյապաղեցի և դարձայ 'ի կրունկն Երեւան, և հասայ յԷջմիածին 'ի նոյեմբերի Գ. վասն զի կամէի գնալ 'ի Բջնի, 'ի Կարբինս, և յայլ վանորայսն: Բայց 'ի բաց թողի, որովհետև հրաւիրեցայ 'ի Վեհէն, և փութացայ 'ի սուրբ Գահն 'ի տեսութիւն Սրբազանին:

## ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս գալոյն իմոյ 'ի սուրբ Աթոռն, և գտանելոյն զհիւանդ Տէրն 'ի մահճի. և վասն վախճանի նորա և թաղմանն:

Իսկ 'ի գալն իմ 'ի սուրբ Էջմիածին, որ էր նոյեմբերի Գ. և օրն էր Բ. շաբաթի, գտի զՎեհն 'ի մահճի ընկողմանեալ և հիւանդացեալ Բ. աւուրբք յառաջ. և հանդիպեալ նմա առժամայն սիրոյ հարցանէ զպատճառ խօթութեան և վասն ցաւոյն. և թէ յոր անդամ, և յոր կողմ ունի զխստութիւն ցա-

ւոյն։ Իսկ երանելին ասէր. եթէ բոլոր անձն իմ ցաւի և ոչ գիտեմ զպատճառն, և զուստն։ Իսկ տառապեալս և վարանեալս սկսայ յուսադրել, և մխիթարել, և սփոփել մինչև ցմասն մի գիշերոյն, մինչև երից և չորից անգամ ասաց. թէ՝ գնա՛ հանգստացիր՝ խեղճ ես, և ՚ի ճանապարհէ եկեալ դադարած ես։ Իսկ ես զմտաւ ածեալ՝ մի՛ գուցէ նեղացի կամ տրտմեսցի սակս չգնալոյս, ելեալ գնացի ՚ի տեղի իմ. և այսպէս շուարեալ և վարանեալ կացաք զցայգ և զցերեկ մինչև ցկիրակի. և ՚ի նոյն օրն ես շուրջ զմահճօքն նստելով վարանէաք, և ընդ միմեանս հայելով լռելեայն տրտմեալ երեսօք տարակուսէաք. որ և ՚ի նոյն գիշերին ևս մինչև ՚ի Գ. և Դ. ժամ ՚ի մօտն մնացեալ, և ապա յորդորեցին զես փոքրաւորքն, թէ գնա՛ դու ՚ի քո տեղն, և թո՛ղ որ սակաւ մի հանգչի. զի անհանգիստ լինի ՚ի տառապելն քո. և ես ելեալ գնացի ՚ի մենարանն իմ և մնաց անդ որդեակն իմ Յովհաննէս վարդապետն ընդ տէր Յակոբին. և յետ հասարակելոյ գիշերոյն, եկեալ առ իս ասելով. թէ եկ գնա՛ հոգևոր Տիրոջ մօտն, զի այլեմնապէս երեւի. և խորայինքն ամենայն տարակուսեալ կան։ որ և վաղվաղակի ելեալ հասի ՚ի մօտն. և տեսի որ և ՚ի առ և ՚ի տուր շնչոյն էր ՚ի հոգեվարութեան։ Եւ սկսայ աղաչանօք խնդրել տալ օրհնութիւն ամենեցուն. այլև արձակումն բանիւ եղելոցն և պատուէր վասն սուրբ Աթոռոյն և միաբանիցն. և յանձնարարութիւն վասն իւրայնոցն։ Իսկ երանելին երբեմն բանիւ նուաղ ձայնիւ, և երբեմն օրհնեալ զձեռօքն նշանակութիւն տայր խնդրոյս։ Եւ այսպէս աջ ձեռն ՚ի մէջ ձեռացս՝ հեշտ և հանգստաւ աւանդեաց զմաքուր հոգին իւր ՚ի ձեռն հրեշտակի բարւոյ, այնպէս, որպէս թէ ոք հանցէ խնծոր մի ՚ի ծոցոյ, և տացէ բարեկամին կամ սիրելոյ իւրոյ, յԺԲ. կամ. ԺԱ. ժամու գիշերոյ, ՚ի նոյեմբերի Ա. լոյս Բ. շաբթի. որ և ՚ի լուսանալ առաւօտին ծանուցաք Երևանայ մէլիքին պարոն Յակոբջանին. որ հրաման էառ ՚ի դ.քաէն Երևանայ՝ որ էր Դէ—Նէջափաղ։ Եւ փաշայն տկարացեալ գոլով և անկեալ ՚ի մահճի, և մինչ կամէին առնուլ ՚ի նմանէ զհրաման թաղելոյն, առաժամայն մեռաւ և փաշայն յառաւօտեան ճաշու ժամու. զի հոգևոր Տէրն ՚ի գիշերին վախճանեցաւ, և ՚ի նոյն առաւօտին փաշայն ևս մեռաւ յԵրևան։ Վասն որոյ Գէխէան էառ հրաման՝ զի թաղեսցի. և ՚ի միւս օրն ՚ի տեղի փաշային եղին զՀանծի Հիւսէին փաշայն, որ էր տեղեաւ Տէրէնաէցի, և կայր յԵրևան Մոֆաղայ պահող. և եկեալ մէլիք Յակոբջանն՝ փաշայի Զո—խա—ար—ին մի

յԷջմիածին, և յԳ. շաբթի անդրժամս ժամ որպրի, և օծի, և տարեալ թաղեցինք 'ի սուրբ Գայիանէն. և ոչ կարացի գնալ վասն սաստիկ ջերմանս, բայց որում անդեքէր զիս օր ընդ մէջ, այլ յուշաթափեալ եկի և անկայ 'ի մահիճս: Իսկ 'ի միւս օրն առեալ իմ զբոլոր ուխտ սուրբ Էջմիածնայ, գնացինք 'ի Գայիանէ, և կատարեցինք զԱւագն. և յետ Աւագոյն դարձաք 'ի վանքն և 'ի նոյն օրն կամայ յակամայ զմեզ Տ. Օ. վարդապետօք տանէին յԵրևան. որ և 'ի ճանապարհին յորժամ անցաք զհնձախացէտ եկեղեցին, տեսաք զբազմութիւն արանց և կանանց՝ Երևանայ բնակողացն 'ի մեր ազգէն, որ փախստեայ գային. յորմէ սոսկացաք և հիացաք զկողմնութիւն նոցին, և կամեցաք և մեք դառնալ անդրէն 'ի վանքըն, զի մի' զուցէ 'ի դալ զօրացն պարսից՝ դաւանիցիմք 'ի մէջ բերդին Երևանայ. և այսպէս աղաչելով զՄելիքն և զտանուտէրն՝ որ էր Մահմատշէր 'ի վերայ մեր, հասանք 'ի Փարաքար: Եւ տեսաք մի նստեալ անդ յեզերս առուի միոյ, հանեալ եդի 'ի ձեռս նորա Տ. ասկի, բազում աղաչանօք հազիւ զերծաք և դարձաք 'ի Վանքն:

## ԳԼՈՒԽ Ե.

### Յաղագս երկին Մահմատշէր գալոյ, և զնա բանադրելով տանելոյ յԵրևան, և ի ներքոյ մեծի չարի արձակելոյ:

Իսկ 'ի միւսում օրն՝ որ էր Ե. շաբաթի, կամեցաւ առեալ զմեզ Տ. Օ. վարդապետօք, և յակամայ կամօք քարշէր տանել յԵրևան, որ և իմ անմտիս օրն էր. յորում զերծայ 'ի նոյն օրն. քանզի Մահմատշէրն չորեքշաբթի յԵրևան եկեալ էր, վասն որոյ Ե. շաբթի կամեցաւ երթալ գնացաք. որ և զճանապարհն առաջանէր արտասուօք վասն զանազան պատճառաց: Եւ յորժամ հասանք յԵրևան, տարան 'ի դուռն քաղաքապետին. և նախ 'ի մօտ Ռուսխանն, որ էր Թէֆլէսն. և սկսաւ նախ ողոքանօք յորդորել զիս, թէ՝ որովհետև փախճանեցաւ Խալիֆայն, և դու նորա ծանօթ և սիրելի ես. և ամենայն միաբանքն զքեզ կամին, ես ծանուցանեմ Թագաւորին, որ դու լիցիս 'ի վերայ նոցա Խալիֆայ 'ի տեղի հանգուցելոյն: Իսկ ես հրաժարեալ յայնմանէ՝ ասացի նմա. թէ չեմ բաւական այդմ գործոյ, և ոչ ունիմ կարողութիւն յամենայն կողմանց, մանաւանդ զարբեալ և օտար եմ: Ուխտի աղագաւ եկեալ

եմ այսր․ որ և հրամանս ունիմ զոր առեալ եմ ինձ յարքունուստ, այլ և գիր Գ. զլար-աղասայն և Գ. ափոնծի-պաշի Գուլ-Ահմետ աղայէն, որ ինձ ախրութիւն տուեալ զես անդրէն 'ի վճանկնիմ դարձուցանէք: Այլ և բազում բանս պաղատանաց, զոր մի ըստ միոջէ գրելն ձանձրութիւն է, բայց ոչ եղև հնար զերծանել, այլ դարձեալ զօրքականն 'ի խրոխտական և սպառնական և սպառ-նալից կերպիւ ահացուցանել զես, և մահու ես սպառնացաւ, յորում կայի շուարեալ և տարակուսեալ. և առ ժամայն յանին կացեալ գնաց մօտ Փաշային, և խիկոյն յետ եկեալ ասաց, ա-րէք զայդ Փաշային մօտն, պատուէր տալով ինձ, թէ չլինի հրա-ժարիս, որ Փաշայն գ.քեզ կ'մահացուցանէ: Իսկ յորժամ տարան զես յանդիման Փաշային, սկսաւ և նա սաստկութեամբ և մեղա-դրանօք խօսիլ ընդ իս. որ և նմա պատասխանեցի թէ, մեր նախ-նի սովորութիւնն այն է, որ ծախարանն Սպահան և Ստամպօլ, որ այն Բ. քաղաքացիք միաբանին, և զմի ոմն ընտրեն և կացու-ցանեն: Ապա թէ ո՛չ՝ սուրբ Էջմիածին և Կաթուղիկոս նստողն մեծ վնաս կլինի. գիր ես ունիմք այսպէս հաստատեալ բազմաց զրով և կնքով, և նզովիւք փակեալ. և այլ շատ խօսք և զրոյց, և թէ որչափ լացի և ողբացի ոչ եղև հնար, այլ՝ բարկացեալ 'ի վերայ իմ և ասաց, եթէ Սպահան և Ստամպօլ մինչև երթևե-կութիւն գրերաց լինի և ընտրութիւն վասն ումեմն, 'ի մէկ տա-րին չլինիր. և ահա երկուց կողմանց զօրք և պատերազմունք եղևին, և Էջմիածին 'ի վերայ ճանապարհին է, մինչև ցայն օրն վանքն պիտի քակուի, և միաբանքն անգլուխ գոլով մինն ոչ մնայ, այլ ցրուին, այնուհետև ի՞նչ օգուտ է ձեր ընտրութիւնն: Գնա. ահա հրամեցի քեզ, և յանձն առ, և ըստ օրինաց ձերոց կա-տարեսցեն զկարգ Կաթուղիկոսութեան 'ի վերայ (ձեր), և կառա-վարեա զայն Էջ++էն. զի ոչ միայն ձերն է, այլ մեր Թագաւորին է, և մեզ ասպնջական և պիտանացու. և ես մարդ առաքեմ հան-դերձ գրերով, [illegible], և տամ բերել զհրաման 'ի յար-քունուստ 'ի վերայ քո: Իսկ այսպէս քարշեցին զես արտաքս, և գրեցին զաղաչողագիր մի, թէ դուք միաբանք Էջմիածնայ, որով-հետև ընտրեցիք և կամեցայք զդա լինել ձեզ Գլուխ, ահա հրամեցի նստել զդա ձեզ խալիֆայ, և դուք զոր (ա—ն+) օրէնք, և արարողութիւնք՝ կատարեցէք, և հնազանդ լերուք որպէս յառաջ-նոցն. և զայլ հարկաւոր բանսն 'ի յարքունուստ ես հոգամ, ձեզ հոգ չլինի: Իսկ առեալ զես տարան 'ի տուն Մելիք Յակոբջանին,

և Գ. օր մնացեալ 'ի տօն Մեհեկին, և ապա ժողովեալ զճէտխուռէքն Վանանդեաւ, զՇիրակայս, և այլոց տեղեաց, այլ և զԱռաջնորդս վանօրէից՝ յԷջմիածին, և անտի և ս զգեղջն է Կարբի և յԱշտարակ, և յայլ տեղիս՝ զալ իշխանաց և ճէտխուռտայից. որ եկեալ ժողովեցան 'ի սուրբ Էջմիածին. մնացեալ վանօրէից Առաջնորդքն Նոյեմբերի ԻԳ. Եյրիմակայ կերպակին օծին զանարժանս Կաթուղիկոս, և եդին 'ի ծառայութիւն և 'ի ներքոյ լծոյ սուրբ Էջմիածնի՝ և Աթոռոյն մեծի սուրբ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին. որ էր թուական մեր ՌՃՂԳ.։

## ԳԼՈՒԽ Բ.

*Յաղագս հաստատելոյն իմ զինուորման, և ծառայելոյ սուրբ Աթոռոյն. և վասն պաշտպանելոյ զՄէնձէ՝ որ է Գանձակէն, 'ի Պարսից 'ի Թահմազ խանէն. և վասն փոխադրելոյ Ռեճեփլու օղլու Եղբօրն փաշին, և խանականն յղելոյ 'ի Կարս։*

Յետ այսորիկ սկսաւ մատաղ լինիլ, և յամենայն զօրութենէ ջանալ և տրփալ վասն մեծի գործոյն և կառավարութեան սուրբ Աթոռոյն մեծի. զի անծանօթ գոլով իմ երկրի, և մարդկանց, և միաբանից, և ամենայն ելից և մտից, և պարտուցութեան, և վասն պակասութեան փողոց՝ որս ոչ գոյր ամենևին, իսկ Վանից ծախքն բազում և անթիւ, յորժ վշտանայի, տառապէի, բայց ողորմածն Աստուած խնամէր և սատարէր, երբեմն 'ի հողոյ արդեանց վաճառելով, և երբեմն ողորմութիւն 'ի եկողաց յօգնութիւն հասանելով, և երբեմն փոխ առնելով, մինչ զի բազում պարտք արարի մինչև ցայսօր. և այսպէս տանջանօք և խղճութեամբ կառավարեցի զսուրբ Աթոռն. յորում ժամանակի պաշարեալ կայր Գէնճէն 'ի պարսից. եհաս և Ռեճեփլու օղլուն 'ի Համթայ քաղաքէ զօրօք 'ի Պայազետ. և 'ի Կարս ձմեռելով, և Ժ.Ս. սօմար ցորեան Թէմիր Փաշային հրաման տուեալ, որ տարաւ հասոյց 'ի Թիֆլիզ, և եկն դարձեալ 'ի Կարս։ Նոյնպէս և Կարսայ քաղաքն պատրաստութիւն ցորենոյ, և գարւոյ և այլոց իրաց, և պատերազմական անօթից յղեաց 'ի յԵրևան։

## ԳԼՈՒԽ Թ.

### Յաղագս փախստեան Թահմազ խանին ի Լոռւոյ Գաղախու նահանգէն ի վերայ Գանջայ։

Եւ յորժամ էանց զառնութիւն օդոյն ձմերայնոյ, և հակդարձաւ ամառ մի եղանակն և մտաք 'ի թուին ՌՃՁԳ. և 'ի ապրիլ ամսոյն չուեաց խաղաց Թահմազ խանն 'ի վերայ Գանջայ քաղաքին՝ կողմամբն Գաղախու և Լոռւոյ մինչև սպառեալ էր ձիւնն 'ի լեռնային կողմանցն յայնցանէ։ Քանզի լուաք 'ի զօրաց Պարսից և ի մերձակայից խանին՝ թէ զծործոր մի յորում կամէին անցանել և շրջել 'ի վերայ Գանջայ, սուսերօք իւրեանց պեղեցին հատին և ճանապարհորդեցին անցանել. որ և 'ի գիշերին յայնմիկ կրկին ձիւն եկեալ ելից զճանապարհն՝ յորում աշխատեալ էին աւուրս Բ։ Իսկ ապա այնուհետև ընդ այլ ճանապարհ անց գնեալ բազում դժուարութեամբ հասին 'ի սահմանս Գանջայ, որ և եղեալ ընդ դէմ մեծամեծ, զի օր պատերազմեցան ընդ իրեարս, և յերկուց կողմանց անկան մեռեալք և վիրաւորեալք՝ երրու զեր հարիւրից. բայց կողմն Հագարացւոց 'ի փախուստ դարձան, և խանն դարձաւ 'ի բանակեալն իւր 'ի տեղի անուանեալ Եախնի Բէգլէ. և վասն ոչ գոլոյ խոտոյ բաւական զօրացն և զգրաստուցն, դարձաւ հանդարտեալ՝ և երկրորդ Եղեկեանցոյն 'ի յԱրարատ, Գէօչ-Ամպարանն զաւ յԵրևան և յԷջմիածին։

## ԳԼՈՒԽ Ժ.

### Յաղագս փախստեան խանին ի կողմն Արարատայ, և իմ դէմ գնալն։

Արդ՝ 'ի դառնալն ի Գանջայ մեծի խանին, և ի ծանր ծանր գալ 'ի կողմանս Արարատու, եկեալ եհաս 'ի յԱպարան 'ի Մ Քառաղալայ կոչեալ տեղի, և զօրքն սփռեցան մինչ 'ի Կարբի և յԱշտարակ. և յուշ արարին ինձ իշխանքն մեր՝ որք կային 'ի բանակին, և Մէլիքջան տանուտէրն, թէ հարկէ գալ քեզ 'ի տեսու-

թիւն Խանին ընծայիւք և պատրաստութեամբ․ որ և եկեալ անյապաղ Ն․ Օ․ Վ․ արդապետօք և նուիրօք ըստ կարողութեան, է մայիսի ԻԶ․ որ էր Հոգեգալստեան երրորդ օրն՝ Գ․ շաբթի, և հասայ 'ի նոյն օրն 'ի Յօհաննավանքն և է չորեքշաբթի գնացինք 'ի յԱպարան, 'ի կողմն Շիրակայ կոչեցեալ տեղւոյն մերձ․ որ և սատեցին (ադըէցին) Խանին փառս մեր․ և ետուր հրաման Նուռողլի - պօղրան Աղա - Հասան Բէկին, ընդաղատնուլ զմեզ․ և զընացեալ առ նա հանգեաք զայն գիշերն։ Իսկ յայս Ե․ շաբաթի վաղ քաջ ընդ առաւօտն մինչ կամէր շուել, տարան զիս 'ի դէմ իւր ընծայիւք, և գնացեալ իմ բարեկի, և շնորհաւորեցի զգալուստ իւր․ որ և ինքն ես տայ, Խօշ գէլտիքին Խալիֆայ, Նէծէ ոէն, ղալղան, թէ ալլահ Խալիֆայ կէլտէ+ կելսին․ և առ ժամայն ձիաւորեցանք ինքն գնաց զօրօքն իւրովք, և բանակն զկնի․ և ետուր ինձ զինուորս յիւր սպասաւորացն, որ անկեալ առաջի իմ՝ տարան և զիս զկնի իւր։

## ԳԼՈՒԽ ԺԱ։

### Յաղագս գալստեան Խանին 'ի սուրբ Էջմիածին։

Եւ յորժամ հասանք 'ի մեծ բանակին, և իջաւ 'ի վրանն իւր, ետուր պատիւ ինձ. և փութացան ինդրակքն մինն զհետ միւոյ՝ շնչառեալ և սափրով․ քանզի այսպէս սովորութիւն ունին զամենայն գործս իւրեանց ծառայական շտապով և շուտափութութեամբ կատարել։ Եւ առ ժամայն փութացուցին զիս և հասուցին 'ի վրանն Խանին. որ և հրաւիրեալ զիս 'ի ձոր 'ի նստան իւր։ Եւ այսպէս զաւուրս երիս ընդ իւր ունելով 'ի բանակին, մինչև եկեալ հասանք 'ի Գողա գիւղն. և տայր հրաման ես ինձ գնալ յԷջմիածին. յորմէ փառահացեալ հրաւիրեցի և ես զնա գալ 'ի վանքն Էջմիածնայ և զընթացն․ և խոստացաւ գալ։ Եւ է շաբաթ որ է մայիսի ԼԱ․ եկեալ բանակեցաւ մերձ Քանաքեռն՝ ցեղերս գեղին 'ի հանան․ որ և զօրականն և զզարին խաղաղ կերցուցին կերակրացն, և պատմել կոխեցին, զի ժամանակ էր հնձոց․ և չև ես էր հնձեալ, և խաղաղ հասուցին 'ի դաշտէ անտի։ Իսկ ես

ակն ունէի՝ թէ ինձ խաղաղ լինի 'ի նմանէ, և ի կիրակի ոչ գնացի։ Բայց Բ. շաբթի առաքեցի զԱթոռակալ Աղէկսանդր վարդապետն 'ի բանակն՝ որ զրոյց բերցէ, զորպէս կամքն իցեն։ Եւ իսկոյն դարձաւ առ իս Աթոռակալն սրտմեալ երեսօք, և թախանձեալ (Բոզջանեալ) լքեալ սրտիւ, որպէս կիսամեռ. որ և 'ի տեսանելն իմ զնա այնպէս տխուր, և խնդրեալ զպատճառն՝ որ բարկացեալ էր Խանն, թէ վասն է՞ր ոչ եկն առաջի իմ, յորժամ եկի 'ի յօթևանս, և անտի տանէր զիս յԷջմիածին։ Արդ՝ ես ոչ գնացի. և այլք քանզի խելայնորեալք ոչ ուսուցին զիս զծէսս Պարսից և զամբո-բութիւնն երկրին։ Վասնորոյ ահիւ պաշարեալ, և 'ի կենցաղս յուսահատեցայ, և սկսայ այնուհետև զխորհն և զհրաժարական զողջոյնսն տալ, նորուն և աղօթս խնդրել յամենեցունց. և մտեալ 'ի սուրբ տաճարն՝ անկեալ առաջի սուրբ Էջմիածնի ահղոյն, լալով և հառաչանօք, և դառն արտասուօք յանձնելով զհոգի իմ յԱստուծոյ (յատղաղաձ), և այսպէս պաշարեալ երկիւղիւ, և լքեալ սրտիւ գնացի 'ի բանակն կիսամեռ. և մինչ ակնունէի ամենջանց և մահու, եհարց Խանն, թէ՝ Խալիֆայ, նիչի՞ն օլտուղ քի գէլմէդին, սան Փադիշահըն ղանղարըն այաղը, բէնիմ քի ղան Բաղդատ էյլէտուն Ո-ղ-Պէյլէրպայէ։ Իսկ ես լալով և դողալով պատասխանեցի, Խանըմ ալէն ․․․ գէլմիշէմ, քի ․․․ տուր. ․․․ էմէրն էտէրէն ալըլէմ, քիմսանըն ․․․ տուր, ․․․ ալէնամ տուր, օլտուղուն ալէնէ օլտուր. քանզի բարկացեալ էր 'ի վերայ Միրզայ-Մէհթուն, թէ վասն է՞ր ոչ ազդեցեր Խալիֆային, զի նա յօտար երկրէ է և ոչ գիտէ։ Եւ առ ժամայն ողորմածն Աստուած յեղաշրջեաց զսիրտն 'ի քաղցրութիւն. և խանդաղատեցաւ ներհնութեամբ իմում, և ասաց, Ճշմարիտ է խօսքն Խալիֆային։ Եւ զի յառաջի նուագին որ գնացի 'ի տես, շնորհեալ էր ինձ զԱմթուղթկոսութեան բախան, և այլ Գ. բախան ևս, որ էր մինն վասն աւանդիցն զոր Շահ Սէ/ի եկած տարին, զայնոսիկ զոր քշից Շահն և տարաւ ընդ իւր, տուեալ էին 'ի պահեստ սուրբ Էջմիածնոյ, և այլոց վանորէից, և գիւղօրէից, և յետոյ լուեալ Օսմանցւոցն, յափշտակեցին զայն, (զէ) մի կարասցեն յետս պահանջել։ Եւ երրորդ՝ զի Թուրքացողքն 'ի հայրենեացն զրկեցին։ Իսկ երրորդն՝ մի ոք զայցէ 'ի վանքս, և նեղացուսցէ, առանց հրամանաց Խանին։ Եւ առ ժամայն հրամայեաց Խանն և բերին զխիլայն և արկին 'ի վերայ իմ, որ էր +էՈՒ†ղէ ղալղաֆ, ․․․ ղլըսղ․․․։ Եւ այսպէս մինչ մահու սպառէի, խիլայեաց ինձ. և ո՞վ ոք ոչ

զարմացի. փա՜ռք աստուծոյ հրաշագործութեանն. մեծ են գործք քո տէր, և յոյժ խոր են խորհուրդք քո. վասնորոյ համարձակութիւն գտեալ ասացի, խնդրեմ ինձ հրաման տաս, զնամ բերեմ զմիաբանքն ուխտին մեր գինւով, և անկեալ առաջի խանիս տարցուք զհրամանքդ 'ի Վանքն: Նա ասաց բարի է, այդպէս արարէ՛ք. և առժամայն դարձայ 'ի վանքն. և մինչ ակնունէին 'ի դագաղի տեսանել զիս, տեսին կենդանի և խելացեալ. որով զարմացեալ և հիացեալ, փառս ետուն աստուծոյ բոլոր միաբանքն, և ուրախացեալ ամենեցուն տօն մեծ կատարեցին: Նա վաղվաղակի զգեստաւորեցայ, և միաբանքն ամենայն շուրջառով, և մանկունքն շապկով, և խաչվառով, բուրվառով, մոմերով, թափօրական պատրաստութեամբ գնացեալ առ նա և առեալ մեծաւ փառօք բերաք 'ի սուրբ Աթոռն. և մտեալ 'ի սուրբ տաճարն առաջի սուրբ Էջմիածին տեղւոյ կանգնեցաք. և եհարց թէ՛ զի՞նչ տեղ է, և վասն է՞ր Կաթուղիկէս, նոյնպէս և վասն պատկերացն, և վասն մեծ Կաթուղիկէին, և շինուածոյն և շինողացն, և ըստ պատշաճի տուաք պատասխանին. և եկեալ առաջի Սուրբ Խորանին աղօթեաց և խաչեաց, և հրաւիրեցի անդ նստիլ, որ և նստաւ վաղվաղակի, և հրամայեաց ժամ ասել, և ասացաք զերեկոյեան ժամն. զի էր 'ի տօնի սրբոց Ղևոնդեանց, և օրն Գ. շաբաթի. և ինքն նստեալ հայէր և ուրախանայր. և առ ժամայն զիս յորդորեալ ծերագոյնքն 'ի միաբանից, կանգնեցուցին 'ի Կաթուղիկոսարանի զգեստով իմով, և յետ ասելոյն զերեկոյեան ժամն կրկին յորդորեցին զիս ծերագոյնքն, թէ ծանուցանես և շնորհակալութիւն արա՛ և օրհնեա՛, որպէս և արարի իսկ. և վասն զի այլազգեաց լեզուով խնդրեաց Խանն, և ես այ՛պէս խօսեցայ առաջի նր, յորմէ ուրախացեալ եղև: Նա յետ արձակմանն եկեալ առաքս Նախիկեցւոյն, և ետուր ձեռամբ Մելքին իւրոյ. Գ. Ճ. թմն ողորմութիւն. և գնացի և ես մինչ 'ի մէջ դուռն, և յետս դարձոյց զիս. և ինքն գնաց 'ի բանակն:

# ԳԼՈՒԽ. ԺԲ.

## Յաղագս յղելոյ և զօրաժողովին 'ի Վանանդ, և գնալն 'ի Փարաքար և յԱշտարակ:

Եւ 'ի նոյն գիշերի մինչ չև էր լուսացեալ՝ արձակեաց և զու-հիքն իւր. որք եկին և նոքա 'ի տեսութիւն սուրբ Էջմածնի տեղ-ւոյ. եկաւ և ինքն կրկին անգամ 'ի լուսանալն, և ուրախացեալ 'ի մէջ տաճարին, զուարճացոյց զօրայինքն, պատմելով նոցա զամենայն զոր լուեալ էր: Նա փայելեալ զզօրապետսն և զծխա-նելիքն, և զհրացանն, և զայլ պատրաստութիւնս քաղցրեղինաց և ընծայից. և ապա ելեալ արտաքս 'ի Վանից մեծ զարդուքն առաջի զերեզմանացն, և իսկոյն կոչել ետուր զնս առաջի իւր, և շնորհակալեաց և մխիթարեաց ասելով, մի՛ հոգար, և մի՛ տրտմիր, և բնաւ մի՛ երկնչիր, այս օծեալ մեր է, և դու մէկ եղբայր ծեր մարդ ես, տունդ ապաստան լինի. իբրու ասել է թէ՝ տունդ շէն լինի, կացիր բարով. և թէպէտ զանդս ձեր և զա-րիս երկրաց և զօրաց իմոց կերցուցի, բայց զխոստարէն ձեզ հատուցանելոց եմ: Նա մարտեալ զերկրորդն գնաց խա-ղաղութեամբ և սիրով զճանապարհն իւր 'ի վերայ Փարա-քարու, և անդ բանակեցաւ. և ես 'ի նոյն օրն զկնի իւր գը-նացի 'ի բանակն 'ի Փարաքար սակաւ ընծայիւք, և կրկին յուսադրեաց, և դարձոյց զիս 'ի Վանքն. և ինքն գնաց 'ի վե-րայ Երեւանայ 'ի Եղւարդայ կողմն. և Օսմանցիք ելեալ Ե-րեւանու բերդէն զկապան իւրար սակաւ մի, և դարձան կրկին 'ի բերդն. որ և սպանին 'ի Թուրքաց Ե. այր և Բ. կենդանի ըմ-բռնեալ տարան ընդ ինքեանս. և գնացեալ բանակեցան մերձ Եղւարդայ 'ի վերայ բլրի մի, օրն Ե.շաբաթի, որ էր յունիսի Ե.: Բայց մինչ է Փարաքարն էր, 'ի նոյն գիշեր բերին զլուր առ-նա, եթէ Օսմանցոց սարտարն Ապտուլահ փաշայն էանց զգետն Ախուրեան բազում զօրօք, և գայ զկնի քո. պատրաստ լեր 'ի պա-տերազմել, զի բանիւ և փախչելով պատերազմ ոչ վճարի: Իսկ մեծախելք Խանն խիլեցեաց զեկողն և ասաց, գոհութիւն աս-տուծոյ, զի և ես 'ի բազում ժամանակաց 'ի հեռուն հետէ զայն խնդրէի:

## ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս ուղարկելոյն զգերիսն և զծանրութիւն բանակին 'ի Թաւրէզ ընդ եզերբն Գեղամայ ծովուն:

Եւ սկսաւ այնուհետև տեսանել զպատրաստութիւն իւր վասն պատերազմի. և զատոյց զամենայն ծանրագոյն կարասին, այսինքն զմեծամեծ վրանսն, զգերիսն, և զայլ անօգուտ չըպատերազմողն, և զուհիսն ընդ Գեղամայ ծովուն եզերամբ խաղացոյց գնալ 'ի Թաւրէզ. և ինքն մնաց արիական պատերազմօղօք Ժ.Բ. հազարու. և ընտրեաց իւր տեղի բանակի և վրանի զբլուր մի բարձրաւանդակ, որ 'ի հնուց անուանեալ էր Ախն Բէքէս: Եւ անդ հարեալ զվրանն՝ ամրացոյց զբոլորն բլրին այն քարէ կարկառիւ իբրև զորքունս կիսաբունս, 'ի չափ Բ. փողի զբարձրութիւնն իւր զպատնէշ, զոր այլազգիքն մաթարէզ անուանեն, որ թէ յանկարծակի գայցեն Օսմանցիքն 'ի վերայ նոցա, անտի կարիցեն պատերազմել ընդ նոսա հրահանիւքն, կամ այլովք պատերազմական զինուք. և այսպէս զբոլոր բլրին երից և չորից շրջապատեաց. և 'ի շաբաթ օրն եհաս և Քէօփրիլու օղլին զօրօք իւրովք 'ի յՄարարանու վիճի կողմէն, էջ 'ի ստորոտն Արայի լերան, յանդիման Երեւանու: Եւ եկեալ ղարաւուլքն ընդ դէմ միմեանց զխաղան իւրար. և անկեալ յերկուց կողմանց սակաւ զինակունք, 'ի բաց կացին 'ի միմեանց: Իսկ զգիշերն ամենայն աշխատեցան պարսիկքն վասն ջրոյն պակասութեանն, և զոր ինչ ոչխար և այծ ունէին՝ զենին, և զտիկս հանեալ ջրով լցին. նոյնպէս և զայլ ջրի ամանսն լցուցեալ պատրաստեցին 'ի բլրին, զի հեռի էր գետն Զանկի իբրև ձիու արշաւանս Բ. յետուստ կողմանէ, և առաջի նոցա զօրքն Թուրքաց:

## Գ.Լ_ՈՒԽ ԺԴ.

Յաղագս պատերազմին որ եղեւ 'ի դաշտն Նըղեւարդու, եւ մեծի կո-րուստին Օսմանցւոց 'ի Պարսից:

Մեծ են գործք Աստուծոյ, եւ յոյժ խոր են խորհուրդք Ամենակալին. եւ ո՛չ է այն 'ի հողեղինաց, որ կարիցէ քննել կամ վերահասու լինել. սքանչանամ այժմ, եւ հիացումն ունի զմիտս իմ Բա՛րի, հրաշիցն Աստուծոյ եւ արդար իրաւանցն Արարչին. զի յայնմ վայրի եւ 'ի նոյն տեղի, յորում ԺԴ. ամաւ յառաջ Գ.. Զօրագլուխ՝ Յ. արամբք՝ զՃԽՌ Ռ. Պարսիկս կոտորեցին, եւ արեան ծապաղի գլխաթաւալ ընդ երեսս դաշտին, զգէշս մարդկան արկին կերակուր լինել գազանաց եւ թռչնոց, նոյնգունակ բազմիտուրն փոխարինաց հատոյց Ամենակալըն: Զի յետ շաբաթուն յաւուրն կիւրակէի, որ էր Ի. ամսոյն Յունիսի, 'ի յերկրորդ ժամէ աւուրն սկսան պատերազմել: Իսկ մեծ Խանն Երևին Թահմազ, մինչ պատերազմէին, զզօրս իւր սակաւ ցուցեալ որպէս թէ երիս գունդս հազարականս թուով, մինչ զի անուշինչ համարեալ Օսմանցւոցն զօրս Պարսից վասն սակաւութեան, խիզախ հրամայեցին բանակին իւրեանց բաժնել զկարաւն, եւ Էնէիչարին հետեւակ առաջի, եւ Թօփճին զկնի, որպէս ասի յամաց թէ Կ. Թօփ ունէին Օսմանցիք, որ եւ ես տեսի զքառասունս, եւ զկնի Թօփճեաց հեծեալքն, եւ 'ի մէջի իւրեանց սէրասքէր Արապուլահ փաշէն եւ Սարու-Մուսթաֆայ փաշայն եւ Խէլմուրն եւ Փօլատն, այլ եւ Քօռ-չաւուշն. որ եւ պարծեցեալ էր 'ի նոյն գիշերի, եթէ ինչ պէտք լինին պարսիկքն, զի առ սա հեծելազօրացն իմոց սամ առաւօտ կոխել զնոսա: Իսկ 'ի խմբել պատերազմին, որովհետեւ վասն սակաւութեան պարսից զօրաց պատրեցան Օսմանցիքն, եւ հեռացան 'ի սորանէ լերան Արայի, եւ զկնեցին 'ի վերայ Պարսից զօրացն. եւ սոցա խոյս տուեալ սակաւ սակաւ, հեռացուցին 'ի լեռնանէ անտի, եւ ածին մինչեւ 'ի Նըղեւարդայ դաշտն: Այս եղեւ 'ի ձորոց 'ի կողմանցն Երևանու զօրք պարսից, որպէս ասեն թուով ԺՌ.Ռ.ազ, եւ թէպէտ այնքան էին, եւ գունդ գունդ կազմեալք, բայց հայէին 'ի հեռաստանէ՝ եւ ոչ պատերազմէին. զի ոչ ունէին հրաման 'ի Խանէն. այլ միայն Գ..

գունդն հաղարական արամբ, այն որ կարգեաց Խանն, նոքա պատերազմէին: Իսկ Խանն ըստ արեւական սովորութեանն իւրոյ, կաղմէր, յօրինէր, կարգէր, յորդորէր, և զեւր հրահանգէքն յաջմէ և յահեկէ և 'ի մէջ անդրոց անդաւորէր. նոյնպէս և զամպարակսն որք էին մեծամեծ ըզֆանկներ, յամէն ըղտի վերայ մէն մի հատ 'ի ձախատ առաջէն, որ է 'ի վերայ ողին ըղտոյ՝ Թուով ՃԻ. և այսպէս նախ զմեծ ըզֆիկն եւալ ձգել, և ապա զամպարակսն: Իսկ խմբեցան ընդ միմեանս ձախատ առ ձախատ, և ընդ ըզֆանկսն զմիմեանս յաղթահարէին հնաւաք 'ի յերկուց կողմանցն, ի յանիսի Բ. օրն կիրակի, սկսեալ 'ի երրորդ ժամէ աւուրն մինչև ցըհինգերորդ ժամն՝ հրօք և հրահանգօք պատերազմեցան. օսմանցիքն Բ. կամ Գ. ըզֆ միայն կարացին ձգել: Իսկ պարսից կողմն Թուի թէ Ց. և այլ աւելի ըզֆ ձգեցին, և զամպարակներն զամենայն, և ձեռաց ըզֆանկներն բազում. և յանկարծակի Խանն հասաւ 'ի ըզֆխանայ Օսմանցոց և տիրեաց. և յորժամ տեսին և լուան զաւերել ըզֆխանայէն, առժամայն 'ի փախուստ դարձան Օսմանցիքն, և Պարսիկքն զկնի կոտորելով, կոտորելով հասուցին զմի ծայրն 'ի վերի կողմն Երայի կերան հանդէպ Աաշմասայանից, և զմիւս ծայրն զօրաց 'ի կողմն Եշտարակու. և 'ի մէջի եղեալն գէմ առին Քարասահ գետոյն 'ի գեղից Յօհաննավանից և Կարբու և Մօղնու. որ և Թուի թէ բազումք էին գահավիժեալքն 'ի ձորն Քարասահ գետոյն՝ քանթէ սրով սպանեալքն. որ և զօրավարն նոցա Քեօրբէ-լու օղլին 'ի նեղ արկեն. և մինչ կամէր իջանել 'ի քարափէն 'ի ձորն՝ նեղ և դժար քարտ ձանապարհաւ մի, ոչ ժուժեաց 'ի վերայ ձիոյն, այլ անկաւ 'ի ձիոյն 'ի վերայ քարանց, և կարի վիրաւորեցաւ գլուխն, և մերձ էր 'ի մեռանել. փախուցոյ զկնատեաց զնա անարդ պարսիկ մի, և եբեր զգլուխն առաջի Խանին. և յորժամ տեղեկացաւ խանն 'ի կենդանի կալանաւորաց օսմանցոց, թէ ճշմարիտ աչքափէր Եապաւլաղ Փաշայլին գլուխն է, իսկոյն խիլայեաց զբերողն գլխոյն. և խոստացաւ այլ ևս խիլայս, զի թէ և զմարմինն բերցէ. որ և իսկոյն գնացեալ գտին և բերին և ետ ամփել 'ի Կարբի. և զխաղաղութեալ եղին 'ի դադաղն և հասուցին 'ի Կարս, և անդ Թաղեցին: Եւ այլ և զգամաղն-Մուստաֆա փաշայն ես սպանին 'ի պատերազմին. և զնա ևս տանել և Թաղաղել. և յղեաց յԵրեւան՝ որ անդ Թաղեցին 'ի մէջ նոր Ջամամն: Իսկ այլ Բ. Թևազդեալ փաշայք կային՝ մէկն առաջնոյ, և միւսն պօշնակ, զոր անկան և նոքա 'ի պատերազմին,

որպէս պատմեցին մեզ. և այսպէս մեծ կորուսած առնելով հասուցին զմի ծայրն փերի կողմանցն 'ի Եփրատայ գետոյ՝ որ է առ-փուչեցին, և զմի ծայրն փոքրի կողմանցն՝ տարածեալ լերինն Արա-գածու կրկին մինչև 'ի Նոյն գետն: Որ և յետ կորուածին հան-գէս արար, և եա 'ի թիւ արկանել զպատճառսն և գտին ԽՈ. զի 'ի յՕսմանցոց: Իսկ 'ի Պարսից թուի թէ ՃԻՒ. կամ Ի. մարդ չպակասեցաւ. զի հիւցումն էր կարկամելն և կապելն Օսմանցոց առաջի Պարսից. որք և ձեռք անգամ ոչ կարէին փերացուցանել, որպէս թէ կապեալ էին առաջի սպանողաց: Եւ եղև այս 'ի ՌՃԶԴ. թուոջն:

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Վասն գնալոյն Խանի 'ի Տօս Խանին Ճէֆի, և անցանելոյն 'ի Ճղզրէխանցն:

Իսկ յետ երից աւուրց՝ օրն Գ. շաբթի՝ գնացի ես տրուպ Աբրահամ հոգևոր տէրս 'ի տեսութիւն Խանին՝ 'ի կողմն Նդեւ-ւարդու, մերձ բլրոյն Խոզաբոզ-Ըէձըէռ անուանելոյ. և 'ի ճանա-պարհին հանդիպեցայ զինականցն, սկսեալ 'ի Աշտարակայ հանդէն մինչև ցՆըղևարդ՝ անթիւ բազմութեան սպանելոցն. և զեա և կայէն ոմանք կենդանի, որ և խուզէին Պարսիկք զայնպիսին և սպանէին, որպէս և տեսայ աչօք իմովք մինչ գնայի 'ի ճանապար-հին. որ և փերայ հասայ Հայու մի կիսամեռի՝ մինչ կամէին սպա-նացուցանել, և թափեցի 'ի ձեռաց նոցա. և զնա շնէր Պօղո-սին 'ի հետ եղի բառնալով 'ի փերայ գրաստու, և եառ տանել 'ի յԱշտարակ է խուցն Նեկեղեցոյն. և պատուիրեցի՝ զի քահանայք հող տարեալ խնամք տարցեն. որ և գտեալ զառողջութիւն, և կայսեպան մնեալ՝ որ է այգեպահող, և անդ ուսեալ մնաց անգա-նօր. այլ և բազում փերաւորեալք որք զերծան 'ի պատերազմէն, եկին երկրորդ օրն 'ի յԷջմիածին, Թուրք, Հայ, Հոռոմ, և բազ-մաց ձեղ առնել եառ, և գիշերով զառաձկուսեան յուղղոյ եղինք յԵրևան. և այլք 'ի Մըրցնոց և 'ի Ճոմնայ, ոմանք մեռան և ոմանք առողջացեալ գնացին ուր և կամեցան:

## ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս ելանելոյ խանին բանակաւն 'ի գագաթն լերանցն կողմանց սարքն Գեղարքունեաց և Գառնատարայն. և յետ Ի. աւուրց իջանելոյն 'ի լեռնէ և գնալն 'ի բերդն Գանձակայ։

Եւ ապա այնուհետև հետևեցաւ խանն ելանել 'ի գագաթս լերանց 'ի կողմն Կ[illegible] մերձ Գեղարքունեաց՝ և Գառնատարայի. որ և սփռեալ տարածեցան զօրք բանակին մինչև ց՚Ալաղու-նաձորն, և մինչև ցեզրն Գեղամայ ծովուն. որ և մնաց 'ի զբօսանս մինչև ցյուլիսի վերջն. և յօգոստոսի սկիզբն սկսաւ (իջանել) 'ի լեռնէն նոյն ճանապարհաւ ընդ որ գնաց. և եկեալ եհաս մերձ 'ի տեղի պատերազմին 'ի բլուրն Մուրղուզ-Բեքլէօ ասացեալ, զի 'ի սկիզբն բլրոյ անունն Ահի-Բեքլէօ էր, իսկ 'ի պատերազմին՝ որով հետև յաղթեաց, Մուրղուզ-Խանեայ կոչեցաւ, և մնաց անունն այսպէս: Իսկ յորժամ եկն մեծազօր խանս մերձ այսմ բլրոյ, էր և ես ընդ նմա, քանզի խնդրեալ էր զիս: Իսկ յառաւօտուն յերբ կամէր չուել, ել 'ի բլուրն այն, կոչեաց և զիս ընդ մեծամեծս՝ Խաներօք և Միրզօք հանդերձ՝ զԻ՚թամանթարն և զՄ՚ելիքն և ես 'ի գագաթ բլրին, 'ի տեղին յորում հարեալ էր զվրանն իւր յաւուր պատերազմի, յորում զյաղթութիւնն առաւ: Իսկ շատ երկար խօսեցաւ ընդ մեզ: Նախ՝ վասն [illegible] որում հրամայեաց շինել օրինակ վրանին իւրոյ՝ զի մնասցէ յիշատակ. և յիշեցի ասպագրեցին: Իսկ երկրորդ՝ խօսեցաւ վասն պատերազմելոյ զմեզ և պահպանելոյ 'ի նենգութենէ Հագարացւոց, մերձաւորման գոլոյն մեզ՝ սահմանացն նոցին: Իսկ այսպէս ժամ մի խօսեցեալ ընդ մեզ, երբեմն ընդ Խաներացն, և մերթ ընդ իս, մինչև իջաք 'ի բլրոյն 'ի դաշտն. և ապա հրամայեաց մեզ ձիաւորիլ և գնալ զկնի նորա. և յայնմ գիշերի օթևանեցաւ 'ի Պաշ-Ապարան անուանեալ տեղին. յեկեղեցեաւն ճաշին հրաւիրեաց զիս 'ի սեղանն. և առաւօտուն դարձոյց զՊաշա-խանն, և զՍերասքեարխանն, և զՆորաշնայ Խանն, և զՆախիջևանայ Խանն՝ յիւրեանց տեղիս. յորում միջոցի պաշարեալ էին զԳանջան. այս չորեքեան խաներս կրկին պաշարեալ 'ի Գ.. զինուց պահեցին, որ ոչ կարացին մտանել և ելանել: Իսկ զիս առաւ ընդ իւր մինչև ցՃինլի-Փօղ կոչեցեալ վայրն.

և կրկին հրաւիրեաց զիս 'ի սեղանն. և զի էր պահք Փոխման սուրբ Աստուածածնին, վասն որոյ համարձակեալ ասացի՝ Խոնդ, այսին. Տ. անգամ է յորմէ հրաւիրես զիս 'ի սեղան քո, և յամենայն ժամ պահոց որ պատահեցաւ, և ես կարօտ մնացի 'ի քո քաղցր կերակրոցդ, յորմէ թուի ինձ որպէս զմանանայն իջեալ 'ի բարձանց. վասն որոյ խնդրեմ 'ի մեծութենէդ, զի հրաման տացես պաշտօնէյիդ քո, որ իմ առջևի կերակուրն տանիմ ընդ իս յիմ օթևանն. յորմէ ծիծաղեցաւ ուրախութեամբ և ասաց. Խալիֆայ, ապա վաղն կուտես. ասի, ո՛չ. որով խանդաղատեցաւ և ասաց, բարի է, վաղուն այլ եկ ընդ իս, կրկին հրաւիրեալ ես 'ի սեղանն իմ, քանզի և ես զհաց քո շատ եմ կերեալ. և ապա արձակեցից գնալ յՄուղճիքէն. և վասն այսր պատճառի գնացի ընդ նմա և զմիւս օրն, և յայնմ երեկոյինեա հրաւիրեաց 'ի սեղանն կրկին. և ես լցուցանել իւր առաջի եդեալ փլաւէն ամանն մի. և հրամայեաց սպասաւորացն պահել զայն, և հասուցանել 'ի վրանն իմ, որպէս և արարին իսկ. Եւ յետ ուտելոյն մեր, իւրեանք 'ի յուտվաց (յաթէնց) կերակրոյն՝ և ես 'ի մեղրէն և յայլոց քաղցրեղինաց, ուտեցաւ հացկերոյթն. և լուացեալ զձեռն, նոյնպէս և մեք, յարուցեալ ես 'ի վերայ ոտից շնորհակալեցայ. որ և ասաց, Խալիֆայ, մուսաֆիր արարի զքեզ գնա բարով 'ի քո մանզըլըն. և աղօթեա վասն մեր: Իսկ ես պաղատելով խնդրեցի գնալ ընդ նմա մինչև ցՄէրֆայ-ղայն. բայց երկրորդ Աղէկսանդրն ոչ կամեցաւ բերնալ, և ոչ ես թողլ, այլ զայս ասաց ինձ, դէրվէշ ես, խեղճ ես, աղքատ ես, դարձի՛ր, դարձի՛ր 'ի տեղի քո և դուայ արա՛ մեզ:

## ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս դառնալոյն իմոյ յՄուղճիքէն՝ յետ ուղևորելոյ զԽանն. և վասն պաշարելոյն զԵրևան Դ. արայ, և կորելոյն զՔէսան և զՃիւրն Ճէնդէն: Եւ վասն խոստանալոյն տաճկաց տալ զԵրևան, և դառնալոյն Խանին 'ի Տփխիս և հրաւիրելոյն զիս առ իւր:

Եւ կանուխ վաղ քան զ դարձանք 'ի բանակէն և եկինք յՄուղմուճին՝ օրն շաբաթ նաւակատեաց սուրբ Աստուածածնին. և 'ի

գիշերի հասանք 'ի սուրբ Գ.աՀն: Իսկ առաւօտն՝ յետ պատարագի 'ի սեղանն փայելեցինք զկերակուրն՝ զոր շնորհեաց խանն, ըմպելով զգաւաթն յանուն նորա: Այս ապա փութացուցաք ըղգործաւորս ամարաչին, զոր պատուիրեաց խանն շինել 'ի գլուխ բլրին 'ի տեղի վրանին իւրոյ. և յանձնեաց ինձ և Մէլիք Մկրըտումին, զի վերակացու լիցուք, և մեր գիտութեամբն ծախքն լիցի. և կամ 'ի կողմանէ իմմէ գիտուն մարդ մի դիցեմ, զի և նա վերակացու լիցի 'ի վերայ վարպետաց և շինուածոյ: Այլ և Ի. ԺոՀՐԷԼ-ԲԷԿ՝ զոր նոքա օբէրցէար անուանեն, զի զրեսցեն նոքա և զխարճն և օգնութիւն տասցեն վերակացուացն՝ կրել տալով զքարն և զկիրն 'ի գիւղորայից: Որ և ես իմն կողմանէ եդի զղըռլըճի-օղլու— Սահակեանս վարդապետն Երզրումցի. որ էր ընդ Մէլիք Մըկրտումին 'ի բլուրն այն 'ի վերայ շինուածոցն, և աշխատեցաւ անդ Ժ. աւուրս մինչև ցաւարտումն նորին: Այս կառուցեալ շինուածն, զի էր վրանաձև զմբէթայարկ. և 'ի ներքոյ խորափիտ. և 'ի տեղի ժողովելոյ ջուրց, զոր(ջինջ)անձրև գայր 'ի վերնատէ այնր բլրին հորդեալ՝ ճանապարհաւ իւիք, և ժողովէր յայնմ խորափիտ աւազանաձև, յորում վերայ կայր շինուածն. և յորժամ լնուի, աւելորդն ելեալ 'ի ճանապարհէ խողովականման, և հոսի զառ 'ի վայր 'ի ձորն: Այս գիւղ կայր 'ի ստորոտ բլրին, և էր աւերակ 'ի բազում ժամանակաց՝ որպէս պատմեն՝ Հ. ամէն 'ի վեր, զայն գիւղն քննեալ և գրեալ զգիւղականս, եւ նոցա չափաւ մի. զի ծաղ լիցին և Բ.Հ. սօմարի ցան եւս վարեսցեն. և պահպան որ է օղուր՝ մի տացեն: Որ և փոխվաղակի շինեցին զգիւղն, և կան այժմն բնակեալ գիւղականքն: Այս ինքն խանն անց գնաց 'ի վերայ Գ.արայ, և պաշարեաց զնա ամսօրեայ ժամանակ: Երգիլեալ ըղջեան որ առոգանէր և արբուցանէր զքաղաքն, կտրեաց զջուրն որ 'ի վերուստ գայր խողովակով 'ի բերդն, և յամենայն կողմանց ինքն էարկ զքաղաքն. և պատեալ պաշարեցան յամենայն դիմաց: Այլ և տապատակս արձակեաց երկուց կողմանց մինչ գնայր 'ի Գ.արս՝ յաջ և յահեակ, զմի կողմն 'ի վերայ Գարաղեաւ երկրին, և զմիւս կողմն 'ի վերայ Ղազախայ, և ինքն 'ի մէջն. յորում գնացեալ քանդեցին զերկիրն, այրեցին զշինուածսն, գերեցին զմարդիկքն և զանասունս, և բազում աւարաւ դարձան 'ի բուն բանակն 'ի Գ.արս: Այս անուն երկրին արձակեաց տապատակս, որ գնացեալ հասին մերձ Թէֆլիզոլոյ, և գերեցին զՍարիմաննահանգն, զԹ.աւախէթու, զՉլորու, և զՕ.զիսրուլու, որք էին

բովանդակ 'ի մեր ազգէ, և քշեցին զայր և զկին, զծեր և զտղայ, և տարան 'ի Խորասան՝ թուով Օ.Ռ. որպէս և լսեմք: Իսկ ապա զԼեզան և Ղազարացիքն 'ի բարձրավզութենէ և 'ի գոռոզութենէ իւրեանց. և եկեալ յԷրզրումայ այք ոմանք երևելիք և եկին իբրև զեսպանս առ Խանն, որ դեռ ևս նստեալ կայր 'ի վերայ Ղ.արսայ. և միաբանեալ ընդ Ղ.արսեցւոց մեծամեծացն գնացին առ Խանն յաղերս և յաղաչանս, զի մի աւերեսցէ զերկիրն իսպառ. և խոստացան տալ զԵրևան: Յորմէ բերկրեցաւ Խանն. և պատուեաց զնոսա խիլայիւ. և եկեալ ընդ նոսա Խան մի, որոյ անուն Խանի էր.....(*)սակաւ ձիաւորօք, և յղեաց յԵրևան. որ և եկեալ՝ նախ՝ յանդիման եղեն Փաշա Խանին, որ նստեալ 'ի Ք.ալայն՝ ունելով ընդ իւր զԵրևանայ Խանն և զՍարտար Խանն, և առեալ 'ի նմանէ ևս մարդ և հրաման, և ապա մտան 'ի յԵրևան՝ հաճոյել զնոսա 'ի խաղաղութիւն և տալ զբերդն Խանին: Իսկ յետ Գ.-Դ. աւուր, ել համբաւ թէ՝ ահա տալու եղան զԲերդն՝ այնու պայմանաւ, որ զպատերազմական պատրաստութիւնս՝ որ է հրահանգներն, և ճէպխանայն կիսեսցեն, զկէսն տարցեն ընդ ինքեանս, և զկէսն թողցեն 'ի բերդին: Իսկ այնպէս ուխտ և դաշինք հաստատեցին, և խնդրեցին այլ՝ զի բարձցեն զինչս իւրեանց. որ և ետուն զ Հ. այլ երկրաւ, որում բարձեալ զկահն և զկարասիս իւրեանց, ելին 'ի բերդէն 'ի սեպտեմբերի ԻԲ. օրն՝ Բ. շաբթի Վ.արագայ սուրբ խաչի պահոցն, և տարեալ հասուցին մինչև ցեզրն Ախուրեան գետոյն, որ է Արփաչայ, գնալ անտի 'ի Ղ.արս. և այլախարքն հանդերձ այլովք դարձան յիւրաքանչիւր տեղիս իւրեանց: Իսկ Խանն դարձ արարեալ 'ի Ղ.արսայ, գնաց 'ի Թ.իֆլիզ. բայց մինչ կամէր չուել, հրամանագիր յղեաց Երևանայ Խանին, թէ տացես ընդ քեզ զԽոյլքյօյն և զՔ.ալանթարն, զՄէլէքն և զԵրևանայ Աղայներն և զՔ.էտխուտեքն, և գայցէք առ իս 'ի յեզերն Ախուրեան գետոյ: Բայց որովհետև զանգաղեցաք 'ի գնալն, և ինքն անդադարեաց 'ի Տփխիս, վասն որոյ ոչ կարացաք հասանել նմա 'ի ճանապարհին, այլ հետևեցաք նմա և գնացաք 'ի Տփխիս՝ օր մի յառաջ քան զինքն: Օր 'ի Նոյեմբերի Ա. չուեցաք յԷջմիածնայ, և

(*) Յօրինակին պակասէր անունն խանին և բաց էր թողեալ, ըստ որում և մեք անցաք կէտադրութեամբ:

Երևանու քաղաքն (յԵրևան տեղւոյ կամ յԵրևանու տեղւոջէ) և 'ի Խէջ. համանգ 'ի Թիֆլիզ քաղաքն:

## ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս յանդիման լինելոյ մեր առաջի Խանին 'ի Թէհէրան, և մխիթարելոյ զնա, և յանձնելոյ զնա և զաւրբն Իշխանին' Երևանայ Խանին, ընդհելով և շնորհակալ բախանձերն:

Եւ յորժամ յանդիման եղաք Խանին, յոյժ ուրախացաւ և բազում բանս մխիթարականս խօսեցաւ ընդ մեզ, և պատուէր շնորհեաց և յանձնարարականս. և քաղաքական օրինադրութիւն, և սահմանադրութիւն առաջ 'ի լսելիս ամենեցուն. մանաւանդ նորա բանիւք և սաստիկ պատուիրանադրութեամբ' յանձն արարեալ զուրբ Գահն և զիս' Երևանայ Խանին և մեծամեծացն յերկրին, թէ չլինի նեղացնէք կամ տրտմեցնէք զխալիֆայն, զի աղօթող է, և դրան ծառայ մեր: Այլ և այլք չասաց այն Ընէէլին Ուտէնէւայլին, և մի պահանջէք ի ժամու նէ ստարածանու զենուլ պատն ձեր ոչխար, զառն կամ հաւ. այլ և զոր ինչ պատարագի ունի և զոհեսցէ, այնու բաւականասցէք: Այլ և ազգիս մերոյ գոհ և շնորհակալութիւն երեր' թէ ինձ լաւ ծառայութիւն արարին մտերմաբար, և միամիտ ապաստաւորեցին յամենայն զօրութեամբ, և յամենայն յանձնէ, ամենայն զխօք. և չի լինի թէ նեղացնէք զազգս Հայոց' կամ վնասէք, զի զայնպիսին պատուհասեալ առնեմ. և բաց ջիզիէյէն, զամենայն հարկս դիւանին հաւասար տայցեն, զինչ և պատահեսցի, զինչ Հայք' և զինչ Ղզլպաշ: Եւ այլ բազում բանս օգտակարս և պիտանացուս խօսեցաւ ընդ մեզ: Եւ յետ ամենեցուն ասաց, թէ գնացէք, և զոր ինչ խնդրէք ունիք' գրեցէք արզուհալն, և բերէք որ հրամայեմ: Որ և գնացեալ նստաք 'ի խորհուրդ և 'ի մտածմունս, և զոր ինչ պարտաւոր և հարկաւոր համարեցաք, զայն բախանձերն խնդրեցաք. որ և շնորհեաց առաւել քան զխնդ. բաղձանս: Եւ այսպէս ուրախութեամբ դարձաք անդրէն 'ի կրունկն 'ի Այրարատ յԵրևան:

## ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս չուելոյն Մեր Երեւանայ խանին, և մտելոյն նր 'ի Թիֆլիզ, և ընծայից ժամու ողջագուրանաց ազգիս նմա Թիֆլիզեցւոց և Այրա-րատեան ժողովրդոց. որ և ընդհուպ Աստուածոյ Թիֆլիզեցւոց ընդ-ծան:

Իսկ յետ չուելոյն նորա՝ ես մնացի 'ի Թիֆլիզ՝ Գ.. օր և ս. վասն զի մեծագոյն Խանն հրաման էր արարեալ Թէ՝ 'ի քաղաքէն ԳՃ. տուն հանեալ տարցեն 'ի Խորասան, որպէս և Այրարա-տու եսաւր. հրաման եսաւր Խանին Երեւանայ, այլ և Քաղան-Թարի Մէլիքի, որ գնացեալ ԳՃ. տուն գրեցին. և յակամայ կամօք՝ բռնութեամբ հանեալ 'ի բնակութենէ իւրեանց քշեցին 'ի Խորասան, այսպէս և 'ի Տփխիսու անել. որ և գրեցին 'ի քաղաքէն Յ. տուն. և սկսան ժողովել և լցուցանել յեկեղեցի մի. և բազումք որ լսէին զգնալն և զպատիլն իւրեանց, գային յե-կեղեցին՝ յորում արգելեալ էին, և կական բարձեալ ողբային և աղաղակն յերկինս ելանէր. լային, գոռային, գոչէին, յերկիր ան-կեալ Թաւալէին, և աղերսէին, զի խնդրեցեմ 'ի Խանէն ազատել զնոսա, և մի՛ վարել 'ի յօտար երկիր: Իսկ տառապեալս տեսանե-լով զաղէտս ժողովրդեան՝ արանց և կանանց, փղձկեալ այրեցեալ սրտիւ, և արեան արտասուս հեղուցանէի. և զեգերեալ աս-տանդական 'ի դրունս մեծամեծաց՝ պաղատէի, աղաչէի, հայցէի, և աղերսէի ազատել նոցա 'ի յայն վշտաց: Որ և ողորմութեամբն Աստուծոյ, և 'ի պատճառէ իմէքէ՝ քաղցրացաւ սիրտ Խանին, և եթող զնոսա: Բայց ԳՈ. Խ[illegible], և ԳՈ. սովոր ցորեան, որ և ժողովեալ հասուցին և զերծան: Նոյնպէս և վասն Արա-րատու երկրին Յ. տանն շատ և անխոնջ տանջեցայ և տառա-պեցայ, և ոչ եղև հնար. այլ տան գլուխ Բ. գոհէչ հրամայեաց տալ 'ի յարքունուստ, զի բարձեալ տարցեն զնոյն և կամեցին. այլ և իւրաքանչիւրոցն մնացողքն երկրիս՝ Գ. եզն՝ Գ. կով Գ. լիտր պղնձեղէն, Գ. կարպետ, Գ. ընէղ ալիւր և ցորեան. և Ա. Ա. Խ[illegible] փող եսաւն գնացողաց տան գլուխ, և ճանա-պարհորդեցին:

## ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս խնդրելոյն [illegible] կրկին զտպագրատանն բանալոյ, զի ոչ էր ար-ժանի ող լինելի, գտանէ՛ կրկին պղինձ [illegible] տպագրութեան. և ոչ [illegible]: Ապա կրկին [illegible]. և կրկին Մելիք [illegible], որ [illegible] էր [illegible] մի տանցէն. և կրկին հանդիպելոյ ՚ի Սանահին, և ՚ի Հաղբատին, և ՚ի Հաղբատ:

Յետ այսորիկ մտածեցի վասն երկրին ազատութեան և տառա-պանաց. զի փոքր կարի յոյժ նուազեցաւ և քարշեցաւ, և զրկեալ խաղաղ հատուածէ: Վասնորոյ խնդրեցի ՚ի մեծազօր խանէն՝ տալ հրաման վասն զտպագրատանն բանալոյ յԵրևան. և առ[իթ] ա-րարի վասն Մելիք Յակոբջանին. որ և փափագակի շնորհաց. վասն զի յոյժ ուրախացաւ ընդ այս. և առաջի մեծամեծաց զօրաց ասելով. [illegible] (ֆարմանը) [illegible]. որ և առ ժամայն կատարեցին և տուին: Այլ և վասն Քաղանթար և Մելիքի խըն-դրեցի, որ առանց խմ գիտութեան՝ զոր ինչ [illegible] որ հանդի-պեցի արքունուստ, և կամեցին ձգել ՚ի վերայ երկրին, առանց խմ գիտութեան մի արասցեն: Նա և՝ [illegible] գիւղօրայսն, որք են այսոքիկ. Էջմիածնայ գեղն, Մաստարայ, Գաւանկանց, Յաւշա-կանն, Բիւրագըւն, Տիրաքլուն, Չէքմէ-Գ․շլայն, զոր երբեմն ու-նէր [illegible] սուրբ Աթոռս, այժմ նոր նորոգեցաւ և կրկին [illegible] առ ի ՚ի մեծազօր խանէն. և հաստատեցի [illegible] ՚ի վերայ սուրբ Աթոռոյս ըստ առաջին աւհմանին: Այլ և խնդրեցի զ[illegible] մի, զի մի՛ ոք եկեալ նեղացուսցէ զնոսա գիւղական զօրօք. նա և առանց խմ գիտութեան՝ գիւղօրայից [illegible] մի՛ ձգեսցեն ՚ի վերայ աղքատաց. զի չար սովորութիւն ունէին, որ զոխս [illegible] ՚ի վերայ աղքատաց շրջէին, որ և զնա և ս շնոր-հեաց: Իսկ այլ բախտք զոր ինչ և խնդրեցի, շնորհեաց զամենայն անյապաղ. որ առեալ եմ մինչև ցայսօր աւելի քան զԼ. Իս. [illegible]: Իսկ ապա չուեցի ՚ի Թիֆլիզու ՚ի վերայ Սանահինու՝ Հաղ-պատու հաշակաւոր Վ․անորէից, և ապա Եղրծնու (Հաղարծնո)

Վանըն, և եկեալ հասի 'ի սուրբ Էջմիածին։ Եւ ըստ պատուէրելոյ մեծի Խանին, ես և Երևանայ Խանն գնացաք 'ի Կարս, յԱրզրում, և յայլ տեղիս, ես իմ ազգին, և նա և ես յատուկ յատուկ Կարսայ փաշային, եթէ հրաման եղև մեզ 'ի մեծ Խանէն ծանուցանել յերկրին, և որք ունին մեծի տէրութեան ձեռամ. որովհետև խաղաղութիւն և հաշտութիւն եղև, յայսմհետէ անկասկած գայցեն ուխտաւորքն, և ամենայն ոք անկասկած և աներկիւղ վաճառեսցեն, և գնեսցեն, զոր ինչ կամեսցեն և առասցեն։ Եւ այնպէս Կոնդակաւ ծանուցի 'ի Կարս, յԱրզրում, 'ի Թոխաթ, 'ի Պայազիտ, 'ի Վան և 'ի Բաղէշ։

## ԳԼՈՒԽ ԻԱ։

Յաղագս փախստեան իմոյ յԷջմիածնէ. և փնտռել իմ յԵրևան վասն շնորհատուութեան Խանին։ Եւ վասն հրաւիրելոյն զմեզ Ռեշտայ Թահմազ խանին 'ի Մուղանու դաշտն։

Զկնի սակաւիկ մինչ էի յԵրևան՝ վասն շնորհաւորելոյ զհաստատութիւն և զիշխանութիւն Երևանայ Խանին, ահա եկին հրաման եկն 'ի մեծ Խանէն՝ Երևանայ Խանին, զի 'ի Նորաշնլուանի երկրին, չուեսցէ յԵրևանու և 'ի գաւառէն Արարատու. և պատուիրեալ էր 'ի մէջ բռնաւն, թէ առցէ զԽալիֆայն, և զաղանիրն, զտօղանեթարն, և զՄէլիքներն, և քանի մի Քալանթարայ, և գայցէ անյապաղ 'ի Մուղանու դաշտն. զի պատշաճաւոր խօսք և խորհուրդ ունիմ ընդ ամենեսեան։ Եւ ահա պատրաստեալ եմ գնալ յա չորից և հնգից աւուր զոր Տէր Յիսուս՝ և Աստուածն ամենակալն 'ի բարին յաջողեսցէ. և խաղաղութեամբ հասուսցէ զմեզ 'ի սուրբ Աթոռս և 'ի մենատանս մեր. Աստուծոյ և աղօթից ձերոց ապաստան, զի 'ի բարին եղիցի կամքն և յառաջադիմութիւն մեծի Խանին։ Եւ ընդ այս յոյժ զարմացեալ եմք, և ոչ գիտեմք թէ վասն է՞ր է կոչումն այս, միայն Աստուծոյ է գիտելի։ Բայց կարծիք ոմանց՝ թէ զՇահնշահուցանելոց է 'ի գահոյս իւր. և ոմանք, թէ իւրն նստելոյ է. բայց հաւատոյն և վասն էրն ո՞չ է յայտնի։ Իսկ մեք աղաչեսցո՛ւք

զԱստուած, զի զերկրին առաջնորդեսցէ, և 'ի հաճոյս իւր յաջողեսցէ. Ամէն:

## ԳԼՈՒԽ ԻԲ.

### Յաղագս գնալոյն իմոյ 'ի Մուղան ընդ Ներիմանայ խանին:

Արդ յորժամ եհաս ժամանակն գնալոյն մեր 'ի Մուղան, կրկին գնացի յԵրևանն՝ վասն հարկաւոր իրաց ինչ. հանդիպեցայ խանին, որոյ անունն էր Մէհմէտ-ղուլի, և էր բնիկ 'ի Գողթան գաւառէ, Մոստայճէլլինց ազգէ, որ էր պապն ուրացեալ 'ի ժամանակս մեծի Շահապասին, և այս Մէհմետ-ղուլի խանս թոռզաւակ նորա՝ եհաս խանութեան: Զի որպէս լուայ, Բ. և Գ. խան է մնացեալ 'ի Շահ-թամազի եղեալ խաներէցն, և զայլս վերջացուցեալ է մեծագոր խանն. որոց մնացելոց մինն է այս, զոր ասեմս. վասն որոյ մեծարեաց զիս 'ի պատիւ ճաշ առնել 'ի միասին: Եւ յորժամ ճաշեցինք և գոհացաք, մինչ նա ղալխոն քաշէր, և ես ղոյ լսէի, ասի խանամ՝ շընդի նէչայ գէլընմաղ օլուր Մուղան յօլլարըն, քի Նաղարբէք գօրալամ: Ասաց. Խօճաճիքոյ, ղէրղալ թուտուն օրայա գէլընմէկ օլուր: Վարդապետ, թէ՝ որովհետև այդպէս է, ես քանի մի օր յառաջ գնամ՝ կամաց կամաց, զի ակար եմ և չեմ զօրանար. Արդ, Աղուէս մի քանի օր նստիմ մինչև որ գաս. և 'ի միասին գնամք 'ի Մուղան: Եւ ինքն ևս հաճեցաւ ընդ այս, և ասաց, բարի է, այդպէս արա: Բայց զԽօշակէպ թէ մարդկանց և թէ անասնոց՝ շատ ևս, զի այն տեղն ոչ գտանի: Վասն որոյ մուրթայ դարձայ 'ի Վանքն. և սկսայ հոգալ զճանապարհի պատրաստութիւնն. և առայ ընդ իս՝ Ժ. ուղտ, Ժ. ջորի՝ և ԺԶ. ձի. իսկ 'ի միաբանից 'ի ճանապարհի Աթոռակից ղուլոյն ղափոյ Սահականոս վարդապետն, Գաւազանակիր Բարսեղ վարդապետն, Իմաչօ հնձուց վանից՝ Ներսէս վարդապետն Վրաստանեցին, Մէհմանդար Տաթևու՝ Մխիթար վարդապետն, Նորատ աղահանցի Խաչատուր վարդապետն, Ժամկոչ անդրադար Սարգիս վարդապետն, Կեսարացի Բ. Սարգսայ՝ զՂուկասն և զխոհարարն, և զգրագիր Յովհաննէսն, այլ և Գ. ղուլեր՝

զՄկրտումն զՊօղոսն և զՄարգարէն, Գ., ռոբբտան յղտայ, Գ., ձեռաց ձիոց, և Գ. ջորեպանս։ Այլ և 'ի Եգուլեաց զԱւագ ե-րէց տէր Թումասն, Վէճախոյ, ազնէ, պաղնէ, ընդ ամենն ԽԵ. հոգի։ Եւ 'ի դեկտեմբերի ամսոյն Գ. չուեցի 'ի սուրբ Էջմիածնայ՝ Նո-րագաւթով, Խոր-վիրապով, Շարուրով. անցեալ գնացի Ե. օր յԱստապատ, 'ի դեկտեմբերի Ը. սուրբ Յակոբայ պահոց Ը. շա-թին, և մնացի Ը. գիշեր. և ապա ելայ 'ի վանքն՝ մնալով անդ եւ Ը. գիշեր։ Եւ անտի Երինջակու սուրբ Կարապետու վանքն՝ գիշեր մի. և 'ի Ջուղայ գիշեր մի. և 'ի դեկտեմբերի ԺԱ. հասայ յԱգուլիս, և մնացի 'ի Ագուլիս՝ Գ. օր. եկն և Մէհմէտ-ղուլի խանն։ Եւ 'ի դեկտեմբերի ԺԳ. չուեցաք 'ի յԱգուլեաց, և 'ի նոյն օրն անցանելով զԵրասխ, և Դարա-դաղով ճանապար-հորդեցաք մինչ 'ի Մուղան, և հասաք Ծննդեան պահոց շա-բաթ օրն 'ի Մուղան՝ մերձ 'ի տեղին այն՝ ուր խառնի Երասխն ընդ Կուր գետոյն։ 'ի Դեկտեմբերի Գ. ելաք 'ի սուրբ Էջմիած-նայ, և 'ի յունվարի Գ. հասաք 'ի Մուղան՝ 'ի բանակեղն Պարսից։

## ԳԼՈՒԽ ԻԳ.

### Յաղագս հասարակելոյն զՏօն Ծննդեանն և զկարգ Ջրօրհնեաց 'ի Մուղան, առ եղերբն Երասխայ 'ի բանակին որ փոխեցաւ Նատրախանն 'ի ՌՃՁԵ։

Եւ երբեւ եղեւ անցոյց զմեզ՝ փոխանորդն մեծի խանին՝ որ կա-ռավարէր և պահէր զնորեղեալ բանակն, որ էր Նաղղի - ղուլի Եղզաղ - հասան բէկն, տեղւոյ մի 'ի բազմայ 'ի բանակէն՝ 'ի խուղս եղեգնեայս, զոր պատրաստեալ էին վասն եկող խանիցաց՝ աւելի քան զՃՃ. խուղ՝ ցեղին Երասխայ 'ի վերի կողմն բանակին։ Յորժմ Ճրագալուցի օրն փիրելեակու գնացեալ զրօսնեցաք, և տե-սաք զտեղին, ուր խառնէր Երասխն ընդ Կուր գետոյն. և Բ. կա-մուրջս շինեալ՝ մինն 'ի վերայ Երասխայ՝ և մինչեւ չէր խառնեալ 'ի Կուրն գետ, և միւսն յետ խառնելոյն 'ի վերայ Կուր գետոյն. փոքրիկ նաւամակնիրով շինեալ էր մի բերդ, որ էր 'ի փայտէ փորեալ

գլուխներ, և միմեանց ընթեր շարեալ 'ի վերայ ջրոյ գետոյն՝ լայնութեամբն, և շղթայիւք՝ և՝ հաստ առասանաւ կապեալ գլուխներն 'ի յերկուց կողմանց գլխոյն նաւաձակաց, զվերի կողմն շղթայիւք, և զվարի կողմն առասանաւ, որ էր որպէս ղայխնէ երկաթի հաստ փոկամոր: Իսկ 'ի վերայ նաւաձակաց տախտակ հաստատեալ՝ և փայտ շարեալ և պնդացուցեալ մամռաւ, որ երթային և գային անցորդք: Բայց Կուռ գետոյն կամուրջն, Բ. գլուխ դղեակս և բրգունս 'ի նմա բերդաձև շինեալ, և 'ի մէջն նոյա պատրաստութիւն տնեալ հրահանիւաց, զի մի յանկարծակի թշնամիք ասպատակեալ վնաս ինչ գործեսցեն կամրջին: Այլ և պահապանք կացեալ 'ի վերայ՝ որ պահէին 'ի տուէ և 'ի գիշերի. և առանց հրամանի ոչ ոք իշխէր անցանել, զի այն էր ճանապարհն Շամախու, Լակզիստանու, Տաղստանու՝ որ է Դէմիր-ղափուն, Ախալցխանու, Մոսկովու, և Ռուսաց՝ որք են Ռուսք: Իսկ կամուրջն՝ որ էր 'ի վերայ Երասխայ, միւս կողմն էր Ղարադաղու, Տուղարու, Կէնճէ-պասանու, Կէնճու, Գանձասարու, Ղափանու և Սիսիանու. վասն որոյ ոչինչ փոյթ առնէին պահել զայն, բայց միայն վասն փախչող գերեաց՝ զարս ոմանս եդեալ էին, զի մի թողացուսցեն զգերիսն՝ փախչել: Իսկ յետ տեսանելոյն մեր զայն ամենայն, դարձաք 'ի մեծաղս մեր՝ որ էր հեռագոյն 'ի տեղւոջէ յայնմանէ, ուր խառնի Երասխն ընդ Կուռ գետոյն, իբրև ժամ միոյ ճանապարհ. զի կամուրջն Երասխայ ի մէջ բանակին էր և կամուրջն Կուռ գետոյն 'ի ներքոյ քան զբանակն. իսկ մեք 'ի վերի կողմն բանակին: Իսկ ի միւս օրն՝ որ էր Գ. շաբթի, հարին զմեծ վրանն, զոր բերեալ էաք 'ի սուրբ Էջմիածնայ՝ տաղաշէն եկեղեցւոյ նման՝ զարդարեալ ազգի ազգի երանգով և բազմազան խաչերօք և ծաղկօք. և անդանօր հրամայեցի և զմերային լուսաւորչածին Ազգն կանչել, որք կային 'ի բան 'ի բանակին, 'ի Ճրագալուցին օրն, զի վաղիւն եկեսցեն 'ի վրանն. որ և եկին ամենեքեան 'ի Ծննդեան օրն 'ի վրանն իմ, յորում կատարեցաք զտօն Ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, առանց ժամատեղի և Պատարագի, զրկեալ յամենայն հոգևոր ուրախութենէ, զառն ողբով և արտասուօք, որպէս երբեմն հինն Իսրայէլ, կախելով զկտակարանս մեր 'ի մէջ ուռեաց: Այս տրտմեալ դիմօք, լքեալ սրտիւք, յակամայ կամօք զգեստաւորեցուցեալ զիս մերայնոցն, և ըստ բաւականին փոքր 'ի շատէ՝ զոր ինչ եկեղեցական անօթ և թափօրական պատրաստութիւն ունէաք ընդ մեզ, կարգաւ-

րօք, սուրհատ աղօք, զպրօք՝ աղուցեալ պատմուճանօք և լուցեալ մոմեղինօք, խաչիւ, Աւետարանաւ, և սուրբ Միւռոնաւ գնացինք 'ի վրանէն առ ընթեր և յեզրն երասխայ. և անդ կատարեալ ըզ-կարգ Ջրօրհնեացն, հեղաք զսուրբ Միւռոնն 'ի ջուրն Երասխայ. յորս էին Երևանայ Փաշալիման Մելիքջանն, Մելիք Յակոբջանըն, և Մելիք Մկրտումն: Տուղախու Մելիք Եղէնն, որ և 'ի նա հանեալ եառ զխաչն 'ի ջրէն: Այլ և Երևանայ, և Երզրումայն Քահանայքն, և բանակեալ Հայքն, և Երևանայ աղանիքն, և այլանիքն. Շէր-խալամ, Դ֊ալըն և խանին խոզապաշտն՝ աւելի քան զԳ֊Ճ. մարդ՝ Հայ և Թուրք: Եւ այս էր զարմանք, զի Պարսիկքն առնէին է Միւռոնախառն ջրոյն, և օծանէին զերեսս իւր-և ապա արձակեալ ամենայն որ գնացին յիւրաքանչիւր տեղիս հանգ.իւր. և մեք դարձաք 'ի վրանն, ունելով ընդ մեզ զամա երևելի արանց հրաւիրեալ 'ի ճաշ:

## ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս գնալոյն իմոյ 'ի կողմն Տուղախու, և յետ դառնալոյ քաղքաղակէն, և գալստեան Մ֊այլնամեներն:

Իսկ 'ի Ծննդեան օրն և զգիշերն՝ ձիւն եկեալ ծածկեցոյց զմեզ. վասն որոյ յերկրորդ օրն Ջրօրհնեաց, անձապարեցի անցանել ընդ Կամուրջն, և գնալ 'ի Տուղախ. որ և գընացեալ իմ Երևանայ խանի մօտն, որ էր և նա 'ի խուզս եղեգնեայս. 'ի նոյն տեղի՝ յորում իջևանեալ էաք: Եւ ասացի. թէ՝ որովհետև չէ՝ ասա մեծաւոր խանն. և չէ՝ յայտնի՝ յորում աւուր գալոց է. ես կամիմ գնալ 'ի Տուղախ՝ զի անդ կատարիմք 'ի ցրտոյ մենք և անասունքն մեր. և յորժամ իմանամք զգալուստ խանին, փութով դառնամ և գամ: Եւ զի թէպէտ ոչ կամէր խանն թողուլ զիս գնալ, զի մի՛ և ինքն միայնակ մնասցէ, բայց ես ոչ լուայ նմա. և փութով գնացեալ իմ առ Մ֊երակացու բանակին Այասուլ-Հասան բէկն 'ի տես, և ծանուցի նմա զկամքն իմ. որ և խնդոյն եղեալ յերիվար, և եկեալ 'ի բնակութիւնս մեր, պատճառելով զանուլթիւն եղեգնեայ

խուզիրացն՝ եթէ իցեն բուռական, կամ թէ այլ ես պարտի շինել. վասն որոյ հանդիպեցաւ և Խանին Երևանայ. և 'ի մէջ զրուցատրութեան ասաց. թէ մեծին գալն անյայտ է, և ստա պակասութիւն ամենայն իրաց, և դու հիւանդ, որպէս կամիս առնել: Եւ Խանն պատասխանեալ ասաց. զի՞նչ արարից, զի երկնչիմ ուրէք գնալ. զի մի՛ եկեալ զիս ոչ գտցէ աստ, և պատճառեալ հանցէ զիս 'ի կենաց. զի և Խոջէֆայն խընդրեաց գնալ, և ես ոչ թողի գնալ նա: Վասնորոյ պատասխանեալ անդրէն Եպրուլ-Հասան բէկն, ասաց. մի՛ արգելուր ըզԽալիֆան, զի և նա տկարութիւն ունի, և ծեր մարդ է, և թո՛ղ գնայ 'ի Տուզալու. և 'ի գալ մեծաւորին մերոյ, դառնայ և գայ, քանզի սիրէ զնա. և վասն այնորիկ ոչինչ առնէ նմա չար: Եւ ապա հեծեալ 'ի ձի, և մինչ գայր 'ի տեղի իւր, 'ի ճանապարհին դէմ ելաւ ինձ և ասաց. Խոջէֆայ, ահա քո խաչնեըդ համար գնացի ձեր Խանի մօտն, և խօսեցայ ընդ նմա վասն քո, և զնա այսուհետև ուր և կամիս. զի նա ոչ կարէ արգիլել զքեզ: Բայց յորժամ լսես զգալուստ մեծին, փութով ժամանեա, և ես վասն քո այլ մեծամեծ յարկս շինեցից եղեգամբ, զի յորժամ գաս. բնակիս 'ի նմա՝ լայն և արձակ: Վասն որոյ և ես օրհնելով զմեծազօր Խանն, և շնորհակալ լինելով 'ի նմանէ, ասացի. թէ՛ բարի է, գնամ. և յորժամ լսեմ զգալն, վաղվաղակի դառնամ և գամ. բայց վասն խուզից մի՛ ինչ աշխատիր, զի բաւական ենք և այնք զոր շինեալ են, և չէ՛ փոյթ կրկին շինելոյ: Եւ այսպէս ելեալ ձիւնախառն անձրևով, և անհնարին տղմով անցաք ընդ Երասխն 'ի Ղիզիլէն, և անճապարեցի գնալ 'ի Տուզալու. բայց Քալանթարն և Մէլիքն մնացին յետ անցանելոյ Կամուրջին. զի և յայսկոյս կային բնակեալ Չըփառ-ծէքն. վասնորոյ մնացին Գըրղոյ մօտն, որք էին ղաջէնք Երևանայ Գիւէյի կողմանէ. քանզի բան և հնար ունէին ընդ նոսա: Եւ առաւօտն մինչ կամէին գալ զկնի իմ, լուան թէ մեծազօր Խանն գալոց է յետ Ե. Զ. աւուր. որով յղեցին և ինձ զփայիկ մի, և ծանուցին զգալն Խանին. և յորժամ լուայ, յետ դարձայ 'ի ճանապարհէ, զի Բ. աւուր ճանապարհ գնացեալ էի. և եկեալ հասի կրկին 'ի բանակն՝ 'ի Ղնդեան Բ. օրէից՝ Բ.շաբաթի օրն, և գտի զերկրորդ Աղէքսանդրն եկեալ օր մի յառաջ՝ կիրակի գիշերն՝ լոյս Բ.շաբաթի. յորում և ես հասի 'ի նոյն Բ. շաբաթի երեկոյն, և հասի 'ի յեզրն Երաս-

խայ մերձ Ճ՚խիւրին, ուր էին Պալանթայն և Մէլիքն 'ի վրա-նին Նոցա, ոյք էին ընդ մերայսն. և մնացի անդ զգիշերն։

## ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս յանդիման լինելոյ մեր մեծի խանին, և հարցանելոյ նմա զընծայս մեր, և խօսելոյ ընդ նմա, նորա յառաջբերելոյ զմեզ։

Եւ յերկրորդաւթի վաղուեան ընդ առաւօտն տեսեալ զպատ-րաստութիւն մեր՝ աճապարեցաք անցանել զկամուրջն, և գնալ 'ի կողմն բանակին, ուր էր աթոռն և կայանն մեծի խանին. և գնացեալ իմ և Մէրդէճն, և Պալանթայն և Մէյլէնիքն ընդ իս, այլ և Ներսէսեան ազատին, և Շէր-խաղամ և այլ Ա-ջանիքն և մեր Պ[illegible]ք ամենեքեան ժողովեցան 'ի մի-ասին. և այսպէս մուծին զմեզ առաջի մեծազօր խանին։ Բայց զիս յառաջ մեծարեցին քան զամենեսեան. և զընծայսն իմ յառաջ քաշեցին, զձիանքն և զջորիքն, և զայլ պատրաս-տութիւնս՝ զոր ունէի ընդ իս։ Յորժամ տեսեալ խանդաղատեցաւ և բերկրեցաւ 'ի վերայ իմ և ասաց։ Խօշ [illegible] Խանլըգայ, [illegible]։ Եւ ես պատասխանեալ ասացի. Խանըմ, [illegible]. [illegible] և ասաց. Աղաժան [illegible]։ Եւ ապա զայլոց ընծայս մատուցին առաջի նորա, զՊալանթայինն, զՄէլիքենիցն և զԱղաջանիցն. որ և նոցա շնորհակալեցաւ, և ասաց. [illegible]. և պատուիրեաց ամենեցունցս, թէ [illegible]։ Եւ մեք խոնարհեցաք գլխոյ [illegible] արարաք, և գնացաք 'ի տեղիս մեր յառաջին բնակութիւնն։ Եւ 'ի նոյն օրն երեկոյեան ժամու, ոմն 'ի սպասաւորաց իւրոց առաքեաց և կոչեաց զիս. որ և ես առեալ զՊալանթայն փու-

Թացայ առ մեծազօր Խանն 'ի յամարայնն իւր. և ծանուցին նմա վասն իմ: Որ և խսկոյն կոչեաց զիս առաջեն. և իմ առեալ զՔաղանթայն կացի առաջի իւր. որ և սկսաւ հարցանել վասըն Երևանայ կողմանցն, և վասն Գարսայ, և կարաւանից երթևեկողաց, և վասն Պայազատու և Բրտասանայ կողմանց. որ և ըստ պատշաճին տուի զպատասխանին. և շնորհակալութեամբ զոհ եղեւ, թէ քո Ենգլայէն և Փրէնքէն զոհութիւն Աստուծոյ՝ խաղաղ եմք յամենայն կողմանէ. այլ և ըստ հրամանի քում՝ զոր պատուիրեցեր 'ի Թիֆլիզ՝ ինձ և Խանին՝ գրել ամենայն ուրեք վասն երթևեկողացն՝ գրեցաք. այլ և Գարսայ փաշային, և Արզրումայ Սէրասքէրին Ահմետ Փաշային գրեցի աղաչելով վասն վաճառականաց. և ահա սկսան գալ կարաւանք և վաճառականք՝ թէ մեր ազգէ, և թէ յՕսմանցւոց: Այլ և մեծամեծ կարաւանք կան՝ որ մօտ օրերս գալոց են: Դարձեալ եհարց, թէ՝ Երևանայ Խանն զի՞արդ է, լաւ կառավարութիւն ունե՞ր, ձեզ հետ լաւ ծանօթութիւն գնա՞յ, բանին լաւ մտադի՞ր էր, խօնարհի՞ էք: Ես ես շնորհակալութիւն բերի, թէ՝ ամենայն կողմանէ լաւ էր, և բանին և՝ ղօճաչախին միր: Այլ և վասն Պայազիտու, և Բրտասնու, և Գարսայ կողմանց եհարց, և եգիտ ըստ սրտին: Վերջապէս եհարց վասն վարի և ցանի. և խսկոյն բողոք բարձի, թէ՝ ո՛չ գոյ ըստ բաւականի. նա և ոչ զասնին եղեմք՝ որ վարեմ. բայց քո փօլէբէն լինի՝ թէ զարնան Պայազիտու և Գարսայ եկեմք ծարեն փողով կամ պարտքով, և վարուցան անեն, որովհետև ջրելով է զարնանավարն այլ լաւ պիտի լինի: Որ և վասն այսմ բանի՝ Բողղուլէ Բէկ անուն զոմն առաքեաց 'ի ծածուկ, որ գնացեալ շրջագայեաց զնահանգն Արարատու՝ քննելով զվարն և՝ զցանն, և՝ զեզինս, և՝ զսերմնացու գիւղէ 'ի գիւղ: Որ և յաջողածինն եւ հանդիպեալ էր, և վասն մեր Մօլէ գիւղորէից պատուէր էր տուեալ և յորդորեալ, թէ՝ զսերմն Վանիցս տանք նոցա՝ որ սերմանեն, ապա թէ ո՛չ 'ի ղէնկէն տան. և ըղմոոլէն՝ ղէնկէն կանեն: Ես ոչ գիտեմ, եթէ վասն փորձելո՞յ զիս այսպ՞ս արար, զի իմացի զերան և զուտն իմ խօսացս, եթէ վասն հօզալոյ զերկիրն ղզօայէն: Ես ապա յուսադրեաց ասելով, հոգ մի՛ անէք, գիտեմ որ այդպէս է. բայց Աստուած ողորմած է, ղօրօտր չէք մնալոց. և ապա ասաց մօրախոս ես, զնա՛ գեղի, փոփո արա. և ելեալ գնացեմք 'ի մեօտեղս մեր գիշերով:

# ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս գնալոյն իմոյ 'ի վանսն Նախջուանցւոց, այսինքն, Պարոն Աստուածատուրին, պարոն Խոջէխէնոսին, պարոն Ստեփանին. և խորհելոյ ընդ նոսա զպատշաճաւոր բանս:

Իսկ 'ի միւս օրն 'ի հասարակել աւուրն, մինչ գնայի 'ի վանքն Նախջուանցւոց, յորում կային ապաստանեալ 'ի մէջ բանակին յեզր Երասխ գետոյն, պատահեցան ինձ 'ի ճանապարհին մեծազօր խանի սպասաւորքն, զոր ջառաղ անուանեն, արք Բ. ունելով իւրաքանչիւր ոք 'ի գիրկն իւր՝ զգառն մի. և 'ի տեսանելըն զիս, զկայ առեալ կանգնեցան. և յորժամ մերձ եղէ, եկին և կացին առաջի իմ 'ի յանդս ճանապարհի: Եւ ես բարև առեալ ասացի, ի՞նչ խնդրէք. և նոքա պատասխանեալ ասացին, ողջութիւնդ: Մէհէնտէր-Նշան խանն քեզ զայս Նուրզանդայց զառըս ուղարկեաց, զի ճաշակեալ օրհնեսցես զնա: Ապա ասացի. միւս զառն ո՞ւմ պիտի տանիք. և նոքա պատասխանեցին թէ, և զայն Երևանայ խանին ուղարկեաց: Յորմէ շնորհակալեցայ. և 'ի վերայ ձիոյն համբարձմամբ ձեռացս օրհնաբանեցի զխանն. և բերողացն ոսկի մի պարգևելով՝ անցեալ գնացի: Եւ յետ երկուց աւուրց 'ի յունվարի Ժ.Զ. պատուիրեաց մեծազօր խանն՝ Նայէն-տալ մեզ, և ամենայն եկեղեցին, ցորեան Գ. մարդոյ, Ա. լիտր Թարմօղի, որ է Բ. օխայ և Ձ. տրամ: Եւ 'ի յունվարի ԺԲ. օրն կիրակի՝ մեծարեաց զիս 'ի պատիւ Աստապատցի Պարոն Աստուածատուրն՝ 'ի վանսն իւր. և մինչ կայի 'ի վանսն 'ի սեղանն, լուայ՝ թէ Գ. ապքինու բերեալ զմեծ վանսն ահա կանգնեցուցանեն. և մնացի անդ մինչև յԲ. պահ գիշերոյն. և ապա դարձայ 'ի բնակութիւնս մեր: Բարէ, սաստիկ իշխանութիւն և հրաման երկրորդ Աղէկսանդրիս. զի անհուն բանակն՝ և այնքան խառնիճաղանճ բազմութիւնն, իբրև զայր մի անշշունչ և համեստ կային սաստանեալ. և ոչ ոք իշխէր ասել այլ ցընկեր իւր, և կամ ցռամիկս, և ս առաւել ցմեզ՝ և ցմեր ազգն, եթէ, այսպէս արա կամ այնպէս. այլ իւրաքանչիւր 'ի վերայ պաշտօնութեան իւրոյ՝ և գործոյն հաստատ՝ և ահիւ պահուցեալ: Իսկ 'ի յունվարի Ի. եկն Կէնճէու Կէնճ-Ալի փաշայն՝ որ էր Էլչի. և ապաստանե-

ցուցին յայն կողմն Երասխայ յեզր գետոյն, մերձ առ գուռ այն՝ յնորիկ՝
ուր խառնի Երասխ ընդ Կուռ գետոյն։ Եւ ՚ի յունվարի ԻԲ. եկն
և Խորասանի Խանն ՚ի Մաշթուլոր, որ է եղբայր համահայր և հա-
մամայր մեծազօր Խանին. բարձրահասակ և յաղթանդամ նման
եղբօրն։ Եւ ՚ի նոյն օրն առաքեաց ինձ Խիլայ Խանն Աղեքսանդր
անուն, զերկուս պատուական Եմիփորոնս, ու մինն աժէ Ն.
թուման։ Եւ է ասպագործ ծայրէ ՚ի ծայր, բաժանորակն որմնայոյ.
որ և ՚ի սուրբ Էջմիածին ՚ի մէջ այնքան Եմիփորոնայն ոչ գտա-
նման նմա. որ և ունէր ԲԺ.ան պատկեր ՚ի հնոն բանած, և ոչ
յեռոյ կարած. յորս էին Զ. պատկերքն Քրիստոսի. Գեթսեմանն
և Յարութեան երևումն, Գ. ընդ չորից Աւետարանչացն, և
զալ խաչաքեր կանանցն, և Բ.ան աշակերտացն, ընդ Ղուկա-
սու, միայն Պետրոսն որ եսես զկտաւն լոկ, զի կային, և գնաց
զարմացեալ՝ թէ զինչ եղև. և միւսն ընդ Յօհաննու. եւ Պետ-
րոս և միւս աշակերտն, և գնային ՚ի գերեզմանն. ընթանային եր-
կոքեանն ՚ի միասին։ Իսկ մնացեալ Զ. պատկերքն էին, մինն ՚ի
մէջ բոլորակի Քրիստոսի պատկերքն խաչակերեալ Բ. ձե-
ռամբ։ Եւ շուրջ Քրիստոսի բոլորակին՝ Բ. բոլորակ փոքրա-
գոյն ևս, յորս էին չորից բոլորակաց մէջն՝ Դ. կերպարանք Աւե-
տարանչացն, Մարդոյ, Առիւծոյ, Եզին և Արծւոյ։ Եւ Քրիս-
տոսի բոլորակի գլխին վերայ եդեալ բոլորակին մէջն՝ Հոգին սուրբ.
և ՚ի ներքոյ Զ.երորդ բոլորակն՝ Զ. թևեան Սերովբէ, և յա-
ջակողմեան բոլորակին պատկերք սուրբ կուսին Մարիամու։ Եւ
յահեակ կողմանն բոլորակին՝ սուրբ Յովհաննէս Մկրտիչն։ Իսկ
Բ.երորդ պատկերն, որ էր մի ծայր Եմիփորոնին՝ սար կողմն,
զձեռս եդեալ ՚ի գլուխ Առաքելոցն՝ օրհնելով զնոսա ՚ի լեառն
Ձիթենեաց՝ Համբարձման օրն։ Թ.երորդ պատկերն ընդ Յօ-
հաննու, որ մատուցին նմա մասն ձկանց, և խորիսխ մեղու, և
առեալ եկեր։ Ժ.երորդ պատկերն՝ զդրօքն փակելովք մտանելն,
և շօշափումն Թովմայի, և արկանել զմատունս ՚ի կող Կենարա-
րին։ Մետասաներորդն, ընդ Յօհաննու ՚ի Տիբերական ծովն՝
ձուկն որսալն Պետրոսի նաւաւ ընդ Նաթանայէլի՝ և ընդ որդւոյն
Զեբեդեայ. և այլք աշակերտաց ան.ուն երկուս. որ և հրաման
առեալ արկին յաջակողմն նաւին զուռկանս, և բազմութեամբ
ձկանց հանեալ ՚ի ցամաք կրակեաղ կայծակամբ, և ձուկն մի ՚ի
վերայ խորովեալ և հաց։ Երկոտասաներորդն, ՚ի միւս ծայրն
Եմիփորոնին պատկեր՝ իշխանութիւն և զփականս տալն Պետրո-

մի առաջելոյն։ Այսքան պատկերք կային 'ի վերայ պատուական Եմիփորոնին, որոյ ծանրութիւնն Եմիփորոնին էր . . . (*)։ Իսկ Եմիփորոնն 'ի վերայ սև թէժմոյն Եւ. խաչ ոսկեայով և մարգարտով, պատուական և ծանր խաչիւ բանուած ադամանդ, և կարած 'ի վերայ Եմիփորոնին։ Զօրս ձանձրութիւն համարեցայ մի ըստ միոջէ գիրել պատկերացն գրել. և մէկ Կոնքեր ոսկեայով, որպէս զմեր Կոնքերն, և 'ի միջի զՔրիստոսի պատկերն խաչանկարելով, և 'ի Գ. անկիւնս զԱւետարանչացն։ Որում և ես խնկաջեցի և շնորհեցի նոցա՝ զոր ինչ իմ կարն էր. զի այլք Ռ. 'ի առաջինոյ ազատաւորաց իւրոց՝ հրամանաւ նորին 'ի վերայ բազկաց իւրեանց բարձեալ բերին, և եդին առաջի իմ ողջունելով զԹագաւորն 'ի բերանոյ մեծի Խանին, և հարցանելով զորպիսութիւն իմ ճանապարհական սիրով։ Եւ թէպէտ ոչ կամէին առնուլ զօժիտս իմ վասն երկիւղի Խանին. բայց յոլով բռնաբարելոյս աղագաւ և հաւատացուցանելոյ՝ թէ իմ բերանէն ո՛չ ելանէ, միայն թէ դուք ձեր ընկերացն մի՛ ասէք, ապա հաւատացեալ աչիւ մեծաւ հաղիւ թէ առին. զի այնպէս սահման ունի մեծախելք Խանն, յորժամ մարդոյ բան ինչ տայցէ, եթէ ստանողքն բան ինչ պահանջեն՝ կամ առնեն, անխնայ սպանանէ զայնպիսիսն։ Եւ ապա ելեալ գնացին 'ի սպասաւորութիւն իւրեանց։ Իսկ Երևանայ Խանն, և ամենայն բանակ նորին, որ կային մերձ 'ի բնակութիւնս իմ, լուեալ զայս և տեսեալ ըզպարգևսն՝ մեծաւ հիացմամբ սքանչացեալ, զարմանային ընդ սիրոյ նշանն մեծին, և ընդ քաղցրութիւն որ առ իս. և օր ըստ օրէ գային առ իս 'ի լսել և շնորհաւորել. և Նախարարք աբարեալ գնային սքանչացեալ։ Փառք Աստուծոյ, և օրհնեալ է անուն նորա որ ունի սքանչելիս միայն։

(*) Զիք 'ի բնագրին որքանութիւն կշռոյն ծանրութեան Եմիփորոնին եւ տեղին բաց էր թողեալ, ըստ որում եւ մեք անցաք կէտադրութեամբ։

## ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս վրանին՝ որ բերին 'ի Գաղղիոյ, և ուղեւորութեան նորին: Տօնական ուրախութեան մեր ամենայն օր փնտռել 'ի ոսկեայ մեծի խանին, և օր ըստ օրէ պատրաստելոյ ...

Յետ այսորիկ հրաման եղև 'ի մեծ խանէն, ընդ Տրիստանայ խանին և ընդ մեզ եկեղոցն, զի ամենայն օր 'ի ծագել արեգականն, գնասցուք 'ի տես և 'ի ողջոյն խանին մեծի. և պատրաստեալ էին իւրաքանչիւրոցն մերձ 'ի բնակութիւն և յամարան իւր՝ եղեգնեայ հովանոցս ոսկեզօծեալ նման, զոր աստ ասեն՝ Ժ. գիրկ, ԺԵ. և Ի. գրկով երկայն, և Բ. գիրկ լայն. որ իւրաքանչիւր քաղաքէ 'ի կողքն 'ի մէկ մէկ հովանոց նստէին՝ յատուկ յատուկ քաղաքակցօքն հանդերձ: Եւ փաղ քաջ գնացինք 'ի սահմանեալ տեղն. և ամենայն մարդոյ տեղն նշանակեալ և յայտնի էր. և ամենայն ոք իւր տեղն ճանաչէր: Եւ յերրորդ ժամն եղանէր մեծագոյն խանն 'ի ներքէն 'ի [illegible], և [illegible] տասն արարեալ, ապա ընթանայեին ամենեքեանքն՝ կարգ կարգ՝ առաջի իւր, և խոնարհմամբ գլխոյ՝ անմռունչ բարև տուեալ անցանէին. և զի էր նստած տեղն խանին՝ [illegible] շինեալ փայտաշէն, և ամենայն [illegible]. իսկ շրջապատ պարիսպն եղեգնեայ, և [illegible] տեղն եղեգնեայ, պարիսպն և բնակութիւնքն. էին և վրանք բազումք 'ի ներքս և արտաքս [illegible] խանին: Նոյնպէս և մերս բնակութիւն 'ի բացեայ 'ի բանակէն՝ զառ 'ի վեր 'ի յեզերն Տրստախայ, կէս ժամու ճանապարհ հեռի 'ի բուն բանակէն, աւելի քան ԺԵ. հեղ շինած եղեգնեայ. զի կամէին զեկեալ խաներաց զոմանս անդ իջուցանէին և բնակեցուցանէին: Բայց վասն հեռի գոլոյն 'ի օթևանէն խանին, ոչ եառն թոյլ, այլ 'ի շրջակայ խանին բնակեցուցին: և յետ Բ. կամ Գ. աւուր հրաման եղև 'ի մեծ խանէն՝ ընդ և ամենայն եկեղեցն Տրիստանայ, զի գնացեալ նըկատեսցուք զղօաքնն, և զգօնուցուք. որ և 'ի պատճառէ մերմէ զի՞ թէ ամենեքեան առ հասարակ զյոհ տուեալ ընթացան վաղվաղակի՝ 'ի տես և 'ի [illegible] ահագին վրանին. որ էին կանգնեցուցեալ 'ի յեղեգնեայ պարսպին մէջն, 'ի կողմն [illegible] յարևմտից կուսէ խանին օթևանին, որ էր հոգացեալ և բերեալ 'ի

Գ․ աշտինու։ Որոյ էր երկայնութիւնն Ճ՛Ժ․ հոլով․ իսկ բարձրութիւնն ԺԲ․ հոլով, առաջին․ և ԲԺ․ ան սիւնք էին 'ի վրանին, և 'ի գլուխ սեանցն կոճակք արծաթեայք, որպէս մէջանկ ձևեալ․ նշանն այսպիսի ✝։ Իսկ արտաքոյ վրանին կողմն բոլորագոյն գունով․ և շրջապատն երկաթի մինն համակ, և մի տակն ծածկեալ զարդարեալ ոսկով, և մէջն Կիլանու զարդարեալ գորգով․ որ և լեալ էս Խանշաղոյ արարեալ զբօսնեցաք, և ելեալ գնացաք 'ի տեղիս մեր՝ օրհնելով զԱստուած։

## ԳԼՈՒԽ ԻԲ․

Յաղագս որ ընդ օրէ էջելոյ և ժամանողաց 'ի բերդն Մաքուայ 'ի հեռաւոր տեղեաց՝ անուն բազմաթեան, և որոց որոց ծառայից։

Ապա սկսան գալ յամենայն կողմանց հրաւիրեալքն ի հեռաւոր տեղեաց։ Նախ՝ Ջեղալթու Փիր-Ահմատ խանն, որ և Մուղան Երևանայ խան արար, և բէկլէր-բէկի․ բայց ընդ իւր ունէր զնա մինչև ցայսօր, և 'ի տեղինորա Մէհէմէտ, զոր ասեն նոյնպէս ասեն․ անունն Մահմատ-Թիրպայ պէկ․ զոր առաքեցին 'ի Մուղանու․ և է մինչև ցայսօր Երևան 'ի տեղի Փիր-Մահմատ խանին, և կառավարէ զնահանգն Երևանու։

Խորասանու Ջէֆէրի Թահմազ խանն՝ բոլոր Իրանու Սարդարն որ է Սէրասքեր։

Մազանդարանու Մէհրթէն, Վ․ էղեր, Վ․ էթէլ, Մէրոֆեի, որ է պաշ-մէջէրբեր, և պաշ-ծաղէօղէ, և ծանէ-ասին․ այս Գ․ հողի՝ ուր որ գտանին, այսպիսի են։

Նշապուրու Մէհրթէն, Վ էթէլ, Վ․ էղեր, Մէրոֆեի։

Մաշաթու Իպրահիմ խանն, որ էր իւր հարազատ եղբայրն, և է այժմ բռնակալ Ատրպատականի, որ է հարբղէճանու աղաալըր՝ որ է սէրասկէր։

Սուլտանիայու Մէհրթէն, Վ․ էթէլ, Վ․ էղեր, Մէրոֆեին։

Ատրպատականու Գ․ անձար-Մէհմէտ-Ջիւսէփին խանն։

Կիլանու Մէհրթէն, Վ․ էթէլ, Վ․ էղեր, Մէրոֆեին։

Գ․ ապլինու Մէհմէտ-Խըլըճըյ խանն։

Գուռճայ Գասում խանն.

Քաշանու Մէրզէքն:

Սպահանու Մայար-պաշի խանն:

Թէհրանու Լութֆ-Ալի խանն:

Ամրանու՝ ուր էր Շահ-Թահմազն 'ի կալանս, և որդին Շահապազն 'ի տեղն իւր մասն, նոյն տեղեաց մեծամեծքն:

Շիրազու Ահմէտ խանն:

Լառու Ալի-ղուլի խանն:

Գանտարու Աբտուլայ խանն:

Քիրմանու Սուրսաթչի-պաշի Աղայ-Գողըն:

Ռէզլանու Գաղը խանն, Ամէնֆուռաբօյմաղէն:

Նզրու Վէֆէլ, Վէղէր, Մէրռօֆէ:

Տօվրազու Ալի-Միրտան խանն:

Հաւզայու Վալին, որ է մեծ խան:

Շուշտարու Ապպաս-ղուլի խանն:

Գէհպանու Խանայէլ խանն:

Խուրմապաթու Բապա խանն:

Թարվիզու Ապտու-ռազախ խանն:

Սուլուխպուլախու Մէհմէտ-ղուլի խանն:

Ուրմու Մէհմէտ-խայ խանն:

Արտաւիլու Իմամ-ղուլի խանն:

Նախջուանու Բիզայ խանն:

Երևանու Մէհմէտ-ղուլի խանն:

Կէնճու Ուղուրլու խանն:

Թիֆլիզու Վալին Իմամ-ղուլի խանի որդին, Ալի-միրզէ խանն:

Գազադու Աֆահան-վէրտի-Քախաում-բէկ խանն:

Շամախու Պէկէրղէկէ Գիրաթն:

Լոռու Քէլպ-հիւսէին խանն:

Չօրսայ Մուրսա-ղուլի խանն:

Մակուայ Սուլթանն:

Կախէթու Միրզայքն:

Տարպանտու՝ որ է Դէմիր-ղափու, Մուսա խան Թալիշն:

Իւ այլոց տեղեաց խորին խօրասանայ, և 'ի Բաղուայ 'ի կողմանց հարաւոյ, և 'ի Քանտահարցւոց, 'ի յարևելից, և 'ի կողմանց Հնդկայնոց, 'ի զանազան քաղաքաց. Խանք, և Սուլթանք, Մէրզէք, և Մէրռօֆէք, Վէֆէլք, և Վէղէրք, Շէխ-ֆալաք. և

Հէճ., Մօլլա-պաշէ. եւ Մօլայ., Բ.աւլանճաբ.ք եւ Մէլէ.ք, Կողմնապետք եւ Կուսակալք, Այանք եւ Բէգ-փաշայք. Խոսացեալք եւ Տօլխոնուրք՝ գումարեալ ժողովեցան կուսակցան, եւ եկեցացան. եւ մինչեւ ցՊայրամն իւրեանց առ հասարակ եկեալ հասին եւ կային պատրաստ։ Եւ ամենայն օր յառաւել յառաւել 'ի օժլամ մեծի խանին գնային 'ի փէշան՝ կարգ կարգ, սկսեալ 'ի Խորասանայ քաղաքացւոց մինչեւ ցԱտրպատականս եւ ցԱյրարատեանս՝ իւրաքանչիւր քաղաքաց մարդիկք իւրաքանչիւր մեծամեծօքն. եւ յետ օժլամին ժամ մի մնացեալ, եւ ապա ցրուէին յիւրաքանչիւր բնակութիւնս իւրեանց.

## ԳԼՈՒԽ ԻԹ.

### Յաղագս Պատմութեան դաշտին Մուղանու եւ Երասխայ, թէ ուստի՞ ելանէ, եւ ո՞ւր հասանէ։

Եւ յորժամ եկին եւ գումարեցան յամենայն գաւառաց եւ քաղաքաց, բոլոր Պարսկաստան երկրին բռն զինեալ՝ մեծամեծք եւ իշխանք, եւ կազմեցաւ ամենայն եկաղաց յառաւել յառաւել հովանոց եղեգնեայ, զի ժամանակն անձրեւային էր, եւ եղանակն ձմեռնային։ Եւ այս Մուղան կոչեցեալ մեծ եւ անհուն դաշտս, է լայն եւ ընդարձակ դաշտ մի հիանալի, որ Լ. օր հազիւ թէ, լաւ ձիաւոր մի կարէ շրջագայել զեզերն. գուն եւ տափարակ. 'ի կողմանէ յարեւմտից է բարձրութիւնն, եւ 'ի կողմանէ յարեւելից է ցածանալն, զի եւ Երասխն յարեւելից յարեւմուտս ընթանայ. որ ելանէ 'ի լերանց Կարնոյ, որ է Էրզրում. եւ 'ի Կաղզուանայ անցանելով գայ հասանէ յԱյրարատ գաւառ, 'ի Արտաշատ եւ 'ի Վիրապ. եւ առընթեր Վիրապայ վանիցն հանդարտ գնայելք ձեւէ, եւ Շարուրով ժամանէ 'ի յԱստապատ. եւ Աստապատու չինոյն եզերով՝ եւ վանից առջեւէ անցանելով մտանէ 'ի մէջ լերանց եւ քարանձաւաց, եւ գայ 'ի Տարաշամպ, ուր խառնի նմա Տղմուտ գետն՝ կից Տարաշամպու. եւ այս Տղմուտ գետն՝ այն գետն է, ուր Վարդանանց մեծ պատերազմն եղեւ, եւ նահատակութիւնք նոցին 'ի յեզրն Տղմուտ գետոյն։ Իսկ Տարաշամբն է Արազու յայն կողմն, որ է

յարևելից, և է Թաւրիզու կողմն. զի Գ. աւուր ճանապարհ է Թաւրիզէ աստի. և անցանելով զՏարաշամայն լեռնամիջով հասանէ 'ի Խին-Ջուղայ. ուր կայ մեծ և զարմանալի Կամուրջն Գ. տակ՝ բարձր և հիանալի սեաւոցն, զոր մեծն Շահապաս քակեաց 'ի ժամանակին յորում զՋուղայ քշեաց, և այժմ աւեր կայ. և ճանապարհորդք նաւաւ անցանեն 'ի Ջուղայու և գնան 'ի Գաւրէժ. և այսպէս ընթանալով 'ի Ջուղայու ելանէ 'ի դաշտըն սակաւ ինչ տեղ՝ որպէս Ե. Զ. ժամու ճանապարհ, և հասանի 'ի Գաւշտ գեղն և 'ի յՕրտուար, և անդէն կրկին մտանէ 'ի լեռնամէջ Բարտահ ապառաժուտ, դժուարին՝ խիստ տեղիս, և անցանէ ընդ Մեղրու ձորով, և ապա Զաւընտրու նահանգով, և Գարկուշատով, և ապա ելանէ 'ի դաշտն Մուղանու. որոյ է հարաւու կողմն է Գարադաղն, և է հիւսիսոյ կողմն՝ Գաւթան, Գարապաղ, Տուղուխ և Կէնձէ-պատանու երկիրն, Վերէնակ Խաչէն, Գանձասար և Եղուանից երկիրն: Եւ այսպէս յորժամ ելանէ Երասխն 'ի դաշտն Մուղանու, Գ. Ե. աւուր ճանապարհաւ՝ հանդարտ գնացեալ հասանի 'ի Կուր գետն, ուր խառնի ընդ նմա. անդ՝ ուր գումարումն եղև Պարսկաստանեայց, որոյ սակի է պատմութիւնս. և ապա Բ. գետք խառնեալ 'ի միասին անցանեն Կիլանու երկրով, և խառնին 'ի ծովն Կասպից: Եւ այս դաշտըս Մուղան է 'ի կողմն հարաւոյ ընդ արևելս. եթէ խնծոր մի դիցէ ոք 'ի գետնի, կարելի է 'ի հեռու տեղաց երևիլ, և ամենևին ոչ քար, և նշմարանք քարի ոչ երևի 'ի յայս անհուն դաշտիս: Բայց է յոյժ եղեգնուտ և խոտաւէտ, և լի վայրի էշիւք և խոզիւք, որ իբրև ոչխարս՝ երամակ երամակ շրջին: Բայց է անջրդի. միայն յորժամ հալեն ձիւնք, Յինայից և Խամբաձմանն ելանէ Երասխն 'ի սահմանացն, և ծածկէ զմեծ մասն երեսաց դաշտին, և բազում տեղեք առոգանին: Իսկ 'ի ձմեռն անձրևն և ձիւնն անպակաս են, որպէս և տեսաք. բայց ձիւնն ոչ մնէ աւելի քան զԲ. օր, զի ջերմային է վայրն և յոյժ զիճային օդն, և խոնաւութիւն յոյժ յոյժ. զի ամենայն ինչ բորբոքի շուտով. 'ի դեկտեմբերի և 'ի յունվարի՝ կանանչ խոտ գտանի, որ բաւականանայ անասնոց և ոչխարաց. և գառինք ծնեալք լինին՝ և մեծացեալք բաւ տարու, որպէս են 'ի Խոբէլէկէյն՝ յերկիրն Խամսայ տանն: Եւ երբեմն երբեմն ցուրտ ևս լինի և սաստկանայ, բայց փութով անցանի: Եւ յեզրն Երասխայ ծմակ և մորի, և գտանի այլեւ փայտ բազում:

# ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս կարգաւորութեան հովանոցաց Ղաան Էնէլոյ, և կարգ իշ-
խանին, ընդ որպէս կանգնին որդիք և եղբօրորդիքն, խաներն. և
կարգ զինուորացն, որք 'ի ժամ իշխանին իւրաստանջեր նշանով կանգ-
նին 'ի դիմաց. և որթանութեան նոցին և որդեհաութեան ծառայեց-
լոյ, և հրահանգելոյ նոցին։

Եւ յետ կարգաւորելոյ զամենայն նախարարն՝ իւրաքանչիւրոցն յատուկ յատուկ հովանոցս ամենայնպիսեացն, և նախարարքն ժողովեցին անդ 'ի վրանացն իւրեանց 'ի հովանոցս եկեղեցեաց, որ մերձ էր՝ օթևանի մեծ խանին, ընդ ծագել արեգականն։ Իսկ յերկրորդ կամ 'ի յերրորդ ժամու ելանէր խանն 'ի թագաւորանոցն, և նստէր. և Չաւուշէն մեծամեծոյն զօրէքով, որք են Լ. ամէն օր 'ի դիմացն կանգնեալք կատարէին զփառսն. և ապա զբոհաւեալ Ճ'աղայեր-մէք, որք են խանի Ըռանկեցէն՝ Գ.Ռ. իւրեանց հազարապետօքն, և զնային 'ի մէջ եկեղեցւոյ պարսպին, և կարգաւ շրջապատեալ կանգնէին երկրորդ և երրորդ՝ ունելով 'ի ձեռս իւրեանց ըղ-հրաշալիս իւրեանց մեծամեծ Ըքանկներն. որոց ծանրութիւն մի Ըքանկին լինէր Ժ.Լ. օխայ և այլ աւելի, ունելով զերկանս Ըքանկայ 'ի վեր՝ կէս մի արծաթեայք, և կէս մի ոսկեայ ղալաղա-կով, և որպէս զաւազան յենուլին 'ի նոսա. և 'ի գլուխս իւրեանց և թաղէ գտակ՝ որ է ...ղայֆաղ. և զտակին Բ. կողմն Էրծ-նօղն երկայն պոչերով, զրեալ 'ի վերայ գտակայն՝ Եղաճ. Իշաղաճ Գ.Ռ. աց., Գ. կերպ զրեալ. և այսպէս կից միմեանց կանգնեալ, ասկուն էր տեսողացն։ Եւ առ ընթեր մեծի խանին՝ մերձ յեն-քեան կանգնէր իւր եղբայրն Խալրահիմ խանն. յետ որոյ մեծի խանին մեծ որդին՝ Բիզայ-ղուլի խանն. և ապա եղբօրորդին որ էր այլ փոքր, որ էր Մ՝ուրթուզայ-ղուլի խանն։ Իսկ ապա կըր-կին մեծ խանի որդին այլ փոքրագոյն՝ Մ՝էհմէտ-ալի խան. և ապա միւս խանիքն ամենեքեան ըստ կարգի և ըստ պատուոյ։ Եւ այլ և 'ի զիմացն պար առեալ կանգնէին Բ. կարգ. որոց մի կարգն էր ղանդարուք, որք ունէին 'ի գլուխս իւրեանց՝ Ծղայն. ու-պէս գտակի ապաղաղին, որպէս և էր իսկ թէպուր ապաղաղեաց։ Իսկ երկրորդ՝ Նասաղչիք. որ և մեծաւորն իւրեանց ունի Գ.

Հաստ ծղոյ 'ի վերայ ճակատին՝ 'ի գագաթն իւր. և անդ 'ի ծայրս և 'ի մէջս ծղոյին թէպուրք: Իսկ զինուորքն իւր բազումք պղնձէ՝ կամ արծաթէ շինեալ և ոսկէզօծեալ նման նետին պատուանդանին, Գ. ժեռի, կամ Դ. ժեռի, նման նետից զոր շինեն զպատուանդան թէպլով՝ որպէս թզաչափ, և ունին 'ի ձեռս իւրեանց միշտ նաճագս դմշխեայ երկաթէ՝ արծաթապատ կոթով: Եւ գործ ղանդարա-ըճոցն է պահել ճանապարհներն, որպէս դօգաանծիղաշէն զանցս ճանապարհաց, զկիրճս, զծործորս. այլ և 'ի բանակակեաղն արտաքոյ բանակին պահեն 'ի գիշերի. և յորժամ սպանանելոց իցէ զոք, տայ 'ի ձեռս նոցա, և նոքա սպանանեն ըստ հրամանի իւրում: Իսկ նասաղծոցն է գործ 'ի պատերազմի՝ զոր ինչ հրամայէ ծանուցանել զօրացն և ղաղաղայ անել՝ որ է լաաախ անել, և վարել զզօրս 'ի յառաջ 'ի պատերազմ. եթէ ոք թիկունս դարձուցանէ՝ սպանանել. և յորժամ կամի զոք կոչել, զնոսա առաքէ. և 'ի հեռաւոր տեղիս առաքէ զնոսա իբրու անողորմ դահիճս, որ վաղվաղակի կատարումն տան հրամանին. և 'ի մէջ բանակին պահեն զտիւ և զգիշեր. և 'ի վերայ գողոց և աւազակաց սոքա իշխեն, և զոր ինչ գողք գողանան 'ի բանակէն ընչից, տեարքն 'ի սոցանէ պահանջեն և առնուն: Այլ ունի և ծօբծիք, որք զոր ինչ հրամայէ մեծ Խանն, ամենայն օր կանչելով ծանուցանեն ամենայն բանակին. նոյնպէս և 'ի ժամ պատերազմին: Այլ և ունի Ջ.Ռ. թէպլէպծի՝ որ սպիտակ տուղն փաթաթեն 'ի վերայ գտակին. բայց գտակն ամենեին ոչ երևի, այլ սպիտակ տուղն է փաթաթեալ զերև. և սոքա ևս ունին նէֆանս հասարակաց, և պահեն նօղանով զինակութիւն Խանին՝ 'ի տուէ և 'ի գիշերի Ռ.Ռ. աւ, որ Գ. օր մի նօղան թէղէն քաշեն: Չանդարաալքն են՝ Գ.Ճ: Նասաղծիք Գ.Ճ: Եւ Եըլ-աղածիքն Գ.Ճ: Եւ են էյլ-աղածիքն որդիք Խաներաց, կամ եղբարք Խաներաց. որք միշտ առաջի իւր կան 'ի սպասու. եթէ բարկանայ ումեմն և հրամայէ ծեծել, սոքա ծեծեն պրկելով 'ի վերայ երեսաց 'ի յերկիր, և Ե.Ջ. Էյլ-աղածիք կանգնեալ անողորմ հարկանեն, մինչև ասասցէ բաւական է՝ թողէք:

# ԳԼՈՒԽ ԼԸ.

## Յաղագս կրկին հարկելոյ զմեծ վրանն, և Արէֆայի Տէլամին։

Մերձեցաւ օրն Ռամազան Պայրամին. և կրկին հրաման եղեւ ր կանգնեցուցանել զմեծ վրանն. քանզի յառաջին նուագին յետ երից աւուրց ժողովեցին զվրանն և պահեցին. որ և 'ի արէֆէին օրն կրկին պատրաստեցաւ վրանն 'ի կողմն յարևելից Օթաղին իւրոյ։ Իսկ յաւուր Արէֆային, յորժամ գնացինք 'ի Սէլամն, ինքն մեծազօր և մեծախելք՝ հանճարեղ խանն՝ կանուխ յետ կէս ժամու ծագման արևուն՝ եկ արտաքս 'ի Օթաղէն և եղեգնեայ պարսպէն 'ի կողմն արևելից, և կանգնեցաւ, ունելով զդէմս իւր 'ի հիւսիս. և եղբայրն իւր Իպրահիմ խանն՝ մերձ ինքեան 'ի ձախակողմն, և մեծ որդին Բաղի-ղուլի խանն 'ի ներքոյ քան զեղբայրն։ Իսկ երկրորդ որդին Մուրթուզայ-ղուլի խանն, որ ամօք փոքր էր քան զմեծ որդին՝ 'ի ներքոյ մեծ որդւոյն իւրոյ. և փոքր որդին իւր Մէհմէտ-ղուլի խանն 'ի ներքոյ երկրորդւոյ իւրոյ՝ զի և սա փոքր էր ամօք քան զերկրորդն։ Իսկ այլ խանք ըստ կարգի և ըստ պատուոյ իւրեանց կանգնեալք կային։ Նոյնպէս և Ղուլայէրծէք 'ի բացեայ պար առեալ միատակ ԳՃ.ք մեծամեծ Թֆանկներով կանգնեալ էին։ Այլ և Ճամպուրայ ձէզէկներն հասարակաց Թֆանկներով յայս կողմն քան զՂուլայէրծէքն։ Իսկ Զամպուրակք առաջի նոցա։ Իսկ ապա Զանպարակք, Նաղաղճիք այլ առաջի։ Իսկ մերձ յանդիման ինքեան Էշիկ-աղասիք, որք էին որդիք խաներաց, և ոմանք եղբարք խաներաց։ Իսկ հրաման եղև 'ի մեծ խանէն. և բերին զուղտսն և կառուցուցանէին առաջի իւր։ Զկնի ուղտոցն, և զռմբիչ մարդիկքն, որք են ֆահլէ-անք, եկան ըմբշամարտել ընդ միմեանս։ Իսկ հրամայեցաւ ամենեցուն պատրաստ եղելոցն՝ զալ կարգաւ, և անցանել առաջի իւր Թէլամ տալով, որպէս երէկն և եռանդն։ Իսկ այսպէս ամենայն քաղաքաց եկեալք ջոկ ջոկ, կարգ կարգ՝ գնացին և խոնարհմամբ գլխոյ անմռունչ բարև տուեալ անցանէին առաջի իւր. և յետ աւարտմանն գնացին իւրաքանչիւր ոք 'ի տեղի իւր։

## ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս նախապատրաստութեան և կարգաւորելոյ զերաժշտութեան։ Նոյն թէ որպէս երգեցին ՚ի մեծ վաճառատուն ընկեր Խանին։

Իսկ ՚ի միւս օրն որ էր մեծ Պայրամն իւրեանց, և կանուխ գնացեալք ՚ի օճաղն մեծի Խանին, ՚ի անդի հանգստարանի մերում իւրաքանչիւր ՚ի հովանոցս իւր, ուր ամենայն օր հանգչէաք ՚ի եղէգնեայ Այվանն մեր. քանզի մինչ դարձանք ՚ի յերեկեան օրն՝ որ էր ուրբաթ, ՚ի մեառալս մեր, ՚ի ճանապարհին հարցուցի Փրալանթարին և Մելիքին, թէ վաղուն Պայրամն է, և մենք ի՞նչ պէտք գանք ՚ի օճաղն, պարտ է գալ՝ թէ ոչ: Իսկ նոքա պատասխանեցին թէ, այո՛ գանք, զի պատշաճ է. և ինչ պէտք գայինք ամեն օր, նոյնպէս և վաղուն: Իսկ ես ասացի, թէ ոչ այդպէս. զի է Թուրքաց երկիրն ՚ի Հռոմոց տունն, և ի Կոստանդնուպօլիս, Պայրամ օճաղին և ճամբաղն կանուխ կու լինի. զի յառաջ քան զլուսանալն գնան մեծամեծքն ՚ի Թագաւորին պալատն՝ օճաղ. և անտի զումարեալ գնան ՚ի ճամբաղն. և յետոյ գան, և կրկին Պայրամ լուղիլէ լինին. և յետոյ ցրուին յիւրաքանչիւր տեղիս: Արդ անորոյ պարտ է մեզ կանուխ գնալ ՚ի հովանոցս մեր, ժամ մի յառաջ քան զծագել արեգական, զուցէ և սոքա կանուխ կամիցին զօճաղն: Իսկ հաճեալ ընդ բանս իմ՝ ասացին, բարի է, որպէս արասցուք: Արդ որոյ կանուխ յառաջ քան զծագել արեգական՝ գնացեալ ՚ի առհմանեալ հանգստարանն մեր, որ և սիրով ընկալան զմեզ Նասաղշիքն, և մեծարեալ նստուցին. յետ փոքր մի անցանելոյ՝ եկն և Մուսոֆի Էչչէն. զնա ևս ընկալեալ նստուցին որիշ տեղ. և այսպէս ՚ի սուղ ժամու եկին ժողովեցան և կուտեցան բազմութիւնք մարդկան, Խանք և Սուլթանք, Միրզայք և Միրզոֆիք, Փալանթարք և Մելիքք, Մօլապաշիք և Մօլայք, Քէտխուտայք և Տօլվաթաւորք, Ջաղարաքեաք և Ջարիբապեաք, Յիւնապեաք և Տաւնապեաք, Ղէզպարիճիք և Ջամաչայքէշիկք, Ղանատուրչք և Նասաղշիք, Խանզադէք և Իշխաղալիք. և այլ բազմութիւնք խառնիճաղանճից, որ զի թէ ոչ կարէր ասել վայրն զբազմութիւն մարդկանց: Իսկ զԴ.Ո. Ղեզպարիճքն երկու կարգ յօրինեցին եղեգնեայ պարզէն Խանին մինչև ցնետաձիգ մի և այլ աւելի, զոր տաճիկ ասեն Օսմանցիքն,

և ամենայն ձևօքն մեծամեծ իշխանօքն. որ և այն աւուրն մէջէն անցուցին զՕսմանցւոց Էլչին զԿենտ-Ալի Փաշային, և տարան 'ի մեծ վրանն յառաջ քան զամենեսեան. նոյնպէս և զՌուսաց Էլչին տարան զկնի նորա: Որ և իւրաքանչիւր ոքս մեզ հրաւիրելոցս ետուն տեղ և բազմեցուցին. քանզի զերկայն տեղ մի ջոկ էին պատրաստեալ, և ըստ հրամանի մեծի Խանին՝ մի մի կոչէին զհրաւիրեալսն, և տարեալ նստուցանէին 'ի պատրաստեալ տեղւոջն. և ունէին եւս 'ի վերայ քարտիզի գրեալ զհրաւիրելոց անուանսն՝ կարգաւ, որպէս կարգեալ էր մեծիմաստ Խանն: Ա՝ սա-Նորա ըստ գրեցելոյն 'ի Խանէն, նկատէին 'ի վերայ թղթին, և այնպէս ժողովէին զպատուելիքն իւրաքանչիւրոց հօխանոցաց, և բերեալ 'ի մի տեղ նստուցանէին 'ի մի տեղ յատուկ պատրաստեալ եղէգնեայ հօխանոցին. և կոկին կոկին պատուիրէին, զի ամենայն ոք նկատեալ ճանաչեսցէ զիւրքն իւր, թէ ո՞վ կայ 'ի վերան, և կամ ո՞վ է 'ի ներքեն, և մի՛ շփոթեսցին և խառնեսցին իրար: Այլ և յորժամ գնացին 'ի վրանն բարեւել և բազմել առաջի մեծի Խանին, համեստութեամբ և յամր գնացին՝ ծանր ծանր՝ և մի՛ շտապեսցին, ոչ 'ի նստելն, և ո՛չ 'ի յառնելն, այլ խոնարհութեամբ և պարկեշտութեամբ լցի բազմելն և եղանելն: Եւ. յետ կատարելոյ և հրաւիրելոյ զայնոսիկ՝ որք նշանագրեցեալք էին 'ի քարտիզի, իբրև նստանք կէս ժամ, որք էին ամենեքեան Խանք՝ և ոչ այլ ոք, և եւս 'ի մէջի Խաներաց. որ և զգուշութեամբ ամենայն ոք նշմարեաց և ճանաչեաց զանձն իւր. անմռունչ կային և սպասէինք հրաւիրման 'ի վրան անդր:

## ԳԼՈՒԽ ԼԴ.

Յաղագս Պայրամ տօնի ուտելեաց, և ըստ ո՞րպէս արարողութեան և զինեալ սպասքն. և ձևոյ պատարագին, մեծի Խանին զգեստուց Խաներն, և զէնսն և զէն ընդ նոսա՝ ևազդ շարժութեան և կարգադրութեան և ծախանելեաց:

Ապա հրամանաւ մեծանուն Խանին, և եկեալ Խանզադայքն, որք են Եշխազադէք, հրաւիրեցին զմեզ 'ի վրանն անդր. և որպէս ուսուցին մեզ զարարողութիւնն, այնպէս կարգաւ կարգա-

ւորեալ գնացինք և մտանք ընդ պարսպաւ եղեգնեայ. և ապա հա-
սեալ ի վրանն, համեալ զմուճակս մեր արտաքոյ վրանին, մտաք
'ի վրանն ահիւ և պատկառանօք, և կանգնեցաք 'ի մէջտեղի
վրանին. խոնարհմամբ գլխոյ ողջունեցաք զնա, և շնորհաւորեցաք
զԳայբրամն, և նստանք յայս կողմն և յայն կողմն վրանին. զի էր
երկայնաձոյն, 'ի վերայ ծնկաց նստեալ դիմաց անմռունչ: Իսկ
Խանն բազմեալ էր 'ի գլուխ վրանին՝ 'ի մէջ փոքր խցանման տեղին.
քանզի վրանի ծայրն ունէր երիս յատուկ տեղիս՝ որպէս ծէպշն-
էր—ի, փոքր վրանաձև ֆէրաջէով, և դռներն վարագուրով, յորում
բազմեալ էր Խանն 'ի մէջ միոյն 'ի նոցանէ. և դէմքն առ մեզ
նայելով առ ամենեսեանն. զի դրանց վարագոյրն 'ի բաց էր: Իսկ
յաջակողմն մեծի Խանին՝ այն առանձին փոքր տեղեաց 'ի դուրս
նստեալ էր էլչին Օսմանցւոց Ակնծ-Էլի Փաշայն, և այլ նոքոյ՝
Իւ. Բ. Խան, և Թիֆլիզու Վալին՝ որ էր անդրձագն, 'ի վեր
քան զնա: Իսկ վալին՝ վասն այն աւուն, զի յետ Հաճէն նա միայն
կարէ զնել 'ի գլուխն իւր ծղոյ, որպէս թէ երկրորդ Հաճէն.
և մեծ է վալին քան զբազում Խանսն, որ ունէր այս վալիս Թիֆ-
լիզու՝ և Կախեթու Խանութիւնն և Վալութիւնն, և 'ի վայր
քան զնա էր էլչին իմ. և 'ի վայր քան զիս կայրն Իւ. Խան
նստեալ, որպէս պատմեաց յետոյ Քալանթարն և Մէլիքն՝ Ե-
րևանայ Մէհմէտ-Ղուլի Խանն, որ նա էր համարեալ. զի ես
կայի հիացեալ և սարսափեալ, որ իմ մտացս ոչ անցաւ այն-
պիսի բան: Նոյնպէս և 'ի յահեակ կողմն 'ի դիմաց մերոց
էր նստեալ նախ՝ իւր եղբայրն Իպրահիմ Խանն: Ապա իւր մեծ
որդին Բիզայ-Ղուլի Խանն: Իսկ յետ նորա եղբօրորդին Ալի-
ղուլի Պեկն: Իսկ ապա պզտիկ որդին Միրզայ-Ղուլի միրզայն: Իսկ
ապա ուռուսաց Էլչին, և ապա Խաներն կարգաւ՝ որպէս և 'ի
մեր կողմն, և զատ 'ի Խաներաց և էլչոց և Միրզոց, որք
են Օճաղլիք Խաներաց սակաւ ոմանք. այլ ոչ ոք չէր բազ-
մեալ անդ. որ թէպէտ ոչ համարեցի վասն երկիւղի և պատ-
կառանաց, այլ թուի թէ՝ հարիւր հոգի, սակաւ մի աւելի կամ
պակաս, կային բազմեալ 'ի յերախանս այն. իսկ այլ մնացեալ
մեծամեծք, և իւր հազարապետք և հարիւրապետք, տասնա-
պետք և միւսք կանգնեալք 'ի յետին 'ի թիկանց կուսէ
մեր՝ բազմելոյս, քանզի 'ի մէջ վրանին 'ի Գ. կողմունս հա-
լէպի կիսի չափ տեղ զատ արած էին՝ որպէս ծո–ղածոր, զոր Օս-
մանցիքն պարշմակ կասեն, կոաւէ՝ Բ. Նեղ բարձրութիւն. և

երևէր որպէս պողոտայ, և մէջն խալիով փռած, կանգնաւորքն անդ էին. և մէք յայս կողմ ճանապարհին, առաջև կանգնեաւ որոյն բազմեալ: Իսկ 'ի մէջ շարքին սեանց՝ յայս կողմն և յայն կողմն՝ երկուս երկայն դաստախօնս պատուականս տարածեալ. և յաջակողմն 'ի մեր կոյս՝ Գ. մեծ պարպէյ ոսկեղէն՝ ըստ նը-մանութեան չէրպէթնոց պարպէյից՝ որք կան 'ի Սթամպօլ և յամենայն տեղիս Յունաց տանն՝ 'ի վերայ դաստախօնին: Եւ այլ և Գ. թուեկի՝ որք են սուրահիք, սակաւ մի տափակագոյն, որք տանէին մի մի 'ի նոցանէ՝ Խ. Խ. կամ Ծ. Ծ. օխայ ջուր: Եւ այլ և Գ. ոսկեղէն սկուտեղ՝ թիզուկէս լայնութիւն ունելով 'ի մէջն իւրաքանչիւր Խ. Խ. ըմպանակ ոսկի՝ ըստ նմանութեան սկուոյ աւազանին, եդեալ 'ի մէջ ոսկի զարֆերաց, որ էր կցեալ 'ի սկուտեղն ոսկեայ, քիլ մի բարձր ոսկի պատուանդանաւ էին զարֆ-երն. և 'ի մէջն զարֆերայն՝ ոսկի թասերն. այլ և Բ. բուրվառք ոսկի մեծագոյնք, որոց ծանրութիւնք թուի թէ կշռէին Ս. ակա-տրամ, կամ այլ աւելի, կարծ շղթայիւք՝ Գ. ընձիւղով առանց պօժօժի. երկայնութիւն շղթայիցն կիսոյ չափ բուրվառաց մերոց. և 'ի գլուխ շղթայիցն որպէս անկ պարխածի կամ ֆէնէրի, որոյ էին կցեալ Բ. շղթայս 'ի մի կողմն անկեան, և զԲ. նոյն 'ի մի կողմն. նոյնպէս և յահեակ կողմն նոյն թուով և նոյնգունակ արծա-թեայ. և այն մեծամեծ պարպէյքն էին լցեալք շաքար շար-պաթով, Սոհշանի հունտ 'ի յերեսն շարպաթին: Եւ այլ և Գ. օճնէ հալալի ու կէս լայնութիւն, որք էին ոսկի 'ի յաջ կողմն. նոյնպէս և Գ. օճնէք արծաթիք 'ի ձախ կողմն. և 'ի մէջն շարեալ շաքարի գլխեր, որպէս է Վենետիկու շաքարն փոքր գլխեր: Եւ-սկան մեծարել զհրաւիրեալսն. նախ՝ 'ի մեծազօր Խանէն զկա-լայն՝ ոսկի նուշլաքֆներով կարգաւ ամենեցուն Բ. կողմանց. նոյնպէս և արծաթեայ նէլաքֆներով Բ. կողմանց: Զկնի եկին և ոսկեղէն բուրվառքն ծխելով զանուշահոտութիւն, բայց ոչ որպէս զմերս 'ի ձեռաց խնկարկեալ, այլ առաջ աջ և ահեակ տար-բերելով ամենեցուն միշտ շրջագայելով 'ի Գ. կողմն հանդերձ խնկարկելով. զկնի ոսկի բուրվառացն՝ Բ. արծաթեայ բուրվառք Եւս որպէս թէ լինէին ոսկի բուրվառքն՝ մինն 'ի յարևելս լինէր, և միւսն 'ի հարաւ. իսկ արծաթեայք եթէ լինէր, մինն 'ի հիւսիս լինէր, և միւսն 'ի յարևմուտս: Եւ մինչ նոքա խնկար-կէին մշտապէս շրջագայելով 'ի մէջ վրանին, այլք 'ի սպասաւո-րաց սկսան բաժանել զչէրպէթն ոսկեղէն բաժակաւ, որք էին 'ի վե-

բայ ղօղանջիւն 'ի մէջ սկուտեղեն. զի լցեալ 'ի մէջ ըմպանակին խառնուրդոյն, և ունելով զսկուտեղն 'ի ձախ ձեռին, աջ ձեռամբ առեալ մի մի զըմպանակն՝ և տային իւրաքանչիւրոյն բազմելոց. և յորժամ աւարտէին, տարեալ ևս կրկին լցուցանէին 'ի Թունկոյն՝ որք են ասորականք. և թէ հատանէր ասորանեւոյն միոյ շուրջանն, լցուցանէին զասորականքն 'ի պարէն, մինչև ըմպեցին ամենեքեան որ էին բազմեալ 'ի մէջ վրանին։ Իսկ ապա սկսան և այնուհետև որ բազմեալ կային 'ի թիկունս մեր՝ նա և արտաքոյ վրանին, մեծամեծք՝ զօրապետք և միւսք, և այլ բազմութիւն հուսարաց և կողմնապետաց, և մատուցին նոցա արծաթեայ ըմպանակաւ։ Իսկ զուռնայք մեծ և փոքր, և մանկունք փափկաձայնք՝ որք ունէին ուրարս՝ նման ուրարին մերոց եկեղեցեաց, ձգեալ 'ի պարանոց մանկանցն, և փաթոյթ ընդ բազուկս Բ. ձեռացն, և Բ. թզաչափ կախեալ ծայրք ուրարին 'ի Բ. բազկացն, և պօճօճունս շարեալ 'ի ոսկին, և այնպէս պարէին առաջի մեծի Խանին և առաջի բազմութեան, որք էին թուով ԽԲ. և այլ ոմանք սանթուրք, և տամպուրայք, քէմանչէք, քանոնք, և այլ գործիք նուագարանաց և անօթք երժշտականաց՝ նստեալ 'ի բացեայ յանդիման Խանին, ածէին և հնչեցուցանէին՝ իւրաքանչիւրքն այլ ընդ այլ խօսէին ըստ ոճի նուագարանի իւրում։ Իսկ պարիչքն ևս խաղ առէին 'ի պարելն իւրեանց, բայց 'ի մի գոյն և 'ի մի եղանակ. պարողքն 'ի մի գոյն, իսկ բազմեալքն ըստ իւրաքանչիւր հաճոյից երգէին։ Իսկ այսպէս երգիչք մինչ 'ի յօգուտ ժամ մի երգեցին և պարեցին՝ և բուրվառք միշտ շրջագայէին։ Իսկ ապա արձակեցաւ երախանն, և գնացին իւրաքանչիւր 'ի բնակութիւն իւր։ Իսկ զհետ առեալ Թիֆլիզու Աշխալ Բէկի որդին Ալլայ անուն՝ որ էր քալանթար և մէլիք Թիֆլիզու՝ 'ի նոյն տեղւոջ, և տարաւ 'ի վրանն իւր ի պատիւ հանդերձ քալանթարիւ և մէլիքաւ մերով, իշխանօք և քախուտօք Երևանցոց, Աստապատցոց, Նախջուանցոց և Գողթնացոց. որ և առաջի վրանին՝ ուր բազմեալ էինք 'ի սեղանն, իբրու Բ. քուրընկեց հեռագոյն՝ ծանդղաղ խաղայր 'ի չուանին։ Իսկ մերձ երեկոյեան ժամու, վերելեակաւ մերով գնացցինք Երևանոյ միրզայոց վրանն, և շնորհաւորեցաք զպայրամն իւրեանց. և ապա անցեալ գնացինք 'ի մեհարս մեր սքանչանալով և փառաւորելով զաստուած, որ ունի զսիրտս Թագաւորաց 'ի ձեռին իւրում։ և ում կամի՝ ողորմի. և ում կամի՝ խստանայ։

## ԳԼՈՒԽ ԼԳ.

Յաղագս երկրորդ աւուր Պայրամին հանելոյ զմեզ 'ի դաշտն արտաքոյ քաղաքին, և պատուիրելոյ խորհել 'ի միջի միմեանց և ընտրել զոմն՝ որ կարող լինիցի կառավարել աշխարհս Պարսից, և գալուստ լինել 'ի վերայ ամենից:

Իսկ յերկրորդ օրն Պայրամին կրկին գնացաք 'ի ատեան, և յերկրորդ ժամու հրաւիրեցին զմեզ 'ի բացեայ տեղի մի դաշտին, ձիու արշաւան մի հեռու 'ի օթևանէ մեծի Խանին. և հրամայեցին ամենեցուն, զի ամենայն Խան իւր երկրի մարդով առանձնասցի և խորհեսցի. և նստան երախանս երախանս, ուր 'Ռ. ուր Ճ. և աւելի և պակաս, և սկսան խորհիլ ընդ միմեանս, և հարցանել թէ՛ վասն է՞ր է կոչումն այս, և վասն է՞ր գումարումն այս մերոյ, և կամ զի՞նչ կամին հարցանել մեզ: Իսկ ապա եկին 'ի մեծ Խանէն արք Դ. որք էին Միրզէք: Միրզէ Օղաքին և Միրզէ Մէհթին. և Խան մի՝ որ Պէքէյէ Թուհանող ասէին, և Սպահանոյ Մայոր պաշէն, որ է ոսկող տյարն, և Քէշանցի Ապպուլ-ղասիմ Միրզէն, և Խորասանցի Ալլահքուլի Միրզէն, և մեծ Խանի Ռեքապդարն, և կանգնեցան 'ի վայրն, և բան եդին Ճաւճացին և Նասախճին, զի ամենայն երկրի մարդիկք յատուկ յատուկ՝ հրաւիրեսցեն առաջի իւրեանց Խանօք, և Քալանթար Մէլիքով, և Քէտխուդով, և Միրզով, և ղազիօք՝ Ճաղա-Ճաղան. և իւրեանք կանգնեցուցին շուրջանակի զայլ Նասախճիս և զճարպճի սպասաւորս. և 'ի մէջ կայանէ մանկանցն զենողն 'ի մէջ հանդէսի պարաւորացն. և կացուցանէին առաջի միրզայքր-եալ Դ.ից արանց՝ զպետաւորս քաղաքացւոց յառաջ եկելոցն, և պատուիրէին ասելով, թէ՝ հրաման է մեծի Խանին, որ գնացեալ 'ի միջի ձերում խորհեսջիք ընդ միմեանս, և զո՞վ կամիք ձեզ՝ և զերկրին կառավարող, զձեզ և զերկիրս 'ի խաղաղութեան և 'ի հանգստեան պահող. զի իւրն ծերացեալ է և վաստակեալ 'ի բազում ժամանակաց պատերազմաց. և ահա տեսութեամբն Աստուծոյ զՊարսկաստան երկիրս ազատեաց 'ի թշնամեաց. վանեաց և արտաքսեաց զթշնամիսն յերկրէն. և ահա խաղաղացաւ աշխար-

հըս այս։ Եւ ինքն կամի գնալ 'ի Խորասան, և նստել 'ի գղեակըն իւր, և աղօթել վասն իւր և վասն ձեր։ Ամանորոյ խորհեցէ՛ք ամենեքեանդ մինչև չորրորդ ժամ աւուրն. և չորրորդ ժամու կրկին յայսմ վայրի գնաեղեսջիք. զի յատուկ յատուկ խորհեալն ձեր և զկամքն ասասջիք, զի տայցուք պատասխանի խանին։

## ԳԼՈՒԽ ԼԵ

Յաղագս էջրոս խորհելոյն գումարելոյ և մեր, և կանոնաց տառամելոյն 'ի նոյն տեղի, և խնդրելոյն զնա էջնել 'ի մէջրայ Պարսկաստանի, և նորա պահանջելոյն զերծս ելս։

Եւ գնացեալ խորհեցաք մինչև չորրորդ ժամն. և դարձանք կրկին 'ի նոյն տեղի՝ վասն ահի կասկածանաց՝ ժամ մի յառաջ շտապեցաք. և կրկին նոյն մարդիկ՝ զոր ծանուցաք, եօթնեքեան այքն եկին և կանգնեցան ըստ առաւօտեան կարգի, և հրաւիրեցին կրկին առաջի իւրեանց. և հարցուցին, և զսին 'ի մի բան զամենեսեան՝ համաձայն և համախորհուրդ. զի յութերորդ ժամէ սկսան հարցանել, և մինչև ցմուտս արեգականն հազիւ խալսեցան։ Եւ ապա հրաման ետուն և ասացին, գնացէ՛ք և առաւօտն կանուխ եկէ՛ք։ Իսկ 'ի միւս օրն՝ որ էր դաշտամնին երրորդ օրն, և փետրվարի Ի. օրն՝ հինգշաբթի, գնացինք վաղքաջ իւրաքանչիւր 'ի տեղի իւր՝ որում տուեալ էին յառաջմանէ իւրաքանչիւրոցն, և նստանք։ Եւ յետ Գ. ժամու հանեին զմեզ անտի 'ի դաշտն կրկին, և հրամայեցին յառկանել իւրաքանչիւր խանիրաց՝ իւր երկրի մեծամեծօք և քաղաքաւորօք, և այնպէս մեկնեցանք 'ի միմեանց, և նստանք դասք դասք 'ի վերայ խոտաւէտ մերկ երկրի։ Եւ սկսանք ամենեքեան ասել և լսել և քննել. 'ի մէջ մեր ժողովոյն ընտրեցին զոմանս 'ի պարսից, զի թէ բան ինչ հարցանիցեն, նոքա միայն խօսիցեն և տայցեն պատասխանի. և 'ի Հայոց զիս, Բաղանթարն և Մէլիքն միայն սահմանեցին խօսել 'ի հանդիսի. և այնպէս արարին, և ամենեքեանքն իւրաքանչիւրքն՝ զոմանս 'ի միջի իւրեանց ընտրեցին պատասխան տալոյ. նոյնպէս և Լորգաստանու, Արցաստանու, և այլոց, և յա-

Նոյն երկրեաց եկեղեց պատրաստեցին խօսողս ընդ դէմ օրինացն Նր. ից սրանց, եթէ հարցանիցեն և հրամայիցեն ինչ ։ Նա ապա կանգնեցան կրկին մեծ պար մի՝ որպէս երէկն և եռանդն. և 'ի մէջ ի պարուն՝ նոյն առաջին Նր. արք. սիրաւ խօսել Վերիլի - Թառ հմաղն և ասէ։ Լսեցէք Խաներ, Սուլթաններ, Պէյլեր, Էլչիներ, Ճարոց ջէբէճիրող Խոճէքաջ, Բէզախուսէք, Էյաններ, և ամենայն եկեալքդ 'ի հեռաւոր և 'իմեր ձաւոր տեղեաց։ Զի հրամանէ մեծ Խանին՝ և այսպէս ասէ. որովհետև չի թողէք և չի կամեցաք՝ որ գնամ իմ տեղս հանգստանամ, և քաշեցէք զձեռս ձեր 'ի դրօշից իմոց, զայս երիս խորհուրդս խնդրեմ 'ի ձէնջ։ Նախ՝ յետ ժամանակաց, եթէ Շահի որդի կամ ազգական յայտնի և երևի, նորա հետ չի միաբանիք, և փօճոլ չանէք և զըշըւէք։ Երկրորդ, զՍու-լընն և զհայհոյանքն որ տայք Օմար-Օսմանին, այսուհետև այլ չի ասէք. և 'ի Նարուրոզ Պայրամին զդեմս ձեր չի ցուէք և չարխնցնէք վասն Հասան Հիւսէյնին. այլ ըստ պայմանադրութեանս և ուխտելոյն ձեր՝ մնայք անշարժ. զի վասն այն հայհոյանաց պատճառէն՝ այնքան արեանց հեղմունք լինի մեր ղուրանէ նոալէ՝ երկուց ազգաց և երկուց թագաւորութեանց մէջն Իրանին և Թուրանին, և բազմաց գերութիւնք. այլ այսուհետև բարձցի այս խռովութիւնս և շփոթս 'ի մէնջ. զի մեր և նոցա մարգարէն մի և նոյն է, նոյնպէս և Ղուրանն, մի է և Նամազն. որովհետև Օսմանցիքն զձեռս 'ի վերայ սրտին դնելով կատարեն. իսկ մեք զձեռս 'ի կախ պահելով՝ և արձակ, նոյնպէս և եղեցի. նոքա զերեանցն, և մեք զմեր ծէսն արասցուք. և միմեանց նախատինս մի՛ դիցուք։ Այլ և յորժամ փողէն գնան 'ի Պարսկաստանու, չի նեղացուցանեն և առնլի ինչ չի պահանջեն, այլ որպէս զեւրեանց հօջի՛ք պատուեսցեն, և որպէս զեղբայր համարեսցեն. և որովհետև 'ի Պր. կողմն կարելի է անդ ի փողէ աղօթել, դուք ևս ո՛ր կողմն որ լինի՝ աղօթեցէ՛ք. և այսու միաբանութեամբ և պայմանէ մի՛ խախտեսջիք։ Երրորդ, զի որպէս զես կամեցայք թագաւորել, յետ իմոյ անցմանն՝ իմ օճախիս և իմ զաւակիս խնամութիւն չանէք, այլ հնազանդ մնայք յաւիտեան. և զայս Պր. բանս Նուրհըլամայով և գրով արձանացուցեալ կնքեսջիք և տասջիք ինձ. ի՞նչ կասէք, յանձն կառնէ՞ք, թէ ո՛չ ։ Նա ամենեքեան 'ի մի բերան գոչեցին, այո՛ կամիմք և յանձն առնումք և հնազանդիմք. և առժամայն կարդացին զՖաթիէն և արձակեցանք։

## ԳԼՈՒԽ ԼԶ.

Յաղագս յայտնելոյ զԽաներն ՚ի մօտն. և հրաժարելոյ ՚ի Թագաւորելոյն. և Խաներուն աղաչելոյ զի մի՛ թողցէ զնոսա և զերկիրն ՚ի յետայ:

Իսկ յուրբաթի առաւօտին գնացինք փաղքաջ ՚ի օէլաճն. և ՚ի Ու. երրորդ ժամու մածին զմեզ առաջի իւր. որ կարգաւ գնացեալ առաջի նորա խոնարհմամբ գլխոյ՝ ողջունելով անցեալ գնացինք. և եկեալ տուաքս նստանք ՚ի հանգստարանն մեր: Ուլեա մ՚նորեկոյ օէլաճին, ցրուեցան և Զ՚եզպիրմերքն. և հրաւիրեաց զԽաններն ուտել ընդ նմա ճաշ. որ և բազում բանք խօսեցաւ ընդ նոսա, և շատ պատմաւս յօդելով, և զանազան առաքկութիւնս ՚ի մէջ բերելով ՚ի բաց ձգել յիւրմէ զմեծութիւնն թագաւորութեան, և ասէր թէ՝ ընտրեցէ՛ք ՚ի ձենջ զայլ ոմն, կամ ընտրեցէք զայլ մի՝ որ կարիցէ կառավարել զձեզ և զերկիրն. և ձեռք վեր առէք յինէն, և թողէ՛ք որ զ՚ամ յիմ զգեսին ՚ի Խորասան, և առանձնանամ. զի այլ ոչ ունիմ կարողութիւն մըցել և փոխել ՚ի պատերազմունս. և շատ անգամ հրաժարէր: Իսկ Խաններն սախալէին, աղաչէին, շողոքորթեալ աղերսէին, և հաւանեցուցանէին՝ զի մի՛ թողցէ զնոսա և զերկիրն ՚ի ձեռաց իւրոց: Պատասխանի ետ մեծախնէք [illegible] և ասաց. թէ՝ դուք այսպէս ասէք, բայց ես գիտեմ, զի բազումք յինէն դժգոհող են եղեալ, և իրաւունս ունին. զի բազմաց ապրանս խլեցի. զբազումս մահացուցի. զոմանս կուրացի. և յոլովից զոսկին և զարծաթն խլեցի. և շատ տեղիս աւերեցի և զերկիրս աւանեցուցի և աղքատացուցի. վասնորոյ բաւական է այս չափս. թո՛ղ հանգչին մ՚ւրդի՛ք զ՚ինէ յայսմհետէ ՚ի նեղութենէ յայսմանէ: Յորմէ պատասխանեցին և Խաններն, թէ այս ճշմարիտ է՝ զոր ասես. բայց մեծութեան և զօրաւորութեան հարկաւորութիւնն այն էր. զի թէ չէր լինէիր այնպէս արհամարհեալ յամենայն իրս, եւ այս կարծեա էր՝ այսչափ քաջութիւն յաղթանակ. վասնորոյ զնոյն կրկին առնել խնդրեմք. որովհետև քեզ ետուր աստուած զպետութիւն և զպետութիւն աշխարհիս, պատանի զի ամենեքեան ի քեզ և բանից քոց հնազանդին. և թէ արասցես զնա, պատժոց և դատապարտութեան են արժանի: Իսկ այնոքիկ՝ որք հնա-

զանգիւն քում հրամանի, և արկանան 'ի գործ իւրեանց, պատւոյ և խոհեմ գտանելոյ արժանի լիցին։ Զի թէ այնպէս լինի աշխարհս, ոչ կատարի։ Իսկ ապա հաւանեալ և նոքին յանձն առեալ թագաւորին։ Իսկ կիկին կարդացին զզօրսն. և ես զհայր ծերոյն 'ի լուծելոյն. և արձակեցաք յիւրաքանչիւր տեղիս։

## ԳԼՈՒԽ ԼԵ.

Յաղագս կնքել թղթոյ զարձանագիրն. ժամն խնդրելոյ զնա Ռուգասար. և ժամն երէց քահանայ՝ զոր խնդրեաց արձանագրով հաստատել. և յանձնելոյ զնա Երևանոյ խանին։

Ապա այնուհետև գրեցին զարձանագիրն երկոքին և Բ. Թղաչափ լոյն. և յետ կիկին ստորագրութեան, յորժամ եղև ըստ հաճոյից, սկսան այնուհետև կնքել առ եկեղեցն իւրաքանչիւր քաղաքաց. խանք և սուլթանք, միրզէք և միրսօֆիք, Ա. պետք և հարիւրապետք, քալանթարք և մելիքներն, աղաներն և այաներն, չէխ-իսլամն և ղազիք 'ի Պարսից և ի Հայոց և սկսան կնքել զարձանագիրն, զայն առնելով սկիզբն 'ի Խորասանայ եկեղեցն և Հերաթու, Մաշաթայ, Մազանդարանու՝ և այսպէս կարգաւ հասին մինչև յԱտրպատական երկիրն։ Ապա սկսան կարգաւ և զԵրևանեան հրաւիրել առ 'ի կնքել զարձանագիրն. որ և զիրս աւուրս հազիւ թէ կարացին աւարտել. և կնքեալ մեր ամենեցուն. մնաց անդ այնք՝ զոր նախ անուանեցաք, Լ. Ե. ձայնին զեօտողս, և եօթնից այանց հարցանողաց՝ պատասխանի տուողքն. և յորժամ կատարեցաւ, ապա սկսանք կիկին ամենայն օր գնալ կարգաւ յիւրաքանչիւր ժամու աւուրն և ողջունել զնա՝ որպէս նախ առնէաք։ Իսկ ի փետրվարի Ժ. յորժամ գնացեալք ողջունել զնա, ձայնեաց զմեզ առաջի իւր և ասաց. Խալիֆայ. Խալիֆայ. և ես ասացի, պէլի ճէյնամընըմ. զի Պարսիկքն 'ի տեղի պույուր ասելոյն, պէլի ասեն։ Որ և ասաց մեծագոյն Մելեմանութեն։ Պէլէ՞ն խալիֆայթարսան, սէնէ պէլէ պէտպէտ. և ես ասացի թէ՝ էֆէնտիմ սէնէն պէյ, չէֆ+էթլու մուղալրաք օլսուն։ Իսկ առ ժամայն փաղչելով եկն եկաց առաջի իւր Ֆիր-Մէհմէտ Խա-

նըն Հկրամթու՝ զձեռս իւր ունելով 'ի վերայ սրտին. և ասաց Մ_Հկրնամանթն, [illegible] Փիր Մ`էհմէտ խան [illegible]

[illegible] Իւ ապա դարձեալ 'ի կողմն [illegible], և ասաց. [illegible]

[illegible] Իւ վասն Մ`ելիք Մ`կրտումին ասաց. [illegible] Իւ վասն Մ`ելիք յակոբջանին ասաց. [illegible]

[illegible] Իւ դարձեալ ասաց. [illegible] Իւ ապա արձակեցաք 'ի յերեսացն շնորհակալելով 'ի նմանէ, և գոհանալով զԱստուծոյ գնացինք 'ի բնակութիւնս մեր՝ մեծաւ ուրախութեամբ և պարծանօք։

## ԳԼՈՒԽ ԼԸ.

Յաղագս բաժանելոյ զխէլայս․ Նախ խէր առաջին մեծամեծ խանե-րաց՝ և ապա այլոց՝ ամենայն-խորակի յետոյ, և ինչ խէլայ յաջաց է մեռանն էմ:

Յետ այնորիկ սկսան 'ի փխորփարի Գ․ բաժանել զխէլայս՝ որ է խալաթն: Նախ նըզօրն իւրում, որ բովանդակ Ատրպատականի աշխարհի՝ որ է պարսկերէն Ատրպէճան, վերակացու և սէրդար ասար՝ որ է Սարդարէր. զՆախջեւան, զԵրեւան և զբոլոր նահանգն Արարատեան, և զՄ քաղաքն 'ի նա յանձնեաց, որ է պէկլէր-պէկի, իշխող և հրամանատար, և մեծ 'ի վերայ այլոց խանեաց: Իսկ ապա Պապա խանին ետուր խալաթ, և կարգեաց զնա 'ի վերայ Խորասանայ 'ի Հերաթ 'ի անուն Փիր-Մահմատ խանին. նոյնպէս և զԵրեւան ետուր Փիր-Մահմատ խանին և խէլայէտս: Իսկ այսպէս կարգու ամենայն խաներաց ըստ պատուոյ և ըստ արժանեացն՝ ետուր խէլայս և պատուէրս, և արձակեաց յերեսացն: Այս սկսան և այլոց մեծամեծաց խէլայս շնորհել: Զի խանեաց ինքն առաջի իւր ետուր զխէլայն, որէք թուրքէն պարպաց՝ ամենայ Գրապանա՝ և հապա զարպաց, և Զարթալի գօտի պատուական, Գ․․ Գ․ Ի․ Նատմանի միոյ գօտւոյ գինն, նոյնպէս և մենդիլն՝ զոր փաթթեալ էին 'ի վերայ գտակին, զոր նորաձև գտակ մի սահմանեալ էր ինքն կանխաւ. գլուխ գտակին խաչաձև՝ Գ․ անկիւնի, և զանուն գտակին ասէին Նատիրի. և ամենեքեան զնոյնաձև գտակն դնէին, որպէս և ինքն իսկ այլոց ըստ պատուոյ և ըստ արժանեաց՝ հրաման ետուր տաղրէլեան պաշտոն հանել Հէտաէյէնին որ էր . . . *. և նա բաժանէր, բայց այսու կերպիւ: Զի նախ յամենայն քաղաքաց ընտրելոց և 'ի հանդէս 'ի մասլոց, որք զդաշնագրութեան զգիրն կնքեցին. իւրաքանչիւրոցն զանուանս նոցունց ետուր գրել և առաջի իւր ընթեռնուլ. և ինքն հրամայէր՝ եթէ այս ինչ մարդոյ այսքան Նատմանի խալաթ տուէք, և այն ինչ մարդոյ այնքան Նատմանի, որպէս և ինքըն կամեցաւ: Նախ սէրհէ պարպան՝ որ է թէքմէր, և ապա այս

(*) Յօրինակին պակասէր աստ բառ մի:

տաճարին ծո-ծածկոյթն բաժանել Սուրբ-խորանն, որ էր պա-
դրշէան պատշէն, սկսեալ 'ի խորին-խորանացն, և 'ի կողմանց
յարևելից, կարգաւ՝ ամենայն քաղաքաց եկեղեց՝ եառուր պար-
գերս և ճիշդս. Խաչերաց՝ Ս. ծածկոցէ, Ս. կապոյ, Ս. գոտի,
և մէկ մեծորէն. իսկ Միրզոց՝ և այլոց մեծամեծ կուսակալաց՝
կողմնապետաց՝ գլխաւորաց, Ս. ղարբը-կողոյ, Ս. Չերկեզի գոտի
և Ս. ղարբը-մեծորէն: Այլ և յարևելից կողմանէ և 'ի հե-
ռաւոր տեղեաց եկեղեց՝ եառուր Ս. Ս. գիրք. քանզի ի Վրաստա-
նու Եջմ.Ա. գիրք էին բերեալ, Վրացի և Հայ խառն. զիտեն
բաժանեաց նոցա, ոմանց կին՝ ոմանց աղջիկ՝ ոմանց տղայ: Այլ
և Պէտխուոց և Եղանեաց Ս. Ս. Ծուծան խաչքլուղ. մինչև
եհաս կարգն Եօրպէճանու. նոյնպէս և նոցա տրար որպէս և
գրեցաք: Եպա եհաս կարգն Երևանու և Արարատեան նահան-
գին. տրաւ և նոցա ըստ նոյն սարսի, բայց 'ի գերեացն՝ զորս ոչ
եառուր: Եւ ի փետրվարի ԺԴ. օրն շաբաթ, սուրբ Սարգսի տօ-
նին՝ Երևանցւոց և Նախիջևանցոց խաչերն եառուր: Նախ զիմ
խաչերն հրամայեաց վերակացուաց՝ ինձ յղել 'ի բնակեալն իմ, որ
էր հեռապոյն 'ի բանակէն և Վաղենամաթի տմարաբէն՝ կէս ժամու
ճանապարհ: Այլ և Քաղանթարին ես զհետ իմ խաչերին յղե-
ցին և զնորա խաչերն. որ էր և իմ խաչերն՝ Ս. ծածկոցէ զարդաց,
Ս. ղարբը-կողոյ, Ս. Չերկեզի գոտի ծանր, և Ս. մեծորէն՝ ազնիւ
և գունով սև, երկայնութեանն Բ. եղևքն սպիտակ կլապըտա-
նաւ, մատ մի լայնութիւն կլապըտաներն ծայրէ 'ի ծայր: Իսկ Բ.
ծայրքն Ս. Ս. Թիզ գործով՝ Հինգու բան զարմանալի տեսողացն,
և փաթութեցին զայն մեծորէն 'ի վերայ վեղարիս՝ որպէս զփակեղ.
և ղարն ըստ ծիսի պարսից՝ կէս էլֆաղէի պէս 'ի վերայ աջեակ
կողմանն ծաղկաձև կանգնեալ: Իսկ Քաղանթարին՝ Ս. կապոյ,
Ս. Չերկեզի գոտի. Ս. մեծորէն. բայց ինձ թանկագին էր և յոյժ
պատուական:

# ԳԼՈՒԽ ԼԹ.

Յաղագս ագարակաց Խէլայով գնացեալ տեսանել զայգեստանս՝ զնորհաւորել և շնորհակալել. և վասն փառաց անելոյ, և յայտնելոյ զեա մերձ չինգեան և խօսակցելոյ:

Եւ 'ի միւս օրն որ էր կիրակի, գնացինք 'ի Պէշիկ-խանայն. և այս Պէշիկ-խանոյ տասծնելոյն այն է՝ իբրու չէ չէկ շարբ: Բայց ոչ թէ ծառաղաց ունեցողն կու ժողովի, այլ մեծամեծ խանիրն անդ ժողովեալ նստին. և խաչեան քաշելով խօսակցին և զրօսնուն ծիծաղականքանիւ, անուանելով Հրաւիրմանն Մ. էլինամալթին, եթէ գուցէ խնդրիցի, պատրաստ գտանիցին անդ զգեցեալ խալաթով. որք գային Ձ. հոգի՝ աւելի կամ պակասին ժամ Աէլամին. և յորժամ հասանք 'ի անդէն՝ յորում սովոր էինք ամեն օր խոնարհմամբ գլխոյ ողջունել զնոքն, ինկայն ընթացաւ մի ոմն ի ծրղոյն՝ որ էր Թուրմզիցի, և ազդաւ պարսիկ ճինճաղակ փաշէլահի ցուցէն, Եսպէջճանու Մ. էղէր գոլով: Զ. ի սովորութիւն է պարսից, մանաւանդ Նատր-ղուլու Մ. էլինամաթին, որ ամեն քաղաք Գ. Գ. մարդ կարգէ 'ի վերայ ալքունական ջէտալարի: Առաջնոյն անուն Միրզէ Մ. էտէլ, որ է շատղի Մէհէյի հետ էլխոյ ունողաց վերայ. և է երկրն մեծ հրամայող՝ և 'ի վեր նստող քան զմիւս երկուսն, և սա է առնող տուող և դատաստան անող՝ որպէս մեծ ռէջիբէրտար, բայց ոչ առանց միւսոցն գիտութեան, այլ համախմբութեամբ: Երկրորդին անուն՝ Մ. էղէր, որ է միջինն, և ունի զռէջիբէրն նահանգաց, և ամենայն եղեալ ջէլարի և ջէտարի, երտարի և ծառաքջի: Իսկ չերրորդն անուն՝ Մէրսէջէ՝ որպէս թէ ռէջիբէր էր, որ զամենայն ռէջիբէրնեկն նա ունի, և Արքունի ռէջիբէրին շինողն է. և տեղն 'ի տեղ զիւղօրայքն և ռէջէպէկ եղած ծոլէնի նորա գիտութեամբն է և նորա ձեռքն. վասնորոյ որպէս 'ի վերոյ ասացի՝ եթէ Եսպէջճանու՝ որ է Եսպաստականու Մ. էղէրն 'ի Ջէհան-շահէ ազգէն, և ինքն էր բանաստեղծ և շաարոյ, որ է զուսան. վասնորոյ զոր ինչ յօդեալ էր 'ի վերայ քարաեզի, սկսաւ ասել. . և էր այսպէս:

Աէգգէյէ ռէրդէր գէարբ նամ ապլբանաբ-ասհ ռէր ծէհան,
Խօսրօֆէ ափիլահէ Նափէր զառլ ջէրբէ ռէբան:

Ճէր ժէրայ դէյ ու խուդայ եարէա,
Ճէրժէ դէա կէրդէա եղկէղէրմէ ապրէղ։
Իշլէմայարըայըլահ փադիշահմա Նադիրէ Գայըլա էրանէա.
Ճէրդէնդէ եղրէժէ խուդայէ Բայալայ եարէա։
Ճէրդէնդէ ադա դէր կէրդէա շարմաարէղ.
Սէգժէյէ դէրղար ժէարըն նաւէ ասլընանըն բադէր ծէհան.
Շ`ահ էդէն Նադէր-շալը աժէնդէրէ ահէդ շըան։
Փադիշահէ մամալէժէ Իրան. Օ`էլլէ աադահան նադիրէ դէգրան։

Իսկ յետ ամենայն զայսքան բանս, բարձր ձայնիւ գոչեաց ամենայ-քովն է. և սկսան ամենեքեան զձեռս 'ի վեր ունելով, անմառուն շարժել զշրթունս իւրեանց, իբր թէ զփանէն կարդան. բայց ոչ գիտեմ, գիտէին և ասէին, թէ ոչ։ Նոյնպէս և ես տարածմամբ ձեռացս ասացի զ`այր մէր որ յերկինս ես. և 'ի յաւարտն նորա զերկասին ձեռս իւրեանց ընդ երեսս քարեալ շօշափեցին զմօ-րուս իւրեանց, իսկ ես շնորհօքն Քրիստոսի յայտնապէս խաչակնքեալ զդէմս իմ, և խոյս տուեալ ամենեցուն անցեալ գնացին, և ես առկաւ մի յետ մնացի 'ի տեղին իմ՝ ուր կանգ-նեալ էի, և պշուցեալ ընդ երեսս Պ`ալհամանթին հայէի։ Պ`ա-ալհամանթն հայեցեալ 'ի յիս և ասաց. հայ Պ`ալիֆայ, կէլ դա-էայ. և ես վստահացեալ գնացի մերձ յինքեան. և կրկին ասաց եախըան կէլ՝ եախըան կէլ. և մերձեցայ մերձ 'ի նա առ ըն-թեր իւր՝ ուր նստեալ էր 'ի բարձրաւանդակ դախտի. որ և ա-սաց կրկին, դէլէրան Պ`ալիֆայ, աադահ եօխ օ դէրէխէ կէյան աանէ մադրախա եդէրամ. որ և ես պատասխանի տուեալ ասացի. Պ`ալհամանթէն օրէ փօլէանըն դէադէ օլըան, կէ աամարամ դադէ խա-դադան փարէարդէկէարդան, ժէ նաար ծէնադընէ ֆէլըն իրան կէօրդան, էնշալլահ ֆէլըն ղանդահար կէ ֆէլըն Ճէնդաադանայ կէօրա-յէմ։ Նոյ և ծիծաղեցաւ ուրախութեամբ, և զուարճացեալ բեր-կրեցաւ, և ասաց. դարէֆալլահ Պ`ալիֆայ, դարէֆալլահ. յետոյ հանմարձակեալ ասացի. դաա շէֆժանըրամ արղամըր էար, կէադրաժ դաար ժէ հաայ եդաաան. և խոկոյն ասաց, եախշէ դաար, դէ աֆադըն Պ`ալիֆանէ Մէրդէ Մաամէն եանըրնայ, կէ աօյլան հէր նէմէնէ արղանէ էար, Ջէլէհէընէ մաընլադէ էար դաար, ղայէրաան. որ և առ ժամայն Իշխանականն մի զոր կան հանապազ առջեւն, և են որդիք Խաներաց՝ և 'ի ձեռս իւրեանց շօմախ նախշած, անկեալ ա-ռաջի իմ տարաւ զիս Մէրդէ Մաամէնի մօտն՝ որ էր կից Պ`է-ղհամանթի ամարանին. և ասաց զատացի ալմն 'ի Պ`էլնեմէթէն. և

Միրզէն պատասխանեալ ասաց. դուր տավլէնայ ղայրայէմ աղլամ օղլ նայէղէ կէալըրըն բախամըլարէ ափարսուն: Քանզի նոր էր կարգեալ այս Միրզայ Մուսին գրել զբանսն. զի յառաջ Միրզէ Մեհտին էր բախտամնելու զգողն. և Միրզէ Մուսին ունէր զկնիքն և էր մօհրդար. բայց վասն պատճառի ինչ ընկեց յիբեսայն զՄիրզէ Մեհտին՝ որ էր այր խիկար և խոնարհ, քաղցրաբարոյ, ուշիմամիտ և խոհեմ պահող. իսկ այս նորս որ է Միրզայ Մուսին, զեռ անտեղեակ շարադրութեան բանամից և յոյժ երկչոտ. բայց ողորմեաւ Բ. Միրզէք ի միասին բնակին, վասն իմ խաթերս՝ զիմ բանանիրս Միրզէ Մեհտին շարադրեաց ըստ պատշաճի:

## ԳԼՈՒԽ Խ.

**Յաղագս առնելոյ զբախամներն զոր խնդրեցի. և վասն կրկին հրաւիրելոյ 'ի տէմ Խան և յերկարագոյն պատուէր տալոյ, և կրկին զնա յանձնելոյ Երևանայ ղալղներոյ:**

Իսկ ես 'ի միւս օրն առաւօտին յղեցի զԳալայճի օղլու Ստեփաննոս վարդապետն, որ էր կարգեալ ճանապարհի Էթուակալ, և էր ընդ իս 'ի բանակն 'ի Մուղան. և գնացեալ էառ զբախամներն, որ էր Ի. թաղամ. և եկեալ ուրախութեամբ ետուր ցիս. իսկ 'ի նոյն օրն գնացինք 'ի Սելամն. և կրկին պատուիրեցին յետ Սելամին, եթէ յերեկոյեան ժամին պարտիք գալ և հանդիպիլ Վալինեամէթին, որ զձեզ յանձնէ ձեր ղալղոներին, և մօրախաս առնէ. և գնացեալ իւրաքանչիւր 'ի տեղիս իւր, և կացաք մինչև ցերեկոյն: Իսկ յիններորդ ժամուն ժողովեցանք 'ի դուռն Վալինեամէթին՝ Փալանթար Մէլիքջանն, և Մէլիք Յակոբջանն, և այլ ազգաց Փալանթարն Էլի-ղուլին և այլ Քանախուտէք հայոց և Մէլիքներն. զի յԵրևան Թ. ճրաղ գոլով՝ Թ. Մէլիք կան. այժմ Թէպէտ հնազանդ են Քալանթարին, և զօրան առաջին իբրև զնոսա, բայց Երևանայ Մէլիքներոյն՝ որք են այսոքիկ. Նախ՝ Մէլիք Յակոբջանն և Մէլիք Մկրտումն. Կարբու և Գրիպուլախու, Հոռուակոլու, Իկ-

տիրու, Գաւառու, Ծաղկնաձորու, Գեղարքունոյ, Ապարանու եւ Շիրակաւանու. այլ եւ Երեւանայ Շէյխ-իսլամն, Աղաներն, եւ Միրզէքն. եւ առեալ զմեզ՝ տարան 'ի դէմն: Իսկ սկսաւ ասել բանս խրատականս, եւ պատուէր պիտոյականս վասն Երքունական իրաց, եւ վասն երկրին բարեկեցութեան եւ ռահաթին հանգստեան, եւ վասն պատերազմական զօրացն՝ որ Նօքար անուանեն, զի են փօլքօվ, պատուիրէր Միրզայն վասն վարձուց նոցին, եւ վասն քուչէմի ձիավարժութեան եւ պատերազմավարժութեան. նոյնպէս եւ նոցա զձիանս իւրեանց՝ լաւ պահելոյ, եւ զանօթս պատերազմի՝ որ է զէնքն, թուրն, ռումբըն, միջքի դանակն, փահանն, Նէշտէլն, որ է նետ աղեղն, Նօ-ֆանկն, եւ զայլ սոյնպիսիք պատրաստի ունել եւ զլուն սառնուլ, եւ զայլ սոյնպիսիք բազում բանս պատշաճաւորս վասըն երկրին պահպանութեան եւ ամենայն իրաց: Իսկ ի վճիռ խօսից ասաց Միրզայն, եթէ զՊասքէվիչն ձեզ յանձնեմ. զի զոր ինչ կամիցի՝ եթէ զիւղ՝ եթէ հող՝ եւ եթէ այլ ինչ՝ զոր պատշաճ է իւրն՝ քան թէ այլոց, իւրն տայք, այնպէս որ ոչ մերձձին վնաս լինի եւ ոչ իւրն դժուարութիւն. եւ յորժամ ինքն չկամենայ, ապա այլոց տուէք. զի գիտէք որ խաներն պահեմ եւ մէկ եախշը տէղը է, պիտոէր որ դուք եւ լաւ պահէք զխաներն. եւ այնպէս արարէք՝ որ չլինի թէ ձեզանէ ինձ գանգատ գիրէ. ինձ եւ ասաց, թէ՝ Պասքէվիչ, պատուհեան հնազանդ ինձանէ, եւ ոչ կարես լինել ինձ ձեռնահաս: Վասնորոյ ահա զքեզ յանձնեցի ղուլլուխներոց ձերոց, այսինքն Մէրալը. զոր ինչ ծառլող որ ունիս, դոցա ասա՝ որ կատարեն. եւ թէ չլսեն արաչանացդ, Իպրահիմ խանին արզ արա, որ իւր եղբայրն է, նստեալ 'ի Թավրէզ՝ խան եւ սղատալար. եւ նա ինձ ծանուցանէ. եւ թէ կամիս դու եւ ծանո, քեզ հրաման է. եւ աղօթօղ լեր վասն մեր. Տէ փէնի չինթանէքէրի ծօրդախսա աան փէնի Ռոչէլիմէյա: Իսկ ապա սկսայ եւ ես դրուատել զնա եւ օրհնել. եւ լալով աչօք ասացի չէֆթէլիմ, դու որպէսեւ հեռանաս 'ի մէնջ, մեք այժմ գիտացաք, որ որբ մնալոց եմք, զի ոչ ոք լինելոց է իբրեւ զքեզ՝ որ զմեզ խնամէ. վասնորոյ Աստուած ամենակարողն զճանապարհդ քոյ եւ աջող անէ, եւ մինչ յաղթողս արարցէ 'ի վերայ թշնամեաց քոց. ապա զայս խնդրեմ 'ի մեծութենէդ, որ զծառայիլդ եւ զծառայութիւնդ ինձանէ՝ եւ այն ծառայութիւն Նէֆէյէն պակաս չառնես. որ եւ կրկին յուսալ-

բեաց ասելով, ալամ ղալեմայ Պ․ապէքայ, ալամ ղալեմայ, ո՛ Րէժէ մա-նամ փառ, ասնքայ մանամ ատն, չէր ալր ղղջայ ժէշ ախն, չէր հա-մահ փառայ էյլէ։ Եւ ապա Շ․էխ-խալամն ես համարձակեցաւ և ասաց զփառայ մի պարսկերէն գրաբար՝ ՚ի չափ Բ․ տան սաղմոսի․ և ապա ասացեալ զքանէն, և ես զհայր մեղայն, շնորհակալեցաք, և արձակեցաք յերեսացն, և գնացաք ՚ի բը-նակութիւնս մեր։

## ԳԼՈՒԽ ԽԸ.

Յաղագս գնալոյն մեր Խալքաշիմ խանի մօտն՝ և Փիր-Մէհմետ խա-նին, և վասն չուելոյ Երևանայ եկեղոյն և ճանապարհ միայնակ։

Իսկ յառաւօտուն սկսան ամենեքեանքն Երևանու եկեալքն՝ Հայք և պարսիկք տեսանել զպատրաստութիւն չուելոյն։ Եւ նախ գնացինք ի միասին Խալքաշիմ խանի օճախն․ և նա յու-սադրեաց զմեզ ասելով, եթէ բան ինչ ունիցիք, կամ զոր ինչ դժուար բան որ պատահի, ազդեցէք ինձ ՚ի Թաւրէզ, զի կա-տարեցից․ քանզի պատուիրեաց ինձ Մ․ալինամաթն վասն ձեր, այ-սուհետև անհոգ կացէք․ Ինշալլահ շէն պահելոց եմք զերկիրն․ և ապա այնուհետև գնացինք Փիր-Մահմատ խանի օճախն, որ էր Երևանայ խանն․ և նա ևս առաւել ամբաձէր սիրով զմեզ և յուսադրեաց և ասաց, գնացէ՛ք խաղաղութեամբ և բարով, և հարկէնք ալէմ մի՛ քաշէք․ որովհետև Մ․ալինամաթն զձեզ՝ մեզ յանձնեաց․ և վասն ձեր պատուիրեաց․ և առաւել սէր և խը-նամք ունի ՚ի վերայ ձեր․ Աստուծով զձեր ամենայն ընկած բանն ըստ հաճոյից ձերոց հոգալոց եմք, գնացէ՛ք բարով․ և ահա իմ կողմանէն Մ․էլինամաթն՝ նայիբ մի Նայիբ արար, որ զը-նայ Երևան․ նա գալոց է ընդ ձեզ, նորա հետ վարուեցէք մինչև ցգալն իմ․ և ելեալ անտի գնացաք ՚ի մատաղս մեր․ և տեսեալ ամենեքեան պատրաստութիւն իւրեանց, և ՚ի միւս առաւօտն չուեցին ամենեքեան Երևանայ եկողքն, Շ․էխ-Խալամն և Եղայներն, Քալանթար Մէլիքն և Քէտխուտէքն՝ ընդ խանի Նայիբլին, որ է Իբրու Մինաշիմ, և ընդ Միրզոցն գնացին յԵրևան։

## ԳԼՈՒԽ ԽԴ.

Յաղագս մնալոյ միայն 'ի տաղաւարին 'ի մէջ եղէգնեայ խուղից և գերեացն, ուր գտանէր գտանէր սաստ և անդ տաղարկեցէ։

Իսկ յետ գնալոյն նոցա ես Յակոբ միայն՝ խեղճ և ողորմելի, միայնակ 'ի մէջ դաշտին. և 'ի մէջ խուղիցն բազմութեան՝ իմ միաբանօքս հանդերձ որպէս բու յաւերակի, և որպէս ճնճղուկ միայն 'ի տանիս. վասն զի գերիք բազում Թափեցի 'ի Պարսից գերչաց Խորասանցոց, զոմանս Թանկագին, և զոմանս աժանագին, և զոմանս ձրի բերէին և տային ցիս, Թէ 'ի տեղիս և 'ի տեարս իւրեանց հասուցի. կային և կանայք. յղիք 'ի միջի իւրեանց, յղացեալք 'ի տանց և 'ի յարանց իւրեանց. քանզի Ժ. ամիս էր գերութիւնք նոցա. որ և ոմանք ծնան 'ի Մուղան, և հրամայեցի Ագուլեաց Աւագ իրիցու՝ որ էր ընկեր՝ տէր Թովմայ անուն, որ մկրտեաց զերեխայսն 'ի գետն Եփրատ, և անուանեաց զանուանս նոցա՝ Մուղան. ծնաւ և կին մի 'ի Միղրի, և անուանեցին զանուն նորա՝ Միղրիկ. մինչ տանէին զնոսա յԱգուլիս և յԱստապատ, կային և աղջկունք, մանկունք և տղայք՝ Զ. Ը. և Ժ. տարեկան, և այլք մեծագոյն տղայքըն՝ ԺԵ. և Ի. տարեկան՝ աւելի կամ պակաս. լուայ որք բազումք փախեան օգնականութեամբն Աստուծոյ և գերծան. և Գ. անգամ ջորոջ և ուղտոց, մէկ մէկ 'ի միաբանից իմոց վերակացու եդեալ 'ի վերայ նոցա, յղեցի. նախ՝ յորժամ ուղտերն տարան ըղտապանք 'ի յԷջմիածին, քանզի այլ ոչ էր մեզ պիտոյ, ընդ նոսա գնացին դաս մի: Իսկ զայլս 'ի յԱստապատ և յԱգուլիս առաքեցի. վասն զի սղութիւն և նուազութիւն հացի էր. որ և իմ ջորօքս հասուցանէին 'ի Տուղախն. և գրեցի նոցա, զի նոքա հասուցանիցեն 'ի յԱստապատ և յԱգուլիս. վասն զի էր անդ Ներսէս Կաթուղիկոսն Աղուանից Գանձասարու. և զոր ինչ գրէի, փաղփաղակի տայր կատարումն. և անտի բարձեալ զգրաստն մեր՝ ալիւր և գարի և այլ հարկաւոր խորտիկ, և դառնային անդրէն առ մեզ. վասն զի ոչ գտանիւր հաց և ցորեան 'ի բանակն. և Թէպէտ Նոյն տային մեզ, բայց յաւուրն՝ յորում ծախէաւ տրար զմեզ,

կորեցին զնոյնն։ Եւ ոչ եթէ միայն 'ի Մուղան էր նուա-
ղութիւն հացի, այլ յամենայն տեղիս Թաւրիզու՝ և այսր՝ և
'ի Տուղախ, 'ի Կէնճէ, 'ի Ղազախ, 'ի Լօռի, 'ի Վրացտուն, 'ի
Գեղամայ ծովի եզերայքն, 'ի Ծաղկունաձորն, 'ի Ղափան,
'ի Նախիջևան և յԵրևան. այս գրեալ նահանգներն ըստ մեծին օրհնու-
թէն՝ Ա. Ա. շահի ցորեան էր, և այն ևս ոչ գտանիւր. որ և մեք
'ի Մուղան 'ի պակասել հացին և ալեւրին՝ զոր բերեալ էաք
'ի սուրբ Էջմիածնայ, շաբաթ մի և այլ աւելի՝ խարշեալ և
խանծեալ ցորեան կերանք. և վասն այսր պատճառի ասա և
անդ բաժանէին զազատեցեալ գերիքն. որ և Գ. անգամ՝ Ա.
Ա. պօլօղ յղեցի. նախ ընդ ուղտոյն յղեցի պօլօղ մի՝ և վերա-
կացու եղի զշամխէ Մաղաքիայն, և Բ. ռայէք՝ որք եկեալք
էին յԵրևանայ և յԷջմիածնայ։ Երկրորդ անգամ ղրկեցի
պօլօղ մի գիրի, վերակացու եղի Աստապատցի ամբարտար Սար-
գիս վարդապետն, և հնձուց Վանից՝ Եղիայ վարդապետն, որ
տարին 'ի Տուղախ ընդ մեր ջորոցն. և գրեցի Գանձասարու
Կաթուղիկոսին, զի աւանակաւ և կամ եզամբ հնարիցէ և
յղեցէ մինչև ցՄազուլս, և զմեր ջորիքն՝ խորակ բարձեալ դար-
ձուսցէ մեզ Եղիայ վարդապետն, և Սարգիս վարդապետն զը-
նասցէ ընդ գերեացն. և յայս միջոցս մինչ գնացին 'ի Տու-
ղախ, եղև բաժանումն խէլայքին՝ և հրաման մեզ՝ գնալ յԵ-
րևան. զի Ն. աւուր ճանապարհ է Տուղախն 'ի Մուղանու.
այլ և զոմանս 'ի ջորոցն յղեալ էի 'ի Շամախի՝ ընդ Տա-
թևու Մկրտիչ վարդապետին Ղափանցոյ, զի բերցէ և նա խո-
րակ մեզ՝ և անասնոցն. զի յետ օրերն թանկացաւ ցորեանն
և գարին 'ի Մուղան, և եղև Թաւրիզի լիտրն Ա. ղօլօշա
և Ժ. Թէխխին, որ է ԹՃ։ ղրամ. և 'ի փոփոխարի ԽԱ. եկն
Մկրտիչ վարդապետն՝ բարձեալ Գ. ջորոց ալեւր՝ եփած հաց՝
գարի և գինի՝ ունելով ընդ իւր և զԻսրայէլ վարդապետն
Մեսարու վանից, Բ. քահանայք և Ե. Օ. իշխանք. որում
խնդիրք ուզէին 'ի մէնջ վասն Բ. իրաց. մի՝ վասն ծեղջէին,
զոր շատ պահանջէին, խնդրեցին առաջի սահմանին՝ անով
մարդու՝ Գ. ղուշ և կէս։ Այլ և վասն բնակութեան, զի
զՇամախին աւերեալ էր և քակեալ Վալեամաթն, յորժամ
էառ յառաջ քան զգալն 'ի Կէնճէ, և Բ. ժամու ճանապարհ
հեռու 'ի Շամախուցն՝ հողէ բերդ մի շինեալ՝ հրամայեաց
զիմացեալ Շամախեցիքն անդ բնակեցուցանել. և զի էր օդն ա-

պականեալ, և անուն շողային, և Ջուրն պակաս, և տաճկունք՝ որք են Լակզիք և Ոսմնիք՝ վշտացուցանէին և տառապեցուցանէին զԱզգն մեր: Վասնորոյ խնդրեցին բազում անգամ կրկին բնակիլ 'ի աւերեալ Շամախու քաղաքն. որ և բարկացեալ խապառ քանդեաց. վասնորոյ անձարացեալ եկին առ իս յաղերս. որ և ես սրտապնդեալ աջող ապարի մեծի Վալինամաթին, և խնդրեցի 'ի նմանէ՝ տալ հրաման Շամախեցի Հայոց արտաքոյ նոր շինած բերդին՝ ժամու մի ճանապարհ հեռի 'ի բերդէն ի տեղի մի վայելուչ զոր նոքա խնդրեցին, շինեցին վասն իւրեանց բնակութեան, և հող ըստ պիտոյից, զի անկեցին այգիս և արարին արտս. այլ և ի գետոյն՝ զոր գտանիւր անդ մերձ՝ առու մի Ջուր, զի առոգանիցի գեղն և արտորայքն և այգիքն իւրեանց. այլ և վասն շինելոյ եկեղեցի մի. զի անհնար է Հայոց ազգին առանց եկեղեցւոյ բնակիլ ի տեղի մի՝ թէ և զրախտ իցէ. և վասըն ծիշկէյին՝ և այլազգիքն զիւրեանք մի՝ նեղացուսցեն և մի՝ խուեցեն. և առ ժամայն շնորհօքն Աստուծոյ քաղցրացաւ սիրտըն, և զիջաւ 'ի խնդիրս իմ. և վաղվաղակի շնորհեաց զըրխամնեայ ընդարձակ բանիւք գրեալ զըր—յըր—լիւ—ն առաւել քան զխնդիրն իմ. յորմէ առեալ գնացին մեծաւ ուրախութեամբ և շնորհակալութեամբ՝ օրհնելով զԱստուած: Իսկ 'ի Տուզախ գնացող Լեզկոյ վարդապետն եկաւ 'ի փետրվարի ԻԲ. օրն կիրակէ. և 'ի նոյն գիշերն գողացան զըր—լըյ ձիակն իմ, և ածին ինձ տրտմութիւն մեծ. զի էր յոյժ հանդարտ և հաւատարագնաց ձի՝ ըստ իմում սրտի. և կրկին թափեցի 'ի գիրկացն որքա՚ն որ կարողացայ. և կարացի հնարել և գտանել, փոխ ստակ առի և տուի գին գերեացն. և այն էր մեծ փորձութիւն, զի հետիոտս ոչ կարէին գնալ, և ըստ բաւականին դրամս ոչ գտանիւր:

## ԳԼՈՒԽ ԽԳ.

Յաղագս չուելոյն իմոյ 'ի Տօղախ՝ և Օսմանցւոց Իշխանն Ակեմ-Ալի փաշային, և ուղարկելն Վալինամաթին Րիզա-Ղուլի խանին 'ի Խորասան:

Եւ ապա յԲ. շաբաթի՝ որ էր փետրվարի ԻԳ. չուեցի 'ի Մուղանու դաշտէն 'ի Տուղախ. և անցեալ զՃ՛ոռէկն Երասխայ, է Զ. օրն հասայ 'ի Տող անուն գիւղ. էր անդ և Ներսէս Կաթուղիկոսն Գանձասարու և Աղուանից՝ մնալով գալստեան իմոյ: Բայց յորժամ չուեցի 'ի Մուղանու, թողի անդ զԱգուլեաց Աւագերէց տէր Թումայն անուն՝ վասն բոխտամից՝ զոր կրկին մատեցի, և էին հարկաւոր պիտոյացու. և դեռ ևս չէր եկեալ ջուլուսն՝ և չէր բարձրացեալ 'ի գահն կայսերական՝ Վալինամաթն. և թէպէտ ամենայն ինչ պատրաստ էր, բայց վասն Բ.ուց պատճառաց կախ էր մնացեալ ջուլուսն. նախ՝ որ կնիքն չէր փորեալ և դրամն օճաղէն չէր աւարտեալ. և երկրորդ՝ աստղաբաշխքն իւր քննէին և ասէին, թէ լուսնոյ ԻԵ.ին պարտ է և վայելէ լինիլ ջուլուսին, զի այն օրն շնորհաւոր է. և վասն այսորիկ պատճառաց յամեցաւ: Իսկ ես ոչ կարացի մնալ մինչև ցօրն ջուլուսին: Նախ՝ զի ձանձրացեալ էի սակս շատ կենալոյս 'ի Մուղան: Երկրորդ՝ զի չէ կարգ յետ ռուխսաթ լինելոյն 'ի Վալինամաթէն՝ մնալ անդ. զի ընդդէմ երևի հրամանաց նորա: Այլ յորժամ եկին զրաստքն՝ Ջորիքն և ձիանքն, անճապարեցի գնալ: Իսկ մինչ կամէի անցանել զՃ՛ոռէկն, ահա տեսի, զի և Օսմանցոց Իշխն Ակեմ-Ալի փաշայն 'ի նոյն ժամն գայր 'ի Վալինամաթէն քովէն իւր ալայովն և զգեցեալ խալաթովն, որ էր ծածկեալ ղարղաջէ ղալաֆով պատուական աստառով, Գուարանցերոյի ձև՝ մեծ և կախ խաչակալով՝ բաց ծխի պարուից: Իսկ մինչ երթայր 'ի Ճ՛ոռէկն, և ես զկնի, և հասանք յեզրն Երասխայ 'ի գլուխ Ճ՛ոռէկին. որ և զտեղի առի անդ, մինչև եանց Իշխն իւր զօրովն. քանզի Գ.Ճ՛. մարդ ունէր ընդ իւր. ապա անցի և ես. և գնացեալ Բ. ժամու ճանապարհ իջևանեցաք 'ի խոտաւէտ վայրի մի՝ բացօթեայ. և զի խոտն հասեալ կայր՝ որպէս 'ի Հռոմայ տուէնն՝ ապրիլի ամսոյն, և 'ի միւս օրն որ էր Գ.շաբաթի՝ և փետրվարի ԻԴ. չուեաց և

Իշխն 'ի Մուղանու՝ ճանապարհ առնուլ 'ի Կէնճու և Լօռու նահանգովն և է Գաղախու անցեալ 'ի Գարս և եհաս 'ի Թէոդոսուպօլիս՝ ունելով ընդ իւր և Ապտըլ-Պաքի խանն՝ Վալինամաթին կողմանէն Իշխէ և ընծայատար Սուլթան Մահմուտին, և Մէհմանտար զբարեկամ և զծանօթն իմ՝ զՔաշիմ բէկն: Իսկ է նոյն շաբաթն և առաջնկայ Ն. շաբաթին՝ որ էր փետրվարի ԻԶ. և լուսնոյ ԻՆ. եղև Ծուղրան. և պատմեաց ինձ տէր Թումայն՝ Ագուլեաց Աւագ երէցն, զոր ինչ ետես աչօքն և գըրեաց 'ի քարտէզի ըստ պատուիրելոյն իմոյ: Քանզի էր 'ի վրանն րոխում գրող մերձ Մէհէմթուն և Մուճինին՝ որք էին կից օթախի Վէլինամէթին, զոր ինչ արարողութիւն առնէին, նա աչօքն տեսանէր, և պատմեաց այսպէս. յորժամ եհաս օրն այն Ն. շաբաթի՝ Ն. երրորդ ժամու: Քանզի օր մի յառաջ զմեծ զորզին իւր զՔիզայ-ղուլի խանն յղեաց 'ի Խորասան բազում պատրաստութեամբ՝ լինել խան, և պահել զկողմանս զայնոսիկ, և զայլ ոմանս 'ի յայլ տեղիս, և 'ի վաղիւն՝ օրն Ն. շաբաթ՝ կայսերացաւ այսպէս:

## ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս թագաւորելոյ Վալինամաթին՝ և արարողութեանց նորա. և թէ զինչ՞ք նորա զեն և թէ է փառս եղեն. և եղաց զինուորին:

Յորժամ եհաս օրն Ծուղրանին՝ որ էր փետրվարի ԻԷ. և լուսնոյ ԻՆ. 'է Ն. շաբաթի Ն. երրորդ ժամու աւուրն՝ ժողովեցան ամենեցեալ խանքն 'ի յանդուսն Վէլինամաթին, և եղին 'ի գլուխ նորա սաղաւարտանման թագ մի ոսկեղէն կազմեալ և ընդելուզեալ պատուական և անգին քարամբ և մեծագին մարգարտովք՝ զարմանալի տեսողացն. զոր առեալ միրզէ Զաքին ի ձեռն, և եդին 'ի գլուխ Վէլինամաթին. և ապա սկսան աղօթել ի վերայ ծնկաց իւրեանց. միայն ձորցի մի կանգուն կայր 'ի վերայ ոտից՝ որ էր ծոլլադաղչին՝ և անունն միրզէ Եպէր Գաղէնցի, և կարդայր զդուայն, և պատրաստ եղեալ խանքն 'ի վերայ ծնկաց զձեռս 'ի վեր ունելով մինչև աւարտեաց զդուայն, այսինքն՝ զա-

զօթն՝ ծաղկէն այն՝ որ կանգնեալ էր ի վերայ ոտից ի չափ ողորմելոյ միոյ. և ապա տասցեալ զջօլէն, երկիրպագէին 'ի վերայ երեսաց իւրեանց. և ելին նստան իւրաքանչիւր 'ի տեղ իւր ըստ կարգի և ըստ պատուոյ արժանեաց իւրեանց: Իսկ սկըսան պատուել զթագաւորն. նախ մատուցին ոսկի կուլապաաններաւ՝ կուլաղ. որ Բ. կուլապաան համակ ոսկի, և Ա. կուլապաան ոսկի և պատուական ակամբ զարդարեալ: Իսկ զկնի կուլապին բերին զոսկեղէն բուրվառս, որ են ըստ դէմի իւրեանց պուխուրպանք. զորոց զկերպն տասցեալ եմ 'ի ԼԳ. գլխին, զոր արարին ի պայքարին առաջին օրն. նմանապէս և այժմ՝ և դեռ ևս աւելի քան զայն. զի տասանոր Գ. ոսկի բուրվառ և Գ. արծաթի էր: Իսկ զկնի ոսկեղինաւ բաժակաւ շէքէր շէրպէթի. և էր պատրաստութիւն շէրպէթին այսպէս: Նախ մեծ ոսկի ափսէ մի՝ լայնութիւնն հէյէքղի ու կէս. և ափսոյն մեծութեան պատշաճ ոսկի պատրէայ մի եղեալ 'ի մէջ ափսոյն՝ լցեալ շարպաթով և 'ի վերայ Աւահանի հուհու ցանեալ: Այլ և մէկ ոսկի թռչնիկ՝ զարդարեալ պատուական և մեծամեծ անգիւտ և անգին քարամբք՝ հիացումն տեսողաց. որք ասէին՝ թէ աժէր ՆՌ. քսակ, որ կանէ ԲՌ. ֆլուայ. և զկերպն թռչնկուն յիշեալ եմք 'ի ԼԳ. գըլուխն. և բաց յայնմանէ զ.Օ. ոսկի թռչնիկ այլ, և Բ. կուլապաան մարգարտով ընդելուզեալ. այլ և Ժ. հատ ոսկէ սկուտեղ՝ ունելով 'ի մէջն Ի. Ի. թաս՝ որպէս յիշեալ եմ զկերպն 'ի ճառին ԼԳ. և որչափ ոսկեղէն անօթք էին, նոյն չափ այլ արծաթեայք կային. և այնպէս կարգաւ՝ նախ՝ զկոլապն եառուն իւրաքանչիւրոցն ոսկեղինաւ՝ ոսկեղէն կուլապաաններով, և ապա պուխուրպանք ոսկեղէնք բուրելով զանուշահոտութիւնն. զկնի այնորիկ 'ի ոսկեղէն ափսոյն մէջն եղեալ ոսկի պատրէայէն լցին զականակուռ ոսկի թռչնիկն, և ապա զմիւս ոսկեղէն թռչնիկքն, նոյնպէս և զարծաթեայ թռչնիկքն. և ապա յոսկի թռչնոցն լցուցին զոսկի թասսն՝ որ էր 'ի վերայ պատուանդանաց, և բաժանեցին նստող խանիրացն. իսկ արծաթեայ թռչնկոյս բաժանեցին 'ի վերայ ոտից կացելոց, և պուխուրպանք միշտ շրջագայէին՝ մինչև ամենեքեանքն ըմպեցին. և ապա կրկին երկիրպագին նորընծայ կայսերն, և ելեալ գնացին յիւրաքանչիւր տեղիս. իսկ յետ գնալոյն խանիրացն՝ ապա եկին 'ի մէջ երգեցիկք և գուսանք մանկունք և աղջկունք փոքրկք, և սկսան երգել և 'ի գործ ածել զհրաժշտականաց գործիքն, և պարել

պարաւոր մանկունքն մինչև ցեկս ժամ: Եւ կայր յայնժամ մերձ կայսերն՝ իւր եղբայրն Իպրահիմ խանն, և ապա իւր եղբօրորդին Ալի-ղուլի պէկն, և իւր պզտի որդին Մուրդազայ միրզէն, միրզայ Զաքին, Նատըրշահի Ֆէթէհ խանն, և ծայարպաշին՝ որ է առաջապայարն, և այլ իւրայինքն կանգնեալ 'ի վերայ ոտից. և յետ կէս ժամու վճարեցաւ և խաղն՝ պարն՝ երաժշտութիւնք և նուագարանքն, և ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս. և յետ Բ. ուց ժամուց ի բաց եդ զոսկի Թագն 'ի գլխոյն, և եդիր 'ի գլուխն զառաջի Նատըրշահու գտակն քառակուսի՝ խաչաձև՝ 'ի գլուխն, և 'ի վերայ փակեղ շալէ սպիտակ և յոյժ բարակ, Բ. ծայրն գործովի նախշուն, և եզերքն կախեալ, Բ. ծայրն փակեղին 'ի Բ. ականջացն վերայ Գ.Գ. մատ կախ. զոր միշտ այնպէս ունի 'ի գլուխն:

## ԳԼՈՒԽ ԽԵ.

Յաղագս բաժանելոյ զնոր կարգած ոսկին, և տեսանց նոր խալաթ տալոյ. և վասն Ջէնիպէրխանայէն՝ ԲԷ՝ ի՞նչ կերպ-է:

Եւ ի նոյն օրն ծառայական զիւր Ֆէթէլխարճն՝ զոր ազայ Զօմանեանն, ապա ծառայութ, որ էր Վ. րացի ազգէն Թուրքացած. և միրզէ Մումինն կարգեաց ի վերայ բախտնեաց՝ գրելու, այլ և 'ի վերայ զրոցաց՝ սրբագրող ուպէս-էյէջ: Մխիթարեաց և զնախկին բախտ զրող Միրզէ Մէհթին, զոր ընկեցեալ էր յաչացն վասն պատճառի ինչ, և կարգեաց պատմաբան՝ գրել զպատմութիւն եղելոց իրաց՝ և վասն Թագաւորելոյն իւր: Զծայարպաշութիւնն՝ որ է առաջապայար, կրկին նորեց 'ի վերայ առաջին ծայարպաշուն, զի երբ նոր կոչած ոսկի՝ նոր ընծայեցաւ, Բ. թէրալ եդ առաջի Վէլինամաթին, որ բաժանեաց պատրաստ եղեալ խաներացն. և խնդրեաց զբռնաբարութն՝ զծառայութն և ծայարպաշին: Յետ այնորիկ սկսան զնաղարեքն 'ի գործ ածել, որ է Պարսից Ջէհ-պար-խանայն, և է այս ինչ զօրանայ.ք որպէս Օսմանցոց, բայց եղանակն այլ իմն. և թաղլաղակր, որ է աստէ նաղարայ.ք՝ Ջուխտ Ջուխտ. այլ և երեսուն Թէմբանայ.ք՝ որք են պօստ-

ղան, այլ ոչ են ծաղովի իբրև զղօռոռղանան Օսմանցոց, և ո՛չ ձայնք նման տօռոռղանի ձայնին, այլ ուղիղ՝ երկայն Գ․ կամ Գ․ հալէալ, մի ծայրն նեղ՝ որում է 'ի բերան փչողին, և միւս ծայրն լայն թզաչափ և այլ աւելի, նման տօռոռին, որք կան ի Լաթինացոց նաւսն և խօսին ընդ միմեանս 'ի վերայ ծովու 'ի հեռաստանէ. և այսպէս զերիս տիւս և զերիս գիշերս ածէին անդադար և գոչիցուցանէին զծնծղխաղխանոյսն, և ապա վերջացուցին. բայց այս ամենայն և ծողան եղև յետ գնալոյն էլչի Սէնձ-Ալի փաշային. եւ չուեսի յԲ․ շաբաթի, և Սէնձ-Ալի փաշային չուեաց էԳ․ շաբաթի, և մեծ ուղղին Մէլինամաթին՝ Րիզա-զուլի Խանն գնաց 'ի Խորասան ի Գ․ շաբաթի, և ծողան եղև ԷԳ․ շաբաթի. և այսպէս կատարեցաւ գործն ինքնակալութեան և կայսրութեան. և այս է գործ և արարողութիւն օրհնութեան՝ և իբրև օծումն թագաւորութեան Պարսից՝ ըստ ծեսի իւրեանց: Զոր տէր աստուած խաղաղութեամբ և երկար կենօք պահեսցէ, և սէրն և դիտաւորութիւնն միշտ քաղցր պահեսցէ 'ի վերայ աշխարհի, մանաւանդ 'ի վերայ տառապեալ ազգիս Հայոց. ամէն:

## ԳԼՈՒԽ ԽԶ:

Յաղագս փառայէն՝ զորաւէն ըառողէ, յորժամ ելանէ ճաշխանաբարն՝ 'ի փէտան, և յորժամ յէտորէ. և ճան զօրայն արտանոռինան:

Իսկ սահմանադրութիւն և կարգ զօրաց՝ և արարողութիւնք սպասաւորացն են այսպէս: Իսկ յորժամ մեծազօր Մալինամաթն ելանէ 'ի ներքէն 'ի փէտան, [illegible]՝ որք թուով են Լ․ կանգնեալք 'ի դիմացն 'ի բացեայ՝ 'ի չափ կէս քարընկեցի, և բարձր ձայնիւ գոչեն ասելով: Գէտմէլանէ, [illegible]. Ելանէ, ելանէ, [illegible]: Տօքմարին [illegible], [illegible], [illegible]: Իսկ յորժամ կամի ձիաւորել, ասեն. [illegible]: Երբեմն ասեն և զայս. [illegible]

մատապամբ՝ պատայմբ՝ պօլֆամբն ղայլմ օղլան. պօպըն պօռն օղլան, Տաշմանըն պօռն օղլան. պէհիր-մբն ոէ յփպէլ մաբաէլին ոէլլէ էղայ: Յայլ և երբեմն ասեն. Եաղըն ատոլմամբըմ՝ եաղըն, պաղըպան պաղայ, մատապամբ պատայմբ. պօլֆամբն եջխլար պաղայ. պօպըն պօպ օղլան, պաշմանըն պայ պօպ օղլան. պէ հի-րմամբէ ոէյփպէլ մարապին ոէլլէ էղայ: Ունին ևս ղա-ո-ղք կանանչ ղա-ո-ւք, և 'ի վերայ ու-ֆողէ փաթաթած, և հարեալ 'ի վերայ ճակատին՝ թէպուր, և թէպուրի տակն 'ի վեր քան զուպու-ին՝ մեծ խնծորի չափ արծաթէ ֆ-անո մի, և 'ի ձեռս արծաթեայ դօյէն՝ որպէս Օսմանցոց: Յայլ և համաղայ ֆէշէլք՝ որք են միտապահք 'ի տունէ և 'ի գիշերի, են Ջ.Ռ. կ և Բ.Ռ. ունին զկարգ զմի օր, և ապա արձակեալք գան ի կարգ նոցունց պահպանեալքն միւս Բ.Ռ.ք. և նոքա ևս պահեալք տիւ մի և գիշեր մի, ապա գան և միւս՝ Բ.Ռ.ք: Եւ այսպէս՝ Ջ.Ռ.ք՝ Գ. օր միանգամ գան 'ի պահպանութիւնս իւրեանց՝ արտաքոյ օ-ա-ի Վ՟ալինամաթին՝ 'ի բացեայ քարընկեց մի պարսպին, ամեն Ժ.՝ իւր Ժ.նապետօքն՝ 'ի մի խուղ. որոյ Ն. դոաքին՝ Ն. 'ի կանգուն կան, և շրջագային շուրջ զխղիւն իւրեանց. և բազում անգամ էլ ըեղակարծ ժամու եկեալ ինքն և փորձէ զնոսա. և թէ գտանէ զամենեսեանն, այսինքն՝ զԺ.եսինն՝ ննջեցեալ, ապա հրաման տայ ըմբռնել զնոսա և 'ի կենաց բառնալ. յորմէ ահիւ մեծաւ և սարսափմամբ կան միշտ դօղալով 'ի պահպանութիւն իւրեանց: Յայլ և ունի Գ.Ճ. շանդատաուլ, Գ.Ճ. նաատղծի, Գ.Ճ. էլֆաղայլի. և Ռ. հոգի ևս սոքա են իւրեանց Ճ.ապետաւ և Ժ.նապետաւ. և ռոճիկ սոցա է՝ Ռ.ապետին՝ ԺՃ. թօման 'ի տարին. Ճ.ապետին՝ Լ.Ջ. թօման, Ժ.ապետին՝ ԺՆ. թօման: Իսկ թօ-պանի սոցա՝ ԺԲ. ԺԲ. թօման, որ ամենայն գիշեր պահողք են Վ՟ալինամաթին: Յայլ և ձիաւոր զօրք որքան կան, 'ի Վ՟ալինամաթէն առնուն զձին. և որքան սատկին ձիանքն, բերեն զպաշղայն՝ որ կան 'ի վերայ սաղրւոյն, և զպոչն՝ նշան ձիոցն վերակացուացն՝ որք են ֆէմբէրք և գրողք սատակեալ ձիոցն և նոր տուեալոցն. և տան զնէշանկիրէ մի գրեալ և կնքեալ 'ի ձեռս իւրեանց, որ գնացեալ առնուն զայլ ձի 'ի տեղի սատակելոյ. և թէ օրն Ե. ձի սատկացնէ այրն, կրկին անտրտունջ կուտան. բայց խիստ անողորմ վարեն զձիանքն. զի եթէ կամեցին՝ Ի. և ԻՆ. ժամ 'ի օրն ճանապարհ կարեն

փորել։ Այլ և միշտ փարժումն ձիաւորաց և հետևակաց՝ անխափան։ Ես և բազումք 'ի զօրացն՝ զրեխաւորք. ոմանք հիւսեալ զրէխք, ոմանք՝ Բ. տախտակ՝ մինն 'ի կուրծքն՝ և մինն 'ի քամակն, և ոմանց Գ. տախտակ 'ի ներքոյ թևին՝ յաջ և յահեակ, և թֆանկ մեծամեծ ըստ նախկի գրեցելոյ, և մեծամեծ ֆէշնայք, որ Ան 'ի նոցանէ առնու օխայ մի պարուտ և պլաւելի. և ամենքեան Բ. ֆէշնէ կախեն 'ի մէջքն. և թէ խառէն, կարեն զօր մի ընդ դաշտ և ընդ ձոր և զառ 'ի վեր քարաժեռս լերանց և ընդ զառ 'ի վայր՝ իբրև զկաքաւ ընթանալ, և խոնջ և տրտունջ բնաւ ոչ գիտեն. են զի և երբեմն զապառաժուտ անցուկ տեղիս՝ զապառաժն հատանեն, և զհողն պեղեն, նոյնպէս և զձիւնն՝ իբրև ոչ աշխատեալ բնաւ. մտանեն 'ի պատերազմ ընդ թշնամիս իւրեանց, և մարտնչին արիապէս և յաղթեն. զի թէպէտ՝ ԿՌ. լի թիւ բռջաւորացն զօրաց, բայց թէ կամեցի՝ Բ. և Գ. այնքան կարէ ժողովել 'ի սակաւ աւուրս կարողութեամբն աստուծոյ։

## ԳԼՈՒԽ ԽԼ.

ՅԱՂԱԳՍ ԷՐԷ Ո՞Ր ԿՈՂՄԱՆԷ ԵԿԻ 'Ի ՏԱՒՐԷ ՄՐՈՏԱ. ԷՐԷ Ո՞Ր ՀԱՆԴԻՊԵՑԱՅ ՎԱՍՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ՀԱՆԴՐԱՅԵՑ. ԵՒ ՎԱՍՆ ՈՍԿՈՅ ԵՒ ՓԷՍԱՆԵՐՈՎ ՇՆՈԱ, ԵՒ ԸՆԾԱՅԻՑ ԵՒ ՆԿԱՐԵԼՈՅ ԶԷՔԷՐԻՆ՝ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ։

Իսկ իբրև չուեցի 'ի Մուղանու. է փետրվարի ԻԳ. եկի 'ի Տուղախ 'ի գիւղն. Տողէ. Անդ էր Աղուանից կաթողիկոսն, որում անունն էր Սերգէս. այր խոհեմ և քաղցրաբարոյ, ծնայր գալստեան իմոյ. և թէպէտ սէր արարեալ էաք ընդ միմեանս, բայց դեռ ես ընդ միմեանս ոչ էինք տեսեալ։ Այլ և ըստ խնդրոյ նորա մինչ 'ի Մուղան էի, առ. արարի Վ, ալինամաթին, եթէ Կէնձէու և Գանձասարու տանն Աղուանից, և Հ, ամախու, Օրմանու՝ ինձ փոխանորդ մի Գ, ալ՛ֆայ անուամբ եղեալ եմ. զի կառավարեսցէ զվանորայս և զեկեղեցիս հանդերձ ժողովրդօք. վասնզի հեռու է ինձ այս երկիրս, և չեմ ձեռ-

Նահաս, և ոչխարն առանց հովուի ոչ կարէ լինիլ։ Իսկ Կէն-ճէու խաներն, և այլ զլազգիններն միշտ [illegible] [illegible]-անելով ոչ տան թոյլ հանգիստ մնալոյ, այլ միշտ կեղեքեն և կողոպտեն։ Վասնորոյ խնդրի 'ի մեծութենէդ, որ յայսմ-հետէ ո՛չ Խան, ո՛չ Սուլթան կամ Զապութ՝ նորա հետ բան չունենան, զի իմ վէքիլ և նայիպ ես․ այլ թէ խօսք և զրոյց ունին, ընդ իս տեսցեն․ որ և շնորհեաց ինձ զռաղամն, և ես տուի Ներսէս Կաթուղիկոսին․ վասնորոյ ուրախացեալ յոյժ, զմեծ բարեկենդանն 'ի միասին արարաք 'ի Տող և 'ի Ձատրութ։ Իսկ զԱղուհացից սկիզբն Ա․ շաբաթի չուեցի 'ի Ձատրութ գեղջէ․ զի թէպէտ Խաչենու և Վերէնտու և Աւետարանոցի Մելիքներէն եկին 'ի տեսութիւն ինձ՝ ընծայիւք և պարգևօք, և թախանձեցուցին հանդիպել 'ի նահանգս նոցա, և ոչ կամեցայ․ զի 'ի միջի յոյժ սղութիւն և պակասութիւն էր հացի և գարոյ, և ընդ իս մարդ և անասուն բազում։ Իսկ Երկրորդ, զի ցանկայր անձն իմ և փութայր շուտով 'ի տուն հասանիլ և հանգչիլ․ զի ձանձրացեալ էի 'ի շրջագայութենէ և 'ի ցրտոյ, մանաւանդ զի հոտոտելիքս և մին ականջս խափանեալ էր, և կայի 'ի տարակուսի․ վասն որոյ աճապարեցի և եկի 'ի գիւղն ի Չորգեղն և անտի 'ի Պնածոր գիւղ, անտի 'ի Դօշխալէկի ձոյն, որ էր Փիսխանցի․ և անտի 'ի Խնձորեկ, որ է 'ի մէջ քարաժեռ լերանց մեծամեծաց, և ունի անբաւ բարձրութիւն, և նեղանցուկ ճանապարհաւ իջանք 'ի մէջ ձորոյն, և տեսանք հիանալի բան․ և զգեղն թողեալ էին՝ որ էր 'ի մէջ ձորոյն, վասն ահին Օսմանցոց և Դաղստանցւոց Քրտերոյն, և 'ի բարձրաբերձ տեղիս՝ յայս կողմն և յայն կողմն ձորոյն՝ դէմ յանդիման միմեանց փորեալ յապառաժ վեմն՝ քարայր՝ որք են [illegible], իւրաքանչիւր ոք վասն իւր տան բնակութեան շինեալ բնակէին․ և այն իսկ էին զարմանք՝ որ կաշէ փոկով ելանէին և իջանէին․ կանայք՝ զտղայս սնդուկացս կապեալ ողին իւրեանց, նոյնպէս և զամփոր ջրոց և այլոց հարկաւոր իրաց, և նոյնպէս փոկով ելանէին 'ի վեր, և մտանէին 'ի բարձրագոյն որջս վիմաց, և քաշէին զփոկէ առասանն 'ի վեր՝ որ այլ մարդ ոչ կարէր մտանել։ Իսկ տունք նոցա քանդեալք էին 'ի զօրաց Օսմանցոց և 'ի գող-աւազակ Քրտաց Դաղստանցւոց։ Նախ կային ԻՂ․ տուն 'ի Խնձորեկ գեղն, բայց այժմ սակաւացեալք էին՝ զի բա-

զունդք սպանեալք էին 'ի Թուրքաց. քանզի փաշայք զօրօք իւրեանց քանիցս անգամ եկեալ էին 'ի վերայ նոցա, և ոչ կարացին մուտ առնել, այլ պատերազմեալ ընդ միմեանս՝ յետ դառնային ամօթով. բայց միայն զմի կողմն՝ որ ոչ ունէին յանդիման իւրեանց քարայր՝ որ օգնէին իւրեաց, զայն կողմն աւար առին, զկանայս՝ և զորդիս՝ և զարս 'ի սուր մաշեցին, և անցեալ գնացին. իսկ այնք՝ որք մնացեալք էին՝ կէս մի, և կամ երից մասանց մասն մի, որք զերծան, նոքա ունէին զքարայրս իւրեանց յանդիման միմեանց. որք Աստուծով կարացին զմիմեանս պահել 'ի թշնամեաց. և 'ի գիւղս այս պատուական՝ շատ խալի և խալիչայ գործէին յառաջ, բայց այժմ նուազեցան յոյժ և հազիւ թէ ոմանք պառաւունք սակաւ գտանին գործողք. և աստի գնացաք մեք ճանապարհորդելով 'ի թանձրութենէ ձեանն, և ինքեանք զինուք և Աստուծով հասուցին զմեզ 'ի մեծ Անապատն Տաթևու. և 'ի ճանապարհին զաւեր գիւղ մի՝ որ բնակեալ էին Առաջնորդք Տաթևու՝ Բարահանջ անուն, աղերսեցին զիս արձակել. որ զտեղի առեալ ետու զարձակումն և օրհնութիւն գիւղոյն. յորում կայր պատուական եկեղեցի մի սրբատաշ քարամբք շինեալ: Իսկ 'ի յԱնապատն մնացի Գ. օր: Բայց մինչ կայաք 'ի յանապատին՝ մարտի ԺԶ. օրն Գ. շաբաթի գիշերն՝ Ե. երրորդ պահու գիշերոյն, որ էր օրն պարզեալ, և լուսինն լրում առեալ. քանզի մինչ հասայ 'ի յԱնապատն, կրկին ձիւն տեղեաց ԻԳ. ժամ. և ապա պարզեցաւ. և ապա իմ ելեալ 'ի խցէս՝ զանխուլ 'ի յումեքէ գնալ 'ի դուռն եկեղեցւոյն, տեսի զլուսին խաւարեալ զհասարակն. մինչ 'ի մուտս իւր խպառ խաւարեցաւ և ամփոփեցաւ:

## ԳԼՈՒԽ ԽԲ.

Յաղագս գնալոյն իմոյ յոտից, նախ 'ի Մեծ Անապատն Հարանց. որ է 'ի ներքոյ Թանահատի վանից և Անապատին:

Եւ 'ի նոյն օրն՝ որում լուսացաւ 'ի խաւարմանէ լուսնոյն, առեալ ընդ իս զոմանս 'ի վարդապետաց և 'ի միաբանից. և զե-

նացի յուխտ 'ի Հռովմայ նւ. եկին մեծ յանապատն, որ է մայր ամենայն անապատից յարևելս և յարևմուտս Եգիպտոս մերոյ. և 'ի մատուռն, ուր թաղեալ կան պատուական նշխարք սրբոց վարդապետացն Պօղոսի և Մարգսի, Արիստակէսի և Բարսղի Արեղային, զոր պատմէ Եւագրեղ պատմագիրքն՝ է Ի Ը. գլուխն։ Նա յետ ուխտելոյ և նկատելոյ զանապատն, և զկործանման տեղի բարձրագոյն լեառնն, յորում հասեալ լերինն, և խաղացեալ գետինն, և զերկրամանատան ոտևըն և զնալն նեռաձիգ մի տեղի, և ապա զկայ աւնուըն։ Նոյնպէս և մատուռն. յորում թաղեալ կային փերգրեալ սրբոց մարմինքն, որում յետ ուխտիս մերոյ կատարման, որ և զՃ՛աշու ժամն 'ի յանապատն ատացաք, և ապա եկինք զառ 'ի վայր 'ի մատուռն, որ էր փոքրիկ եկեղեցի՝ ուր պահպանքն էին զրեցեալ սրբոցն. և անդ ևս կատարեցաք զերեկոյեան ժամն. և անտի անցեալ զՃեռն Որոտան՝ ձիով, որ 'ի մէջ մատրան և Ճ՛էնհերու կուսանաց Անապատին, եկանք 'ի վեր 'ի կուսանաց յանապատն. և տեսի զաւերս նորա և զամայութիւն, յորում բնակէն աւելի քան ՃԾ՛ կուսանք. իսկ այժմ միայն ԻԺ.ան աղաչաւորդք կային, և սոքա ևս չնւաղեալք և տարակուսեալք և յուսահատեալք. որ անպանօր ատացաք զխնդակալանն. և զի երեկոյացեալ էր օրն, մնացինք անդ զգիշերն. որ և 'ի լուսանալն յետ կատարելոյ մեր զժամն առաւօտուն, յուսադրեցի զաղաչաւորդսն, և զոր ինչ պակասութիւն գոյր եկեղեցւոյն հարկաւոր, թէ վարագոյր և թէ վարագուրի երկաթ, և թէ զգեստք, և ձեռք մի զգեստ, ոսկի և խաչ. այլ և 'ի կատարելոյն 'ի վեր՝ յորում կանգնեցին այր մարդիկ՝ յորժամ հանգիստն 'ի յանապատն, էր քակեալ և աւերեալ. յորմէ փաղփաղուկի եւս զաւանդ հին մի. և փայտ. և տախտակ, և տուեալ զգինս հիւսոյն և ձարտարապետին, հրամայեցի փութով շինել, և եկեալ գնացի. և անցանելով ընդ Հալուձորու գիւղն, կէկին իջի 'ի յանապատն Տաթևու. և է մարտի ԺԲ. եկի 'ի վեր 'ի վանքն՝ Ի. օր, մինչ զի սակաւ մի ձիւնն իջաւ, և անդ եսուր ձանապարհի. այլ և վասն կուսանաց անապատին՝ զոր ինչ կարգեցի ձարտնլ ի գիւղն Տաթևու՝ 'ի անօթից եկեղեցւոյ, տուեալ յղեցի. և վասն ոչ ունելոյ խորակ հացի, սակաւ մի ցորեան 'ի վանից պատուիրեցի տալ անձարակաց։ Նա ապա եկեալ 'ի վանաց անցանելով ընդ Տանձաւէր անուն գիւղ,

հասանք 'ի գիւղն Երիցվանիկ. և անտի 'ի Պարկ, ու շուտով եկինք 'ի գիւղն Գիւլմէշէ, որ է Մէլիք Շրվէնի գիւղն. և ապա 'ի Ամրամ անուանեալ տեղին. որ և 'ի դէմ եկաւ մեզ Շահվէքիլի պարոն Յօհանն. և առեալ եկինք ընդ մեզ դժուարին ճանապարհաւ 'ի Մալէ գիւղն. և անտի առեալ տարաւ զմեզ պարոն Յօհանն 'ի գիւղն իւր Կալեր: Եւ յետ Բ. աւուր, կրկին ընդ նոյն ճանապարհաւ դարձանք 'ի Մալէ. և ասացեալ զՃ՛աշու ժամն, սակաւ մի հանգստացեալ՝ եկինք 'ի Կառաւ գիւղն. և ապա եկինք 'ի Մեղրի. յորում կայր փոքրիկ վանք մի պատուական և հաճոյական, և մնացի Գ. օր. և սփոփելով զնոսա, և անցեալ ընդ Կարճևանու գիւղըն՝ և հասանք 'ի յՕրդուար. և եկինք 'ի Գաշտ մեծ գիւղըն յապրիլի Զ. և յապրիլի Է. 'ի տօնի սուրբ կուսին Աւետեաց՝ հրաւիրեցին զմեզ պատարագ մատուցանել. որ և զիջեալ 'ի խնդիրս նոցա կատարեցաք զխորհուրդն սուրբ. և 'ի միւսում օրն եկին Գողթնեաց իշխանքն առաջնորդաւն իւրեանց, և հրաւիրեցին զմեզ 'ի յԱգուլիս. և առեալ ըզմեզ փառօք գնացին յԱգուլիս, և մնացի անդ մինչ 'ի սուրբ Պասեքն և 'ի Նոր կիրակի. զի յանուն սուրբ Թովմայի Առաքելոյն է վանքն՝ հիանալի և զարմանալի տեսողաց. և զի որդեակն իմ՝ Առաջնորդն նոցա Յովհաննէս պարկեշտաբարոյ՝ հեզահոգի և հանճարեղ վարդապետն՝ փաղածանօթ գոլով ինձ 'ի սէր նորա, և վասն ուխտի վանացն զոր լինի 'ի Նոր կիրակէի, և վասն ժողովրդեան աղաչանաց, մնացի անդ այսքան օր: Այլ և 'ի Դ. եկեղեցիս՝ զոր ունին, հրաւիրեցին զիս. որ 'ի կիրակէքն և յայլ պատշաճաւոր օրերն ետուն ինձ պատարագ մատուցանել և օրհնել զնոսա, որպէս և եղև իսկ: Որպէս և 'ի նոյն օրն Կարմիր Կիրակի մատուցեալ իմ զսուրբ պատարագն, ձեռնադրեցի Եպիսկոպոս՝ զԱւագ երէցըն Ագուլեաց զտէր Թովմայն՝ միաբան սուրբ Էջմիածնայ: Եւ ապա ի Նոր Կիրակէի Բ. շաբաթին չուեցի անտի և եկի 'ի Ցղնայ Միւզկինայ վանքն. և անտի 'ի հին Ջուղայ. և 'ի Ջուղայու 'ի Տարաշամպ, անցանելով զԵրասխ գետն՝ Նաւով, անդ՝ ուր խառնի և Ցղմուտ գետն ընդ Երասխայ, և ելի 'ի գեղեցկաշէն և 'ի հռչակաւոր հրաշալի վանքն Նախավկային Ստեփաննոսի. որ էր մայիսի Է. և մնացի 'ի վանքն Թ. օր: Եւ ապա չուեցի և եկի 'ի Երինջակու սուրբ Կա-

րապետ. զի և 'ի Մուղան գնալն՝ նախ հանդիպեալ էի. և յետ երկուց աւուրց գնացի 'ի Գաղ և 'ի Շոռոթ՝ 'ի վանքն Շոռոթու՝ և յԱնապատն. և հրաւիրեցայ 'ի տուն համբուցեալ պարոն Աղաձանին՝ 'ի յորդւոյ իւրմէ նախածանօթ պարոն Աղէկսանդրէ. և յերեկոյն կրկին եկաք 'ի վանքն սուրբ Լուսաւորչայ, և այգն գնացինք 'ի Փառակայ և 'ի վանքն Իջևանեցանք. և անտի 'ի Տիւի գիւղ. յորում կայր աւեր վանքն և ամայի և կուսանաց անապատն՝ Ի. միայն ապաշխարող. որ և նոցա այցելութիւն արարեալ՝ վանից և անապատին, անցեալ գնացի 'ի նոյն օրն 'ի Պուստ մեծ գիւղն. յորում կայր պատուական մեծ եկեղեցին. և յետ ուխտելոյ յեկեղեցին, եկայ 'ի վանքն աղաւնանմանն՝ ադինասարաւ՝ 'ի վայելուչ բարձրանիստ տեղի. զի պարտիզօք ջրարբի, և բարեբեր հողով, և պարզ առողջարար օդով՝ զուարճացաւ սիրտ իմ, մոռանալով զաշխատութիւնս ճանապարհի. այլ և Առաջնորդ նոցա Պետրոս վարդապետ, այր խոհեմ և բարեբարոյ, և միաբանքն սիրով և հնազանդ, և մնացի Բ. օր: Իսկ անտի չուեալ եկի 'ի Գազանջ մեծ գիւղն, անցանելով զգիւղօրայս ոմանս. և մնացի անդ ես Գ. օր. և վասըն աղաչանաց և խնդրոյ նոցունց՝ մատուցի անդ ես զՊատարագն սուրբ. և անցանելով ընդ գիւղն՝ եկի 'ի Նորաշէնիկ. և անտի կրկին 'ի սուրբ Կարապետն Երինջակու. և անտի 'ի Նախիջևան, մնալով Բ. օր: Իսկ ապա իջայ 'ի Աստապատ օրհնեալ գիւղաքաղաքն, և 'ի վանքն Աստապատու՝ գեղեցկաշէն և պատուական. զի վանքերն մի քան զմի պայծառ և գեղեցիկ յօրինեալ՝ հիանալի տեսողաց, աւաղ ժամանակիս նեղութեան և նուաղութեան ազգիս իմոյ Արամեան. զի զալարին աչք իմ՝ 'ի տեսանելն զանմնան վանորայսն և զսուրբ ուխտսն՝ վասն ոչ գոլոյ բաւականթեամ և վիճակ. և Թէպէտ գոն, բայց ամայի և անշէն և անմարդաբնակ. և Թէ գտանին ոմանք աղքատացեալք, և նոքա որք ոչ կարեն օգնել և լրացուցանել զպէտս և զպակասութիւն վանորէիցն. այլ և ինքեանք ես կարօտին դարմանելոյ 'ի վանորէից: Այլ և 'ի յԱստապատ՝ յաւուր Մեծահրաշէի կիրակէին կատարելով իմ զսուրբ խորհուրդն, ձեռնադրեցի Գ. Եպիսկոպոս. Ա.) Սպահանցի Գէորգ վարդապետն, ըստ խնդրոյ Առաջնորդին իւրեանց Աստուածատուր վարդապետին և իշխանացն: Իսկ զմիւսն 'ի վերայ

Բարդուղիմէոսի սուրբ Առաքելոյ վանիցն՝ որ 'ի յԱրմի՝ ըստ խնդրոյ երկրին և վիճակի այնմիկ: Եւ չորրորդն, որ էր Կաֆայեցի Մելքոն վարդապետն՝ միաբան սուրբ Էջմիածնայ: Եւ ապա չուեալ յԱստրապատու, հասայ խաղաղութեամբ 'ի սուրբ Էջմիածին 'ի յունիս ամսոյ ՌՃԻ. յորում եղև մեծ ուրախութիւն համայն միաբանից՝ և բոլոր Արարատեան երկրի, հատուցանելով գոհութիւն Աստուծոյ ամենակարողի և պահպանողի, նախախնամողի և զերծուցանողի յամենայն պատահարաց. և անկեալ առաջի սուրբ Իջման տեղւոյն 'ի մէջ մեծի և ընդհանրական Կաթուղիկէին, մեծաւ ողբով և սրտառուչ հառաչանօք նուիրեցի կրկին զանձն իմ Աստուծոյ՝ աղօթիւք սուրբ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի:

## ԳԼՈՒԽ ԽԹ.

Յաղագս փախելոյ Արարատեան երկրի ղալէնտէրաց, էմլաղաց, աղաներաց, քալանթարաց, մելիքներաց՝ 'ի Թաւրէզ, չհանդուրժելոյ ընդվայրութեան և զրկողութեանն Իբրահիմ խանին. և դարձ ընկերաց վասն հաշտ Նախիջևանեան փէտանին:

Յետ այսորիկ յորժամ եկն Իբրահիմ խանն 'ի Թաւրէզ՝ Աղայաղար անուամբ, և որպէս երկրորդ թագաւորի, քանզի և եղբայր է Վէլինամաթ թագաւորին, և նստաւ 'ի տեղի իւր և խաղաղացաւ. ապա հրաւիրեաց զԵրևանայ ղալէններն մելիքութեանն, այլ և զագաներն, զՔալանթարներն. և զՔէտխուդայք. յորմէ տեսեալ զպատրաստութիւն իւրեանց ճանապարհին և ընծայից՝ անձապարեցին գնալ 'ի Թաւրէզ. հրաւիրեցին և զիս. և վասն զի տկար և աշխատեալ գոլով 'ի ճանապարհէ, ոչ գնացի, այլ 'ի տեղի իմ յղեցի Ագուլեցի Թումայ վարդապետն և ես պատշաճաւոր ընծայիւք՝ և աղերսական գրով, այլ և խնդրելով 'ի Նմանէ զհրամանս պատեհաւորս վասն վանորէից, և վասն շինութեան և նորոգութեան եկեղեցեացն, և վասն երկրին. որ և իսկոյն շնորհեալ

էր և կատարեալ զամենայն խնդիրս իմ, և Բ. թուղթ աւելի քան զոր խնդրեալ էի. Ա. տէրէֆքու-ութեան, որպէս թէ 'ի ֆէրմայ առնելով զԿաթուղիկոսական իշխանութիւն. և երկրորդ, յանձնարարական 'ի վերայ Երևանայ Խանին, կամ փոխանորդի նորին: Այլ և խիլայ մի առաքեաց ինձ. որ էր շուրջառ մի. և վասն ոչ գտանելոյն առժամայն առ վաճառականս ազնիւ ղումաշ մի, զեւր Բ. կապայն՝ որ էր 'ի մի ճոթէ ձևեալ, և հագեալ զայն, Բ. կապայն ետուր քակել, և շուրջառ ձևել և կարել, զայն առաքեաց ինձ: Խըլայեաց և զԹումայ վարդապետն՝ զոր յղեալ էի, տալով նմա և զկապայ մի շալէ, և զպատուական գօտի մի. խիլայեաց և զմիրզէն, որ է իւր դօվլէթքիւթար, այլ և զՆազանթարս և զԱնէլէքս և զայլ պատշաճաւոր մարդիկք՝ զոր զընացեալ էին. և ռամ-ամէր արարեալ՝ մեծաւ ուրախութեամբ արձակեաց յերեսացն. յորում վաղվաղակի յետ սակաւ աւուր եկին յԵրևան շքեղ փառօք և մեծաւ ուրախութեամբ:

## ԳԼՈՒԽ Ծ.

Յաղագս հրաւիրելոյ զնա Իպրահիմ խանին 'ի Թաւրիզ՝ հրամանաւ Թագաւորին՝ եղեօր էր, և զՕնէրգէն քուլանիւրն 'ի Պեաւէն:

Իսկ յամսեանն սեպտեմբերի, յորժամ կայի 'ի Յօհաննավանքն 'ի վերայ շինութեան սուրբ Կարապետին, հրաւէր և հրաման եկն յԻպրահիմ Խանէն, և մեծ ոմն հաւատարիմ իւր չափար, ունելով զթուղթն 'ի ձեռին իւր. և հասեալ յԵրևան ետուր ընթեռնուլ զթուղթն վասն գնացողաց. նոյնպէս և զիմ թուղթն յատուկ վասն իմ գրեալ՝ առաքեաց ինձ. վասն զի յոյժ խօթացեալ կայի վասն չարաչար տանջիս 'ի Յօհաննավանքն 'ի վերայ շինութեան. յորմէ յընթեռնուլն և վերահասու լինելն իմ, գնացի յԵրևան, զի կարացից իմանալ զպատճառն. որ և նոքա կային շուարեալ, մանաւանդ Միրզայ Պաղումն, զի յոյժ երկնչէր, մի՛ գուցէ զան-

փառաւորք գնացեալ լիցեն Իպրահիմ Խանին՝ վասն իւր։ Նու-
սակաւ միջնորդ ձգեալ ինձ, և պատգամս առաքէր Աղէք-
սանդր վարդապետաւ իմով, և խոստանայր բազում բարե-
րարութիւնս առնել սուրբ Էջմիածնայ և ինձ, զի թէ բար-
կացի Իպրահիմ Խանն 'ի վերայ իւրն, և կամեցի մահա-
ցուցանել, թափեցից զնա. այլ և աղերսեաց վասն ղափանին,
որ առեալ տանիմ յԷջմիածին, և մի քանի օր արգելեալ
մինչև շինեսցէ զտօմար Թագաւորական հասից ամենայն
իրաց Երարատեանս երկրի։ Որ և առեալ իմ զղափանին՝ դար-
ձայ յԷջմիածին. քանզի և Իպրահիմ Խանն պատուէր տու-
եալ էր ղափանին, թէ մի՛ գուցէ նեղացուցես զխալիֆային,
կամ վշտացուցանես. զի այր ծեր է. այլ որպէս կամի ինքն,
այնպէս գայցէ. վասնորոյ յետ քանի մի աւուր դարձաւ յԵրևան
վասն ստիպելոյ զնոսա առ 'ի գնալ. որ և կրկին աղաչեցի
զղափանին՝ մինչ կամիր գնալ յԵրևան, զի քանի մի օր համբե-
րեսցէ. և յետ անցանելոյ Ն. Օ. աւուր, տեսեալ իմ ըզ-
պատրաստութիւն ճանապարհին, հրաման գրով՝ գնացի
յԵրևան. և ասացի իւրեանց ղափանին և Միրզին, ահա ես կա-
մաց կամաց գնամ մինչ 'ի Աստապատ, և մնամ ձեզ. և
յուղի անկեալ գնացի. եկին և Գալանթարք ընդ իս՝ Հայոց
և այլ ազգեաց. որում սակաւ սակաւ գնալով հասանք
յԱստապատ. և յետ Գ. օր մնալոյն մեր անդ, չուեցաք
ընդ Նախիջևանայ իշխանաց՝ ընդ պարոն Աստուածատուրին
և պարոն Խարխիմոսին. և գնացինք 'ի ճանապարհ Թաւ-
րիզու. և յորժամ հասանք 'ի Մարանդ գիւղաքաղաքն՝ որ է
Թաւրիզու մերձ ԺԲ. ժամու, հասին և նոքա մեզ, այսինքն
Միրզէն և ղափանին և Խալիֆայքն. որ և զմի օր անդրէն մնա-
ցեալ, և ապա չուեալ գնացինք 'ի Սօֆիան, և անտի 'ի
Թաւրէզ։ Նու յերկրորդ օրն գնացինք յանդիման լինել ղալա-
ալին հանդերձ ընծայիւք մերովք, իւրաքանչիւր ըստ կա-
րի իւրին. որ և մեծաւ սիրով ընկալեալ զմեզ և քաղցրու-
թեամբ յոյժ յոյժ մխիթարեաց. մանաւանդ ձայնեաց զիս
մերձ առ ինքն. և բազում բանս մխիթարականս և յու-
սադրականս ասաց ինձ. այլ և յորժամ ետես զգոյն երե-
սացս որպէս մեռելոյ 'ի բազմօրեայ տենդէն, նեղացաւ 'ի վե-
րայ ղափանին ասելով. վասն է՞ր բերիր զխալիֆան, որովհե-
տև հիւանդ էր. որ և նա պատասխանեաց. Խանում, եթէ

մերձ 'ի մահ լինէի, կամի՛ զի դագաղով բերիցէին զիս վա-
սըն կարօտոյս՝ զոր ունէի առ քեզ. զի 'ի տեսանելն իմ
զքեզ, զՍէլինամալթն 'ի քեզ եւ 'ի դէմս կերպարանացդ
տեսեալ զխնամ եւ զոփանամ, եւ ապա մեռանէի. եւ կրկին
յուսադրեաց եւ յոյժ ուրախացաւ. եւ ես հրաման առանձ-
նանալ 'ի տեղի մի՝ ինձ՝ եւ Քալանթարին՝ եւ Հայոց իշխա-
նաց միայն. յորս էր եւ Եղուլեաց պարոն Ստեփանն. զի
քանի մի օր յառաջ էին գնացեալ 'ի Թարվէզ քան զմեզ՝
առ 'ի տեսանել զ·խա·ն՝ զոր եկեալ էր 'ի Սալինամալթէն.
յորմէ գնացեալ նստաք 'ի տեղի մի՝ 'ի տան միում 'ի մէջ
պարսպին իւրոյ. եւ ընթերցան զ·խա·ն առաջի մեր. եւ մե-
քայմեկնեցին զբանն 'ի լսելիս մեր. յորմէ լուեալ յոյժ ու-
րախացաք. զի վասն Բ. իրաց էր պատուէրն, մինն՝ վասն երկ-
րին յանձնարարութեան, եւ վասն եղբօրն իւրոյ. եւ միւսն՝
յատուկ վասն իմ՝ 'ի վերայ եղբօրն իւրոյ գրեալ պատուէր.
զի քաղցր աչօք հայեսցի, եւ քաղցրութեամբ լինիցի միշտ
ընդ իս. եւ զոր ինչ ասեմ՝ լսիցէ, եւ զխնդիրսն կատարեսցէ։
(Փառք Աստուծոյ ամենակալի. աստանօր հիացումն առնէ
զմիտս իմ, թէ վասնէ՞ր եւ ո՞յր աղագաւ այսչափ խնամք եւ
սէր, եւ հոգաբարձութիւն ընծայի 'ի սիրտ աւն հզօրի եւ աշ-
խարհակալի այնորիկ. գոհանամ զքէն Տէ՛ր՝ վասն անճառելի
մարդասիրութեան քո։) Եւ յետ տեղեկանալոյն մեր զհրա-
ման Թագաւորին՝ եղբօր իւրոյ, կրկին տարան զմեզ 'ի դէմ
իւր. եւ յետ բազում զրուցատրութեան ընդ ամենեսեան,
կրկին ձայնեաց զիս մերձ իւր. եւ բանս բազումս եւ հաճոյս
ծիծաղականս խօսեցաւ ընդ իս եւ ընդ Պէլն իւրոյ՝ որ էր մեր-
ձայ Բաղի անուն։

## ԳԼՈՒԽ ԾԱ.

Յաղագս պատմութեան Նախիջեւանայ մերձէ Բաղուն, որ էր Վ՟է-
ժել և գաւառն Նահանգին Նախիջեւանայ. և զհետ Աստապատցի
ազգեանն՝ զոր հնաւութեամբ գաղէր էառ Նօխարն, և փախուցեալ
ժողովն արարեալ էր 'ի Մուղան. Եւ ո՞րպէս յետ ապա կործա-
նեամբն Աստապատայ. և կրկին հաւաքուցեալ գումարեցին ընդ Գեղա-
մունեաց Երկիրափառը մեռ։

Ցանկի մինչ գնայի 'ի Մուղան, այս Միրզէս գաւառն էր և իշխող Նախիջեւանայ, յոյժ գոռոզ և ամբարիշտ, և ատեցող քրիստոնէից. այլ և յետ գնալոյն մերոյ՝ մի ոմն 'ի սպասաւորաց իւրոց Պաւլիթ անուն՝ ուժեմն քրիստոնէի զդուստր յափշտակեալ ուրացեալ էր և ժողովն արարեալ 'ի Մուղան։ Իսկ զկնի նորին հայրն աղջկան եւս լալով, և Աստապատեցւոց ծերոյ ող եկաւ 'ի Մուղան։ Վասնորոյ գանգատ արարի փառըն Միրզէին. որ և շատ մաքառեցանք առաջի Վէզիրամաթին. մինչև ասացի, թէ՝ դու Նախիջեւանայ երկիրն քանդեցիր, բռնաւ՞րն ծառ չի թողիր, մինչև և քո նոքանդերդ յայտնի հարկին զՄէլիքն Աստապատու, և սպանիր. զքրիստոնէի դուստրն 'ի տանէ իւրմէ 'ի մէջ գիշերի՝ թիրով յափշտակեցին, և ակամայ ուրացուցեալ բանութեամբ՝ ժողովն արարին. և այժմ աւելի քան զՄ. Խոսմն՝ կաշառք կերեալ ես 'ի Նախիջեւանայ երկրէն. զոր եթէ հրաման տայ Թագաւորն հետա քաշեմ զքեզ. զի բռնա՞լ 'ի փողն կամ իւրեանց մեռն պխոի, կամ Թագաւորին. դու փան էր ուսես։ Աժամայն հրամայեաց մեծախելք Վէզիրամաթն և պրկեցին զնա 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր, և սկսան հարկանել զնա այք Օ. 'ի պարանոցէ մինչև ցՋիպ ոտիցն. և յետ բազում հարկանելոյն, գոչեաց՝ բան մինչ ունիմ ասել. և կանգնեցուցեալ ածին առաջի և եսուր խօսել. խօսեցանք և մեք՝ զի ապրեթեր կայրին ընդ իս և իշխանքն Նախիջեւանայ՝ պարոն Աստուածատուրն և Խաչիկիմեան, և Ագուլեաց Յակոբջաննեան. որ և կրկին անգամ պրկեցին 'ի վերայ երեսաց, և հարին ուժգին, մինչև երկիցս և երիցս ուշաթափեցաւ, և կրկին յու-

շարերեաց. և կրկին անգամ գոչեաց՝ ասել ինչ ունիմ՞ խօսեցուցէ՛ք զիս. և կանգնեցուցեալ հրամանաւ մեծին՝ բերին առաջի իւր. և խօսեցուցեալ եգիպտ սուտ ինքն ըստ ինքեան. զի մենք այլ ոչ խօսեցաք այնուհետև. և հրամայեաց դնել 'ի ֆալախայն. և բարձրացուցեալ զգարշապարն հարկանել, և եդեալ 'ի ֆալախայ, հարին և զներբանս ոտից. մինչզի խապառ յուշաթափեցաւ. վասնորոյ զգուշացայ զգանգատելս՝ յորժամ տեսի զչարչարանս առնն այնորիկ. և սկսայ կերպիւ ինչ աղերսել ո՛չ բերանով, այլ ձեռս տարածելով 'ի խոնարհ ունելով զարտօսր 'ի յաչաց, բեկեալ սրտիւ և թեքեալ պարանոցաւ. մինչ զի ետես և իմացաւ՝ զի կամիմ աղաչել վասն ազատութեան առնն այնորիկ 'ի տանջանաց՝ և երկնչիմ. և առժամայն հրամայեաց 'ի բաց կալ հարկանողացն. և վերացուցեալ ետ տանել առաջի իւր. զի այլ Ռ. մնեալ 'ի անթատակին՝ քարշեցին առաջի Մէլինամաթին՝ և հազիւ կանգնեցուցին. որում պատուիրեաց տալ զհամար տնտեսութեան իւրոյ՝ 'ի մեզ, և զոր ինչ առեալ է՝ [illegible] արարեալ տացեն նմա. և կրկին անգամ առաջի Մէլինամաթին յուշաթափեալ, և քարշեալ զնա տարան յարտաքս. և եդին 'ի վերայ իւր Լչխաղաձկի մի [illegible]. և զմեզ կրկին յորդորեաց և յուսադրեաց. եթէ զայն յափշտակեալ աղջիկն առէ՛ք և տուէ՛ք [illegible]ին. յորմէ վաղվաղակի կատարելով զհրամանն, առին աղջիկն 'ի յառնէ իւրմէ. և ես խստագոյն վարեցայ ընդ յափշտակող աղջկանն՝ եթէ՝ գիր ապահարազանի կամիմ, զի տացես, և վկայիւք հաստատիցես, և գրով արձանացուսցես, որ յայսմ հետէ արձակեալ է 'ի քէն աղջիկն, և այլ [illegible] չունենաս ընդ նա, և ոչ ընդ ծնօղս նորա. և թէպէտ բազում պատճառս յօդելով հնարէր զերծանել, զի սիրահարեալ էր 'ի վերայ աղջկանն, այլ ոչ կարաց զերծանել, այլ զոր ինչ գիր խնդրեցի, առժամայն ետուն գրել, և նոր կնիք փորել, զի չունէր 'ի պատրաստի կնիք. և կնքեալ և հաստատեալ բազում վկայիւք՝ ետուր ցիս, և ապա զերծաւ յինէն. և այն էր զարմանք, զի 'ի առաւել տապելոյ և տառապելոյ և լալոյ պղծին՝ եկեալ մեծամեծք ոմանք, մինչ զի և խանք ևս, յոյժ փաղաքշանօք և շողոքորթութեամբ աղերսէին, զի շնորհեցից աղջիկն նմա, և մի՛ բաժանեցից 'ի միմեանց. զի մեծ մեղք և խիղճ կանոնս ասելով պատուաս-

ին. որ և ես անձարացեալ ասացի. ապա ուրեմն տուք դուք զԹուրքի աղջիկ մի 'ի տեղի նորա, զի պսակեցից ընդ քրիստոնեայ երիտասարդի միոյ, և ապա շնորհեմ զայս ձեզ. և ապա անձարացեալ 'ի բաց գնային յինէն։ Որ և կրկին վասըն աղջկանն [illegible] խնդրեցի մնալ 'ի հաւատս իւր, և ամուսնացուցանել ընդ առն քրիստոնէի. և յափշտակողն այն՝ այլ մի իշխեսցէ դատ առնել, և կամ երկրի դատաւորին՝ վասըն հաւատոցն դատել առնել. զի 'ի Նախիջևան առաջի Շէխ-Խալիլին և Պաղունն էին ուրացեալ. որ և ետուր զ[illegible] ըստ խնդրոյ իմոյ. և առեալ 'ի ձեռս հօրն՝ զաղջիկն և զ[illegible]՝ փութացուցի 'ի յԱստապատ. զի ընդ հասանելն ամուսնացուսցէ ընդ առն միում. որ և արար վաղվաղակի և ամուսնացոյց ընդ երիտասարդի մի. որ կան այժմ և փառաւորեն զսքանչելագործն Աստուած։ Իսկ ապա նստեալ ընդ Միրզին՝ յետ փաթթութելոյ զնա 'ի մորթի ոչխարի՝ ջերմաջերմ, զի քաղեսցէ զցաւս իւր, և ողջացեալ նստաւ ընդ մեզ 'ի հաշիւ. որ և ՁԸ. կտոր գիւղ գոլով է Նախիջևանայ երկիրն, ԼԸ. կտոր գիւղի հաշուէն՝ ԽԾ. թուման կացուցա 'ի վերան կաշառք՝ զոր առեալ էր. որ և յետ բազում աղաչանաց՝ ԻԾ. թուման շնորհեցաք. և զԼԾ. թումանն՝ որ է Ի. հազար, ծանուցաք Մէլիքմամթին՝ և ընծայեցաք իւրն. և ոչ էառ յանձն, այլ առժամայն կրկին պատուիրեաց [illegible]ին, որ [illegible] արասցէ մինչև Գ. օրն. և առեալ զերծաւ 'ի սպառնալեաց Մէլիքմամթին. այլ և կորեաց զ[illegible]ութիւն և զ[illegible]ութիւնն Նախիջևանայ 'ի նմանէ, և ընկեց յերեսացն և արտաքսեաց։ Բայց որովհետև բազում ժամանակաց և հեռուն հետէ երախտաւոր գոլով հօրն Միրզին առ Մէլիքմամթն և առ Խպրահիմ խանն, վասնորոյ եղբայր Մէլիքմամթին՝ Խպրահիմ խանն՝ արար զնա Միրզէ, և ունի ընդ ինքն 'ի սպասու. և է այժմ 'ի մօտն 'ի Թաւրէզ. և զոր ինչ պատահի 'ի դուռն Խանին, ամենայն բան սորա ձեռօքն կարէ լինիլ, և առանց սորա ոչինչ լինի։ Վասընորոյ զայս ամենայն գիտելով Խանին, սկսաւ ծիծաղել և հետս հանաք առնել. և զի 'ի հիւանդութենէս դեղնացեալ և Թառամեալ էի, նորա այսպէս Թուէր՝ Թէ ի կասկածանացս կամ յամաչելոյս. վասնորոյ ստէպ այսպէս ասէր. Խօջ[illegible]՝ դու իմ [illegible] ես և ես քո որդին. այն երդում՝ այս երդում, չի

ընի թէ սիրտդ երկիւղ կամ կասկած բերես վասն Միրզէ Բա-
զուն կողմանէ. զի թէ կամիս՝ նոյնքան և ես այժմ չարչարեմ և առաւել ևս. և թէ կամիս՝ սպանանեմ։ Իսկ ես հառաչելով ասացի. ո՛չ այդպէս՝ խան. զի դա և հայր իւր ձեր ծառայն [illegible] են. և թէպէտ 'ի Մուղան բան մի պատահեցաւ, պատճառն իւր [illegible]ներն եղան. զի շատ էր երես տուել, և չէր սանձեր։ Այլ և մենք վասն Ի. իրաց ձեզ ծառայութիւն կանենք. մին վասն հաւատոյ մերոյ, զի յայտնի պաշտեսցուք զհաւատս և զքրիստոնէութիւնս, և միւս՝ զի պահեսցուք անարատ զսիրաթս ընտանեաց մերոց։ Վ՝ան-որոյ գիտ՞ և դա, զի թէ Խան-ին քշէր էինք զ[illegible]ին, 'ի մահ էր գնալոց. այլ և յաւուր չարչարանաց իւրոյ, կրկին ես խնդրով աղերսեցի՝ որ դա ազատեսցաւ. ապա թէ ոչ յերկիւղ կայր մեռանելոյ. բայց այժմ հաշտ ենք քո [illegible]ով և քո կենդանութեամբ. յետ Աստուծոյ՝ 'ի մարդկանէ բնաւ երկիւղ չունիմ, զի ոչ վայելէ ճշմարտութեամբ ձեզ սպասաւորել, և յայլոց երկնչել. այլ պարտ է այլոց երկնչել յմենէն. և յոյժ ուրախացաւ և մեծաւ սիրով արձակեաց զմեզ գնալ յօթևանըս մեր։

## ԳԼՈՒԽ ԾԲ.

*Յաղագս պատուելոյ զմեզ խորհրդոյ խանին 'ի անդամն իւր՝ աւատօք և երգով, և մի օր ծանր խոյլն հոգւոյ։*

Եւ յետ երկուց աւուրց կրկին հրաւիրեաց զմեզ 'ի պատիւ. և զի սովորութիւն է Պարսից որ զպատուեալ մարդն կեցուցեր 'ի ճաշ հրաւիրեն, և ինքեանք ևս ելլեր ասեն, և երեկոյն 'ի ընթիրս. և այսպէս 'ի ճաշ և յընթիրս պատուելով զմեզ, և ընդ իւր նստուցանելով 'ի սեղանն, ուրախացոյց. Էին և յընթրիս 'ի միասին՝ Երևանայ Միրզէ Բէգումն, Քալանթար Միլիքջանն, Նախիջևանայ .. ներն, որք են պարոն Աստուածատուրն, Խաչիխիմոն և պարոն Ստեփանն. և 'ի գիշերի Ի. ժամին արձակեալ գնացինք 'ի մեստաղս մեր մեծաւ

ուրախութեամբ։ Իսկ ՚ի միւսում օրն կրկին հրաւիրեաց և խնջոյեաց զմեզ, ինձ վերարկու մի [illegible]՝ այլանդակ գրապանու, զոր ոմանք ասացին և հաւատացին՝ եթէ Շահն միայն կամ Վալին կարէ զայդ ձեւդ ունել. և Միրզին, և Քալանթարին, և երից իշխանաց՝ [illegible] կապայ, [illegible] գօտի, և [illegible] մի՝ որ ՚ի տան Միրզին ազուցին. և ապա գնացինք ՚ի մօտն ՚ի [illegible]. որ կրկին բանս բազում խօսեցաւ ընդ մեզ, և պատուէրս՝ յուսադրութիւնս՝ և կրկին ընդ իս սէր և հանաք, զոր ընդ գրով ոչ կարեմ արկանել. և ապա ասացի [illegible], ինձ հարկաւոր քանի մի [illegible] պիտի շնորհես, որպէս և հարազատն քո Վալինամաթն. որ և իսկոյն պատուէր տուեալ Միրզին՝ թէ [illegible] զոր ինչ [illegible] ունի, ըստ խնդրոյ և հաճոյից իւրոց և փութով կատարեա՝ զի երթիցեն. որ և հրաւիրեաց զիս Միրզէն ՚ի պատիւ. և կատարեալ զհայցուածս նորա՝ գնացինք ՚ի ճաշ և յընթրիս. և խօսք և զրոյց եղև ՚ի միջի մերում վասն անցիցն Մուղանու. վասնորոյ ինքն սկսաւ աղաչել և հայցել՝ թէ մեղքն իմ էր, որ ես զքեզ ոչ կարացի ճանաչել. և մանաւանդ իմ [illegible]ներն զիմ տունն աւերեցին. որ և նոր եկեալ որդին Իժ.անամեայ ՚ի Խորասանու՝ մերձ իւր նստեալ էր, եդիր զձեռն ՚ի վերայ գլխոյն՝ և մեծաւ երդմամբ ՚ի վերայ միամօրի իւրոյ, թէ՝ ամենևին իմ սիրտն և միտքս վասն քո ատելութիւն և նախանձ ոչ գոյ, և խնդրեմ որ դու ես ՚ի մտացդ հանես, և վասն իմ աղօթս անես Իբրահիմ խանի մօտն. և թէ Վէլինամաթին գիր գրես, և [illegible]ութիւն բերես, և բարեխօսես. և այսպէս հաց կերեալ հաշտեցաք. և զվերջն յԱստուած յանձին. զի թէ թշնամին աղաչիցէ զքեզ, մի՝ հաւատար նմա. զի Է. չարիք գոն ՚ի սիրտս նորա՝ ասէ ՚ի Սողոմոնէ։ Եւ յետ այնորիկ Ժ.Ի. [illegible]՝ [illegible] ետու գրել, զամանս Վելինամաթի տուած [illegible]ի ոճովն, և զոր ինչ խնդրէք վասն վանորէից և կարգաւորաց, և վասն երկրի և [illegible]։ Իսկ մնացեալ աւուրս Ժ.Զ. ՚ի Թարվեզ, և ապա [illegible] արարեալ զմեզ արձակեաց. որ և ընդ իս եկողքն ստիպով գնացին, և ես մնացի Գ. Դ. օր աւելի, և ապա չուեցի և ես ՚ի Թարվեզու։

## ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս դառնալոյն իմոյ ի Թաւրիզոյ առ սարքն ժամն, և դժուարելոյն զ՚եղ Նախիջևանայ վէքէլն՝ որ է նայիպն, հետոյ լինել նմա:

Իսկ յորժամ չուեցի ՚ի Թաւրիզու, և հասայ առ եզրն և ՚ի անցս Երասխայ, որ և նայիպն Նախիջևանայ Աղայ Հասանն Խորասանցի, այր բարբարոս, խելօք, խոնարհ և բարեմիտ, գիր սիրոյ և մարդ եդեալ ՚ի ջէլասն, որ հրաւիրեաց զիս գնալ ՚ի Նախիջևան՝ հիւր լինել նմա. յորմէ պատասխանեցի թէ, այր ծեր և հիւանդ եմ, գնամ ՚ի յԱստապատու Վանքն, և հանգչիմ քանի մի օր. և ապա ի գնալն իմ յԵրևան, հանդիպեմ ՚ի Նախիջևան, և մնամ առ նմա գիշեր մի հիւր, և անցեալ գնամ, որպէս և եղև իսկ. զի անցեալ գնացի ՚ի Հին-Ջուղայ, և մնացի անդ գիշեր մի. և առաւօտն գնացի ՚ի Վանքն Աստապատու. մնալով և ՚ի Վանքն ԺԲ. օր, և ապա ընդ պարոն Աստուածատուրին գնացինք ՚ի Նախիջևան, որ է մերձ Աստապատու՝ ժամու կիսու ճանապարհաւ. որ էր նոյեմբերի Ի. և օրն շաբաթ. յորմէ դէմ ելեալ Նախիջևանայ նայիպն՝ որ է Աղայ Հասանն՝ որ հրաւիրեաց զմեզ հիւր, այլ և միւս միրզէքն, և ելեղուլի Նախիջևանայ Խանն, և այլ խօջայքն, և երևելիք աւելի քան ՃԾ. ձիաւոր, և առեալ զմեզ մտին ընդ մեզ ՚ի քաղաքն Նախիջևան: Իսկ յորժամ հասանք ՚ի մէջ քաղաքին՝ ՚ի թէատրոնանման տեղի մի, որոյ և Գ. կողմն էին կրպակք՝ և անթիւ մարդիկք հաւաքեալք, հրաւիրեաց զմեզ Խանն զընալ իւր յապարանսն ՚ի պատիւ. իսկ Աղայ Հասանն ոչ տայր թոյլ. և ՚ի շատ մաքառելն, իջան ՚ի ձիոցն, Խանն քաշէր իւր կողմն՝ և Միրզէն քաշէր իւր կողմն. և յորժամ տեսի՝ թէ ածի կռիւն՝ և կամին զմեանս յանդիմանել. զի մինն Խան է և միւսն թագաւորի վէքիլ՝ կարգեալ ՚ի վերայ արքունական դարութեան և վէքալէթին: Վասնորոյ վաղվաղակի իջայ ՚ի ձիոյն, և մտեալ երկոցունց մէջ՝ աղաչէի, և համբուրելով զմօրուս նոցա՝ հազիւ կարացի դադարեցուցանել ՚ի վիճմանց. և բանս եդի ընդ Աղայ Հասանին, եթէ դուք եղբարք էք, և ոչ է պարտ

վասն իմ զիրերաց խոնջն ձգել, ես քեզ եմ հիւր՝ թո՛ղ նորա կամքն լինի. գնամք 'ի տուն նորա՝ ճաշ առնեմք, և ապա 'ի քո տօնախմբութեանդ, եթէ կամիս, ամիս մի կենամ. և այսպէս համոզեցի 'ի խաղաղութիւն: Եւ գնացինք նախ՝ ուր Խանն հրաւիրեաց. ևս ապա եկինք 'ի տուն Նայիբին, և մնացինք մինչև Գ. շաբթի Լ. մարտ՝ եթէ վարդապետք՝ եթէ նօքար, և Լ.Բ. ձի և ջորի. և ապա յաւուր երեքշաբթի կրկին մեծաւ փառօք և թագաւորական պատրաստութեամբ՝ խաչալամներով յողղոյ եղին զմեզ. որ եկեալ խաղաղութեամբ Շարուրով 'ի Արտաշատ և 'ի Վանքն Վիրապ, և անտի 'ի Նորագաւիթ, և ի շաբաթ՝ որ է հոկտեմբերի ԻԱ. հասանք 'ի սուրբ գահն Էջմիածին. որ և ընդ առաջ եկեալ էին ամենայն միաբանքն և գիւղականքն մեծ պայծառութեամբ. էին անդ 'ի գեղն և ի Օսմանցւոց բազումք, որք տեսեալ զպայծառութիւն հաւատոյս և արարողութեանց մերոց՝ հիացեալ ապշեալ զարմանային. որ և մտեալ մեր 'ի սուրբ տաճարն մեծի ընդհանրական Կաթողիկէի և աշխարհալոյծ քաւարանի, անկեալ առաջի սրբոյ Էջմիածնտեղւոյն, զանչափական օրհնութիւնս և զփառաբանութիւնս և զերկրպագութիւնս մատուցանելով, ուրախութեամբ և արտասուօք ծանուցաք բոլոր միաբանից՝ և պատրաստ եղելոց, յորմէ խապառ լցեալ էր եկեղեցին մարդկամբք՝ 'ի մերազգեաց և յայլազգեաց. զպատճառ խնդրելոյն զմեզ՝ և մեր գնալոյն, զպատիւն, և զյուսադրութիւնն՝ զոր արար մեզ. յորմէ լուեալ հիացեալ զարմանային և փառս տային աստուծոյ. և ապա աղօթս արարեալ և օրհնութիւնս տուեալ արձակեցաք 'ի խաղաղութիւն: Այլ և պատուական շուրջառ մի խիլայ ետուր ինձ Նախիջևանայ Աղայ Հասանն, որ էր ասպնջական իմ. որ լիցի օրհնեալ, և յաստուծոյ վարձատրեալ. զի հիացումն ունի միտս իմ վասն քաղցրութեանն՝ և խոնարհութեանն՝ և հնազանդութեանն առնս այսորիկ. և ո՛չ եթէ կեղծաւոր դիմօք, այլ ճշմարտութեամբ էր սէրն. զի և զկեղծաւորսն՝ զոր կան բազումք, աստուծով ճանաչեմք. բայց այրս այս մեծահաւատ՝ և համարձակիմ ասել ես, զսա ծածուկ աստուածապաշտ և հաւատացեալ՝ հիացոյց զիս և զամենեսեան՝ խոնարհութեամբն և հնազանդութեամբն և քաղցրութեամբն իւրով. զոր Տէր աստուած հատուսցէ զվարձս վաստակոց և աշխատանաց

իւրոց. Նմանապէս և ամենայն բարեկամաց սուրբ Աթոռոյս· Նախ Մ՝ էլչինամաթին, և եղբօրն Խպրահիմ խանին, և համայն խաներաց, և Կոմնակալաց, և Կուսակալաց, և Սուլթաններաց, և Միրզաց, և մեծամեծաց՝ առ հասարակ ամենեցուն, որք ցուցին 'ի վերայ իմ, և 'ի վերայ միաբանից, և Եղբօր իմոյ, մանաւանդ 'ի վերայ սուրբ Աթոռոյս՝ խնամք և սէր և գութ ունին, տացէ տէր աստուած այնպիսեաց՝ կեանս երկարս և յաջողս, և վարձս բարեաց աստ և 'ի հանդերձելումն. Ամէն։

Աւարտ պատմութեանս խնդրի 'ի ընթերցողաց սիրելի որդւոց իմոց, զի վասն երկարաբանութեան և պարզաբան լինելոյն անմեղադրելի ունել զմեզ. զի որքան իմ կարն էր՝ ջանացի, որ կարճ՝ համառօտ և պարզ լիցի՝ առ 'ի հասկանալ ամենայն ումեք. զի եթէ ամենայն անցս մի ըստ միոջէ գրեալ լինէի, ոչ քարտէզ և ոչ մելան բաւական լինէր, այլ այսքան գրեցաւ, զի ցանկացողք առ 'ի յիմանալ զանցս և զօրպիսութիւնս սուրբ Աթոռոյս և զիմ, ահա այս ճշմարիտ պատմութենէս վերահասու լիցի և զովացի. և եթէ ըստ համոյից ձերոց իցէ, Տեառն է շնորհ. ապա թէ ոչ՝ ներեցէ՛ք իմում դանդաղութեանս, զի 'ի մէջ տառապանաց և 'ի մէջ զբաղմանց, վշտաց, և չարչարանաց, և նեղութեանց գրեցի, հիւանդ՝ և խօթացեալ՝ անզօր անձամբ. ողջ լերո՛ւք։

# ԿՈՆԴԱԿ

## ԱԲՐԱՀԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

### ԿՐԵՏԱՑԻՈՅ

---

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ Տէր Աբրահամ կաթողիկոս ամենայն Հայոց և Պատրիարք Վաղարշապատու լուսակիր և հրեշտակաբնակ, սրբէապար և քրոբէագումար, ընդհանրածաւալ և աշխնաարաս, գերահռչակ և գերապայծառ, երկնահանգէտ մեծի և անյաղթ Աթոռոյս Սուրբ Էջմիածնի. յորմէ զմիրաղեական սէրն և զանցուկ կարօտն, զեղձն և զհեղձամղձուկ փափագն կուսածնունդ ողջունիւ և Աստուածեան Քրիստոսաէջ Սուրբ Գահիս շնորհիւ և պարգևօք ընծայեալ նուիրեմ սիրելեացդ իմոց և հոգւոյս հատորացդ, Մահտեսի Յարութիւնին, Մահտեսի Սեղբոսին, Մահտեսի Աստուածատուրին և Մահտեսի Պաղտասարին, և ընդ ձեզ եղելոցն ամենեցուն՝ միշտ խնդալ 'ի Տէր յաւէտ բերկրանօք 'ի փառս Աստուծոյ և Սուրբ Եկեղեցւոյս:

Արդ՝ զեկ լեցի սիրելութեան ձերում, ո՛ ցանկալիք հոգւոյս. զի առաջի անձս մինչև ցհոկտեմբերի և նոյեմբերի ամիսն կրկին և երեքկին՝ թուի թէ այլ աւելի՝ գրեալ ծանուցի համառօտապէս՝ որդւոյս իմոյ Կոստանդնուպօլսոյ Պատրիարքին. և զի յետին գիրն և պատմութեան տետրակն ընդ Արմաշցի տէր Նիկողայոս Քահանայիւն յղեցի, և Աստուծով հաւատամ՝ թէ հասեալ իցէ: Իսկ 'ի դեկտեմբերի չորսն չուեցի 'ի սուրբ Գահէս և եկի մինչ յԱգուլիս. և յետ Գ. Գ. աւուր՝ եկն Երևանայ Խանն ընդ էշիք-աղասեացն և ընդ քեթխուդայսն, և աղաներն Հայոց և Տաճկաց, այլ և քալանթար և մելիք ընդ նմա. և 'ի յԱգուլեաց 'ի միասին ել-

եալ գնացաք. և 'ի յունվարի Գ.ն հազիւ հասաք իբր չէ-կացեալ դաշտն Մուղանու. անդ՝ ուր խառնի Երասխն ընդ Քիւռ*) գետոյն՝ մերձ 'ի Շամախի, որ է աւուր միոյ ճանապարհ. զԾնունդն և զՋրօրհնէքն անդ արարաք 'ի հիւղս եղեգնեայս՝ յեզըն Երասխայ՝ առանց եկեղեցւոյ և պատարագի, խեղճ և ողորմելի, զրկեալք յամենայն հոգևոր ուրախութեանց:

Իսկ մեծազօր Խանն 'ի Թիֆլիզու գնացեալ էր 'ի լեռնակողմն 'ի վերայ Լեկզոյ, և յաղթութեամբ եկեալ եհաս ի յունվարի ԺԵ. 'ի բանակետղն. և գնացաք առաջի իւր 'ի միւսում օրն և շնորհաւորելով զգալուստն՝ մատուցաք զընծայս մեր՝ ձիանք և ջորիք՝ և զոր ինչ առձեռն պատրաստի ունէաք. և յետ սփոփելոյ և մխիթարելոյ զմեզ, այսինքն՝ "բարո՞վ եկիք", և թէ՝ "քանի՞ օրն եկիք", և թէ՝ "քանի՞ օր է՝ որ աստ էք" աւելոյն յետ, պատուիրեաց Տ[illegible]ն՝ որ է իւր հաւատարիմն և հարազատն, եթէ՝ [illegible] լաւ տեղ տուէք՝ որ նստի, և ինձ ասել, թէ՝ [illegible] ես [illegible]. իբրու թէ՝ ընդարձակ ես, գնա 'ի քո վրանն և հանգստացիր, անհոգ լեր յամենայն ըղ-բաղմանց: Եւ ապա սկսան յամենայն կողմանց գալ օր ըստ օրէ՝ 'ի խորին Խորասանայ, 'ի Հերաթու, 'ի Մազանդարանու, 'ի 'ի Մաշատու և 'ի կողմանց Քանանացւոց, 'ի Գաքուայ, յԱրտաւիլու, յԱտրպատականու, ի Վրաստանու և ի Թավրիզու և յայլոց տեղեաց գումարեալ ժողովրդեան, կուտեցան և եկեղեցական մինչև ց[illegible]ն իւրեանց. և սահմանեաց մեծախոհըք Խանն, որ ամենայն օր կարգաւ 'ի [illegible] գնան առաջի իւր՝ երրորդ ժամու. և մերձ 'ի բնակութիւնն իւր սահմանեցին եղեգնեայ հովանոցս երկարագոյն. Ժ.ն գիրկ՝ Ժ.Ե. գիրկ և Ի. գիրկ երկայնութիւնն, և երկու գրկով լայն. որ իւրաքանչիւր քաղաքէ 'ի մէկ մէկ հովանոցս նստէին քաղաքակցօք

(*) Գուռ կամ Կուռ

հանդերձ: Իսկ ամենեքեան փող քաջ գնային ի սահմանադրեալ տեղն. և երրորդ ժամուն եկանէր մեծազօր Խանն. և [illegible] սպարեալ, ապա ընթանային ամենեքեան կարգ կարգ և անցանէին առաջի իւր խոնարհմամբ գլխոյ, անմռունչ բարև տուեալ անցանէին. և զի էր նստած տեղն Խանին [illegible] շինեալ փայտաշէն՝ և տանիսն տախտակամած, իսկ շրջապատն եղեգնեայ, և իւրուհետոյն տեղն եղեգնեայ պարիսպն և բնակութիւնքն. էին և վրանք բազումք. նոյնպէս և մերս բնակութիւն ի բաշեայ բանակէն իբր կէս ժամու հեռի ճանապարհ՝ առելի քան զհինգ հարիւր խուղս շինեալ. զի կամէին՝ եթէ զենեալ խանձրայ զոմանս անդ իջուցանէին. այլ վասն հեռու գոլոյն ի [illegible] է Խանին՝ ոչ ետուն թոյլ, այլ ի շրջակայս Խանին ապաստանեցուցին: Իսկ Սուլտանու դաշտն՝ է լայն և արձակ դաշտ մի հիանալի, որ երեսուն օրն լաւ ձիաւոր մի կարէ շրջագայել զբոլորն, տափարակ, որ եթէ խնձոր մի գլեցէ ոք ի գետնի, կարելի է ի հեռաւոր տեղաց տեսանել. և ամենևին քար և նշմարանք քարի ոչ երևին ի յայս անհուն դաշտիս. ի դեկտեմբերի և յունվարի իբրև զգարնան եղանակ կանանչախիտ և խոտաւէտ՝ խոտ զանէր ի դաշտին, և զաւրինք ծնեալք էին և բազումք մեծացեալք, որպէս են առ ձեզ ի [illegible]ին. բայց ցուրտն եւ սաստիկ եղև և յոյժ վշտացաք ի ցրտոյն. և թէ ոչ էր լեալ Նորաւեայ եղերաց փայտքն, իսպառ խօթացեալ և մահացեալ լինէաք. և յաւէտ ի օրն հարին մեծ վրան մի եղեգնեայ պարսպին մէջն, կից Խանի ամարաթին, որ էր հօգացեալ և բերեալ ի Գ_աղլինու. որոյ էր երկայնութիւնն հարիւր և տասն [illegible], և լայնութիւնն յիսուն հոյէկ, և բարձրութիւնն տասն և ութն հաւէկի՝ [illegible]. և ի մէջն երկոտասան սիւնք էին. և ի գլուխ սեանցն արծաթեայ կողակ՝ որպէս միջակ ձմերուկ. և ի գլուխ կողակացն՝ այսմ ⚜ նշանով. և ի յարտաքոյ բոլոր խորագոյն գունով. և շրջապատն երկտակ, միոյն համան կտաւ,

և մի տալին ծաղկաձոր դաշտաւ չոլա, և մէջն Կիլանայ ջամէջեղ դաշ-տաղ. որ և Հրաման եաուր ամենեցուն գնալ և ծածուկ առնել. և գնացեալ 'ի մէջ ջրոյ էին զգուշութեամբ. և իւրեանց [illegible] 'ի օրն [illegible] ասար 'ի մէջ չարքին՝ մեծամեծացն իւրոց. որ և էր 'ի մէջ բանակի անդ Օսմանցւոց Աչէմ-Ալի Փաշային, որ էր դեսպան Պարսկաստանցւոց, նա ևս ընդունայն էին, որ է Մօսուլ*) դեսպանն 'ի վրանի անդ. Հրաւիրեցին և զնա 'ի մէջի իւրեանց. և խօսեցան՝ զոր ինչ խորհեցան. և ապա զվարդէջուրն բաժա-նեցին, և ապա քաղցրեղէնք. [illegible] ոսկեղէն՝ ածախաւ ար-բուցին. և երկու ոսկեայ բուրվառ և երկու արծաթեայ միշտ 'ի շրջագայելն 'ի բուրումն անուշահոտութեան. և զուսանք ազ-գի ազգի, և պարաւորք 'ի մէջի, որք էին մանկունք պարկեշտա-գոյնք, խաղալով ժամ մի. և ապա ելեալ գնացաք յիւրաքան-չիւր օթևանս: Իսկ 'ի միւսում օրն գնացաք կրկին 'ի [illegible] ըստ սովորութեան մերում. և ոչ տեսան զմեզ առաջի իւր, այլ պատասխանեցին, թէ՝ 'ի դաշտի յատուկ յատուկ քաղաքա-կցուք նստարուք, զի ունիմք ձեզ բան ինչ պատուիրելոյ. և յետ սակաւուց եկին առ մեզ եօթն մեծամեծք խանին, և ձայնեցին զ.քա-ղաքացիքն, մէն մի քաղաքի եկողքն կարգաւ, և ասացին. եթէ Հրաման է մեծի խանին, որ դուք գնացեալ 'ի մէջի ձերում խորհեսջիք և դատեսջիք զմին, որ կարիցէ զձեզ և զերկիրն ձեր կառավարել. զի ես ծերացեալ եմ և ձանձրացեալ, և այլ ոչ կա-րեմ առնել 'ի յաշխատութիւնս պատերազմաց, այլ գնացեալ նստայց 'ի գեղեակն իմ և աղօթեցից վասն իմ և վասն ձեր. աՀա ձեզ երեք ժամ պայման, խորհեցարուք և իններորդ ժա-մու եկեալ պատասխանեցէք. և այնպէս արձակեալ գնացաք 'ի բնակութիւնս մեր. և իններորդ ժամու և յայլ առաջ վասն երկիւղի մերում՝ փութով հասաք 'ի անդէն և կրկին նստաք

(*) Մօսուլ կամ Մօսուֆիլ

Ծրախանա Երախանս, մինչ եկին այն առաջին եօթն արքն և հարցուցին կարգաւ՝ քաղաք քաղաք, թէ զո՞վ գտիք կամ զո՞վ ընտրեցիք։ Իսկ ամենեքեան պատասխանեցին, եթէ մեք քան զԽանն լաւագոյն և բախտաւոր և շնորհաւոր ոչ ոք գտաք և ոչ ևս կարեմք գտանել. և թէ՝ նա մեզանէ զձեռն յետ քաշէ, մեք զմեր ձեռն 'ի յումից և 'ի ստորոտէ նորին ոչ քարշեմք, այլ մեզ նա է տէր, և տէրութիւն պարտի առնել. որովհետև զմեզ 'ի ձեռաց թշնամեաց ազատեաց, և զերկիրս սրբեաց 'ի մնասա-կարաց և զմեզ ընտանեօք մերովք թափեաց 'ի ձեռաց գերչաց. անհնարին է՝ եթէ անցանեմք 'ի նմանէ. այլ թէ կամի զմեզ և զերկիրս 'ի բաց ձգել և գնալ, կամ զմեզ 'ի հետ իւր տարցէ 'ի Խորասան, և կամ խաղաղ կառօրեսցէ. և արձակեալ գնացաք տեղիս մեր։ Իսկ յերկրորդում օրն կրկին գնացաք 'ի նոյն տե-ղի խորհրդոյ. և եկին կրկին այն եօթն արքն և ըստ յառաջնոյն օրինակի տարան կարգաւ զքաղաքացիքն առաջի իւրեանց, և ասացին, թէ՝ հրաման է մեծի Խանի. որովհետև չի թողէք զիս 'ի կամս իմ, և կամեցայք զիս՝ տիրել ձեզ, զայս երիս իրս խնդ-րեմ 'ի ձէնջ։ Նախ՝ բառնալ զնզովքն, զոր տայք Օմարայ և Օսմանին, և նզովիւք փակէք և արձանագրով հաստատէք, որ ամենեւին զայն նզովքն չի յիշէք, և յայլում ժամանակի չի հաստատէք կրկին. զի պատճառ խռովութեան մերոյ՝ երկուց ազգացս՝ Օսմանցւոց և Պարսից՝ այս նզովք կարգալն է. և ոչ է գրեալ 'ի Ղուրանն մեր և ոչ է հրաման մարգարէին մերոյ, և ոչ օրէնք 'ի միջի մերում, այլ ինքնագլուխ 'ի յարանց ոմանց անփորձից լրթոց, որ 'ի պատճառէս յայսմանէ այսքան արեան հեղմունք եղեն և գերութիւնք և երկրի աւերութիւնք. և երկ-րորդ՝ որ՝ ուխտեցէք և արձանագրով հաւատարմացուցէք, որ Շահին կամ որդւոյն՝ եթէ յայտնեսցին, ծածուկ չասէք և չի պահէք 'ի միջի ձերում. և եթէ գտանիք 'ի յանցանս յայն, 'ի սուր մատնեսջիք, և ինչքն և ընտանիքն ձեր յաւարի լիցին. և

երրորդ՝ զի ընդ իս և յետ իմոյ անցման՝ ընդ որդւոցս և ընդ օծելիս իմոյ՝ միաբանութեամբ և հնազանդութեամբ վարեսջիք և մի՛ ապստամբեսջիք. և թէ՛ ստիցէք ուխտին ձերոյ, մահու արժանի լիջիք. և երդմամբ ես պարտիք հաստատել: Եւ ամենեքեան խոստացան 'ի մի բերան և յանձն առին կատարել զհրամայեալսն. և արձակեալ գնացաք 'ի բնակութիւնս մեր. Եւ ապա այնուհետև գրեցին զդաշնադրութեան գիրն, և ստորագրեցին կրկին կրկին, մինչ որ հաճոյացաւ քանի մեծազօր Խանին. և սկսան կոչել ամենայն եկելոց մեծամեծքն իւրաքանչիւր քաղաքաց՝ ոմանց կիսուն, ոմանց երեսուն, ոմանց քսան՝ և տասն, և ոմանց աւելի և պակաս, և կատարեցին. և առեալ զպայմանագիրն ամփոփեցին առ ինքեանս. և ահա կատարեցաւ ամենայն և եղև լուծն ամենայնի. և մինչև ցայսօր օրն՝ ինքնակալելոց է, և լինելոց է յաւիտեան. զի վասն [illegible] բն և կնքոյն՝ որ չէր պատրաստածեռն, ձիան և սպասուն աւարտման. և զկոյց գոյ՝ որ ոչ կամի զի անուանեսցեն զնա Հայաստան. այլ զՀայաստան անուանեն ամենեքին եբարձ և ոչ ոք կարէ յիշել և ասել Հայաստան, ոչ սորա և ոչ յառաջնոյն. այլ զանունն իւր պատուիրեալ է ասել [illegible]. և 'ի [illegible] դրամին՝ մի կողմն [illegible] նման [illegible] ոսկւոյն և 'ի միջի Կասր անուն, և 'ի միւս երեսին՝ քաղաքն՝ ուր կոփի դրամն. և թուի թէ՝ այսօր կամ վաղիւ զ[illegible] փաշայն՝ որ է Կէնճ-Ալի փաշայն՝ ընդ Արա-ուլ-Բաղի Խանին պիտի ուղարկեն այդր մօտ Թագաւորին. որոյ Տէր Աստուած զերջակութիւն բանից և զվերջն 'ի բարին յանկ հանիցէ. ամէն: Եւ ապա սկսաւ [illegible] զեկեալ Խաներն՝ ելեալ 'ի Խորասանայ Խանէն կարգաւ մինչև ցԱտրպատականն. և ապա Երևանայ նահանգին. որ և թէպէտ յառաջ քան զամիս մի յղեալ էր ինձ երկուս Էմիփորմս և զմի Կոնքեա, որ թուի թէ 'ի Վրաստանու ունէին զայն. և մի Էմիփորմն էր յոյժ պատուական և պաճիր կիսուն [illegible] և այլ աւելի. և զմիւսն՝ զերրորդ

ժամ նորին . և կրկին Տեառնընդառաջի օրն, յորժամ կարգն հասաւ Երևանցւոց, 'ի ձեռն պաշտօնէից իւրոց առաքեաց և ինձ խալաթ, որ էր սամուրի սևագոյն, բայց պատուական և շալ-լու., և ծանր կապայ մի՝ և ծանր Չերքեզի մի. որ և բերին հասուցին ինձ 'ի բնակարանն իմ. և այսպէս խիլայեցան բազումք, որպէս թուի ինձ՝ աւելի քան զհազար խալաթ բաժանեցին. որում ազանէին խիլայեալքն զոնէ երեք օր, և զնային առաջի իւր 'ի սէլամն. որ և խանդաղատեցաւ 'ի վերայ իմ և ասաց մեծամեծացն իւրոց, եթէ՝ տարակոյս էր ինձ, թէ զի՞րդ կարէ Խալիֆայն 'ի գլուխն փաթաթել զճանփէշն, զի նա զսէն իւր 'ի բաց ոչ դնէ. և յորժամ ետես 'ի վերայ Վեզարին փաթաթեալ, յոյժ բերկրեցաւ, և ասացեր է թէ՝ զի՞րդ վայելուչ երևի, և սև գոյով պատշաճաւորեցաւ 'ի գլխոյն. և յետ երից աւուրց նաւրուզար արար զմեզ և զամենեսին՝ զնալ 'իւրաքանչիւր տեղիս. և ցրուեցան ամենեքեան աքանչանալով հիացմամբ մեծաւ. զոր Տէր Աստուած զաւարտ բանին 'ի բարին կատարեսցէ. ամէն։

Գրեցաւ իթուին ՌՃՁԵ ։ փետրվարի քսանն 'ի Մուղան. և աւհալունոյս քսան և չորսին բարձրանալոց է 'ի գահն. զի կատարեցաւ կնիքն և տիպն դրամին. որոյ զօրինակն եդի 'ի մէջ գրին, զի մի՛ տարակոյս մնասցէ. բաւ է։

ՄԻՒՔՔԷԻՆՆ Է։

(Ի ՎԵՐԱՅ ԴՐՈՇՄԻՆ—ԴՐԱՄՈՅ—)

Սիքքէի պէր զար քեարթ, Նա՛մ սալթ. Նաթ, րատէր (րահտէր) ճիհան
(Դրոշմեցաւ էր զանուն Տէրութեանն, որ է տէրընդ աշխարհին,)
Շահի տին Նատիր–ղուլի, Ըսկենտէրի Սահիպ Ղրան.
(Նատէր-Ղուլի Շահ հաստատ, Աղեքսանդրբաժան, տէր Ղրանէ*)

(*) Ղրան է անուն դրամոյ ինչ Պարսից, որ աժէ մի Ղրանն իւր 30 կոպէկ կամ 4 ½ Դահեկան և կամ 1 Ֆրանք։

## ՄՕՀՐՆ Է:

### (Ի ՎԵՐԱՅ ԿՆՔՈՅՆ)

Նիկի՛նի տէվլէթի տին, րէֆտէ պուտ չունազճա՛, պէնամի Նատի՛րի Իրան
(Մատանին կնքոյ տէրութեան հաւատոյ՝ հեռագնացեալ էր ի տեղւոյն իւրմէ՝
ղա՛րարտատ Խուտա՛:
յանուն Իրանեան Նատէրի (Ն) Դաստատեցին Աստուծոյ:)

## ՅԱԹԻՀԼԱՄԷ:

### (Ի ՎԵՐԱՅ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՆ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ)

Փատիշա՛հի մամալիքի Իրա՛ն, զիլլի սիւպհա՛ն՝ Նատիրի տէվրան փաթիհ
(Արքային աշխարհաց Իրանի. ստուերն Աստուածայնոյն՝ Նատէր՝ յաղթելութեան դարուն
ժամանակաց՝ յաղթող:)

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# Ա Ն Ի  Ք Ա Ղ Ա Ք Ի Ն

ԶՈՐ ԳՐԵԱՑ Է

ԱԲՐԱՀԱՄՈՒ ՌԱԲՈՒՆԱՊԵՏԻ ԵՒ ԲԱՆԻ ՍՊԱՍԱՒՈՐԻ ԵՒ ԱՌԱՋ-ՆՈՐԴԻՆ ԹՐԱԿԻՈՅ.

---

Անի քաղաքն էր մեծ և հռչակաւոր՝ որ 'ի դաշտին Շիրակվան, որ և Աթոռ լեալ թագաւորացն մերոց, որոյ բնական բնակիչքն էին մեծափարթամք և ընչաւէտք և փափկասնունդք: Զոր և շինեալ զԱնի՝ Շիրակ թագաւորն՝ որ 'ի ցեղէն Բագրատունեաց, որ է 'ի Վեռուրական ծննդոցն, և սոքա 'ի Պաղեստինոյ գերեալք 'ի ձեռն Տիրան թագաւորին, և եկեալ 'ի Հայս, և սերեցան յազգէն այն, որ ասի՝ Բագրատունիք: Զոր յետ Մարզպանութեանն Հայոց՝ Շիրակն նախ յազգէն Բագրատունեաց, 'ի ծաղկաւէտ և 'ի հացուտ գաւառն Շիրակվան շինեաց զԱնի 'ի դահոյս թագաւորութեան իւրում: Եւ կացին մնացին մինչև 'ի թագաւորութիւնն Գագկայ-Յովհաննիսին Իմաստասիրի: Որ և յայնմ ժամանակի գնաց Յովհաննէս թագաւորն Շիրակվանայ 'ի յԱստամպօլ առ թագաւորն Յունաց՝ 'ի տեսանել զնա. և թագաւորն Յունաց արար նմա պատուասիրութիւն և ընկալաւ զնա մեծաւ փառօք. և մեծարեաց զնա 'ի

պալատան. և կարգեաց ոստիկան՝ որպէս վայել է թագաւորաց։ Եւ ուրախացան քաղում աւուրս։ Իսկ նենգամիտ և տիրատեաց իշխանքն Անւոյ՝ ըստ նախնի բնիկ սովորութեանց իւրեանց՝ գրեն առ թագաւորն Յունաց, ապստամբելով ՚ի թագաւորէն իւրեանց Յովհաննիսէն Իմաստասիրէ։ Այլ և զԱնւոյ բերդի քաղաքին յանկւոյ շինեալ՝ յղեն ընդ թղթին ի Կոստանդնուպօլիս։ Եւ աղաչէին զթագաւորն Յունաց ՚ի ձեռն թղթոյն և դեսպանին, զի այլ մի ևս թողցէ զթագաւորն Հայոց՝ գալ ՚ի յԱնի Աթոռն իւր։ Այլ փոխանակ նորա՝ զայլ ոք յիւր կողմանէ Յունական առաքեսցէ ՚ի յԱնի, զի հնազանդեսցեն նմա մինչև յաւիտեան, կարծելով յիմարքն, թէ Յոյնք լաւ և ըստ կամաց իւրեանցն լինին քան զթագաւորն Հայոց։ Յորժամ եկն իշխանն Յունաց ՚ի թագաւորէն իւրմէ առ ՚ի տիրել Հայոց, և նստաւ ՚ի յԱնի, սկսաւ տառապեցուցանել զազգն մեր և. առ ոչինչ համարել զազգն և զիշխանսն, մինչև վշտացեալ նոցա յոյժ, և եղև յետինն նոցա չար քան զառաջինն։ Եւ սկսան այնուհետև հնարս հնարել, մինչզի՝ ՚ի ձեռն կաշառաց և քաղում ընծայից՝ և քաղում աղաչանաց հազիւ վերադարձուցին զՅոյնն՝ հրամանաւ թագաւորին իւրոյ, և եդին զայլ ոմն՝ զոր ինքեանք կամեցան Հայ անուամբ և համեմատ իւրեանց։ Եւ ապա այնուհետև սկսան ամենայն ոք գնալ ըստ հաճոյից սրտից իւրեանց. և օր ըստ օրէ սկսան յաճախել յանհնարին չարիս և առասպելս կարծեցան ըստ Առաքելոյն, մատնելով յեօթնապարիսպն Երկրոյն, կարծելով թէ այնու կարեն ազատիլ ՚ի բարկութենէն՝ որ գալոցն էր։ Եւ նախ՝ այնքան հպարտացան, մինչզի՝ ամենևին ոչ հաւանէին այլոց, ոչ մեծաց և ոչ փոքունց, նա և ոչ միմեանց ևս։ Այլ իւրաքանչիւր ոք զինքն հաւանելով ևեթ՝ բարձրայօն գնացիւք ՚ի նոյն կայր միայն։ Երկրորդ, զնախանձն՝ զոր ունէին ընդ մի-

մեանս թէ՛ 'ի յառաջանալ ընկերին և թէ՛ չիմաստնանալն, և թէ՛ չընթերցմունս, թէ՛ 'ի պճնիլն, թէ՛ 'ի փառասիրութիւնս, թէ՛ 'ի շինուածս տանց, և թէ՛ յայլ ինչ աշխարհական պատուասիրութիւնս, ջանայր ընկեր զընկերն անցանել ամենայն իրօք՝ արք և կանայք։ Երրորդ՝ բարկութիւն ևս առաւել այնքա՛ն ինքնահաճք և կամապաշտք լեալ էին, մինչզի՝ որ բնաւ այլոց ո՛չ անսային, ոչ ծերոց և ո՛չ վարդապետաց. բայց միայն ամենայն ոք յաչս անձին իւրոյ՝ իմաստուն երևէր։ Չորրորդ՝ ծուլութիւնն տիրեալ առ ամենեսին, զի առանց աղախնեայց և ծառայից ոչ լինէին. և հետիոտս յեկեղեցին ոչ ընթանային. ոմանք գրաստիւ, և այլք 'ի գրաստէ իջանել ոչ կամէին, այլ զժամարարն արտաքս կոչէին և բարձրացուցանել տային զԱւետարանն և համբուրէին. և այնպէս զնշխարս առեալ գնային 'ի թատերս, 'ի թէատրոնս, և 'ի ասպարէզս ձիարշաւանաց։ Հինգերորդ՝ ագահութիւնն ևս քան զևս, և արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւնն. զի այնպէս ագահ էին, մինչ զի զմիմեանց բարիսն յափշտակէին. նա և զորբս և զայրիս զրկէին, զժառանգութիւնն և զհայրենիքն կորզէին, և իւրեանց առնէին։ Նա և ջանային մի քան զմին՝ ընչաւէտք լինել. և զամենայն զկահ և զկարասին՝ և զամենայն անօթս և զսարքն, մանաւանդ զզարդս կանանց, և թէ գոյր հնար՝ զամենայն ինչս ոսկւոյ սրբեցելոյ առնէին։ Վեցերորդ՝ որկորստութեամբ ևս առաւելեալք, քան զի երկիրն առատաբեր էր և պարարտ, և նոքա մեծատունք. և օր ըստ օրէ ի խորտկակերութիւնն ջանային, 'ի կեր և 'ի խում զանազան ծաղկահոտ գինեաւ, 'ի առասպելս, և 'ի խաղս, 'ի պարս, ուստի իբրև զաղբիւր բղխէին զախտք պոռնկութեան։ Եօթներորդ՝ անյիշելի պոռնկութիւն, մանաւանդ ազգապղծութիւն, զոր վասն ընչից՝ կամ վասն հայրենեաց՝ օտարաց ոչ տային, այլ մերձաւորաց

իւրեանց՝ ըստ հին սովորութեան։ Նա և յայտնի և գաղտնի պոռնկութիւն՝ վասն բնական գեղեցկութեանն կանանց միշտ գործիւր 'ի միջի իւրեանց, և 'ի նոյն հեշտացեալ կայրն անզեղջք, և ուրախ ևս լինէին 'ի միտս իւրեանց ի զանազան չարիս՝ կարծելով թէ Ս. և Ա. եկեղեցեաւն Աստուած ոչ բարկանայ մեզ, և ոչ յիշէ զմեղս մեր, ո՛չ յիշելով զբան Մարգարէին՝ որ ասէ, ո՞րպիսի տուն շինեցէք ինձ, կամ ո՞րպիսի տեղի հանգստեան իմոյ. ո՞չ ձեռն իմ արար զայս ամենայն. և նոքա միշտ պարծենային վասն եկեղեցեացն, և Աստուծոյ վերայ երախտիք համարէին. վասնզի Ս. և Ա. եկեղեցի ունէին, և ամեն եկեղեցւոյ՝ Ա. ձիթահանք և Ա. այգի յիշատակ եդեալ էին առ 'ի շէն մնալ եկեղեցեացն։ Եւ վասն այս պատճառի հպարտացան և անմտացան, և անկան 'ի կռապաշտութիւն և յանձնապաշտութիւն. զկնի որոյ յանհաւատութիւն և յանիրաւութիւն, հեռանալով այսոց և՛ անզգամութեան և՛ լրբութեան, հանդերձ ասացելովք՝ 'ի չկոութիւն և ի յիշոցնատուութիւն։ Եւ 'ի վերայ այսր ամենայնի՝ ևս առաւել քան զօտարատեցութիւն, և էին յոյժ օտարատեացք, մինչև 'ի խնամոցն Աստուծոյ եկող վարդապետաց և խրատատուաց՝ բնաւ ոչ անսային և ոչ հաւանէին, այլ ծաղր և ծիծաղ առնէին։ Քանզի ըստ ասելոցն երկուս գրակալս ունէին, մինն երկար և միւսն կարճ, զի յորժամ հանդիպէր վարդապետ և կամ քահանայ, և թէ կարճահասակ լինէր, զբարձր գրակալն դնէին յատեան. և թէ երկար լինէր, զկարճն դնէին։ Եւ այնպէս ծաղր և կատակ առնէին՝ և ծիծաղ մորոսելով՝ և հեգնելով զնոսա բարկացուցին զԱրարիչն Աստուած։ Եւ կամէր Տէր միահաղոյն ջնջել ըզնոսա, այլ ներողութիւնն Աստուծոյ ոչ տայր թոյլ։ Քանզի ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զդառնալն և զկեալն. և ո՛չ տայ բժշկութիւն ողջոց, այլ հիւանդաց. վասնորոյ և եկն Յիսուս

ոչ կոչել զարդարս, այլ զմեղաւորս. և զի կամի թէ ամենայն ոք կեցցէ և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ. որպէս և 'ի հըրնումն, յորժամ կամէր ջրոյն հեղեղաւ ողողել, նախ 'ի ձեռն Նոյի խրատեաց. զի մի՛ այնպիսի մրուրն արբցեն: Նոյնպէս և Նինուէացւոցն, նախ մարգարէիւն զգուշացոյց, և 'ի ապաշխարելն, ներեաց, և զպատուհասն վերացոյց. նմանապէս և Ընեցւոցն ազգ արար 'ի ձեռն Յովհաննէս վարդապետի՝ որ մականունըն պլուզ կոչի. որ և զՆերսէսի որ զԼ֊ոյ անձ֊ շարականն՝ նա է ասացեալ. և զյիշ֊ գիրն՝ այս Յովհաննէս վարդապետս ասացեալ: Այս վարդապետս ազդմամբ սուրբ Հոգւոյն ելեալ գնայր 'ի յԱնի, քարոզել և խրատել զնոսա, զի դարձցեն 'ի մոլորութենէ և 'ի չար գործոց իւրեանց. վասնորոյ և եկեալ եհաս 'ի յԱնի վարդապետն Յովհաննէս. և գնացեալ յԱւագ եկեղեցին, օթեցաւ զգիշերն, և ոչ ոք կալաւ փոյթ անձին, և կամ գնալ մօտ առ նա առ 'ի հարցանել և ողջունել զնա: Այլ երբև լուսացաւ, գնաց յեկեղեցին և զյետի տեղին ետուն նմա. և նա կայր խոնարհութեամբ. և յարձակման ժամուն գնաց 'ի խուցն: Եւ բնաւ ոչ ոք գնաց առ նա. իսկ 'ի յերեկոյին երբև զեղխեցան և արբեցան, և ապա եկին մօտ վարդապետին. և զի հասակաւ կարճ էր, վասնորոյ եղին երկայն գրակալն, զի 'ի ձկտելն՝ ծաղր արասցեն զնա: Իսկ նա 'ի շնորհաց Հոգւոյն սրբոյ զամենայն ընթերցմունս 'ի բերան առեալ՝ առանց գրի անխափան ասէր ստուգութեամբ: Այլ և 'ի տուէ և 'ի գիշերի խրատէր մեծաւ հոգաբարձութեամբ, և նոքա ոչ անսային բնաւ և ոչ դարձան 'ի մեղաց. վասնորոյ անկաւ մահ սաստիկ. զի աներևոյթքն երբև ըղմարմնաւոր երևեալ խոցոտէին յայտնապէս զմանկունս 'ի գիրկս մարցն, և զորս 'ի մահիճս, զոմանս 'ի մէջ քնոյն, և զայլս յարթնութիւնս. մինչև՝ 3 մասնէն մին մնաց: Եւ յորժամ զայս ամենայն հարուածս տեսին, փոքր ինչ զգացին. և զի գընացեալ էր վարդապետն, զհետ եկեալ որոնեցին և գտեալ յերկին

և պատուեցին: Եւ սկսան կեղծաւորաբար Թիւղոյ առնել. և խոստացան զոչ մեղանչելն այնուհետև: Իսկ վարդապետն Յօ-հաննէս սկսաւ խրատել զնոսա և զգուշացուցանել և պատ-ուիրել ասելով, թէ՝ զօգուտն ձեր դուք գիտէք. որոնեցէք զլա-ւըն որդեա՛կք իմ. այսուհետև կատարելապէս զչարութիւնն ձեր 'ի բաց ընկեցէք, և զազգապղծութիւն մի՛ առնէք, որ հաշտի ընդ ձեզ Աստուած. իբրև զայս լուան՝ բարկացան յոյժ, և բռնութեամբ կալան զնա և արկին 'ի բանտ 'ի նսեմ և 'ի ժահահոտ տեղի մի, ասելով թէ՝ պատարագ արա՛ և հաշտե-ցո՛ ընդ մեզ զԱստուած, որպէս և ասացեր. ապա թէ ոչ՝ մե-ռանիս 'ի ձեռաց մերոց: Իսկ նա պատասխանի ետ և ասէ. ահա կրկին բարկացուցիք զԱստուած. և նոքա ոչ անսային. և նա անճար եղեալ յերկիւղէ նոցա յանձն էառ մատուցանել պա-տարագ. և եկեալ գնաց յեկեղեցին. և յորժամ ել խնկարկել 'ի թափոր, յայնժամ ել հուր 'ի բուրվառէն, և այրեաց այրս Գ.Ճ. որպէս 'ի հնումն Նաբաթ և Աբիութ. և իսկոյն կրկին զղջացեալ՝ անկան առ ոտս սուրբ վարդապետին և հայցէին զթողութիւն, և խոստանային դառնալ 'ի մեղաց ըստ ամե-նայնի: Եւ յետ սակաւ աւուրց անցանելոյ, կրկին սկսան այլ չարիս գործել և թաւալել յախտս պղծութեան՝ արք կանայս առնէին, և կանայք արանց լինէին չարաչար տրփմամբ: Յայն-ժամ կրկին բարկացաւ Տէր. և առաքեաց գազանս չարս և այ-լակերպս՝ նման գայլոց. որ գային 'ի մէջ գիշերի և մտա-նէին 'ի տունս տունս, և զնորահարսունքն, և զփեսայքն, մա-նաւանդ զպատանեակսն և զմանկունս յափշտակեալ տանէին. և եկեալ 'ի վաղիւն տեսանէին յարտաքոյ տանց իւրեանց յառաջի դրանցն գիշատեալ՝ և անդամ անդամ յօշեալ, ոմանց զձեռս, ոմանց զոտս, և ոմանց զգլուխս, և ոմանք կիսամեռք անկեալք կային արտաքս արիւնաթաթախ և ղխա-թաւալ: Յայնժամ եկին 'ի խնդիր վարդապետին և գտին

գնա 'ի գեօղ մի, և անկան առ ոտս նորա։ Այլ և կին մի ընդ նոսա ունելով զմիամօր որդին իւր խոշտանեալ և կորառեալ անդամօք, զոր Թափեալ էր 'ի գազանացն, լայր կինն և աղաղակէր առաջի վարդապետին և ասէր, Տէ՛ր իմ հոգևոր՝ պահեալ էի զամենայն զպատուիրանս քո, և արդ՝ պահեմ մինչև ցմահ. արդ՝ օգնեա՛ ինձ, զի միամօր է։ Յայնժամ տեսեալ վարդապետին զհաւատ կնոջն՝ որպէս Քանանուհւոյն, յաղօթս եկաց առ տէր. յայնժամ գազանքն՝ որ զանդամս տղային յափշտակեալ էին, ակներև բերեալ եղին առաջի վարդապետին. և վարդապետն առեալ զանդամսն դնէր և շարէր և ձգէր յիւրաքանչիւր տեղիսն. և սկսաւ աղօթել առ Աստուած՝ այսպէս. Տէ՛ր Յիսուս՝ որպէս յարուցեր զմիամօր որդին 'ի Նային քաղաքի, նոյն զօրութեամբդ և ողորմութեամբդ յարո՛յ զսա և կենդանացո՛, վասնզի անմեղ է։ Այլ և տեսցեն մերձ եղեալքն զզօրութիւնս քո, և դարձցին 'ի չարեաց իւրեանց։ Յայնժամ եռաց մարմինն և կցեցաւ ոսկր առ ոսկերս. և կենդանացաւ և դարձաւ հոգի մանկանն, և յարեաւ կանգնեցաւ։ Իսկ որք զշուրջն կային, իբրև տեսին զքանչելիսն, զահի հարեալ անկան առ ոտս վարդապետին և Ճղույ կոչէին. Եւ վաղվաղակի գնացեալ բերէին զդիակունս իւրեանց առաջի վարդապետին, և աղաչէին՝ զի յարուսցէ։ Իսկ վարդապետն Յօհաննէս եկաց յաղօթս և գոչեաց ասելով. ո՛վ որք անմեղք են 'ի սոցանէ՝ եղիցի բժշկութիւն. ապա թէ ո՛չ՝ Աստուած վրէժխնդիր լիցի ըստ համոյից իւրոց։ Յայնժամ դիմեցին դայլքն 'ի վերայ նոցա յանկարծակի, և պատառեցին ակներև զբազումս 'ի նոցանէ. և 'ի տեսանելն զայս՝ ափշեցան ահիւ մեծաւ, և սկսան խոստովանել Ճղույ կոչել, և դառնալ 'ի չար գործոց։ Եւ յետ երից ամսոց մոռացան զառաջին հարուածն՝ և ասեն. այն՝ 'ի պատահմանէ էր՝ որ եղեն, և ո՛չ վասն մեղաց մերոց։ Եւ սկսան կրկին 'ի մեղս թաւալել։ Եւ դարձաւ եկն վարդապետն Յօհաննէս և սկսաւ

քարոզել. և իբրև տեսին՝ զի կրկին յանդիմանէր զնոսա՝ բարկացան, և սկսան ընդ միմեանս ասել, թէ՝ սա է մեր քակտիչն. և խորհեցան 'ի խորհուրդս նանիրս. և արբուցին թմրադեղս և թափեցին 'ի խելացն. և ապա մերկացուցին զնա և արկին 'ի սայլ. և այնպէս մերկ և խայտառակ 'ի մէջ քաղաքին շրջեցուցանէին և մանկտեաւ ծաղր առնէին զնա. և բերեալ 'ի դուռն Սուրբ Եկեղեցւոյն՝ զամբիւղով կախեցին, զի մտանողքն և ելանողքն տեսցեն: Իսկ իբրև զարթեաւ 'ի թմրութենէ, և զգացեալ ետես զինքն այնպիսի՝ կերպարանօք, և սկսաւ հոգոց հանել, և լայր դառնապէս. և իսկոյն ի վայր առեալ բրածեծ արարին և աքսորեցին՝ պատուիրելով և ահացուցանելով եթէ այսուհետև մի՛ կոխեսցես աստ և մի՛ տեսցուք զքեզ. ապա թէ ոչ՝ չարաչար մեռանիս 'ի ձեռաց մերոց: Իսկ տեսեալ զայս ամենայն վարդապետն Յօհաննէս, ել 'ի վերայ բարձր բլրի միոյ՝ և անէծ զքաղաքն. և կրկնեաց ծունր ածելով և ասէ. Տէ՛ր, այլ ոչ լինիմ երաշխաւոր. այսուհետև զոր ինչ կամիս՝ այնպէս արա: Իսկ յանկարծակի եջ սաստիկ բարկութիւնն Աստուծոյ, և սկսաւ քաղաքն շարժիլ՝ և տապալիլ պարիսպքն. և զայն տեսեալ՝ հապճէպ ամենայն որք ընթացմամբ փոյթ ընդ փոյթ բուռն հարեալ ամենայն որք 'ի ձեռաց ընտանեաց և զաւակաց իւրեանց, և տարադէպ ելեալ փախեան, թողլով զքաղաքն և զԵկեղեցիսն և զսկեղօծ պալատսն և զծաղկաւէտ դաշտս իւրեանց, գնացին որպէս փախստական, ձեղքեալ կէսքն 'ի Խուզայ, և կէսքն առ եղերս Կասպից ծովուն, և ոմանք 'ի Վան, և այլքն 'ի Սիս. իսկ այնք՝ որ անցին ընդ ծովն Կասպից՝ գնացեալ յարեցան յազգն Նետողաց՝ որ է Մօղուլ՝ զոր Թաթար ասեն. և առեալ հրաման 'ի Թաթար Խանէն, բնակեցան 'ի Աղուարայ կոչեցեալ վայրի՝ որ է մերձ Աժտէրխանու. և յետ ոչ բազում ամաց զգուեալ 'ի Նետողաց դժնաբարոյ ազգացն՝ դեսպան յղեն 'ի Կաֆայ՝ առ Լատին իշխանն՝ որ էր 'ի մէջ Ճենովզին, զոր

Գուանկ-Հիսար առեն. և ուխտ եդեալ ընդ իշխանսն, հաստատապէս չուեալ գան 'ի Կաֆայն, և ոմանք 'ի Ղրիմ լեռնամիջի, և կէսք անցեալ գնան 'ի Լեհաստանն, և կէսք 'ի Աքքիրման: Իսկ որք մնացին 'ի Կաֆայն, սկսան Եկեղեցիք և Վանորայք շինել. բայց զի ամենեքեան ոչ կարացին 'ի ներքս բերդին լինել վասն փոքրութեանն, և ազգն Ճենովաց ըստ բնիկ սովորութեանն իւրեանց՝ գային գաղտագողի և յափշտակէին զուստերս և զդստերս իւրեանց և տարեալ վաճառէին: Եւ յորժամ տեսին զայս միաբանեալքն, կրկին դաշն եդին ընդ Լատին իշխանին, և հրաման առին վասն իւրեանց նոր բերդ շինելոյ՝ կից հին բերդին. և սկսան շինել քան Խ. տարին, ապա կատարեցաւ զմեծ պարիսպն, և 3 ամ վայելեցին. և յետ երից ամաց էառ տաճիկն:

Եւ եղև սկիզբն գալուն իւրեանց 'ի Կաֆայ՝ ի թուին 780. և ըստ Կենարարին՝ հազար երեք հարիւր երեսուն և մէկ:

# ՀԱՄԱՌՕՏ

# ԲԱՌԱՐԱՆ

## ՏԱՃԿԵՐԷՆ ԲԱՌԻՑ

### ՈՐ Ի ՄԱՏԵՆԻՍ

---

### Ա.

Ագշամ. երեկոյ։
(Ագշամս. յերեկոյին, յետն, ընդ երեկըս։)
Ազ. սակաւ, դոյզն։
Ազ, ազու, ա՛ազզ. փառաւորագոյն, հոյակապ։
Ա՛զա. անդամ։
Ա՛զար. յանդիմանութիւն, վիշտ, նեղութիւն։
Աթ. ձի, երիվար։
Աթլանմաք. ձիաւորել, նստիլ յերիվար։
(Տէ աթլան. օ՛ն նիստ յերիվար։)
Ա՛լամ. հոգ.ք, տառապանք։
Ա՛լամ չէքմէք. հոգալ, տառապել։
Ալայ. հանդէս, բանակ։
Ալլահ. աստուած, տէր։
(Եա՛ ալահ, ալլահ. ո՛վ Աստուած, ո՛ տէր։)
Աղա. տէր, իշխան, ազատ։
(Աղալար. տեարք, իշխանք, ազատք։)
Աղըզ. բերան։
Աղշամ. տե՛ս Ագշամ։
Ամարաթ, իմարէթ. շինութիւն, բընակութիւն, աղքատանոց, տուն՝ յորում կերակրին աղքատք և մանկունք դպրոցաց։
Ամբարտար, ամպարտար. շտեմարանապետ։
Ա՛յա, ա՛յան. աչք. 2) մեծամեծք. 3) նախարարք. 4) մարզպանք. 5) աւագունք. 6) գաւառակալք։
Այվան, ավան. ատեան, մեծ սրահ կամ սենեակ։
Աչչի, ճի. խոհարար։
Ատի՛լ. արդար, իրաւարար։
(Ատ՛լ, ատի՛լ—շահ. արդար թագաւոր։
Ա՛րզ. խնդրագիր, գիր աղերսանաց։
Ա՛րզ էթմէք. խնդրել, աղերսագիր մատուցանել, առաջի առնել, ընծայել։
Ա՛րզու. իղձ, փափաք։
Արիֆէ, արէֆէ. նախատօնակ։
Աւատան, ապատան. յոյժ շէն։
(Էվընըզ, էվինիզ ապատան օլսուն. տուն ձեր լիցի յոյժ շէն, պայծառագոյն։)
Արփաչայ. Գարեջուր կամ Ախուրեան գետ։
Ափարմաք. տանել, հանել, շահել։
(Պաշա ափարմաք. 'ի գլուխ հանել, վճարել (գիրս ինչ։)

### Բ.

Բախմաղ, տե՛ս պազմաք։
Բախրա, տե՛ս պահրա։
Բայրամ, պայրամ. տօն (զատիկ)։
Բէկ, պէյ. իշխան, տէր։
Բէկզատա, պէյզատէ. իշխանորդի։

Բէկլիկ, պէկլիք, պէյլիք. աղնուականութիւն, ասպետութիւն, նախարարութիւն, 2) իշխանութիւն, 3) արքունիք, գանձ արքունի։

Բէկլէր բէկի, պէյլէր—պէյի. նախարարապետ, շահապետ։

Բիր նաշարի, նաշէրի՛. յոյժ անիրաւ, անիրաւագոյն։

## Գ.

Գազ, կազ. սազ. անուն է Պարսից չափոյ ինչ։

Գալիյօն, գալիօն. ազգ մեծ արքունի նաւու. 2) ծխաքարշ գործի Պարսից։

Գահար, գահըր, գահիր. զօրաւոր, յաղթաբազուկ, քաջայաղթ, 2) առաքինի։

Գայըրմաք. հոգալ, սնուցանել, դարմանել։

Գայիմ, (ումկ. ղայմ, ղայիմ) հաստատուն։

Գայիմ օլմաք. հաստատուն լինել, կալ, մնալ։

Գար. ձիւն։

Գարտաշ. եղբայր։

Գեալմաք. տե՛ս կէլմէք։

Գեարթ. գործ, գործել։

Գէթմէք. տե՛ս կիթմէք։

Գէխեայ, քէհեայ. ոստիկան, 2) վերակացու, 3) տանուտէր, 4) փոխանորդ, 5) հազարապետ։

Գըշ. ձմեռն։

Գուլ. ծառայ, սպասաւոր, 2) կրտրուկ, 3) զինուոր, 4) պահապան 5) որդի։

Գուլլուք. ծառայութիւն, գերութիւն, սարկութիւն, պահակապանք։

Գումաշ. կերպաս։

Գուն, կիւն. օր։

Գօզաթմաք, տե՛ս կէօզէթմէք։

Գօձա. ծեր, ծերունի, հինաւուրց. 2) ամուսին, կանամբի. 3) այր. 4) յաղթանդամ. 5) անարի. 6) բարձրաբերձ։

Գօրմաք, կէօրմէք. տեսանել, ականել, հայել, նշմարել, զննել։

## Դ.

Դախում, թագըմ. կազմած, կահ, հանդերձանք, սպասք, պաճուճանք։

Դախըլ, տախըլ. մուտք։

Դախըլ էթմէք. մտանել։

Դախըլ, տախիլ. ներքին մասն, կողմն, 2) վիշտք, աշխատութիւն, 3) կասկած. 4) ախտ։

## Ե.

Եազմաք. գրել։

Եասախ, եասաղ. արգել, խափանումն, զգուշութիւն, արգել հրամանի։

Եախըն, եագըն. մերձ, մօտ, հուպ։
(Եախունտա, եագընտա կէլ. մօտագոյն ե՛կ։)

Եախնի. մնացորդ. 2) պախ։

Եախշի. լաւ, բարի։

Եանընա. առընթեր, մերձ։

Եաշամաք. կեալ, ապրել։
(Եաշա՛. կեա՛ց, կեցցե՛ս։)

Եարէս. կարող։

Ետակչի, եէտէքճի. նժոյգածիգ։

Եէթիշմէք. հասանել, ժամանել։

Եէր. երկիր, տեղի, գետին։

Եէյփազէ. հոլահար։

Եէնկիչէրի, եէնիչէրի. անուն բանակի միոյ խառն և ազատ զօրաց Օսմանցոց, զորս բնաջինջ արար Սուլթան Մահմուտ Բ։

Եիւզպաշի, պաշը. հարիւրապետ։

Եօգ. ոչ, չ։

Եօլ. ճանապարհ, ուղի։
(Եօլա կէթմէք. ուղւոյ լինել, ուղեւորել, ճանապարհորդել. 2) վարել ընդ միմեանս (սիրով)։

## Զ.

Զամպարակ, զէմպէրէկ. լար պողովատիկ (զսպանակ. այսպէս կոչին և մեծամեծ հրացանք ինչ, զորս ի հնումն ի վերայ թամբի ձիոց կամ ուղտուց եդեալ գործածէին)։
Զապիթ. պետ, իշխան. 2) պահապան. 3) ոստիկան. 4) քաղաքապետ։
Զատայ, զատէ. ծնեալ, որդի, զաւակ։
(Պէյզատէ. իշխանորդի։)
Զարուր. թշուառ, աղքատ։
Զարուր էթմէք, օլմաք. աղքատացուցանել. 2) թշուառանալ։
Զարպաֆ. կերպաս մետաքսեայ, որ է ոստայնանկեալ ոսկւով և արծաթով։
* Զարֆ. աման բաժակի. 2) խեցք եղն։
Զէր. ոսկի։
Զէրնրխ, զեռնիկ. հող ինչ կարմիր։
Զընճըլ, զինճիլ. շղթայ։
Զիատէ, զիյատէ. առաւել, ևս առաւել։
Զիարաթ, զիարէթ. այցելութիւն, ուխտ։
Զիլլի, զըլլի, զըլլ. հովանի, ստուեր. 2) մխիթարութիւն, 3) պաշտպանութիւն. 4) խաւար, ցնորք։
Զուռնա, սուրնա. փող, սրինգ։
Զրէհ. զրահ։
Զօլաթա. երեսուննոց, երեսնդրամեան։

## Է.

Էգ. Նախդիր՝ ի. յ.
Էգլէգ. սկզբնականի Նախդիր նա, է։
Էգրէքի, էգրաք. խաժակն, կապուտակ. 2) երկինք։
Էթմէք. առնել, 2) հաց։
Էլ. Պարսկ. վերջահողովի. 2) Տաճկ. ձեռք. 3) օտար։
Էլհէմտուրուլահ, էլ—համտ—իւլլահ. փառք, գոհութիւն Աստուծոյ։
Էլչի. դեսպան, առաքեալ։
Էխթիպար, իթիպար. պատիւ, շուք 2) բարձ։
Էխթիպարլը, իթիպարլը օլմաք, էթմէք. պատուել, մեծարել։
Էխթիպարլը, իթիպարլու. մեծարելի, երևելի, պատուաւոր։
Էմի—ուլ—մուլլ—իլահի. հաւատարիմ որդի կամ ծառայ Աստուծոյ։
Էվ. տուն, բնակութիւն, բնակարան։
(Էվինըզ, էվինիզ. բնակարան, տուն Ձեր.—էվին. տուն քո։

## Ը.

Ըխտիյար, իխթիյար. ծեր, ծերունի, 2) ալևոր։

## Թ.

Թամամ, թէմամ. ճիշտ, ամբողջ, կատարեալ, աւարտեալ։
Թամաշա, թէմաշա. ճեմք, զբօսանք, զննին, տեսարան, հանդէս։
Թամաշաճի. ճեմող, զբօսնիչ, տեսարանատես, հանդիսազննին։
Թամբուրա. փանդեռն։
Թայալա, թէալէա. Աստուած, արարիչ։
Թ'ային. թոշակ, հաս, ռոճիկ. 2) կարգեալ։
(Թ'ային էթմ. կապել թոշակ, հասըս, ռոճիկ, 2) կարգեալ։)
Թափի. հպատակ, հնազանդող։
Թախիլ, թահսիլ. հաւաքումն, ժողովումն։
Թախիլ, թահսիլ էթմ. հաւաքել։
Թատարիք, թէտարիք. պատրաստ, պատրաստութիւն, կազմութիւն, հանդերձանք, հայթայթանք, պաշար, դարման։
(Թէտարիք կէօրմէք, էթմ. պատրաստել, կազմել, յարդարել, հանդերձել, հայթայթել, հոգալ)։
Թափշիրմաք. յանձնել, աւանդել յանձն առնել։

Թաքլիֆ, թէքլիֆ. առաջարկութիւն. 2) հրաւէր։
(Թէքլիֆ էթմէք. առաջարկել, հրաւիրել։)
Թէզ. շուտ, արագ։
(Թէզ իմտի, արագ ուրեմն, արդ արագ, ընդ փոյթ, այժմիկ։)
Թէսկէրէ. ծանուցագիր։
Թէվճի, թէվճիհ. բաժանումն։
Թէրքէշ. կապարճք և աղեղնակապարճք, 2) պատկան դարան։
Թէքքէ. մենաստան։
Թուանկ, թֆանկ, թիւֆէնկ. հրացան. 2) գունտ, գնտակ։
Թուանկչի, թիւֆէնկճի. զինուոր, զօրական, հրացանակիր, 2) հրացանագործ։
Թուղ, թուղլու. դրօշ, պատիւ. նշան բդեշխից Օսմանցւոց։
Թուրֆանտա, թիւրվէնտէ. կանխահաս (պտուղ), երախայրիք, առաջնապտուղ։
Թօշակ, տէօշէկ. անկողին, տեղաշոր, մահիճք, խշտիք։
Թօփ. գունտ, գնտակ. 2) ամփոփ. 3) թնդանօթ։
Թօփխանայ, թօփխանէ. թնդանօթանոց. 2) գործարան թնդանօթից։

## Ի

Իլահի. աստուածեղէն, աստուածային, 2) երգ, 3) գովութիւն, 4) օրհնութիւն, 5) Աստուա՜ծ իմ, 6) ո՜վ, բա՜րէ, ո՜հ։
Ի՛լամ. պայքար, վճիռ, դատակնիք։
Իլարի, իլէրի. յառաջ։
Իգպալ, իգպալ. բաղդ, յաջողութիւն։
Իմյախօռ, իմրահօր. ախոռապետ։
Ինամի. հաւատարիմ, հաւատալի։
Ինշալլահ, ինշա-ալլահ. եթէ տեառն կամք են, կամօքն աստուծոյ, Աստուծով։
Ինտի, իմտի. արդ, այժմ։
Իշ. գործ։
Իշարաթ, իշարէթ. նշան, ակնարկութիւն։
Իշարէթ էթմ. ակնարկել, նշան տալ։
Իչինտէ. ՚ի մէջ, ՚ի միջի։
Իպգա էթմէք. թողուլ, 2) հաստատել (զոք յիշխանութեանն), 3) վաւերական առնել։
Իրան. պարսիկ, պարսկաստան։
Ի՛րատ. արդիւնք, մուտք։
Իրթմաջ, երրթմաճ. պատառուած ՚ի քղանցս հանդերձից։
Իւզ, եիւզ. երես, 2) հարիւր։
Իւզ, եիւզ պաշի, պաշը. հարիւրապետ։
Իփխա, իպգա. վաւերացումն, հաստատումն։

## Լ

Լէյլի նիհար, լէյլ ու նիհար. ըզցայգ և զցերեկ։
(Վէ լէյլի վէ նիհար. և՛ զցայգ և՛ զցերեկ)։
Լայեխ, լայըգ. արժանի, արժանաւոր։

## Խ

Խաթր. միտ, 2) ոգի, 3) միտք, 4) կամք, 5) պատիւ, ակնածութիւն, 6) խորհուրդ։
Խաթըր սագլամաք. ակնածել, երես առնել։
Խալի. օթոց, տապաստակ, գորգ։
Խալիչա, խալիճէ. փոքրիկ օթոց, պարիհ։
Խան. իջևան, պանդոկ, 2) բնակութիւն, տուն, 3) թագաւոր, 4) հօրաքոյր, 5) ընթերցող։
Խապար, խապէր. լուր, ազդ։
Խանըմ. ո՛ արքայ, թագաւո՛ր իմ. 2) տիկին։
Խապար վէրմէք. ազդել, լուր տալ, զեկուցանել։

Խապարտար օլմաք. տեղեակ լինել, լուր ունել, գիտել.

Խարճ. ծախք, ելք, 2) հարք, 3) մուտք. 4) տուրք։

Խարճլըղ, խարճլըք. դրամ ծախսելի, վասն ծախուց։

Խիանաթ. ապերախտ, չարագործ։

Խիանաթլըք, խիանէթլիք. ապերախտութիւն, նենգաւորութիւն։

Խուտա, խիւտա. արարիչ, Աստուած։

Խօշ. բարի։

(Խօշ կէլտին. խօշ կէլմիշսէն. բարեաւ եկիր. բարի եկիր)։

Խօշ խաթր. բարեսիրտ, քաղցրաբարոյ։

Խօշ խաթըրլըք. բարեսրտութիւն, քաղցրաբարոյութիւն։

Խօշնիթ, խօշնուտ. գոհ, հաճ, հաւան, շատացեալ։

Խօսրօֆի, խուսրէվ. տէր, 2) իշխան, 3) թագաւոր։ Է պատուանուն ածական ամենայն մեծագործ և երեւելի թագաւորացն Պարսից։ Նա և է յատուկ անուն միոյն թագաւորացն Պարսից՝ Քէյի Խուսրէվ, որ առ որդի Հիւրմիւզի որդւոյ Անուշըրէվանայ՝ 'ի զարմէ Իյրէճի 'ի զաւակացն Քէրիտուն արքային։

## Կ

Կեալուր, կէլիր. մուտք, եկամուտք։

Կէլիր կիտար, կիտէր. ելևմուտք։

Կէլմէք. գալ.

(Կէտաք իլարի, երթիցո՛ւք կամ գընասցո՛ւք յառաջ։)

Կէմ. սանձ։

Կէն. լայն, ընդարձակ։

Կէչուտ, կէչիտ. անցք, 2) դէպք, 3) հուն։

Կէտիք. տեղ. 2) կալուած. 3) հաս, 4) խրամատ, 5) յառաջահաս պատիւ։

Կէրէք. կարիք, հարկ, պէտք, 2) եթէ, թէ։

(Կէրէք տուր, տիր. հարկ է, պարտ է։)

Կէրտէտ, կիրտիյտ. անուն արեգական։

Կիթմէք. երթալ, գնալ։

Կիտար, կիտէր. ելք, ծախք։

Կիւլապտան. աման վարդեջրոյ։

Կլապիտան, կլապտան. ոսկեթել.

Կիւլապ, կիւլլապ. վարդեջուր։

Կօզաթմաք, կէօզէթմէք. դիտել հըսկել, զգուշանալ, սնուցանել.

## Հ

Համ, հէմ. և, նաև, ևս և։

(Համ, տհաս։)

Համաշա, հէմիշէ. միշտ, հանապազ, յաւէտ։

Համի. ջեր. 2) պաշտպանեալ, 3) պաշտպ.ն, 4) թակարդ, 5) երագագ։

Համիզ. ուժգին, զօրեղ։

Համիսի, հէփիսի. ամենեքեան, բոլորեքեան, բոլորք։

Հանաք. ծաղր, կատակ։

Հաջի, հաճի. Մէքքեւոս. ըստ սովորութեանց տաճկաց կամ մահմետականաց՝ որք գնան յուխտ ի Մէքքէ՝ ուր է գերեզման Մահմէտի, կոչին այս տիտղոսիւս առհասարակ։

Հաղէթմէք. գոյացուցանել, արդիւնաւորել, 2) 'ի գլուխ տանել։

Հարամ. անիրաւ, յանիրաւի յափշտակեալ, արգելեալ յօրինաց։

Հարամ էթմ. զրկել, չթողուլ վայելել, խափանել։

Հէր զաս. ամենայն ինչ, ամենայնքան։

Հէրնէմէնէ. ամենայն, զոր ինչ, ըստ ամենայն։

Հէրպէնտէ. ամենայն, իւրաքանչիւր, ծառայ։

Հէրքի, ամենայն որ։

Հէրքիրա. ամենայնի. 2) որում։

Հիսապ. հաշիւ, հաշուառութիւն։

(Պէ հիւրմէթի. շնորհօք, ողորմութեամբ)։

Հիւրմէթ էթմէք. շնորհս առնել, պարգևել։

## Ղ

Ղալա, գալ'ա. բերդաքաղաք. 2) դղեակ, ամրոց, բերդ։
Ղալյաճի, գալյաճը. անագագործ։
Ղալիֆա, խալիֆա, խալիֆէ. յաջորդ, պայազատ (Մահմետի). 2) տեղակալ, 3) առաջնորդ, 4) Թագաւոր, 5) Ինքնակալ։
Ղայիրմաք, տե'ս գայըրմաք։
Ղանշըմաք. դիմաւորել, հիւրընկալել։
Ղասաղայ. մունետիկ, քարոզ։
Ղատիմի, գատիմի. յարատե, մշտակայ։
Ղար, գար. ձիւն։
Ղարտաշ, գարնտաշ. եղբայր։
Ղարիպ, գարիպ. պանդուխտ, օտարական, նժդեհ։
Ղաւուխ, գաւուգ. փամփուշտ, առաւուշտ խոյր։
Ղափուճի, գափուճու. պաշը, սենեկապետ արքայի։
Ղզլար, գըզլար-աղասը. մարդպետ, ներքինապետ։
Ղըշ, գըշ. ձմեռն։
Ղուլ, տե'ս գուլ։
Ղուլախ, գուլաք. ականջք, լսելիք։
Ղուլախ, գուլաք ասմաք. անսալ, շականջել, ունկն տալ։
Ղումաշ, գումաշ. կերպաս, դիպակ։
Ղուրան, գուրան. օրինագիրք Մահմետի։
Ղուռուշ, ղուռուշ. դահեկան, որ է 40) ստակ, որ առնէ իբր 6 ½ կոպէկ։
Ղօնաղ, գօնաք. իջեւան, օթեւան, 3) հիւր, 5) բնակարան։

## Ճ

Ճանպազ. լարախաղաց։
Ճայխանա, նէ. պահարան վառօղի, վառօդատուն։
Ճարծի, ճարչի. համբաւաբեր, քարոզ։
Ճէնազըն, ճէնազընըզ, ճէնազենիզ. հրամանքնիդ, տէր իմ, փառաւորութիւն քո, տէրութիւն քո։
Ճիղիյէ, ճիղի'է. մուտ, հարկ, տուրք։
Ճիհան. աշխարհ, տիեզերք, երկիր։
Ճիհան-շահ. տիեզերակալ, աշխարհակալ (Թագաւոր)։
Ճինլի գօլ. դիւագունդ, դիւապահապանակքցա գիշերադօր, գունդ։
Ճիպինլուխ, ճիպինլիք. սրահակ, սըրսկապան, առագաստ։
Ճուլուս, ճիւլուս. գահակալութիւն, աթոռակալութիւն, 2) պայազատութիւն, Ն'ոփին յաթոռ (իշխանութեան)։

## Մ

Մհալ, մահալ, մահալլէ. կողմն, բոլորակութիւն, տեղի. 2) Թաղ։
Մուլք, միւլք. Թագաւորութիւն, տէրութիւն, իշխանութիւն 2) գաւառ, նահանգ, 3) վիճակ, ժառանգութիւն, երկիր, կալուածք, ստացուածք։)
Միւսկիմ, միւսկլիմ. ողջունող. 2) հրեշտակ հաշտութեան. 3) փոխանորդ բդեաշխի, տեղապահ։
Մուհրտար, մէօհիւրտար. կնքապահ։
Մուղխաթ, մուգայյէտ. մտադիր, կապեալ, զգաստ, փոյթ։
Մուգայյէտ օլմաք. ջան, միտ դնել, փոյթ յանձին ունել, գուն գործել։
Մուղրի. կարդացող. 2) օրինական։
Մուճիպ. համաձայն, համեմատ պատշաճ. 2) պատճառ, դրդիչ. 3) լսօղ, ունկնդիր, ընդունող աղաչանաց. 4) պատասխանատու։
Մուպաշիր, միւպաշիր. գործակալ, 2) վերակացու։
Մուպարաք, միւպարէք. օրհնեալ։
Մուտամ, միւ'տէմ. միշտ, հանապազ։
Մուրախխաս, միւրախխաս. հրաման առեալ. 2) ազատ, ինքնիշխան։
Մուրախխաս էթմէք, Թողուլ, ազատս կացուցանել։
Մուրվաթ, միւրվէթ. շնորհք, պարգեւ, նուէր, ողորմութիւն։

Մրաբի մուրապա. քաղցրեղէն։
Մօլա, մօլլա. օրինական, օրինագէտ։
Մօլլապաշը. օրինականապետ, գլուխ օրէնսգիտաց։
Մօհթեմէտ, մութեմէտ. հաւատարիմ։

## Ն

Նալաթլամա, նա՛լէթլէմէ. անիծանել։
Նազար. հայեացք, 2) խնամ, 3) աչք 4) օգնականութիւն։
Նազարէ, նազարա, նաարէ, գործ կարեւոր. 2) ապստամբութիւն, 3) աղաղակ, գոչիւն։
Նաղշուն. փայլուն, 2) քանդակագործ։
Նաճաղ, նաճագ. տապար, կացին։
Նամ. անուն, համբաւ, 2) երեւելի, անուանի։
Նամազ. աղօթք, երկրպագութիւն։
Նայիպ. տեղապահ, փոխանորդ դատաւորին։
Նապալատ. անմեղ քաւեալ, անբասիր։
Նասաղճի, նասահճի—պաշի, պաշը հանդերձապետ, դերձակապետ։
Նատիրի. ազնիւ, չնաշխարհիկ, հազուագիւտ, անհամեմատ։
Նատիրի տէվրան. դժուարագիւտ, գոյգնագիւտ ի շրջանս ժամանակաց։
Նաւրուզ, նէվրուզ—պայրամի. տօն նոր աւուր, տարեգլուխ
Նէ. զինչ, ինչ։
(Հէր նէքի, զոր ինչ։)
Նէչախ, նէճէ. որպէս, զիարդ, որպիսի։
(Նէճէ, նիճէ սէն, սին. որպէ՞ս ես, զի՞արդ կաս։)
Նէթէքին, նիճէքի. որպէս, զիարդ։
Նէչիւն, նիչիւն. ընդէր, վասն էր։
Նօքար, նիւքէր. ծառայ, պաշտօնեայ։
Նօպաթ, նէօպէթ, նէվպէթ. կարգ, դաս։
Շաթիր, շաթըր. նուիրակ. 2) սուր-

## Շ

հանդակ, քաջընթացիկ։ այսպէս կոչին՝ որք յամենայն հանդէսս՝ նոյնպէս և 'ի գնալ յեկեղեցի և այլուր հանդիսիւ՝ քան զամենեսին յառաջընթացք են Կաթուղիկոսաց մերոց՝ ունելով գնտագլուխ ցուպըս 'ի ձեռին իւրեանց։
Շահի. անուն դրամի ինչ՝ որ է 3 կոպէկ, որ առնէ իբր 33 ստակ։
Շամաթա. աղաղակ, աղմուկ, շփոթ։
Շարպաթ, շէրպէթ. օշարակ։
Շաֆաղաթլը, շէֆաղէթլը, շէֆքաթլը. գթած, ողորմած, բարեբար։
Շէխ, շէյխ. ծերունի, ծեր, 2) երէց, 3) օրէնսգէտ, 4) առաջնորդ, 5) տեղապետ, 6) մեծարոյ։
Շէխ—իսլամ, դենպետ սաճկաց։
Շէմնէ, շէմս. արև, 2) ոսկի, 3) աղբիւր։
Շէրմասար. ամօթխած, պատկառոտ։
Շէրմասարէզ. շարմասարէզ. ի պատկառանաց, յամօթխածութենէ, պատկառանօք։
Շէրպէթճի. օշարակագործ։
Շէքէր շէրպէթի, շաքարաջուր։
Շէֆքաթլը, շէվքէթլը. հզօր, փառաւորեալ, մեծապատիւ, մեծազօր։
Շինտան, շիմտիտէն կէրի, սօնրա. այսուհետև, յայսմհետէ։
Շիպ. գիպակ մետաքսեայ և ոսկեթել. 2) խռովեալ, այլնեալ, 3) շառաչիւն նետի, 4) խարազան, 5) զառ 'ի վայր, 6) 'ի ներքս, 'ի մէջ։
Շլթաղ, շըլթաղ, շիլթաղ. զրպարտութիւն, ստգտանք։
Շուա՛րա. բանաստեղծք, գիտունք։
Շուքուր, շիւքիւր, շիւքր. փառք, գոհութիւն Աստուծոյ։

## Ո

Ու, իւ. ու, և.

Ուզարինէ, իւզէրինէ ի վերայ։

Ումնաք. յուսալ։

Ումուտ. յոյս, ակնկալութիւն։

Ումուտվար. յուսով, յուսալից։

Ուչ, իւչ—քիլիսէ, երեք եկեղեցի, երեք խորան, երեք խորանեան։ Տաճիկք կամ մահմետականք զայս տան անունն Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի. այսպէս կոչին և ոմանք յերևելի և յանուանի վանօրէից Հայաստանի։

Ուռում, րում. յոյն։

Ուռումիստան, րումիստան. յունաստան։

Ուռումտան, րումտան. ի յունաստանէ։

Ուստինէ, իւստիւնէ 'ի վերայ։

Ուրուշան, իւրիւշան, րուշան. լուսաւոր։

## Չ

Չալըշմաք. աշխատիլ, ջանալ։

Չաղ. ժամ, ժամանակ. 2) հասակ. տիք, արբունք, 3) գիր, 4) սարդի ոստայն։

Չայ. թէյ. 2) գետ։

Չաշտ, չաշթ. ժամանակ յառաջ քան զմիջօրեայ, ճաշու ժամ։

Չատիր. վրան, խորան, տաղաւար, (2 քող, դեռ։

Չարխաչի, չարգաճը. յառաջապահ, ասպատակող զօրք են։

Չափար. ձիաւոր։

Չէքմաք, չէքմէք. քարշել, ձգել։

Չըխմաք, չըքմաք. ելանել։

(Չըքմամաք. չելանել։)

Չուխատար, չուհատար. սպասաւոր նժոյգաձիգ, վարաւանդասպաս։

Չուն, չիւն. որովհետև, քանզի։

Չօլ, չէօլ. անապատ։

Չօխ, չօք. շատ, բազում, յոյժ, յորդ։

(Չօխլար, չօքլար. բազումք։)

Չօխտան, չօքտան պէրիւ. ի վաղուց, ի բազմաց հետէ։

Չօմախ, չիւմաք. բիր, ձող, մական։

Չըյէն. աւշնան, աճար, գործի զանկեալ չէնս քաղելոյ, ժողովելոյ։

## Պ

Պագըկան—պաշու, պաշը. վաճառապետ։

Պահրա, պէհրէ. մասն, բաժին. 2) տասանորդ։

Պալափուշ, պալաֆուշ. ծածկոյթ, 2) վերարկու։

Պայրամ. տօն (Զատկին)։

Պայրամլաշմաք շնորհաւորել միմեանց զտօն ինչ։

Պայրամ-սէլամի. ողջոյն տօնի, շնորհաւոր տօն։

Պաշ. գլուխ, պետ, եղն։

Պաշ իւսթունէ. ի վերայ գլխոյ։

Պաշտան պաշա. գլխէ՚ ի գլուխ, 2) միշտ, յաւէտ։

Պաշ-տէֆթէրտար. պետ տումարակալաց։

Պաս. հապա։

Պատեայ, պատէ. բաժակ, գաւաթ։

Պարի. տէր, աստուած։

(Պարի—խիւտա. ստեղծիչ տէր, աստուած։

Պարխաճ, պագրաճ. դոյլ, դաշխուրան պղնձի։

Պարմաղլըղ. փարմաքլըք. վանդակ, խաղխամք։

Պարութ. վառօդ։

Պաքմաք. նայել, տեսանել, հայել։

(Բաքքի, պաք քի, հայեա՛ց, տե՛ս զի։)

Պէլի. այո, այնպէս է։

Պէր. ի վերայ։

Պիզ. մեք, 2) խթան։

Պիլմէք. գիտել։

(Պիլմէմ. ո՛չ գիտեմ։)

Պիսմի աՀի, ռահման, ռահիմ. պիս-

մայլաճ էլ-ռահ՛ման-էլ-ռահիմ. յանուն Աստուծոյ՝ ողորմածի և գթածի։
Պլաղուկ, պիլէղիկ. ապարանջան. 2) օղակ ինչ հրացանից։
Պու. այս։
Պուխուրտան. խնկաման, ծխաման։
Պույուրմաք. հրամայել. 2) վայելել։
(Պույուր, հրամայեա։)
Պույրուլթի, պույրուլթի. հրովարտակ, հրամանագիր։
Պուրիա, պուրայա. այսր։
Պոլուկ, պէօլիւկ. վաշտ, գունդ խումբ։
Պոռու. փող։
Պոռուզան, պօրուզէն. փողահար։
Պոստանճը-պաշը. անձնապահապետ։

## Ռ.

Ռահտար, ռահտէր. յուղկահար. 2) մաքսառու։
Ռահտար—ճիհան. աշխարհակալ։
Ռաղամ, րախամ, տես րաղամ։
Ռայէ, րայա, րա՛այա. հպատակ, հարկատուք, հնազանդք, ռամիկք։
Ռայիս, րէյիս. գլուխ, պետ. 2) առաջնորդ. 3) նաւապետ։
Ռէմազան—պայրամի, տօն իններորդ ամսոյ տաճկաց զկնի երեսնօրեայ ծոմապահութեան։

## Ս.

Սաղլամաք. պահել։
Սալթանաթ. փառք, մեծութիւն։
Սալիմ, սէլիմ. ողջ, առողջ, ազատ, կատարեալ։
Սահիպ. տէր։
Սահապայար. դրամափորձ, պետ՝ որ ուղղէ զժամացոյցս, և կշռեալ փորձէ զդրամս հրահատելիս։
Սաղ. աջ, 2) ողջ, առողջ, կենդանի, ողջանդամ. 3) բովանդակ։
Սաղ սէլամէթ. սաղ սէլիմ. ողջ, առողջ, քաջառողջ, ողջամբ, ողջութեամբ ողջանդամ։
Սամար, սէմէր. համետ, թամբ։
Սամուր. սամոյր, է մուշտակ իմն պատուական և թանկագին, զոր ինումն յատուկ էր ագանել թագաւորաց և երևելի իշխանաց։
Սայի, սա՛ի. թղթատար, սուրհանդակ հետիոտս։
Սայմաք. համարել, թուել ևն։
Սանթուր. քնար տասնաղի։
Սանտուխտար, սանդուգեար. գանձապետ, գանձապահ, արկղապետ։
Սապահ. առաւօտ։
Սատէթլի, սա՛ատէթլիւ, սէ՛ատէթլի. բախտաւոր, երջանիկ։
Սարասկար, սէրասքէր. սպարապետ, զօրապետ, սպայապետ։
Սարգեար, սէրքեար. վերակացու գործաւորաց. 2) գաւիթ. 3) խորհուրդ։
Սարու, սարը. դեղին, խարտեաշ, չէկ. 2) գունատ, դժգոյն։
Սարուան, սարպան. ուղտապան։
Սարտար, սէրտար. զօրագլուխ, պարագլուխ, զօրապետ։
Սեւտակար, սէվտակէր. սեւամաղձ. 2) վաճառական։
Սէլամ. բարև, ողջոյն։
Սէյիտ. անուն օրէնսդրի Մահմետականաց, որ նոյն ինքն է Մահմէտ։
(Սէյիտ—էլ—միւրսէլին. Սէյիտ մարգարէ։)
Սէն. դու։
Սէնի, սինի. սկուտղ, սեղան, բան պղնձի։
Սէրէֆրազ. երևելի, գլխաւոր, պետ։
Սէփօշի, սէֆիփօշ. սպիտակ փաթաթոյթ գլխոյ։
Սըրմա. ոսկեթել։
Սիյաղ, սիյաղ. մղումն, 2) տագնապ, 3) կարգք, 4) պայմանք, օրէնք։
(Սիյաղի էթմ կարգել, 2) պայմանել, 3) մղել, վարել.)
(Սիյահի էթմ. սեւել, գրել.)
Սիպկէ. դրոշմ դրամոյ։

Սիննէթ. սիննէթ. խնձոյք, հանդէս եղն։

(Սիւնէթ. թլպատութիւն, 2) օրէնք եղն։)

Սիւպհան, սուպհան. հոգի. 2) անձին. 3)գոհութիւն. 4) գովութիւն. 5) բարձրեալ աստուած։

Սուլթան, իշխան. 2)թագաւոր, 3) տիկին, դշխոյ, թագուհի. 4) իշխանութիւն, պետութիւն։

Սունտուրմա, սինտիւրմէ. դարաւանդ շինուածոց։

Սուչ. յանցանք, պակասութիւն։

Սուրահի, սիւրահի. երկայնաձև, ձուակերպ, 2) շիշ, սկաւառակ։

Սքէնտէր, իսկէնտէր. Աղեքսանդր։

Սօզ, սէօզ. խօսք, բան։

Սօրա, սօնրա. յետոյ, զկնի, ապա։

## Վ.

Վալի. ոստիկան, դատաւոր. 2)տէր, իշխան։

Վալինամէթ, վէլինամէթ, վէլի—իւլ—նի յմէթ, վէլի՛ի՛նի՛մէթ. բարերար, բարեգործ, մարդասէր, երախտագործ։

Վահատ, վահիտ. միայն, միակ։

(Վահատ—ալ—գահար. միայն քաջայաղթ, հզօր։)

Վար. գոյ, է, ունիք։

Վարմաք. երթալ, չուել, ժամանել։

Վէ. և, ու, նաև։

Վէզիր. նախարարապետ. 2) օգնական թագաւորի, փոխարքայ, մեծ եպարքոս։

Վէզնա, վէզնէ. կշիռ, 2) ակն հրացանից, 3)աման վառօդոյ։

Վէրմէք. տալ։

Վէքիլ. փոխանորդ, 2) հոգաբարձու, գործակալ, տեղակալ։

Վիլայէթ. գաւառապետութիւն, 2) իշխանութիւն, 3)գաւառ, աշխարհ, նահանգ 4) նպաստ, 5) տէրութիւն, 6) ընդ աստուծոյ ընտանութիւն։

## Տ.

Տաւի, տաւա. դատ։

Տա, ի մէջ, 2) նաև, և, 3) ո՛վ մարդ, 4) աղէ՛։

Տախտ. թախտ, աթոռ, գահ։

Տամաթ. փեսայ, 2) խնամի, 3) ազգական։

Տապլպաղ. թմբկահար։

Տէ. արդ, այժմ, 2) հապա, ուրեմն, 3) ասա՛։

Տէմէք. ասել, խօսել։

Տէմիր գաբու. երկաթադուռն՝ այս է Դուռն Ալանաց։

Տէվրան. դար, շրջանք, ժամանակ. եղն։

Տէւթէրտար. տէվթէրտար, տէֆթէրտար. մատենակալ, հաշուակալ, համարակալ։

Տէֆթէր. տետրակ, մատեան, 2) տումար։

Տիւշման. թշնամի, ոսոխ։

Տիւր, տիր. է։

Տիքմէք. տնկել, 2) կարգել։

Տօվլաթ, տէօվլէթ, տէվլէթ. բախտ, բարեկեցութիւն, 2) մեծութիւն, փառաւորութիւն, 3)իշխանութիւն, թագաւորութիւն։

Տօվլաթ—խանէ, ճոխութեան, իշխանութեան տուն։

Տօնլուխ, տօնլուք. ձորձ, զգեստ, 2) կտաւ առ ի կազմել զվարտիկս. 3) ռոճիկ։

Տօսթ. բարեկամ։

Տիւան, տիվան. ատեան, դիւան։

Տիւան, տիվան—խանա, խանէ. դիւանատուն, 2) ատենատեղ, 3) արքունի սրահ։

Տուա՛. աղօթք։

Տուա՛ էթմէք, էյլէմէք. աղօթել, բարեմաղթել։

## Ր

Րագամ. թիւ, 2) հրովարտակ, հրամանագիր, արտօնագիր, 3) գիր, դը-

բօշի՛ նշանագիր համարողութեան, 4) կալուածագիր։

Բահաթ օլմաք, էթմէք, բահաթլանմաք. հանգիստ, անդորր լինել, հանգչել, խաղալ, հանդարտել։

Փալամար. մալուխ խարսխին, կառան նաւու։

Փա՜հ փա՜հ. բա՜րէ, ո՜հ։

Փահլիւան, փէհլիվան. բռնամարտիկ, ըմբշամարտ, մրկամարտ. 2) կորովի, քաջ։

Փաշա. բդեաշխ, կուսակալ։

Փատիշահ. արքայ, թագաւոր։

Փարվարտիկար, փէրվէրտիկեար, կեր. մնուցիչ, դաստիարակ, ամենախնամ (Աստուած։)

Փէրտէ. վարագոյր, առագաստ։

Փիր. ծեր, 2) առաջնորդ, գլուխ, 3) միայնակեաց։

(Փիր – քիշի. այր ծերունի էր։

Փլաւ, փիլաւ. ջոր ապուր, 2) կերակուր ինչ յօրինեալ յորիզոյ կամ ի բրնձէ։

## Ք.

Քալանթար, քեալանթար. գաւառապետ։

Քանքան. է անուն առուին՝ զոր առեալ յՋրուանայ ընդ արեւելս բերեալ է ի պէտս Մ...ր Ալթառոյս, եւ անցեալ ընդ մէջ Վ.ո.ա.շապատայ եւ Ս. վանուցս խառնի ի լիճն մեծ։

Քաչ. քանի։

(Պիր քաչ. մի քանի։)

Քապէ, քէպէ. ցփսի, ձուձ, մազեղէն, ծածկոյթ։

Քեայեա, տե՛ս քէտխուտա։

Քեաթիպ. քարտուղար, գրագիր։

Քէթիպի. մուշտակեայ թիկնոց ինչ։

Քէթխուտէ, քէթխուտա. տանուտէր։

Քէման. քնար, վին, աղեղն։

Քէմանչէ. քնար, քնար երկաղի։

Քէմէր. գօտի։

Քէմէրպէնտ. գօտեկապ, գօտեպինդ։

Քէպլին, քեապին. հաստատութիւն ամուսնութեան. 2) վարձանք, վարձք կնոջ յարձակելն յառնէ։

Քէպլին էթմ. հաստատել զամուսնութիւնն, հատուցանել վարձս յարձակելն կնոջ յառնէ իւրմէ։

Քէսէ. քսակ. (ըստ Օսմանցւոց է մի քսակ՝ գումարն 300 դահեկանաց, որ է իբր 33 րուբլի)։

Քի. որ, զի, թէ։

Քիմսէ. ոք, ոմն։

Քիշի. անձն, ոք, մարդ։

Քունդ, քինտ. յիմար, ապուշ, 2) զօրաւոր, 3) կռձեղք, 4) երկուորեք։

Քուրդիկ զարպաֆ. զարնաւուխտ (կերպաս ինչ։)

Քօհնայ, քէօհնայ, քիւհնէ. հին, ծեր։

Մ'ալում. յայտնի, ծանօթ։

Մաղարա. այր, քարայր

Մահսար, մահսէր, հանրագիր, խնդրագիր։

Մահաճար, մուհաճար. վանդակ։

(Մահաճար ղաֆէս, ղաֆէս. վանդակեայ բանտ։)

Մալիտիվան. ատեան ընչից, ստացուածոց, 2) արքունական դիւան, 3) թագաւորական գանձատուն։

Մալ. ինչք, ստացուած, կալուած։

Մաթարիզ, մէթէրիզ, մէթէրիս. պատնէշ, խրամ, փոս 2) մարտկոց, 3) հողաբլուր։

Մամալիք, մէմալիք. թագաւորութիւնք, տէրութիւնք, 2) նահանգք։

Մանասաուր, մանասթըր. մ. ն ս-տուն, վանք։

Մանշուր՝ դուցէ մէնշուր. հրովարտակ, հրաման թագաւորական։

Մալահաթ. գործ, հանգամանք։

Մաարաֆ, մէարիֆ. ծախք։

Մա'ֆ, մուա'ֆ. ազատ, արձակեալ, ապահարկ։

Մաֆազա. պահարան։

Սելիք, մելիք. իշխան, 2) գաւառա-

պետ, 3) Թագաւոր։
Մէհմանտար, միհմանտար. հիւրընկալ։
Մէհտար, միհթէր. գլուխ, 2) ոստիկան, 3) զինուորական երաժիշտ, 4) փանդռնահար, 5) սպասաւոր, ծառայ։
Մէհտար-խանայ, միհթէրխանէ, մէհթէրխանէ. գունդ երաժշտական, զինուորական երաժշտականութիւն։
Մէհրանպանլըւխ, միհրիպանլըք. սիրելութիւն, բարեկամութիւն։
Մէն, պէն. ես։
Մէնտիլ. Թաշկինակ։
Մէպլէհէթ, տե՛ս մասլահաթ։
Միրզէ. իշխանորդի, 2) ասպետ, 3) ազնուական։
Միրէ, միրա. բարեկամութիւն, 2) կեղծաւորութիւն, 3) նկատումն։
Միրի՛. իշխանութիւն, 2) արքունիք, 3) տէրութիւն, 4) գանձ արքունի, բաժ։
(Միրի՛յէ. յարքունիս, ՚ի գանձարանըն արքունի)։

## Օ.

Օգկա, օգա. օխայ, չորեքհարիւր դրամ, դրամակշիռ. (մի օխայն է երեք գրուանքա ֆ… գ)։
Օգախ, օտա. սենեակ, խուց, խրճիթ։
(Օտա մէրմէք. տալ սենեակ բնակութեան, բնակեցուցանել)։
Օղ, էօղի. նա ի՛քն, 2) հարազատ, 3) բնական եղն։
Օղիւմ, էօղիւմ, էօղիւմէ. ինքս, ինձ։
Օլմաք. լինել։
Օլտուրմաք. հաստուցանել, գոյացուցանել, հաստնացուցանել։
(Օլտուրմաք, էօլտիւրմէք. սպանանել, կենազրաւ առնել)։
Օղլու, որդի, 2) եան—Ստեփանեան—։
Օմր, էօմր, էօմիւր. կեանք։
Օյմա. քանդակ, դրօշ։
Օշուր, էօշիւր, ի՛ւշր, աշար. տասանորդ. տասանորդել։
Օջաղ, օճախ, օճաք. տուն, ընտանիք. 2) ծխնելոյզ, 3) ուխտ կրօնաւորաց, 4) գունդ, 5) հիւր։
Օպա. վաշէ, խորան Սկիւթացւոց, վաշկատուն, վրանաբնակիչ։
Օպիրիսի կիւն, օպիր կիւն. յեռանդն։
Օրտու. բանակ։
Օրտուճի, օրտուճու. բանակաղիր, բանակայարդար։

## Փ.

Փաթէ, փաթիէ. անուն աղօթից ինչ Մահմետականաց։
Փալախա, գաւառատուկք, 2) գլան։
Փայտա (վայտա). օգուտ, շահ, արդիւնք։
Փառաշ. աղբաման։ Պարսկերէն է անուն միոյ թռչնոյ, որոյ բա՛ գունք են փետուր թեւոցն։ Նա և իմահմետականս են պաշտօնեայք և սպասաւորք որոց տան զանունս զայս
Փէթ, փէթհ. բացումն, 2) յաղթութիւն, 3) սկսումն, 4) յաղթօղ։
Փէնէր. լապտեր։

ՀԱՅ. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

# ՈՏԱՆԱՒՈՐ ՈՒՂԵՐՁԻՑ ԵՒ ՄԱՂԹԱՆԱՑ։

## (Տեսլեան 59—60)։

*Սիգկէի պէր չէր գեարթ Նամի սալթանաթ բաշտէր ճիհան,*
(Դրօշմ յաւէժ էր ընտանի թագաւորեանն, որ է աստղնորդ աշխարհի )
*Խօսրօֆի ատիլ շահի Նատիր—Ղուլի կիրթի սիթան։*
(Խոսրովափառեան արքայ Շահ՝ Նատիր—Ղուլի՝ քաջազն աշխարհակալ )
*Հէր քիրա պէյ ու խուտա եարէս,*
(Ամենայն՝ որում բարեկամ է Աստուած՝ և իշխան. )
*Հէրքի պէր կէրտէտ էզվէզէրմէ սարէզ.*
(Ամենայն ասպետ զօրաւորեան է ի բաց կալ ի մեր իշխանէ.)
*Էշհէմ տուրալյահ փատիշահմա Նատիրի զույլու Իրանէս.*
(Փառք Աստուծոյ, Նատիրն է նուաճող մեր, Թագաւոր համայն Իրանու.)
*Հէր պէնտէ էզրէքի Խուտայի Թայալա եարէս,*
(Ամենայն անձն է մաղթելից բարեաց Տեառն ամենաքաղցրելւոյ)
*Հէր պէնտէ աղու պէր կէրտէտ շարմասարէզ.*
(Ամենայն ոք՝ որ է բաց ձեռց ի Նմանէ, ամօթապարտ է.)
*Սիգկէի պէր չէր քեարթ Նամի սալթանաթ բատէր ճիհան,*
(Դրօշմ յաւէժ էր ընտանի թագաւորեանն, որ է աստղնորդ աշխարհի)
*Շահի տին Նատր — Ղուլի սքէնտէրի սահիպ ղուան,*
(Նատիր-Ղուլի շահ համայն՝ աշխարհատիրական՝ Տէր Ղուլին,)
*Փատիշահի մամալիքի Իրան, զիլլի սուպհան Նատիրի տէվրան։*
(Թագաւորն աշխարհաց Իրանու, արքայն Ամենաքաղցրելւոյ, ընտրելագոյն որդին ժամանակաց։

## (Տեսլեան 71—72։)

*Պիսմիլլահի ռահման ռահիմ. Իլահի, Իլահի, մուտամի տուպխմի.*
(Յանուն Աստուծոյ ողորմածի և գթածի. Տէ՛ր, Տէ՛ր, յամենայն ժամ էն աղբիւր մեր.)

Ցօվլաթին ղայիմ օլսուն, տօսթուն՝ տօսթ օլսուն, տուշմանըն՝ տօսթ օլ-
(Քո Բարեկամութիւն Նորին հաստատուն կացցէ. Բարեկամ Նորին՝ բարեկամ կացցէ.
սուն, պէհիւրմէթի սէյիտ էլ մուրսէլին սէլլի էլայ։
Թշնամին՝ ըլլայ բարեկամ. շնորհաւ և պատուութեանն տեառն օրհնեալ առաջնորդին
առաքելոց (Մահամմէտ)։

Վէ շէմսէ վէ լէյլի վէ նիհար՝ էմիուլ փուլլիյաձի փահատտալ գահար։
(Զօրէ և գիշերէ՝ յայս և ատամն Ղուլի շունչն (°) է Տէրն ամենակարող։)
Փա՜հ փա՜հ, սաատէթլի, շաֆաղէթլի, ինամլի, աալի Խանըմ, մուտամի
(Ո՜հ, ո՜հ, երջանիկ, բարեգութ, աստուածեան, վեհանձն և ազնիւ Խա՜ն մեր,
տուայիմի։
յամենայն ժամ են աղօթք մեր։)

Եաշա՜ Սուլթանըմ՝ եաշա՜ պաշտան պաշա. մուտայիմի տուայիմի. տօվլա-
(Կեցցէ՜ս Սուլթան մեր, կեցցէ՜ս է յամայր ամս. յամենայն ժամ են աղօթք մեր. զի
թին չօխլար պաշա . . . . պէհիւրմէթի էլի։
Թէրութիւն քո երկարատև եղիցի . . . շնորհաւ տեառն օրհն. և ք.:)

# ՑԱՆԿ


Յառաջաբանութիւն . . . . . յերես Ա — Դ.

Գլուխ Ա. . . . . . . . 1

Գլուխ Բ. Վասն մնալոյն ընդ խս եկեղեցին ի սուրբ Էջմիածին՝ աւուրս ինչ, և ուղևորելոյ զնոսա ի սուրբ Կարապետ։ . . 2

— Գ. Վասն գնալոյն մեր ընդ Սրբազանին ի վանորայս՝ որ մերձ էին սուրբ Էջմիածնայ, և վասն օծելոյն մեր զնորաշէն սեղանն Յօհաննավանից սուրբ Կարապետին։ . . . 3

— Դ. Վասն կրկին անգամ առանձին գնալոյն իմոյ ի յԱնապատն։ 4

— Ե. Վասն գնալոյն իմոյ ի հեռաւոր վանորայս՝ յուխտ։ . 5

— Զ. Յաղագս գնալոյն իմոյ ի սուրբ աթոռ և գտանելոյն զհոգևորտէրն ի մահճի. և վասն փոխմանն նորա և թաղմանն. 6

— Է. Յաղագս կրկին մուպաշիր գալոյ և զխս բռնութեամբ տանելոյ յԵրևան, և ի ներքոյ լծոյ արկանելոյ. . . 8

— Ը. Յաղագս կառավարելոյն իմ զմիաբանսն, և ծառայելոյ սուրբ Աթոռիս, և վասն պաշարելոյ զԿէնճէ՝ որ է Գանձակն՝ ի Պարսից Թահմ ղ խանէն՝ և վասն գալստեան Քէօբրըլու (քէօբրի–լիւ) օղլու Ապտուլահ փաշին (փաշային), և բանակաւ ձմեռելոյ ի Ղարսն. . . . . . . 10

— Թ. Յաղագս գալստեան Թահմաղ խանին ի Լօռու և Ղազախու նահանգէն ի վերայ Ղարսայ։ . . . . 11

— Ժ. Յաղագս գալստեան խանին ի կողմն Արարատու, և իմ դէմ գնալն։ . . . . . . 11

— ԺԱ. Յաղագս գալստեան խանին ի Ս. Էջմիածին. . . 12

— ԺԲ. Յաղագս յղելոյ և զիւրայինքն ի վանքն, և գնալն ի Փարաքար և յԵղևարդ. . . . . . 15

— ԺԳ. Յաղագս ուղարկելոյն զգերիսն և զծանրութիւն բանակին ի Թարվէզ ընդ եզերբն Գեղամայ ծովուն։ . . 16

— ԺԴ. Յաղագս պատերազմին որ եղև ի դաշտն Եղևարդու, և մեծի կոտորածին Օսմանցւոց ի Պարսից. . . . 17

— ԺԵ. Վասն գնալոյն իմոյ ի մօտ խանին մեծի, և անցանելոյ ի մէջ զխականցն։ . . . . . . 19

Գլ. ԺԶ. Ցաղագս ելանելոյ խանին բանակաւ ի գագաթ լերանցն կողմանց Ս. Գեղարդայ և Գօրատարպյի, և յետ Բ. ամսոյ իջանելոյն ի լեռնէ և գնալն ի վերայ Ղարսայ. . . 20

— ԺԷ. Ցաղագս դառնալոյն իմոյ յէջմիածին յետ ուղևորելոյ զխանն. և վասն պաշարելոյ զբերդն Ղարսայ, և կտրելոյն զգետն և զջուրն բերդին. և վասն խոստանալոյն տաճկաց տալ զԵրևան, և գնալոյն խանին ի Տփխիս և հրաւիրելոյն զմեզ անդր. . . . . . . . 21

— ԺԸ. Ցաղագս յանդիման լինելոյն մեր առաջի խանին ի Թիֆլիզ և մխիթարելոյ զմեզ, և յանձնելոյ զիս և զՍ. Էջմիածին՝ Երևանայ խանին՝ և շնորհելոյ զհարկաւոր բախամներն. 24

— ԺԹ. Ցաղագս չուելոյն մեր (և) Երևանայ խանին, և մնալոյն իմ ի Թիֆլիզ, և ջանալոյս վասն ազատութեան Ազգիս իմոյ Թիֆլիզեցւոց և Արարատեան ժողովրդոց. որ և շնորհօքն Աստուծոյ Թիֆլիզեցիք զերծան. . . . 25

— Ի. Ցաղագս խնդրելոյն իմոյ վասն զառապխանային բանալոյ, զի թէ արծաթ ոչ լինիցի, գոնեա՛ վասն պղնձ փողի պատրաստութեան, և թէ գտանի, արծաթիևս. Եւ վասն Է. մուլք գիւղորէից. և վասն մէլիք—Քալանթարի, որ առանց իմ գիտութեան թէվճիհ մի առնիցեն. և վասն հանդիպելոյս ի Սանահին, և ի Հաղարծին, և ի Հաղպատ. . . 26

— ԻԱ. Ցաղագս գալստեան իմոյ յէջմիածին, և գնալն իմ յԵրևան վասն շնորհաւորութեան խանին. և վասն հրաւիրելոյն զմեզ մեծազօր Թահմազ խանին ի Մուղանու դաշտն. . 27

— ԻԲ. Ցաղագս գնալոյն իմոյ ի Մուղան ընդ Երևանայ խանին. 28

— ԻԳ. Ցաղագս կատարելոյն զտօն Ծննդեան և զկարգ Ջրօրհնեաց ի Մուղան առ եզերբն Երասխայ ի բանակին, որ փոխեցաւ թուականն ի ՌՃՁԵ. . . . . . . 29

— ԻԴ. Ցաղագս գնալոյն իմոյ ի կողմն Տուղախու՝ և յետ դառնալոյս վաղվաղակի, և գալստեան Վալինամաթին. . . 31

— ԻԵ. Ցաղագս յանդիման լինելոյ մեր մեծի խանին, և մատուցանելոյ նմա զընծայս մեր, և խօսելոյ ընդ նմա, և Նորա յուսադրելոյ զմեզ. . . . . . . 33

— ԻԶ. Ցաղագս գնալոյն իմոյ ի վրանն Նախջուանցւոց, այսինքն՝ Պ. Աստուածատուրին, Պ. Խարխիմոսին, Պ. Ստեփանին, և խորհելոյ ընդ Նոսա զպատշաճաւոր բանն. . . 35

Գլ. ԻԷ. Յաղագս վրանին՝ որ բերին ի Ղազվինու, և որպիսութեան նորին. և վասն սահմանելոյ մեզ ամենայն օր գնալ ի սէլամն մեծի խանին, և օր ըստ օրէ պատրաստելոյ զտեղիս նստելոյ գնացողաց ի սէլամն։ . . . . . . 38

— ԻԸ. Յաղագս օր ըստ օրէ եկելոց և ժամանողաց ի դաշտն Մուղանու ի հեռաւոր տեղեաց՝ անթիւ բազմութեան և որակ որակ մարդկանց։ . . . . . 39

— ԻԹ. Յաղագս պատմութեան դաշտին Մուղանու և Երասխայ, թէ ուստի՞ եկանէ, կամ ու՞ր հասանի։ . . . 41

— Լ. Յաղագս կարգադրութեան հովանոցաց վասն եկելոց, և կարգ դիւանին՝ թէ ո՞րպէս կանգնին որդիք և եղբօրորդիքն, խաներն, և կարգ զինուորացն, որք ի ժամ դիւանին իւրաքանչիւր նշանով կանգնին ի դիմացն. և որքանութիւնք նոցին, և որպիսութիւնք ճաղայիրչաց և հրահանգելեաց նոցին։ 43

— ԼԱ. Յաղագս կրկին հարկելոյ զմեծ վրանն, և արփիայի սէլամին։ 45

— ԼԲ. Յաղագս նախապատրաստութեան և կարգաւորելոյ զհրաւիրեալսն, նախ թէ ո՞րպէս երթիցեն ի մեծ վրանն առընթեր խանին։ . . . . . . . 46

— ԼԳ. Յաղագս պայրամի աւուր սէլամին, և թէ զի՞նչ արարողութիւն և զինամթ արարին. և վասն պատուելոյ մեծի խանին զրկեալ խաներն, և զէչչիքն, և զիս ընդ նոսա՝ քաղցր շարպաթիւ և վարդեջրով և ծխանելեաւ։ . . 47

— ԼԴ. Յաղագս յերկրորդ աւուր պայրամին հանելոյ զմեզ ի դաշտն արտաքոյ բանակին, և պատուիրելոյ խորհել ի միջի մերում և ընտրել զոմն, որ կարող լինիցի կառավարել աշխարհս Պարսից, և գլուխ լինել ի վերայ ամենից։ . . 51

— ԼԵ. Յաղագս իւրոց խորհելոյն գումարելոյ և մեր, և կանուխ դառնալոյն ի նոյն տեղի, և խնդրելոյն զնա իշխել ի վերայ Պարսկաստանի, և նորա պահանջելոյն զերիս իրս։ . . 52

— ԼԶ. Յաղագս ձայնելոյ զխաներն ի մօտն, և հրաժարելոյ ի թագաւորելոյն, և խաներացն աղաչելոյ՝ զի մի՛ թողցէ զնոսա և զերկիրն ի ձեռաց։ . . . . . 54

— ԼԷ. Յաղագս կնքել տալոյ զարձանագիրն վասն խնդրելոյ զնա թագաւոր. և վասն երից բանից՝ զոր խնդրեաց արձանագրով հաստատել, և յանձնելոյ զիս Երևանայ խանին։ . 55

Գլ. ԼԸ. Ցաղագս բաժանելոյ զխիլայս՝ նախ իւր առաջին մեծամեծ խաներաց և ապա այլոց՝ սանդուխտարի ձեռօքն, և ինձ խի-լայ յղեաց ի Մենարանն իմ։ . . . . 57

— ԼԹ. Ցաղագս ագուցեալ խիլայով գնալն մեր առաջի իւր ողջու-նել՝ շնորհաւորել և շնորհակալել. և վասն տուա առնելոյ, և ձայնելոյ զիս մերձ յինքեան և խօսակցելոյ։ . 59

— Խ. Ցաղագս առնելոյ զղախամներն զոր խնդրեցի. և վասն կրկին հրաւիրելոյ ի դէմ իւր՝ և յերկարապէս պատուէր տալոյ, և կրկին զիս յանձնելոյ Երևանայ զապիթներաց։ . 61

— ԽԱ. Ցաղագս գնալոյն մեր Իպրահիմ խանի մօտն՝ և Փիր—Մէհմէտ խանին, և վասն չուելոյ Երևանայ եկելոցն՝ և մնալոյս միայ-նակ։ . . . . . . . 63

— ԽԲ. Ցաղագս մնալոյս ի դաշտին ի մէջ եղեգնայ խուղին՝ և գե-րեացն՝ զոր գունդ գունդ աստ և անդ ուղարկեցի։ . 64

— ԽԳ. Ցաղագս չուելոյն իմոյ ի Տուղախ, և Օսմանցւոց եղչուն Կէնճ—Ալի փաշային, և որդւոյն Վ.էլինամաթին Բիզա—ղուլի խանին ի Խորասան։ . . . . 67

— ԽԴ. Ցաղագս թագաւորելոյ Վ.ալինամաթին, և որպիսութիւնք նոցա, և թէ զիա՞րդ նստուցին և թագ ի գլուխ եդին, և ե-դած զինինէթին։ . . . . . . 68

— ԽԵ. Ցաղագս բաժանելոյ զնոր կորած ոսկին, և ոմանց նոր խա-լաթ տալոյ. և վասն միհթէրխանային՝ թէ ի՞նչ կերպիւ է։ 70

— ԽԶ. Ցաղագս տուայն՝ զոր ասեն չաւուշք՝ յ՝ բ ժամ եղանէ Վ.ալի-նամաթն ի տիւան, և յորժամ ձիաւորի. և վասն զօրացն որքանութեան։ . . . . . . 71

— ԽԷ. Ցաղագս եթէ ո՞ր կողմանք եկի ի Ս. Աթոռս, եթէ ուր հան-դիպեցայ վասն այցելութեան վանորայից. և վասն ուխտի և տեսանելոյ զնոսա, և զննելոյ և նկատելոյ զերկիրն և՛ զոր-պիսութիւն ժողովրդեանն։ . . . . 73

— ԽԸ. Ցաղագս գնալոյն իմոյ յուխտ՝ նախ ի մեծ անապատն Հա-ռանց, որ է ի ներքոյ Թանահատի վանից և անապատին։ 75

— ԽԹ. Ցաղագս գնալոյ Արարատեան երկրի զապիթներաց, իւզբա-շոց, աղաներաց, քալանթարաց, մելիքներաց ի Թարվէզ՝ շնորհաւորելոյ զգալուստն և զպատաղարութիւնն Իպրահիմ խանին, և տալ դհամար վասն հասից թագաւորական դիւա-նին։ . . . . . . . 79

Գլ. Ծ. Յաղագս հրաւիրելոյ զիս Իպրահիմ խանին ի Թարվէզ՝ հրամանաւ Թագաւորին՝ եղբօր իւր՝ և զմիրզէ քալանթարն ի միասին. . . . . . . 80
— ԾԱ. Յաղագս պատմութեան Նախիջևանայ միրզէ Բաղուն, որ էր վէքիլ և զապուտ նահանգին Նախիջևանայ. և վասն Աստապատցի աղջկանն՝ զոր բռնութեամբ քաշեց իւր նօքարն, և տաճկացուցեալ քէպին արարեալ էր ի Մուղան, թէ որպէս յետ առի կարողութեամբն Աստուծոյ, և կրկին Հայացուցեալ պսակեցի ընդ քրիստոնեայ երիտասարդի միոյ: 83
— ԾԲ. Յաղագս պատուելոյ զմեզ Իպրահիմ խանին ի սեղանն իւր՝ առաւօտ և իրիկուն, և միւս օր ծանր խալաթ հագուց: 86
— ԾԳ. Յաղագս դառնալոյն իմոյ ի Թարվիզու առ Ս. Գահն, և մեծարելոյն զմեզ Նախիջևանայ վէքիլն՝ որ է Նայիպն՝ հիւր լինել նմա. . . . . . . 88
Կոնդակ Արք. Կաթ. Կրետ. . . . . 93
Պատմութիւն Անի քաղաքին. . . . 101
Բառարան. . . . . . . 111
Հայ. Թարգմ. ոտանաւոր ուղերձից և մաղթանաց . 123
Ցանկ. . . . . . . 125